



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

13898
13899
13900

Pliny
134

Pliny
135

Pliny
136

1871
1863
1910


1058

10.27

S O P U

2003





ՍԱՐԳԻՍ ՄԻՐԶԱ

ԻՆՇԱՆ

ՅԱԻԵՐԺԱՆՆ

ԵՐԵՎԱՆԻ ԶԳՆՅՄԱՆՑ

ԱՌ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ

ԳՈՐՈՎԱԳՈՒԹ ԵՒ ԲԱՐԵՐԱՐ

ԵՂԲԱՅՐՆ ԻՒՐ

ՍԱՐԳԻՍ ՄԻՐԶԱ

ՅԻՇԱՏԱԿԷ

ՀԵՂԻՆԱԿՆ

1875
JAN 10 1875
RECEIVED
OF THE
TREASURY
DEPARTMENT
WASHINGTON
D.C.

Printed in Turkey

897.99

100

Ս 76

ուս



ՍԻՐԱՅԻՆ ՎԷՊ ՄԸ

ՀԵՂԻՆԱԿ

Պ. ՆՇԱՆ ՄԻՐՁԱ

Միլիարդ



ՋՄԻՒՆԻՆԻ

ՏՊԱԿՐԱՐՔԻՐՆ ՏԵՏԵՆԵՆ

1871

3121



UNIVERSITY OF MICHIGAN



134-2015

(6465 / 39) 1434

UNIVERSITY OF MICHIGAN

1871

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Սոյն վիպասանութիւնը 1867 Սեպտեմբերի 4ին սկսանք և ընդ-
հատ աշխատութիւններէ յետոյ հուսկ ուրեմն 1871 Յունիսի 13ին
աւարտելու կարող եղանք :

Յանդուղն երեցաւ մեզ 'ի սկզբան գործը , և ստուգիւ ուրիշնե-
րու ալ իմացուցած ժամանակնիս կը վարանէին անոր յաջողութեան
վրայ . մեր իսկ ժամանակ առ ժամանակ այնպիսի դժուարութիւննե-
րու կը հանդպէինք , ուր շատ անգամ կէս մը յուսահատ ամիսնե-
րով մէկ կողմ կը թողուինք զայն անաւարտ , և թերևս ամենեւին չէր
լլանար եթէ անակնկալ պարագաներ չստիպէին մեզ նոյնը աւար-
տելու . բարեկամաց թախանձանքը և մասնաւորներու քաջալերը զօ-
րաւոր գրգիռներ եղան մեզ ամեն աշխատութիւն չխնայելով նոյնը
'ի գլուխ հանելու :

Առանց սնապարծութիւն ընելու կը յանդգնինք ըսելու որ այն ա-
մեն ձանձրալի նկարագրութիւնները , խորհրդածութիւնները և եր-
կարաբանութիւնները՝ որ ներկայ դարուս մէջ վիպասանութեան ան-
հրաժեշտ զարդերը համարուած են , աշխատեցանք ըստ կարի ըն-
թերցողին ձանձրութիւն չտալու համար մեր գործին մէջէ արտաք-
սել , և կը յուսանք նաև որ յաջողած ըլլանք :

Պատմութիւնը խիստ տարածուած պարագաներ ունի իր մէջ , և
անուրանալի է որ եթէ ուրիշ գրչի տակ իյնար կամ եթէ կամք
ըլլար՝ կրնար քանի մը հատոր ընդարձակիլ , բայց այս յայտնի է
որ այն ատեն անհրաժեշտ հարկաւոր պիտի ըլլար սակաւ ինչ տա-
րածուն և շփոթ ընել զայն :

Մեր նպատակը ըստ կարի համառօտութեան մէջ սոյն վէպը
քաղցր և ակտրժելի ընել ըլլալով , շատ տեղեր՝ ուր երկարել մեղա-
գրելի չէր , ընդհատած ենք զգալով որ ընթերցողը կրնար գուշա-
կել ինչ որ եթէ գրուէր , որ զուցէ կրնար աւելորդ համարուիլ
չատերու :

Այս վիպասանութեան մէջ մեծ անպատեհութիւն մի պիտի երեւի շատերու . պիտի առարկեն անշուշտ թէ քանի որ վէպը հայերէն հեղինակութիւն մ'է՛ ինչու օտար անուններ գործածած ենք . ասիկա մեր գիտողութենէ վրիպած չէ , այլ անսնկ պարագաներ պատահած են՝ որ այս թերութիւնը զգալով իսկ պարտաւորուած ենք վերստին սոյն անպատեհութիւնը ընել . քանի մը պատճառներ կստիպեն զմեզ սոյն պարագաները ընթերցողին չպարզել . . . :


Մեր նպատակը աւելի եղծումները պիտարակել ըլլալուն՝ մասնաւոր ուշադրութիւն բրած ենք նոյնին հասնելու զարձեպ համառօտութենէ շէղելով և անսնց միայն մէկ տեսակին վրայ խօսելով , որ է տրփոտ և ննդաւոր սիրահարութեան ընթացքը , ձեւերը և արդիւնքը , և ասոնք կը յուսանք թէ պարզած ենք ընթերցողաց :

Խօսքերնիս վերջացնելէ յառաջ հրապարակաւ կը յայտնենք մեր շնորհակալիքը ամեն անոնց որ սոյն գործին յաջողութեան համար օժանդակեցին մեզ թէ նիւթապէս և թէ բարոյապէս , և ՚ի մասնաւորի երախտապէտ զգայմամբ կը յիշենք ուսումնասէր և աշխուժողի Պ . Մկրտիչ Ճեպեանի անունը . այս աղնիւ երիտասարդը սոյն գործին ձեռնարկելէս ՚ի վեր այնպէս քաջալերեց և ՚ի վերջէ տրպարութեան նկատմամբ այնպէս առատաձեռն և խիստ նպատաւոր պայմաններով մեզ նպաստեց՝ որ ալ զգալով մեր յանհուն պարտաւորուած ըլլալը իմացուցինք որ սոյն գործը իր սիրելի անուան նուիրելու անհրաժեշտ պարտականութեան մէջ էինք . բայց ինք չընդունեց , և չընդունելով սրտիս խորը եղած փափաքանաց պատասխանեց , վասն զի ստիպեց զիս որ անհրաժեշտ զայն հանդուցեալ եղբորս Միրզաեան Սարգսին յիշատակին նուիրեմ , և ես սոյն տխուր պարտականութիւնը կը կատարեմ իր կողմէ իսկ վտտահ ըլլալով որ առ հանդուցեալն եզրայրական սիրոյ զգացումներ ինք ևս մեզ նման իր որտին մէջ կը տածէր :

Շնորհապարտ պիտի համարինք զմեզ և թէ ընթերցողք ներողամտութեամբ նկատեն թերութիւնները , որով և մենք պիտի քաջալերինք ապագային մէջ թերևս աւելի օգտակար ձեռնարկութիւններ ընելու :



Տ Օ Ր Ա



Ա Յ Ց Ե Լ Ո Ւ Թ Ի Ի Ն Մ Ի

18...ին 2... քաղաքին մէջ ձմեռ էր, բնութիւնը իր բոլոր զմայելի տեսարաններու վերջ տուած էր. չկար գարնանային արև, չկային մայիսի ծաղիկներ. ամեն կողմ տխուր ամայութիւն մը տիրած էր, իւրաքանչիւր ոք իր բնակութեան մէջ առանձնացած երկայն գիշերները լռիկ կրակաբանին բոլորախօսքը երբեմն առանձնութեամբ և երբեմն ընտանեկան յարաբերութեամբ կացներ. նոյն եղանակին մէջ սովորաբար երկինք երկրէ աւելի զուարթ չըլլար, թանձր ամպեր երկնից կապոյտ կամարը պատած փոթորիկ և անձրև կը պատճառէին, լուսինը հազիւ ուրեմն վայրկեան առ վայրկեան կերևէր և ահա կանհետէր կարծես ամայի աշխարհի իր լոյսը խնայելով, միայն երբեմնակի պարահանդէսներ և ընդհանուր ուրախութեան հանդէսներ քաղաքացոյց սիրտը կսփոփէր և կը զուարթացներ.

Յունվարի 28ն էր:

Բարեկենդանի երրորդ շաբթուան նախորդ իրիկունը, անձրևը կը տեղար սաստիկ և հովը կը սուլէր ուժգին, կծու ցուրտ մը մարդուս

մինչև երակները կը թափանցէր . բնութեան այս իրարանցումը մեծ արդեւիք եղած էր նոյն իրիկուն զիմակաւորութեանց գէւալքերու :

Երկու բարեկամներ նոյն խառնակ օդին անձրևոցով մը ըստ մասին պատսպարուած Գ. . . ի փողոցէն Բ. . . ի փողոցը մտան հասարակ քայլերով :

Մին հազիւ քսան կամ քսան ու մէկ տարեկան , երեսը ողորկ , փայլուն և սպիտակ , գէմքը աւելի երկար կըսուէր քան թէ բոլորակ , շարժումը գիւրաթեք , գէր չէր , նիհարութիւնը չափաւոր , իր այնչափ աճապարանօք քայլած ժամանակ իսկ հազիւ ուրեմն ներբաններուն ձայնը կը լսուէր , իր անունը Կտուար էր :

Միւսը գէր , ոսկրուտ , ծանրամարմին և ուժեղ երիտասարդ մ'էր գրեթէ իր ընկերին հասակակից կամ անորմէ քիչ պակաս , իր շարժումը իր մարմնոյն պիրութեան հակառակ արագ և սթափ էր . քայլած ժամանակ իր ոտից ձայնը մինչև հարիւր յիսուն քայլ հետու կը լսուէր , վասն զի այս երիտասարդին կոշիկները խիստ նշանաւոր էին երկու բանի կողմնին , առաջին՝ քայլած ժամանակ ճոնչելէ , և երկրորդ՝ կոխած ժամանակ ներբաններուն սաստիկ ձայն հանելէ , իր անունը Ալֆօնս էր :

Կտուար կըսէր իր ընկերին .

— Այս ինչ անտանելի գիշեր է , բարեկամ , ժամանակնիս ինչպէս պիտի անցընենք :

— Հետեւ ինձ , արահա՛յն եմ որ հաճելի գիշեր մը պիտի տեսնանք :

— Ո՞ր :

— Պ . Շարլի տունը :

Կտուար ժպտեցաւ , վասն զի կարածէր որ Ալֆօնս այս պատասխանը տար :

Քիչ մը վերջը պիտի տեսնենք թէ ինչ պատճառաւ Կտուար կախորժէր Պ . Շարլի տունը երթալ :

Ալֆօնսի այս խօսքին վրայ Կտուար հետեցաւ անոր , մեծ մեծ քայլերով տան մը առջև կանգ առին և զուր գարկին :

Մանրերկրորդէ մը դուռը բացուեցաւ :

Այս սունը միջին հարստութեան տէր ծերի մը կը վերաբերէր, որ բազմին ծիծաղներէ գրեթէ երջանիկ կը սեպուէր, վեց աղջիկ զաւակ ունէր և երկու տղայ, որոնք իր ծերութեան մէջ նեցուկ եղած էին, մահը կարծես այս սունէ կը զարհուրէր, վասն զի կարող չէրուծ էր տակաւին նոյն ընտանիքէ անդամ մը իր հաճոյից զոհելու :

Տան դրան բացուելէ վերջ անմիջապէս ներս մտան մեր երկու պարոնները :

— Բարի եկաք, պարոններ— ըսաւ տիկին Շարլ իր խօսքը երիտասարդներուն ուղղելով, երբ անոնք սրահէն ներս կը մտնէին :

— Բարի տեսնա՞ք— պատասխանեցին Կտուար և Ալֆօնս :

— Անձրեւէն բաւական թռչուած կերելք :

— Այո՛, տիկին, թէև անձրեւոց ունէինք բայց օգուտ մը չըրաւ, վասն զի հովը սաստիկ բլլալուն անկարելի եղաւ անձրեւէն պատասպարուիլ, շիտակը ասանկ ժամանակ մը ձեր ցոյց տուած սիրալիր ընդունելութիւնը մեզ խիստ պարտաւորած է որու համար մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք :

— Աւելի շնորհակալ ըլլալու իրանունքը մերն է— յարեց տիկինը, — որովհետև այսպիսի միջոցի մը մէջ կը հաճիք ձեր քաղցր այցելութեամբ զմեզ պատուել :

— Ար զարմանանք— ըսաւ Կտուար, — թէ ի՞նչպէս ձեր պարտաւորիչ խօսքերով մեր իրաւանց կը յաղթէք և անկարող կընէք զմեզ մեր շնորհակալութիւնը ըստ արժանւոյն ձեզ յայտնելու :

— Բողբովին ատոր հակառակ— պատասխանեց Տօրա, որ տիկին Շարլի կրտսեր աղջիկն էր տասն և ութ տարեկանի մօտ, և որ Կտուարի հետ նախապէս քանի մը անգամ տեսնուած ըլլալով մեծ հաճոյք կըզար անոր ընկերութենէ, և Կտուար իսկ նմանապէս փոխադարձ սիրով մը կապուած էր անոր հետ : — Չմտաւան մէջ ընտանիք մը, թէև բազմաթիւ անգամներէ բալկացած ըլլայ, և թէ ուրանց հիւրի մնայ ժամերը անտանելի կերելն իրեն, հեռաւրար ժամանակը խիստ զժուարութեամբ կ'անցընէ, ուստի կրնաք երևակայել որ ձեր այցելութիւնը որչափ քաղցր է մեզ, հեռաւրար քա-

նի՛ պարտաւորութիւն ունինք մեր շնորհակալութիւնը ձեզ յայսնելու : Հաւաստի եղիք , ազնիւ պարոններ , որ այնչափ պարտաւորութիւն չունիք շնորհակալ ըլլալու որչափ շնորհակալութիւն ընդունելու :

Տօրա այնպիսի շնորհալի կերպով և առողանութեամբ կը խօսէր այս խօսքերը՝ որ վայրկեան մը շփոթեցուց երիտասարդները : Իր շուրթերու շարժած ժամանակ կարծես մեզը կը ծորէին , իր դիմաց կայտառ ու վարդազոյն գեղեցիկութիւնը , իր սեաւ աչքերը , խարտեաշ վարսերը յաւերժահարսի մը կերպարանք տուած էին իրեն :

Էտուար և Ալֆօնս գէպ 'ի Տօրա դարձան և քաղաքավարական շարժում մ'ընելով յարեցին .

—Արնդունինք ձեր շնորհակալութիւնը փոխադարձ կերպով , ազնիւ օրիսրդ :

—Քնութեան մեզ հակառակելէ զատ— յարեց Էտուար իր խօսքը մեծ մասամբ Տօրայի ուղղելով , —կարծես մարդիկ ալ իրենց զուարճութեանց ժամերու յարզը չեն զիտեր , այսպիսի եղանակի մը մէջ ուր պիշերները երկայն են և առանձնութիւնը անտանելի , այսպիսի եղանակի մը մէջ կրսեմ , ուր պարահանդէսներ և ընդհանուր զուարճութիւններ անհրաժեշտ պէտք են՝ ամեն կողմ առանձնութիւն կը տիրէ և քաղաքացիք այնչափ անփոյթ են իրենց ժամերը զրօսանքով անցընելու՝ որ տոռղիւ ծաղրելի են : Չմեռուան մեծ մասը՝ արդէն սահեցաւ խիստ անհամ կերպով , բարեկենդանի միայն մէկ շարաթը մնացած է և ի՛նչ զարմանք , տակալին երկու պարահանդէս տեղի ունեցան , և անոնք ալ որչափ անհամ և անախորժ պարագաներով լի :

—Մտոգիւ , ազնիւ պարոն— պատասխանեց Օսկար , որ Պ. Շարլի երկրորդ տղայ զուակն էր , կայտառ , առողջ և քսան ու հինգ տարեկան գրեթէ , —անցեալը անախորժ կերևի մարդուս երբ ապառնիի յուսով լցուած է , զուք հաճութիւն զգացած չէք նոյն պարահանդէսներէ քանի մը պարագաներու համար , բայց ես խիստ հաճո՞թիւն զգացի և թէև նոյն քանի մը պարագաներու մա-

սին ձեզ համամիտ եմ՝ բայց կը յարեմ որ բոլորովին անթերի պարահանդէս հաղուագիւտ է :

— Գուցէ Պ. Էտուար նոյն պարահանդէսներու մէջ օրիորդներէ վշտացած ըլլալուն ախորժած չէ — ըսաւ Ալֆօնս փոքրիկ ժպիտով մը :

Վայրկենական ծիծաղ մը ամենու դիմաց վրայ տիւրեց և անհետացաւ :

— Ար լւէք ինչ կըսէ Պ. Ալֆօնսը — յարեց Տիկինը իր խօսքը Էտուարի ուղղելով, — բայց մասնաւոր պարագայի նկատմամբ ընդհանուր պարահանդէսը քամահրել անիրաւութիւն է կարծեմ :

— Բոլորովին ստար հակառակ — կրկնեց Էտուար, — պարոն Ալֆօնս միշտ կատարծի այս տեսակ ակնարկներ ընելու, որոնք աւելի զուարճալի խօսքեր համարիլ պէտք ենք քան թէ ճշմարտութիւն, կրնամ զձեզ ապահովցնել որ երբէք այդ տեսակ դէպք մը պատահած չէ, ըստ իս պարահանդէս մը հաճելի և անթերի ըլլալու համար պէտք է ամեն ինչ անհրաժեշտ անպակաս ունենալ. առաջին պարահանդէսին մէջ մեծ անտեղութիւն մը կար, այն է բազմաթիւ պարողներու դիմաց պարուհիներու սակաւութիւնը, որով շատ երիտասարդներ ստիպուած էին կարգի սպասել, բայց այսպիսի հանդէսներու մէջ ալ կարգի միտ դնողներ խիստ հաղուագիւտ են, հետեաբար շատեր առանց պարելու մեկնեցան և զուարճութիւնը ընդհանուր ըլլալէ դազրեցաւ : Իսկ երկրորդ պարահանդիսին նկատմամբ խօսելով, թէ և առջինին պակասութիւնը չունէր նա, և պարողներու պարուհիներ գրեթէ հաւասար էին՝ բայց երաժշտաց խումբին աղիտութիւնը շփոթութիւն կը ձգէր պարողներու մէջ, ինչ ատեն եթէ երաժշտաց Իտալական խումբը բերուած ըլլար՝ ստուգիլ պարահանդէսը գոհացուցիչ պիտի ըլլար և բոլորովին անթերի :

— Իրաւունք ունի Պ. Էտուարը — ըսաւ աիկին Բօլ, որ աիկին Շարլի ամուսնացած աղջիկն էր, — առջի պարահանդէսի ներկայանալէս մինչև մեկնիլս չկրցայ պրծիլ պարողներու թախանձանքներէ, և այս շարունակ պարելը ինչպէս ուրիշներու նոյնպէս և ինձ հետեւալ օրը բաւական անհանգստութիւն պատճառեց :

— Էս ալ — ըստ Տօրա — կրնամ զձեզ ապահովցնել որ երկրորդ պարահանդիսին մէջ չ'կրցայ խաղ մը օրինաւոր կերպիւ պարել, երաժիշտներու շփոթ եղանակներուն պատճառաւ :

— Ար տեսնեմ որ — յարեց Էտուար , — նոյն պարահանդէսները միայն ինձ անախորժ երեւած չեն , տիկին Բօլի և օրիորդ Տօրայի ըսածները կրնան իմ կարծեացս ճշմարտութեան ապացոյց ըլլալ :

— Ինչ և իցէ — ըստ տիկին Բօլ , — Շարաթ իրիկուն պարահանդէս ունինք , կը յուսանք որ բաւական գոհացուցիչ կրնայ ըլլալ , և ձեր ներկայութեամբ զմեզ պատուել չէք զլանար :

— Ձեր հրաւերով զմեզ կը պատուէք տիկին — պատասխանեց Էտուար :

— Ար բաւ է որ պարողներու համար պարուհի գտնուի — ըստ Ալֆօնս :

— Այդ մասին կրնաս ապահով ըլլալ , պարոն Ալֆօնս — պատասխանեց տիկին Բօլ ժպտով մը :

Ընդհանուր ծիծաղ մը ամենու գիմաց վրայ երեցաւ :

— Զուարճախօսութիւն շատ կը սիրէք — ըստ Տօրա դրախչ կերպով :

— Մեկամաղձօտ անձերը կատեմ — պատասխանեց Ալֆօնս — հետեւաբար զուարճախօսութիւն կը սիրեմ , երբ սիրտը ուրախութեան մէջ է՝ բերանը չ'կրնար տխուր խօսքեր արտասանել :

— Շատ ճշմարիտ և տարօրինակ կը խօսիք — կրկնեց Տօրա :

— Եւ Ձեր այս զիշերուան տարօրինակ գեղեցկութիւնը զիս կը շփոթէ Տօրա — ըստ Էտուար կամայ մը իր խօսքը Տօրայի ուղղելով , զոր միտները չ'կրցան լսել :

Այս երկու բառերը անանկ տարօրինակ ներդործութիւն ըրին Տօրայի , որ իր վարդագոյն դէմքը շառագնեցաւ , գողցես առանց իր կամայ իր աչքը անոր աչերու հանդպեցաւ , իր սիրտը բան մը անցաւ և անյայտ զգացողութիւն մը զինք բողբոլին շփոթ վիճակի մէջ թողուց :

Ինչ էր այս զգացումը , որ զինք այլազունեց , շփոթեց և խորին մտածմանց ենթակայ ըրաւ , Սէր էր այն , սէր՝ որու հարուած

ներէ շատ քիչերը կրցած են ազատ մնալ : Բոլորովին յափշտակուած էր նա , թէ և իր շուրթերը չէին շարժեր՝ բայց իր երեւակայութիւնը արագ գործունէութեան մէջ էր , սիրոյ սլաքը ազդած էր իր սրտին և ինք այս առաջին հարուածը մերժել չկարենալուն՝ բոլորովին անոր անձնատուր եղաւ . իր սիրտը ծփուն ոլկիւանոսի նման կուռէր և կը փքար , միայն այս տարբերութեամբ որ ոչ անոր նման աննպատակ : Իր նպատակը , իր փափաքը երջանկութիւն էր , պայծառ յոյսեր կստեղծէր իւրովի , և կը կարծէր անմեղութեամբ թէ երջանկութեան աշխարհ մի իրեն համար կը բացուէր , պատրաստ էր անոր մէջ ճեմելու , այլ ափսոս երեւակայական պայծառ յոյսերու ամբառութիւն մը իր միտքը զրուած ըլլալուն՝ անկարող եղած էր նախատեսել այն ամեն թշուառութիւնները որ կոյր և անփորձ սիրոյ կրնային հետեւիլ :

Այս ժամի չափ ևս զանազան նիւթերու միայ խօսակցութիւններ ըլլալէ յետոյ Էտուար ոտք ելնելով ըսաւ Ալֆօնսի .

— Բարեկամ , յարմար ժամանակ է մեկնելու , փոթորիկ և անձրև դադրած են , երկնից մթին ամպերը բառական սպառնալիք կրննն , աղէկ կըլլայ եթէ մեկնինք :

— Շատ լաւ — պատասխանեց Ալֆօնս , և Էտուարի հետ միասեղ ոտք ելաւ մեկնելու :


— Պարմենե՛ր — ըսաւ տիկին Բօլ , — պարահանդէսին նկատմամբ տուած խոստումնիդ կը յուսամ պիտի յիշէք :

— Ապահով եղիք , տիկին — պատասխանեցին Ալֆօնս և Էտուար : Երբ զամենքը բարևելէ յետոյ տան դուռէն դուրս պիտի ելնէին՝ Տօրա երևելով կամաց մը ըսաւ Էտուարի Ալֆօնսէ զազտնի :

— Պարահանդէսին մէջ պիտի տեսնուինք , այնպէս չէ՛ , Էտուար :

— Անտարակոյս , ազնիւ օրիորդ :

Երկու բարեկամները թև թևի տուած մեկնեցան :



Փ Լ Ո Ւ Ն Ե

Պ Ա Ր Ա Լ Ա Ն Գ Է Ս Ը

Փետրվարի չորան էր :

Կարծես բնութիւնը ընդհանուր ուրախութեան նստաստամասոց ըլլալ կողէր, օգը պայծառ էր և արևը բաւական ջերմացնող ճառագայթներ կարձակէր, ձմեռուան մէջ պայծառ օրեր հազուադիւտեն, ամառուան վերադարձի կը նմանէր այն, միայն ծառերուն տերևազուրկ տեսքը ձմեռուան յայտարար կըլլար, կապոյտ երկնից անամպ պայծառութիւնը խաղաղ և հանդարտ գիշեր մը կառնտէր :

Մեր վերոյիշեալ տան մէջ զուարթութենէ ուրիշ բան չկար, միայն անհամբերութիւնը ղիճենք կը նեղէր. և ստուգիւ երջանիկ ժամբու մօտիլը համբերութեան տագնապ կը պատճառէ, և իւրաքանչիւր վայելենին մահճը՝ անհամբերութեան սնունդ կուտայ և կը բորբոքէ :

Նոյն օրուան նման կրնանք բսել որ Տօբայի կենաց մէջ մէկ կամ երկու անգամ հազիւ պատահած են, ծիծաղերես և զուարթ էր, պայծառ յոյսեր իր գեղեցիկութիւնը կատարելագործած էին և իր խորհուրդները բոլորովին Նաուարի նուիրուած :

Ար մտածէր իւրովի թէ ի՞նչպէս վերջի այցելութենէ ի վեր որ հօթն օր անցած էր, կարող եղած էր իր ժամանակը անցընել, թէ և քանի մ'անգամ ղինք տեսած էր և անոր սիրահարական խօսքերն ու ակնարկները վայելած, բայց կարող չեղած էր տակաւին այնպիսի պատահալութիւն մ'ունենալ՝ որով կարենար գոնէ քստորդ մը առանձնակի տեսնուիլ և յայտնել այն սէրը՝ որ իր սրտէ բղխած ղինք կը տանջէր :

— Ո՛հ, — կըսէր իւրովի, — եթէ սէրը այսչափ քաղցր է իր սկզբնաորութեան մէջ, եթէ իր այս առաջին քայլով այսչափ

գուարթութիւն կը պատճառէ , ո՛հ , կզգամ , այո՛ , կզգամ այն խօսքին անտեղութիւնը որ սիրոյ համար թշուառութիւն է կըսեն ։ Բնչպէս կրնայ անձ մը թշուառ ըլլալ երբ սէրը իր սիրտը գրաւած է , կամ եթէ սէրը թշուառութիւն է՝ Բնչ պաշտօն ունի ուրեմն ասելութիւնը , սիրոյ համար գանձեր կը վատնուին , սիրոյ համար անձեր կը զոհուին , սիրոյ համար Աստուած մը իր երկնային գահէն կիջնէ և կը շարշարուի և սէրը տակաւին թշուարութիւն կը համարուի , սէրը , երկիրս երկնից հեռ զուգող գլխաւոր տարրերէ մին գեռ յանցանք կը համարուի շատերէ : Հակառակը մտածենք եթէ այս ստուգիւ յանցանք մ՛է՛ կը հետեւի անաչառ կերպիւ որ այս մասին բնութիւնը յանցաւորութեան գործիքն է և Նախախնամութիւնը յանցաւոր . . . : Բայց աղէ՛ թողունք այս մտածումները որ մարդուս երջանիկ ժամերը կը գառնացնեն , թողունք այս նախապաշարումները որոնց պատճառաւ անմիջ յանցանաց և զրուպարտութեան թուքումուքով կարհամարհուի , և երբեմն իր անմեղութեան կը զոհուի : Աւր սէր կայ՝ հոն կայ նաև հարստութիւն , փառք և պատիւ , ուր սէր կայ՝ հոն կայ նաև երջանկութիւն , վերջապէս ուր սէր կը տիրէ՝ հոն կը բնակի Աստուած , և ուր սէր կը պակսի՝ երջանկութեան ստուերը անգամ չերեւիր :

Այս միջոցին Ալիսի ներս մտնելը , որ Տօրայի մօրեղբօր աղջիկն էր , իր մտածումները ընդմիջելու պատճառ եղաւ :

— Մտածկոտ վիճակի մէջ կը տեսնեմ՝ գքեզ , ըսաւ Ալիս , այս օրերս տարբեր կիրքերու ենթակայ ըլլալդ դիտեցի քանի մը անգամ , մերթ ուրախ և զուարթ տեսայ գքեզ , մերթ տրտում և տխուր , այսու ամենայնիւ չկրցայ պատճառը հասկնալ :

— Ստուգիւ , սիրելիդ իմ Ալիս , եթէ երբեմնակի զիս տարբեր կիրքերու ենթակայ կը տեսնես՝ կրնաս ապահով ըլլալ որ ցաւալի պատճառներ չունիմ , իսկ ասոր հակառակ ուրախութեանս պատճառները անթիւ են , բայց այս յայտնի է որ մարդս իր երջանիկ ժամերու մէջ ալ չկրնար տխուր խորհուրդներ իր երեակայութենէ արտաքսել՝ քեզմէ բան մը չեմ պահեր , Ալիս , վասն զի եթէ գքեզ գաղտնեացս հաղորդ չընեմ՝ սիրտս ոգիէս բաժնած պի-

տի ըլլամ : Ալիճակս տարօրինակ կերեւի քեզ , ստոյգ է , բայց կրկ-
գամ թէ ինչ է ուրախութեանս շարժառիթը , և ինչ՝ տրտմու-
թեանս . յոյսը զիս զբաւած է արդէն , բայց յուսահատութիւնն ալ
անխիղճ պարտատէրի նման զիս ձեռքէ չթողուր . իւրաքանչիւր վայր-
կեան իմ՝ յոյսերու սնունդ կուտայ , և իւրաքանչիւր վայրկեան զանոնք
կը ցնդէ . վշտերու կենթարկիմ , ուրախութեան մէջ կը թաւալիմ ,
երբեմն երջանութեան և երբեմն թշուառութեան անդունդը կը սուզիմ
երեւակայութեամբ , յուսոյ կսկսիմ , և ահա յուսահատութիւնը զիս կը
պաշարէ և երբ ասոր անդուժ հաճոյից կենթարկիմ՝ ահա կազդուրիչ ,
ճառագայթ մը՝ չեմ գիտեր որ հրեշտակէ զրկուած , զիս կը յուսայնէ ,
և ինչ բանի . — սիրուելու . թէ և շատոնց սկսած եմ սիրել : . . . Բայց
ինչ համարձակ է սէրը , Ալիս մի՛ զարմանար , մաքուր սէրը կեղծա-
ւորութեան զիմակը կը մերժէ և իր էութիւնը ամբողջ կը ցուցնէ :

— Ստոյգ է , բայց կրնամ իմանալ թէ ո՞վ է քու սիրած անձը
որմէ սիրուելու կը յուսաս , սէրը առանց պատճառի չի բղխիր , ուստի
և անշուշտ մէկու մը կակնարկեն խօսքերդ , որու անունը չարաս-
սանեցիր , զաղտնի է ինձմէ ատիկա :

— Ա՛յ , Ալիս , ո՛չ , արդէն ըսի որ իմ քովս սրտիս չափ արժէք
ունիս , փորձած եմ քու անկեղծ սիրտդ , փորձած եմ քու հա-
ւատարմութիւնդ և հիմա քեզ իր անունը պիտի ըսեմ : Սիրոյս տա-
րօրինակութեան վրայ զարմացում մը կը յայտնէք զրեթէ , իրաւունք
ունիք , և ես կապահովցնեմ զքեզ որ որչափ դժուար է Աստուծոյ
կարողութեան սահման տալ՝ նոյնչափ դժուար է սիրոյս սահման
դնել . ճշմարիտ կը խօսիք թէ սէրը առանց պատճառի չբղխիր ,
բայց եթէ իմ սիրոյս շարժառիթը կուզէք իմանալ Կառուարն է , ո՛հ ,
Կառուարը , իր ծաղիկ հասակը , իր կայտառ երեսը , իր գրառիչ բը-
նութիւնը , վերջապէս իր առ իս ուղղած ակնարկներն ու խօսքերը
սէրս սաստիկ բորբոքեցին և հիմա կզգամ որ եթէ աշխարհ հակա-
ռակի սիրոյս՝ պիտի չկրնայ զայն խախտել :

Տօբա բորբոքած և եռանդուն կը խօսէր , աստիճան առ աստիճան
ձայնը կը բարձրացնէր և իր վերջի խօսքերը աւարտած ժամանակ իր
օրիորդի բնութիւնը թողած կարծես գիւլյազնի մը վեհութիւն ստա-
յած էր :

—Այլ դժամ՝ քու վրայ, և կ'իմացնեմ քեզ մտերմօրէն որ այդ անզուսպ սէրէ հրաժարիս, վասն զի արդիւնքը անստոյգ կ'երևի հիմա :

—Ատիկա անկարելի է, մի՞թէ քեզ իմ գաղտնեացս հաղորդը ընելով ռիսերի՛մ մը պիտի աւելցնեմ, որչափ դժուար է ոգի մը սպաննել՝ նոյնչափ դժուար է սէրս ոչնչացնել, այդ կարծիքէ բոլորովին հեռացիր, գեթ խորհրդակից կ'ընեմ ինձ և ոչ հակառակորդ, զի տեմ ես որ պիտի չխաբուիմ վերջէ, այս իրիկուն պարահանդէս կայ, ամեն կողմ ինձ համար յուսալի է, իրմէ խօսք ընդունած եմ տեսնուելու, հիմա խօսէ՛ ինչ կը յուսաս այս տեսութենէ՛ որու մէջ սիրտ սրտի պիտի բազխէ և շունչ շունչի հետ պիտի խառնուի :

—Լա՛ւ, կ'իմացնեմ քեզ որ ե՛թէ սէրդ այնչափ սաստիկ է որ դայն մերժել անկարելի ըլլայ քեզ, պէտք ես ջանալ փոխադարձ սիրուելու. ամեն զոհողութիւն մի՛ խնայեր, ամեն ջանք ՚ի գործ դի՛ր նպատակիդ հասնելու, որովհետև ո՛ւր սէրը փոխադարձ չէ՛ թշուառութեան կարապետ է :

—Աեցցե՛ս, խորհուրդդ ընտիր է, հիմա քու անկեղծ սրտիդ և բարի զգայմանցդ նոր ապացոյց մ՛ալ առի. դիտե՛ս որչափ երջանկութիւն կ'ըզայ էակ մը երբ իր կարծեաց համամիտ մը գտնէ :

—Այո՛, իրաւունք ունիս, բայց համամիտ մը պէտք չէ որ միշտ առանց տարբերութեան գիմացիներն քմաց յարմար խորհուրդներ տայ. սրտիդ անկեղծութիւնը ճանչցած եմ, կըսես, և հաւատարմութիւնդ փորձած. լա՛ւ, առաջին անգամ գաղտնիքդ իմացած ժամանակ քեզ հակառակ խօսիլս չգիտնաս որ սէրդ խախտելու կամ բռնած ընթացքդ պարտաւելու նպատակաւ էր, քառ լիցի, այդ մասին քեզ ապահովցնելու համար չեմ աշխատիր փաստեր յառաջ բերել, որովհետև խոստովանեցար որ հաւատարմութիւնս և առ քեզ ունեցած սէրս կը ճանչնաս : Իմ նախ և յառաջ հետդ այս կերպով վարուելուս նպատակը այն էր որ գեթ գաղտնեցնեմ այն անխոհեմ սէրէ որ յիմարութեան եղբայրն է և թշուառութեան կարապետը, բայց երբ անսայ թէ սէրդ սուրբ էր և անկեղծ, երբ տեղեկացայ թէ այնպիսի անձ մը կը սիրես՝ զոր ես լաւ կը ճանչնամ, երբ ի-



մնացայ վերջապէս թէ փոխադարձ սիրուելու և հետևաբար երջան-
կանալու չէ թէ սնոտի յոյսեր այլ իրական ճշմարիտ պատճառներ
ունիս, մէկէն քաջալերեցի զքեզ և կը քաջալերեմ, սիրէ՛ սուսնց
վհասեելու, ջանա՛ սիրուելու և այնպիսի նուիրական կապ մի հաս-
տատեւրու՝ զոր ոչ բարոյը և ոչ ձախող պարագաներ կարող ըլլան
խզել :

— Այո՛, այո՛, ամէն ինչ պիտի զօհեմ, ամէն արդելքներ պի-
տի արհամարհեմ, բան մի պիտի չխնայեմ, և ոչ իսկ անձս, ամէնքն
ալ իրեն պիտի նուիրեմ և պիտի ջանամ փոխադարձ իր սիր-
սը ընդունելու :

— Ահա, առ այժմ ես կը մեկնիմ զքեզ քու պայծառ մտա-
ծումներուդ մէջ առանձին թողլով՝ ժամանակը բաւական յառաջա-
քած է, չեմ յուսար որ մէկ ժամէ աւելի ունենանք պատրաստու-
ելու :

Ալիս մեկնեցաւ խանդակաթ նայուածք մի ձգելով Տօրայի վրայ :

— Ազնիւ սիրտ ունի — ըսաւ իւրովի Տօրա, — կը սիրեմ զքեզ
Ալիս, կը սիրեմ այն սուրբ սիրով՝ որ մարգս իր յուսոյ և յուսա-
հատու թեան մէջ զսնուած ժամանակ կ'զգայ :

Գիտեմ որ շատեր իմ ընթացքէս պիտի չախորժին, դիտեմ որ
շատեր պիտի ըլլան իմ հակառակորդներս, կ'զգամ որ ամեն մէկ
քայլիս սպառնալիք և արգելք պիտի հանդալին, այլ նաև դիտեմ
և կ'զգամ որ զանանք մերժելու և արհամարհելու համար կարո-
ղութիւնս նուազ չէ : Աստուած իմ, անձուկ ժամերուս զքեզ օգ-
նութեան կը կանչեմ, եթէ երբեք յանցանք չի սեպուիր զքեզ սի-
րոյ օգնութեան կանչելը. դու սէրը հաստատեցիր, և դու զայն չես
մերժեր անշուշտ, պատուէրդ է զերար սիրել, և ես կը սիրեմ այն-
պիսի բուռն և սաստիկ եռանդով՝ զոր ոչ երկինք և ոչ երկիր ի-
րենց ամբողջ զօրութիւններով կարող են նուաձել, չեմ հայհոյե-
ր ամենակարողութեանդ դէմ Աստուած իմ . . . :

Ո՛հ, ի՞նչ զբաւիչ բնութիւն և աշխոյժ ոգի ունէր Էստուար, իր
ձայնը սոխակի ձայնէ աւելի ներդաշնակ է, իր բնութիւնը աղա-
նիէ աւելի անմեղ, իր դէմքը վարդագոյն և պայծառ, իր շար-

ժողովքը շնորհալի և համեստ . վերջապէս իր ամէն զբառով յասկութիւններով սիրուելու խիստ յարմար երիտասարդ մը . քանի՜ երջանիկ եմ ես . կը տեսնեմ որ կոյր բազմը արդէն սկսած է վրաս զթալ . բայց , ո՛հ , եթէ ապագան մտածել խոհեմութիւն կ'ըսուի՝ իր անստուգութիւնը զիս կը տագնապէ . բայց ի՛նչ յիմարութեամբ պայծառ յոյսերս ցնդելու կը ջանամ , միթէ իր անխարկներն ու սիրոյ խօսքերը չընդունեցի , միթէ իր առ իս ունեցած սիրոյն չափազանցութիւնը չզգացի , միթէ վերջապէս իրմէ խօսք ընդունած չեմ այս իրիկուն տեսնուելու . այո՛ , այո՛ . այս տխուր և ներհակ մտածումներս ալ ան ասին վրաս կը բռնանան՝ երբ յուսոյ նշյլ մի զիս կազդուրէ . այս իրիկուն հակառակ կարծիքներու մէկը սխալ յաղթանակէ անշուշտ , կամ յուսահատութիւնը զիս սխալ թըռուաւացնէ , կամ յոյսը զիս սխալ կենդանացնէ , տեսնե՛ր ալ :

Այս միջոցին Օսկար ներս մտնելով ըսաւ .

— Գոյր իմ , ի՛նչ անփոյթ վիճակի մէջ կը տեսնեմ զքեզ , ժամանակնիս սուղ է , արդէն ժամը ինն է և ապահով եմ որ տասին պարահանդէսը կ'սկսի :

Տօրա սրագ շարժումով մի ցատկեց իր տեղէ և առանձնասնեակը մեկնեցաւ զարդարուելու :

— Տօրա — ըսաւ ինքնին Օսկար — այս օրերս գրեթէ բոլորովին փոխուած կ'երևի , է՛հ , ո՛վ գիտէ ինչ պայծառ խորհուրդներ , կամ մտածումներ , որոնք այս հասակին ընկեր են , զինք կը խոսվեն :

Տան մէջ ամէն ոք պատրաստութեան ետեւ էր :

Տասին քառորդ մնացած Տօրա բոլորովին պատրաստ էր :

Ճերմակ շրջազգեստ մի իր զիմաց կայտառութեան բարեխառն ըսպիտակութիւն տուած էր , կուրծքը կիսաբաց և թեկերը մերկ էին , իր մարմնոյն և մասնաւորաբար կուրծքին սպիտակութիւնը նշանաւոր էր , շնչառութեան ժամանակ կ'ընդարձակուէր և կը բարձրանար ամենու զմայլում պատճառելով , որովհետեւ սիրոյ կայանն էր այն . երկու կարմիր վարդեր կողմնակի իր գլխուն քովերը զետեղուած էին . բայց անոնց պայծառութիւնը իր շնորհալի զիմաց կայտառութեան

քով կարծես նուազ կ'երևէր . իր բնական արագաշարժ և աշխոյժ շարժուածքը իր գեղեցկութեան կատարելութիւն կ'ուտար , միայն երկու թև կը պակսէին իրեն բոլորովին անթերի հրեշտակ մը ըլլալու համար :

— Գեղեցկութիւնդ կատարեալ է , աղջիկս— ըսաւ տիկին Շարլ , — չեմ գիտեր թէ իմ մայրական զգացողութիւնս է այս գատողութեանս պատճառը , եթէ ստուգիւ քու գեղեցկութիւնդ :

— Ապահով եղի՛ք , տիկին— յարեց Ալիս , որ Տօրայի քով կայնած էր . — իր գեղեցկութեան կատարելութիւնը ստոյգ է , և մայրական սէրդ և զգացողութիւնդ սխալ կարծիք մ'ըրած չեն :

Այս միջոցին պարոն Շարլ յտիշտակուած իր աղջկան խանդակաթ կը նայէր :

Ամեն ոք պատրաստ էր , ուստի և մեկնեցան դէպ 'ի տիկին Բօլի տունը , ուր պարահանդէսը տեղի պիտի ունենար :

Քանի մը վայրկեանէ իրենց առաջադրած տեղը հասան :

Տան սրահին մէջ բազմութիւնը խոնած էր , Տօրա անոնց մէջ ակնարկ մը նետեց և իր փնտուածը չգտաւ :

Վայրկեան մի անձկութեան մէջ ինկաւ :

Բազմութեան ուշադրութիւնը բոլորովին իր վրայ էր . իր անթերի գեղեցկութիւնը երիտասարդներու սէրը և օխորդներու նախանձը կը գրգռէր :

— Պարահանդէսնիւս կը յուսամ ախորժիք , մայր իմ , — ըսաւ տիկին Բօլ :

— Ապահով եմ— պատասխանեց տիկին Շարլ . — որովհետեւ քու խոսեմ և փորձառու բնութիւնդ լաւ կը ճանչնամ :

Տիկին Բօլ շնորհակալութեան շարժում մի ըրաւ , և վերջէն Տօրայի գառնալով յարեց .

— Տօրա՛ , պանչելի կերպարանք մի առած ես , այտերդ կարմիր են և դէմքդ շնորհալի . այսու ամենայնիւ տխրութիւն մը կը նըշմարեմ վրադ :

— Ամենին , քոյր իմ , — պատասխանեց Տօրա , — այսպիսի հանդէսներու մէջ մարդս ինչ պատճառ կրնայ ունենալ ախրելու :

Ամեն ոք իրարու Տօրան կախարհէին , բայց ինք պարկեշտութեամբ անուշադիր էր անոնց :

Ժամը տասը քառորդ անցած էր և տակաւին Էտուար բացակայ էր :

Իր անձկութիւնը կ'աւելնար :

Հինգ վայրկեանէ վերջը ռանաձայներ լսուեցան սանդուղին վրայ :

Տօրայի սիրտը բարախել սկսաւ :

Ութ դիմակաւորներ վայրկեանէ մը սրահը մտան :

Տօրա անոնց կը նայէր , կ'զգար որ իր փնտուածը անոնց մէջն էր բայց չէր կրնար զայն ճանչնալ :

Շղարշեայ զգեստ հագած , գլուխը թագ դրած և սնդուսէ դիմակով երեսը ծածկած անձ մը իր առջև ներկայացու :

Տօրա համեստութեամբ ետ քաշուեցաւ :

— Զե՞ս ճանչնար զիս , Տօ՛րա , — ըսաւ դիմակաւորը :

— Ո՛չ , — պատասխանեց Տօրա :

— Այսու ամենայնիւ ես գքեզ լաւ կը ճանչնամ , յիշէ՛ անցեալ շարժուան այցելութիւննիս :

— Ո՛հ , դ՞ո՞ւն ես Պ. Էտուար , Ջշմարիտ կ'ըսեմ որ հպատակ միայն կը պակսի քեզ թագաւորութեանդ ստուգութիւն տալու համար :

— Եւ քեզ պսակ մը կը պակսի թագուհի ըլլալու համար :

Տօրա ժպտեցաւ :

Այս միջոցիս ճեզայիրի փառաւոր զգեստ հագած և սեւու դիմակ դրած մէկը իրենց մօտեցաւ :

— Ո՛վ է այս Պարոնը — հարցուց Տօրա Էտուարի :

— Պարոն Ալֆօնսն է — պատասխանեց Էտուար :

— Ասանկ հանդէսներէ չէք ախորժիր , պարոն Ալֆօնս — ըսաւ Տօրա , — Ինչպէս եղաւ որ եկաք :

— Շիտակը Պ. Էտուար զիս ստիպեց , պատասխանեց Ալֆօնս ծիծաղով մի :

Էտուար և Տօրա ժպտեցան :

Պ. Ալֆօնս ուրիշ խումբի մը մէջ մտաւ :

— Պիտի պարենք միատեղ, այնպէս չէ՛, Տօրա — ըսաւ Էտուար :

— Այո՛, Էտուար — պատասխանեց Տօրա :

Էտուար զատուեցաւ իրմէ :

Էտուար դրառող բնութիւն ունէր և Տօրա յափշտակուած էր :

Քաղաութիւնը երթալով կ'աւելնար և երիտասարդներուն անհամբերութիւնը հարկեցուց հանդէսին սկզբնաորութիւն մի տալու :

Նուազարանները հնչել սկսան, և պարը սկիզբ առաւ :

Դիմակաւոր մի եկաւ Տօրայի թեր խնդրեց :

Տօրա մերժեց զայն :

Պարոն Ալֆօնս ներկայանալով ըսաւ .

— Կ'ընդունի՞ք թե՛ս, Տօրա :

— Առաջարկուած եմ, պարոն Ալֆօնս — պատասխանեց Տօրա :

— Այս իրիկուն սե՛ղ բնաորութիւն մի եկեր է վրայ :

— Եւ ձեր վրայ թեթևութիւն մի :

Պարոն Ալֆօնս ամօթով մեկնեցաւ :

Մանրերկրորդէ մի յետոյ Էտուար ներկայանալով Տօրայի հետ պարել սկսաւ :

— Ի՛նչ երջանիկ ծամ է այս, Տօրա — ըսաւ Էտուար :

— Այո՛, խիստ հաճութիւն կ'զգամ, — պատասխանեց Տօրա :

Տօրայի արագաշարժ և շնորհալի շարժումաձքը ամենու խանդավառանք և զմայլում կը պատճառէին :

Երիտասարդները զմայլած զինք կը դիտէին :

Օրիորդաց նախանձին չափ չկար :

Քառորդի մը չափ պարելէ յետոյ Էտուար հարցուց Տօրայի :

— Յոգնեցա՞ք, Տօրա :

— Այո՛, Էտուար, եթէ կարելի է դադրինք քիչ մը :

Էտուար իր թեր ներկայացուց Տօրայի և Տօրա ընդունեց :

— Վուզե՛ս դէպ ՚ի պարտէզ յառաջանանք հովահարելու :

— Այո՛, գէշ չըլլար . — պատասխանեց Տօրա :

Երկուքնին առանձին դէպ ՚ի պարտէզ յառաջացան :

Պարտէզը բաւական ընդարձակ և զարդարուն էր . հարթուած և մաքուր ձեմելի մ'ունէր, և ինչպէս ըսինք օգը պայծառ ըլլալուն թէև չուսինք բաւորակ իր պայծառութիւնը առած էր՝ այսու ամենայնիւ :

տիկինն Բօլ խնայած չէր գոյնդգոյն լապտերներով զարդարել զայն .
դու շակելով որ պարողներու զով օդ քաղցր ըլլալով՝ կրնային խում-
բեր դէպ ՚ի պարտէզ յառաջանալ , ուստի իր փորձառու բնութեամբ
և կանացի փառասիրութեամբ կ'ուզէր որ փոքրիկ պակասութեան մի
տուիմ չի տայ :

— Ազատ եղանակի մը մէջ կը գտնուինք , Տօրա — ըսաւ Էտ-
ուար . — Եւ այս պարտէզը՝ որ անշուշտ գարնան մէջ ծաղիկներով
լի կ'ըլլայ՝ կը զանայ հիմա ինձ վարդ մի զոր կարենամ քեզ նը-
ւիրել , բայց հոգ չէ , Տօրա , փշալից վարդի տեղ անփուշ վարդ
մի կը նուիրեմ քեզ , այն է սիրտս , որ վարդի նման վաղանցիկ
հոտ չի բուրէր , այլ յաւիտենական սէր , ուստի պիտի զլանամ հի-
մա փոխադարձ քուկդ ինձ շնորհելու :

— Սիրտս արդէն քեզ նուիրուած է , Էտուար , — պատասխա-
նեց Տօրա , — գիտես՞ առջի անգամ զքեզ տեսնելէս ՚ի վեր ի՞նչ
կ'զգայի , ո՛հ , ի՞նչ խօսքերով քեզ իմ զգացմանցս վրայօք բացա-
տրութիւն տամ . վերջապէս կ'զգայի ի՞նչ որ սէրը կ'ազդէ , ի՞նչ
որ սիրահար մը կ'զգայ . խօսքերը մարդուս կարծիքները միայն յայտ-
նելու կը բառն և ոչ սիրոյ զգացումը . ասոր համար ուրիշ լեզու
մը պէտք է . բայց նայէ՛ , Նախախնամութիւնը ասոր ալ դարման
հոգացած է . համը և տարբեր լեզու մի կայ , զգացման նուիրական
շարժառիթ մը , վերջապէս սիրտ մը կայ , որ կրնայ իր դիմացինին
սրտին մէջ անցածները յստակ տեսնել , կը հաւատամ ասոր , Է-
տուար , եթէ այո , խօսէ՛ ուրեմն ի՞նչպէս կը գտնես սիրտս :

— Սիրտդ , — պատասխանեց Էտուար , — թէ ներքին և թէ ար-
տաքին տեսքով հրեշտակի մը կերպարանք ունի :

Էտուար բորբոքած էր և Տօրա նուաճուած :

Քանի մը վայրկեան փոփոխակի մէկ մէկու երես կը նայէին շուրջ
կարծես իրարու սիրտ կարդալու նպատակաւ :

Էտուար յստակ կը տեսնէր Տօրայի սրտին անբժութիւնը և անոր
սիրոյն ճշմարտութիւնը , Տօրա ևս կ'զգար որ Էտուարի սիրտը իր
սիրոյն կը պատասխանէր :

Էտուարի դատողութիւնը սխալ չէր , բայց Տօրա իր սիրոյն չափա-
զանցութեան պայմանաւ սխալ կարծեաց մէջ ինկաւ :

Մէկուն զգացածը զլուսանք էր, և միւսինը յաւիտենական սէր :

— Ուրեմն երջանիկ պիտի ըլլանք, — ըսաւ Տօրա :

— Ո՞վ երբէք մեր երջանկութեան արդելք պիտի կրնայ ըլլալ —
պատասխանեց Էտուար :

— Լա՛ւ, քանի որ փոխադարձ զիս կը սիրես, քանի որ զգացած
սէրերնիս հաստատուն և անկեղծ է, նուիրական կապ մի միայն կը
պակսի զմեզ միաւորելու. երդո՞ւմ մի, պիտի երկմտիս ասոր :

Էտուար շփոթեցաւ, բայց առանց իր շփոթութիւնը յայտնելու
պատասխանեց .

— Երդումը, Տօրա, սիրոյ մէջ խմատ չունի :

— Այո՛, բայց անկեղծ սէրը կասկածոտ ըլլալուն ասպհովութեան
կը կարօտի :

— Կ'երկմտիս սիրոյս անկեղծութեան վրայ :

— Ո՛չ բնաւ, բայց քանի որ կղզաս թէ սէրդ անկեղծ է, ի՞նչու
կը տարակուսիս խնդիրս կատարելու :

— Լա՛ւ, կերդնում կենացս վրայ :

— Եւ ի՞նչ բանի :

— Զքեզ յաւիտեան սիրելու :

Էտուար խռոված էր և Տօրա երջանիկ :

— Էտուար, ցուրտ կ'զգամ — ըսաւ Տօրա :

— Եթէ կը հաճիս սրահը դառնանք :

Տօրա հաճեցաւ և երբ միտտեղ սրահը վերադարձան՝ տեսան որ Ա-
լիս Պ. Ալֆօնսի հետ կը պարէր :

— Պարոն Ալֆօնսի պարելը խիստ հաճած եմ, — ըսաւ Էտուար
Տօրայի :

— Այո՛, որովհետեւ և ոչ մէկ պարահանդէսէ բացակայ կ'ըլլայ
պատասխանեց Տօրա :

Էտուար Տօրայէ զատուեցաւ :

Այս միջոցիս Ալիս պարելէ դադրելով բաժնուեցաւ Պ. Ալֆօնսէ
և Տօրայի քով եկաւ :

— Զուարթ կ'երեխս, Տօրա՛, — ըսաւ Ալիս :

— Այո՛, խիստ երջանիկ եմ, — պատասխանեց Տօրա — սիրոյս

պատասխանեց և երդամբ հաստատեց որ յախտեանս զիս պիտի
սիրէ :

— Ես ալ ճշմարիտ զըջացի պարոն Ալֆօնսի ինձ բրած պարելու
առաջարկութիւնը ընդունելուս :

— Ի՞նչ պատճառաւ :

— Աւան զի անախորժ դէպքերու առիթ տուաւ :

— Քիչ մը թեթեւ է :

— Մի՛ երկմտիր չափազանց ըսելու, Տօրա :

Պարին շրջանները ետէէ ետև կը կրկնուէին կարճ ընդհատում-
ներով :

Ժամանակը անցած ըլլալուն ընտանիքներ մեկնելու սկսած էին :

Երիտասարդներու թախանձանաց պատճառաւ պարը անգամ մի ևս
սկսուեցաւ :

Այս անգամ Պ. Էտուար Ալիսի հետ պարեց :

Տօրա քանի մը առաջարկողներ մերժեց յոգնութիւն պատճա-
ռելով. բայց իր նպատակը զԷտուար դիտել էր :

Պարոն Էտուար պարած ժամանակ դիտումք Տօրայի կը մտենար
և անոր սիրոյ ակնարկներ կ'ընէր :

Տօրա ևս ժպիտով կը պատասխանէր :

Պարին այս շրջանն ալ վերջացաւ. առաւօտեան լոյսը պատու-
հաններէ ներս կը մտնէր, և երիտասարդները վարագոյրները կը գո-
յէին լոյսը ծածկելու նպատակաւ :

Պարոն Շարլ իր ընտանեօք մեկնելու պատրաստուեցաւ :

Տօրայի աչաց առջև իր անցուցած երջանիկ ժամերը վայրկեան մի
կ'երեւէին և կը գանգատէր իւրովի ժամանակին արագ սահելուն վրայ :

Երջանկութեան ժամերու թռչիլը չի տեսնուիր, և թշուառութեան
ժամերու շարժիլը :

Տօրա խանդակաթ նայուածք մի ձգեց Էտուարի վրայ, Էտուար
ակնարկով մի պատասխանեց :

Պ. Շարլ իր ընտանեօք մեկնեցաւ :

Պարսահանգէսը վերջացաւ :



ՔԼԱՐՔ Գ

Ն Ե Ր Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն Ե Ը

Պարահանդէսին հետեւեալ օրն էր :

Արդէն ընթերցողք կը յիշեն որ Պ. Ալֆօնս պարահանդէսին մէջ վշտանալու առիթներ ունեցաւ . բայց ինք չուզեր էր վերադառնալ թէ Տօրայի սիրտը՝ որու հետ ունեցած յարաբերութիւնը չէր ուզեր գաղթեցնել, և թէ իր բարեկամին՝ Կառուարի դժգոհութեան առիթ տալ, վասն զի գիտած էր որ Պ. Կառուար Տօրայի հետ խիստ մը անբնական էր . հետեւաբար պարահանդէսին մէջ իր վիշտը և զգացած դժգոհութիւնը ծածկած էր, և առաջադրած էր որ առանձինն Տօրայի հետ տեսնուի և անոր առ ինքն ունեցած ատելութեան պատճառը իմանայ, զոր այնչափ երկար ժամանակ մտածելով կարող չէր գտնել :

— Ասիկա դժուարին հանելուկ մ'է — կըսէր իւրովի, — Տօրաբարեսիրտ և անմեղ կը ճանչնամ . ի՞նչ պատճառ ունի ուրեմն իր առ ինչ ցուցուցած հակառակութիւնը . պէտք է այսօր այս բանին իրապարտութիւն խնդրել, որովհետեւ բաւական ծանրակշիռ է, կը սիրեմ ես Տօրան, վասն զի բարի, գեղեցիկ և համեստ է . բայց նա ի՞նչ պատճառ ունի զիս ատելու, ամենեին չեմ յիշեր իրեն ապօրինաւոր առաջարկութիւն մի կամ խօսք մի ընելս . այս ասանկ ըլլալով եթէ զիս չսիրեր, ինչո՞ւ ասէ :

Բայց առ այժմ չեմ գիտեր թէ ի՞նչպէս զինք գտնել և իրմէ բացատրութիւն խնդրել պէտք է, առանձնակի տեսութիւն մը պէտք է, բայց այն ալ կ'զգամ որ անհնարին է . աղէկ միտքս եկաւ . տիկին Բօլի առեւր երթամ հիմա, ուր ապահով եմ որ զինք պիտի գտնեմ, և անշուշտ պատեհ առիթ մը կը գտնեմ ունեցած դժգոհութիւնս իրեն յայտնելու :

Աստի և պատրաստուեցաւ տիկին Բօլի տունը երթալու :

Բայց վայրկեան մի լռիկ մտածելէ վերջը ըսաւ իւրովի .

— Աւելի աղէկ պիտի ըլլայ եթէ անգամ մի գէտուար տեսնեմ :
որովհետեւ իրենց առանձնակի տեսնուած ժամանակ կարելի է իմ վը-
րաս խօսքեր եղած ըլլան : զորոնք անշուշտ էտուար ինձմէ չի պա-
հեր , և եթէ այս կասկածս ալ ստոյգ ելլէ՝ այն ատեն ատելի
համարձակ պիտի կրնամ իրմէ գանգատիլ և պատուոյս պաշտպանու-
թեան համար իրմէ բացատրութիւն խնդրել :

Աստի և առջի առաջագորութիւնը փոխելով Պ . Էտուարի տուն
գնաց ժամը երկուքին :

Էտուար դեռ գուրս չելած էր , որովհետեւ առջի գիշերուան պա-
րահանդէսին պատճառաւ անքուն և յողնած ըլլալուն մինչև ժամը
մէկ հանգստացած էր :

— Բարեկամ , — ըսաւ Ալֆօնս , — քանի մը հարցումներ ունիմ՝
ձեզ որ ինձ նկատմամբ կարեոր են , և կը յուսամ որ ճշմարիտ
կերպով կը պատասխանեք ինձ :

— Ի՞նչ հարցումներ , — պատասխանեց Էտուար , — զքեզ սալմու-
նչ խոսված կը տեսնեմ . ապահով եղիք որ ձեր ընելիք հարցում-
ներուն զիտցածս ստուգութեամբ պիտի պատասխանեմ :

— Շնորհակալ եմ , ձեր վրայ ունեցած վստահութիւնս պարանոց
չելաւ , պիտի չի վշտանաս անշուշտ եթէ իմ հարցումներս քու
սիրոյդ առարկային վրայ ըլլան :

— Ո՛վ է իմ սիրոյս առարկան :

— Տօրան :

Էտուար խոռովեցաւ և իր սրտին խորէ լռիկ հառաչեց :

— Խօսէ՛ նայիմ , — ըսաւ Էտուար :

— Տօրայէ սաստիկ կերպիւ վշտացած եմ :

— Ի՞նչ պատճառաւ :

— Որովհետեւ քանի մը անգամ այնպիսի կծու խօսքեր և ակ-
նարկներ ըրաւ ինձ՝ որ ստուգիւ պատուոյս արատ կը բերեն , ես կըր-
նայի անոր ինձ ըրած նախատանաց սաստիկ կերպով պատասխանել
եթէ գքեզ չմտածէի :

— Բայց որո՞նք են այն կծու խօսքերը ու ակնարկները որոնց համար վշտացած կ'երևիս :

Պարոն Ալֆօնս պատուեց մի ըստ միողէ թէ պարոն Էտուարի ներկայութեան ժամանակ Տօրայի առ ինքն ուղղած ծաղրելի խօսքը և թէ վերջէն անոր թեւը խնդրած ժամանակ ըսելունս կծու պատասխանը :

— Իրաւունք ունիք , — ըսաւ Էտուար :

— Այո՛ , իրաւունք ունիմ , և իրաւունք պիտի ունենամ անշուշտ իրմէ բացատրութիւն խնդրելու :

Էտուար պատասխան չի տուաւ :

— Հիմա , — ըսաւ Ալֆօնս , — իմ ձեզմէ խնդրածս այս է որ իրեն հետ առանձին գտնուած ժամանակդ ինձ ակնարկող և իմ պատուոյս արատ լեւրող խօսքեր ըրամ :

— Ո՛չ երբէք :

— Մտածէ՛ , Էտուար , որովհետեւ կարելի է մտցած ըլլաք :

Էտուար հաստատամտութեամբ վերստին պատասխանեց .

— Ո՛չ :

— Կրնամ ապահով ըլլալ :

— Պատուոյս վրայ կ'երդնում :

— Արեմն ես հիմա տիկին Բօլի տունը կ'երթամ ուր ապահով եմ որ Տօրա կ'ըլլայ , և իրմէ բացատրութիւն կը խնդրեմ :

— Աղէկ , բայց ինձ հետ տեսնուիլդ մի՛ իմացներ :

— Ապահով եղիք :

Պարոն Ալֆօնս մեկնեցաւ դէպ ՚ի տիկին Բօլի տունը :

Տօրա պատահելիք դէպքերէն առանց տեղեկութիւն ունենալու կէսօրէ վերջ իր քրոջ այցելութեան դացած էր և իրենց պարահանդէսին վրայօք խօսեցած և զուարճացած միջոցին դուռը բացուեցաւ և Պ. Ալֆօնս ներս մտաւ :

— Բարի եկաք , պարոն Ալֆօնս , — ըսաւ տիկին Բօլ ժպտալով մի :

— Բարի տեսանք , տիկին , — պատասխանեց Պ. Ալֆօնս :

— Ի՞նչպէս , պարահանդէսնէս ախորժեցա՞ք :

— Զափազանց, տիկին, և մեր շնորհակալութիւնը կրկին անգամ ձեզ կը յայտնենք :

— Ատոր այդչափ արժանի չե՞նք :

— Ի՛նչպէս տիկին, ասկէ աւելի զմայրելի պարահանգէս կրնամ ասահովցնել զձեզ որ երբէք տեսած չեմ, ամեն ինչ ձեր փորձառութեամբ կարգադրութեան տակ ըլլալուն դժգոհութեան տեղի մի չտուաւ, և կրնաք հաւաստի ըլլալ որ միայն ես չեմ ձեր պարահանգէսէ ախորժողը՝ հապա բոլորներկայ եղողները :

— Կարելի է, — ըսաւ տիկին Բօլ զուարթ ժպիտով մի :

— Ոչ թէ կարելի է, հասցա ստոյգ է, — պատասխանեց Ալֆօնս :

Այս միջոցիս տիկին Բօլ տիկին Շարլի հետ խօսակցութեան մէջ մտաւ :

Ալֆօնս տեսնելով որ յարմար առիթ է Տօրայի հետ խօսելու ըսաւ :

— Տօրա սաստիկ վշտացած եմ :

— Ո՞րմէ, և ի՛նչ պատճառաւ Պ. Ալֆօնս, — ըսաւ Տօրա :

— Զեզմէ՛ և պատճառը ձեր այն կծու խօսքերն են, զորոնք երեկուան պարահանգէսին մէջ ըսելնիդ կը յիշէք անշուշտ :

— Պարոն Ալֆօնս, խիստ դիւրադրդիւ կը անենեմ զձեզ :

— Ոչ այդպէս օրիորդ, դիւրադրդիւ չեմ, այլ պատուոյս նախանձախնդիր, դիւրադրդիւ կ'ըսուի այն անձը՝ որ ոչինչ պարադաներէ կը զայրանայ, բայց իմ իրաւացի դժգոհութիւնս կ'զգամ որ դիւրադրդիւ բնաւորութեան արդասիք չէ :

— Պարոն Ալֆօնս, ձեզ վշտացնելու ի՛նչ առիթ տուի երեկ դիշեր, ստուգիւ կը յիշեմ որ քանի մը անգամ ձեզ հետ խօսակցելու պատիւը ունեցայ, բայց մտացս այսօրուան խռովութեան պատճառաւ չեմ կրնար յիշել ձեզ դժգոհութիւնս պատճառող իմ առթած դէպքերս :

Պարոն Ալֆօնս յիշեցուց անոր պարոն Էստուարի ներկայութեան ժամանակ անոր կծու ակնարկը և յետոյ այն դառն պատասխանը՝ ջր իր թեւը խնդրած ժամանակ ընդունած էր :

— Առաջինին նկատմամբ — պատասխանեց Տօրա , — կըսեմ որ լոկ դու արձալի խօսք մի ըլլալու նպատակաւ ըրի, կարծելով որ այսպիսի ոչինչ խօսք մը ձեզ վշտացնելու ստիժ չի տար, և երկրորդին համար՝ որ թէև առջինէ աւելի ծանրակշիւ է, կիմացնեմ որ նախայարձակը դուք եղաք, որովհետև կը յիշէք անշուշտ որ « սէղ բնա որու թիւն մի եկեր է վրագ » ըսիք :

— Այո՛, վասն զի ստուգիւ հպարտացեր էիք երեկ զիշեր հակառակ ձեր սովորական բնութեան :

— Ո՛չ այդպէս, երբէք չի հպարտացած էի, այլ մտածկոյ վիճակի մէջ ըլլալուս բոլորովին անուշադիր էի չորս կողմն պատահած դէպքերուն, թէև կը խոստովանիմ որ ասիկա մեծ յանցանք մ'է :

— Տօ՛րա, կը տեսնեմ որ բոլորովին տարբեր կերպիւ կը խօսիք այսօր, և կը ջանաք ձեր սխալմունքը անհամաձայն պատրուակներով ծածկել, բայց զիտցած ըլլալ պէտք էք որ ձեր ըսածին հակառակ ես երեկ զիշեր զձեզ շատ գուարթ և սթափ վիճակի մէջ կը տեսնէի :

— Պարոն Ալֆօնս, կրնամ զձեզ ապահովցնել որ զձեզ վշտացնելու ո՛չ թէ կամք, այլ մտածմունք մի անգամ չունեցայ և չունիմ :

— Բայց, օրիորդ, ձեր այն ինձ ըսած խօսքերը եթէ առանձնութեան մէջ ըլլային՝ կրնայիք վստահ ըլլալ որ ամենևին փոյթս չէի ըներ, բայց պարահանդէսի մէջ օրիորդէ՛ մի նախատուիլ, և այն երբ մէկ քանիներ լսեն, և որոնց վերջէն դու արձու թեան գործի՛ք ըլլալ, կարծեմ խիստ ծանր է օրիորդ, խիստ ծանր :

— Քանի որ, պարոն Ալֆօնս, այսչափ վշտացած էք, քանի որ իմ խօսքերս թէև անմեղ սրտէ ելած՝ ձեզ վերադարձ են, ձեր ներումը կը խնդրեմ միայն այս աղաչանքով՝ որ այս դէպքը Պ. Էտուարէ գաղտնի մնայ :

— Շնորհակալ եմ, օրիորդ, որ առանց քեզ ներումն առաջարկութիւն ընելու զիս ապահովցնելու համար ներում կը խնդրէք ինձմէ, կրնաք հաւաստի ըլլալ որ ձեր խնդիրը սխտի կատարուի :

— Լաւ, կը յուսամ որ ալ ինձ դէմ ունեցած զայրոյթնիդ անցաւ :

— Ամենին , օրիորդ , ձեզի դէմ ոչ զայրացած էի և ոչ ասե-
լու թիւն ունէի , միայն իմ հոս դալուս նպատակը բացատրու թիւն
ննդրել էր , որովհետև ասանկի դէպքեր կրնան տխուր հետեւու թիւն
ունենալ :

— Աւրեմն հիմա դո՞հ էք :

— Այո՛ , օրիորդ :

— Եւ Էտուարի ալ պիտի շինացնէք այս դէպքը , այնպէս չէ՞ :

— Ապահով եղիք , բայց ինչո՞ւ Էտուարի խմանալէ կ'զգուշանաք :
Տօրա չի պատասխանեց և այլադու՛նած իբր առջև նայեցաւ :

— Համեստ երիտասարդ մ'է , և սիրուելու ամեն յատկու թիւն ու
նի :

— Ո՛հ , խիստ թշուառ աղջիկ մ'եմ , — ըսաւ Տօրա :

— Այսու ամենայնիւ երեկի դիշեր դիտեցի որ բորբոքած էիր սրա-
րոն Էտուարի հետ և անշուշտ երջանիկ ժամեր անցուցիր :

— Ի՞նչ ըսել կուզէք :

— Այսինքն ըսել կ'ուզեմ որ երիտասարդի և երիտասարդուհոյ
մտերմութեամբ սէր կը ծնի , և դուցէ ձեր մտերմութենէ ալ սոյն
հետեւու թիւնը ծագած է :

— Ա՛յ Ալֆօնս այդ փորձող բնութիւնդ թո՛ղ :

— Ի՞նչպէս Տօրա , կ'ուզե՞ս ի՞նչ որ պատահեցաւ ձեր մէջ , ի՞նչ
խօսք որ ըրիք պարտէզին մէջ և ի՞նչ հետեւու թիւն որ ունեցաւ ձեր
սպարը՝ մի ըստ միովէ պատմեմ քեզ :

— Աւրեմն նախանձոտ մասնիչ մ'ես դու , Ա՛յ Ալֆօնս :

— Ո՛չ այդպէս , համբերէ՛ օրիորդ , իմ ձեր քայլերուն հետե-
ւելուս պատճառները քեզ իմացնեմ , և ապահով եմ որեթէ ուղիղ
դատողութեան տէր ես՝ զիս իրաւացի կը համարիս , երբ երկու ե-
րեք անգամ ձեզմէ վշտանալու առիթներ ունեցայ , մերթ կծու ակ-
նարկներով և մերթ նախաաական խօսքերով՝ սաստիկ զայրացայ և ա-
ռաջագրեցի որ ասոր վրէժը այնպիսի կերպով մի լուծեմ որ քեզ
չփնասելէ զատ ապշեցնէ . ուստի երբ Ա՛յ Էտուարի հետ պարելնեղ
յետոյ դէպ ՚ի պարտեղ յառաջացաք՝ լուիկ ձեր քայլերուն հետե-

եցայ և կրնաք ապահով ըլլալ որ ձեր խօսակցութենէ կէտ մը ան-
զամ չի կորսնցուցի :

—Աորսուած եմ :

—Ա՛չ, կորսուած չես, այլ բարեկամ մի ևս ստացար քու խո-
հեմ բնութեամբդ . ես Էտուարի բարեկամն եմ, և անշուշտ բա-
րեկամիս դէշութիւն ընելու դիտաւորութիւն չեմ ունենար, և զքեզ
բարի, առաքինի և համեստ կը ճանչնամ . և ձեզմէ շարիք մը տե-
սած չեմ բաց ՚ի այն փոքրիկ դէպքերէն՝ որոնց համար զիս զոհ
ըրիք . ուստի կրնաք հաւաստի ըլլալ որ ձեզ շարիք ընելու ոչկամք
ունիմ և ոչ սիտի ունենամ, անխղճութիւն է, Տօրա՛, երկու եր-
ջանկութիւն յուսացողներու թշուառութեան պատճառ ըլլալ :

—Պարոն Ալֆօնս հրեշտակի մը սիրտ և դատաւորի վայել ար-
դարասիրութիւն կը տեսնեմ վրագ . ո՛հ, զթա՛ ինձ, ներէ՛ եթէ եր-
բեմնակի ձեզ վշտացնելու տեղի տուած եմ . կը սիրեմ Էտուարը, բան
մը չեմ պահեր քեզմէ, և ապահով եղիր որ եթէ այգպիտի
ազնիւ բնութիւն ունենալդ գիտնայի, մեր մէջ անցած դէպքե-
րուն անտեղեակ անցամ թէ որ ըլլայիր, զքեզ այս նուիրական
զաղանեացս հաղորդ ընելու չէի տարակուսեր :

—Ձեր իմ վրայ ունեցած հաւատարմութեամբ զիս կը պատուէք
Տօրա՛, ժամանակը սիտի յայտնէ անշուշտ իմ առ ձեզ ունեցած
սիրոյս չափը :

—Արդէն ատոր ապացոյց մի տուիք, պարոն Ալֆօնս, բայց խըն-
դիր մ՛ ունիմ, ո՛հ, անշուշտ կը ներէք ինձ և չէք զլանար զայն
կատարելու :

—Խօսեցէ՛ք համարձակ :

—Ձեր վրայ ունեցած վստահութեանս համար սխալանաց մէջ
սիտի չիյնամ անշուշտ, այնպէս չէ՞ Պ. Ալֆօնս :

—Եթէ սիրտ կարդալու արհեստին մէջ վարպետ էք, ինչպէ՞ս
կըսէիք երեկ գիշեր Պ. Էտուարի՝ պարտէզին մէջ, կրնաք իմս ալ
կարդալ :

Տօրա ժպտեցաւ :

— Լաւ ուրեմն , — ըսաւ Տօրա , — հաճէ՛ ժամադրութիւն մի առաջարկելու Պ . Էտուարի իմ կողմէս :

— Մեծ հաճութեամբ . բայց ե՞րբ և ո՞ւր տեղ :

— Ժամը Աին մեր պատուհանին առջև գտնուի , ես արժուն իրեն կ'սպասեմ , բայց ո՞ր օրը , հինգշաբթի , ո՛հ , մինչև հինգշաբթի ալ համբերել ծանր է , ուստի աղէկ կ'ըլլայ եթէ վաղը զիշեր ժամը Աին ըլլայ , մեր պատուհանին առջև , պարոն , չէք մոռնար անշուշտ , զիտե՞ս մեծ պահոց առջի իրիկունը ըլլալուն փողոցները ամայի կ'ըլլան և իւրաքանչիւր ոք իր տան մէջ առանձնացած . փողոցներու մէջ եղած անցուղարձի պակսութիւնը սիրահարներու համար ձակութիւն կ'ուտայ :

Այս միջոցի տիկին Շարլ տիկին Բօլի հետ ըրած խօսակցութեանէ՛ զադրելով զարձաւ և պարոն Ալֆօնսի ըսաւ .

— Քաղցր խօսակցութեան մի մէջ կ'երևէիք :

— Այո՛ , տիկին , պատասխանեց Ալֆօնս , պարահանդէսին առժամ բերկրութիւններուն վրայ կը խօսէինք :

— Զարմանալի բան այս պարահանդէսնիս ալ բողբոջին միտքերնիդ գրաւած կ'երևի , Տօրա հոս գալէ մինչև ձեր գալը պարահանդէսին վրայ կը խօսէր . և անշուշտ այնչափ խօսելէ կշտացած չըլլալով ձեր հետ ալ նոյն նիւթին վրայ խօսք բացաւ , այնպէս չէ՞ Պ . Ալֆօնս , — ըսաւ տիկին Բօլ :

— Կարելի է , տիկին , — պատասխանեց Ալֆօնս :

Պարոն Ալֆօնս այս միջոցիս ժամացոյցը նայեցաւ . Տօրա իմանալով որ մեկնելու գիտաւորութիւն ունի՝ բան մը պատճառելով գուրտ ելաւ :

— Մնաք բարև տիկիններ , — ըսաւ Ալֆօնս , — ժամանակը բաւական յառաջացած ըլլալուն ստիպուած եմ մեկնելու , իմ հոս ըրած այսօրուան այցելութեանս նպատակը շնորհակալութիւնս յայտնել էր , զոր վերստին կը կրկնեմ :

— Ո՛հ , պարոն Ալֆօնս , այդչափ շնորհակալութեան արժանի չըլլալս կ'զգամ , ձեր ազնիւ զգացումներով զմեզ պարտաւոր կընէք — պատասխանեց տիկին Բօլ :

Պարօն Ալֆօնս բարեկեղով սրահէն դուրս ելաւ բոլորովին գոհ .
և երբ դուռէն մեկնելու վրայ էր՝ Տօրա երեւելով ըսաւ իրեն .

— Պարօն Ալֆօնս , կը յուսամ խնդիրս պիտի շնորհաք կատարե-
լու , և ես պիտի շնխալիմ վաղը զիշեր ժամը տասն և մէկին սպա-
սելով :

— Ապահով եղիք , Տօրա՛ . պատասխանեց Ալֆօնս :

Տօրա շնորհակալութեան շարժում մի ըրաւ և Ալֆօնս մեկնեցաւ :

Գ Լ Ո Ւ Խ Գ

Ժ Ա Մ Ա Դ Բ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Փամադրութեան օրը Ալիս վերստին այցելութեան դացած էր
Տօրայի :

Տօրա իր առանձնասենեակը քաշուած մէկ մէկու ներհակ մտա-
ծումներու մէջ ընկղմած էր :

Ար մտածէր իւրովի թէ ինչպէս յայտնած էր պարօն Ալֆօնսի
այնպիսի գաղանկիք մը՝ որու յայտնուելէ կրնային տխուր հետե-
ւութիւններ ծագիլ :

— Ո՛հ , մատնուեցայ , — կըսէր իւրովի , — մատնուեցայ եթէ
Ալֆօնս գաղտնիքս իմանալէ յետոյ ինձ դէմ վրէժխնդրութեան ո-
գի բանեցնէ . վստահի՛լ իրեն , վստահի՛լ , ինչպէս անձ մը իրեն
կը վստահի . բանա՛լ սիրտ մը անոր՝ որու չարասրտութիւնը կարելի
է ճարտար լեզուով մի ծածկուած ըլլայ : Եթէ իր ատելութիւնը
շարունակէ , եթէ ինձմէ կրած նախատանայ համար վրէժխնդրու-
թեան ոգի պահէ , եթէ վերջապէս ինձ վնասելու դիտաւորութիւն
ունենայ , ո՛հ , ինչ պիտի ըլլամ ես անատեն . բարէ՛ , ինչ որ
կըլլայ ծառ մը կայծակին հարուածին տակ , և անշուշտ իր վրէժ-

խնդրութեան կրակով զիս մոխիր պիտի դարցնէ : Եթէ Էստուար այս գէտքէ սրդողի , եթէ ինձ գէմ զայրանայ , եթէ վերջապէս զիս ատէ՛ ինչ ընել պէտք է , որո՞ւ գիմել , ո՞րմէ օգնութիւն խնդրել . . . և ո՛չ մէկէ , որովհետեւ ինչ բան խնդրելու համար գիմել պէտք է ան ատեն . — զերեզման մը , վասն զի երջանկութեան կարուստէ յետոյ թշուառութեան հարուածը ստակալի ըլլալուն՝ աղէկ կըլլայ այն վերջին ապաստանարանը գիմել՝ ուր ամեն բան իր կատարածին կը հասնի :

Այս տխուր խորհուրդը իր վրայ սաստիկ ներդործութիւն ընելուն ժամանակ մը խորին մտածումներու մէջ ինկաւ :

Առանձնութեան մէջ դառն խորհուրդներ անանկ արագ կը թափանցեն մարդու մտայ մէջ , ինչպէս արևու ճառագայթ մը ասպակիի մէջէ :

Յանկարծ գլուխը վեր վերցուց և գոչեց այնպիսի ձայնով մի՛ որ կարելի է մտակայ օննեակներէ լսուէր :

— Ի՛նչ յիմարութիւն , ո՛հ , ո՞վ է այս տխուր մտածումները ինձ զրկողը , որոնք ճշմարտութիւնը քողարկելով թշուառ սրտիս վէրքեր կը բանան : Ստուգիւ այնպիսի անստոյգ վիճակի մէջ եմ՝ որ չեմ կրնար ստուգել թէ թշուառութեան անդձևողը կը գտնուիմ եթէ երջանկութեան ծայրը :

Յանկարծ վայրկենէ մի վերջը խենդի նման գոչեց .

— Ո՛հ , ի՛նչ պայծառ խորհուրդ . Աստուած իմ , եթէ թշուառ ժամերու մէջ յուսոյ նշոյններս պահպին՝ ինչ պիտի ըլլամ ես :

Հակառակը մտածենք մեր ամջի կարծեաց :

Սեպեք թէ պարոն Ալֆօնս իմ թշնամիս ըլլայ , զիս ատէ , և ինձ գէմ՝ վրէժխնդրութեան ողի ունենայ . եթէ այս ստոյգ է , ի՛նչ պատճառ ունի ուրեմն իր երեկուան ինձ ըրած այցելութիւնը ու բացառութիւն խնդրելը , մի՞թէ վրէժխնդիր մը իր վրէժը լուծելէ առաջ կը հաշտուի , մի՞թէ նախատուող մի իր հակառակորդին հետ կը տեսնուի , մի՞թէ վերջապէս եթէ ստուգիւ զայրացած ըլլայ ամէն վիջոյ ՚ի գործ չի՞ դնէր անկէ կրած նախատանաց վրէժը լուծելու անշուշտ եթէ պատեհութիւն ունենայ . և մի՞թէ պարոն Ալֆօնս

պատեհութիւն չի գտաւ իր կրած նախատանայ կրկինը լուծելու ,
այո՛ , բայց ո՛հ ճանչցայ ես պարոն Ալֆօնսը , ճանչցայ իր ազնիւ
քնաւորութիւնը և վրէժխնդիր ոգի չունենալը . . . բայց եթէ
Էտուար զայրանայ . . . ո՛հ , թողունք այս մէկմէկու ներհակ մտա-
ծումները որ օգուտ մը չենելէ զատ ճշմարտութիւնը բոլորովին ծած-
կած կը պահեն : Ահա այս է ամեն բան . եթէ այս գիշեր Էտուար
դայ որոշեալ ժամուն՝ Պ . Ալֆօնսի բարեսրտութիւնը և Էտուարի
չի գժախը պիտի իմանամ ապացոյցով , իսկ եթէ Էտուար բացակայ
ըլլայ՝ Ալֆօնսի վրէժխնդիր ոգի ունենալը և իմ կորսուած ըլլալս
պիտի ստուգուի :

Ասկէ վերջը ընտանեկան խօսակցութիւններով և զբաղումներով
իր ժամանակը անցուց , և երբ երեկոյեան կերակուրը լմնցած էր՝
Տօրայի ընտանիքի անդամները ժամէ մը մեկնեցան հանգստանալու ,
որովհետեւ բարեկենդանի զուարթ գիշերներուն մեծ պահոց անտա-
նելի և տխուր գիշեր յաջորդած էր :

Ալիս նոյն իրիկուն պարոն Շարլի տուն մնացեր էր :

Տօրա պատուիրած էր Ալիսի որ անոնց հանգստանալէ յետոյ բան
մը պատճառէ և արթուն մնայ :

Գիշերուան ժամը տասն էր :

Ալիս Տօրայի սենեակը մանելով ըսաւ :

— Ինձ պատուիրեցիք արթուն մնալ , պատճառ մի ունիք , Տօրա :

— Այո՛ , Ալիս , — պատասխանեց Տօրա :

Եւ վերջն պատանց մի բառ միտջէ Ալիսի՝ իր Պ . Ալֆօնսի հետ
ըրած տեսակցութիւնը , պատահած դէպքերը , և ի վերջոյ այն
ժամագրութիւնը որ մէկ ժամէն Պ . Ալֆօնսի միջնորդութեամբ
տեղի պիտի ունենար :

Ալիս այլադունած և շփոթած պատասխանեց .

— Ինչ սոսկալի կերպիւ համարձակ գործեր էր , Տօրա , ինչպէս
վտահեցաք Պ . Ալֆօնսի որու անախորժ բնութեան քանի մ'ապա-
ցոյցները առի երեկ գիշեր :

Տօրա բարձրաձայն ծիծաղելով ըսաւ .

— Համբերէ՛ , Ալիս , համբերէ՛ , ես քեզմէ աւելի բնազդում մի՛

կ'զգայի անոր հակառակիլ, թէ և այս բնագլուփն պատճառը անծա-
նօթ էր ինձ, և ասոր փորձը երեկ գիշեր առիք երբ անոր հետ
պարեհէգ յետոյ եկաք և զանգատեցաք իր վրայ. այս իմ հակա-
ռակ բնագլուփէս շարժեալ քանի մը անգամ ալ կ'ծու կերպիւ պա-
տասխանեցի իրեն. բայց ինք զարմանալի կերպիւ վրէժխնդրութիւն
մի բանեցուցեր է. Էտուարի հետ պարտէզ գացած միջոցնուս երեկ
գիշեր մեր քայլերուն հետևեր և մեր խօսակցութիւնը ամբողջ իմա-
ցեր է :

— Ա. երջը :

— Ա. երջը այս է որ երեկուան ինձ ըրած այցելութեամբ իմ իրեն
դէմ ըրած կ'ծու ակնարկներուս համար բացատրութիւն խնդրեց, և
ընդունելէ և Կոհ ըլլալէ յետոյ իմացուց որ մեր գաղաննաց տեղեակ
ըլլալով մեզ պիտի չհակառակի, այլ անկեղծ բարեկամ մի պիտի
ըլլայ, և յաւելցուց թէ չէր ուզեր երկու երջանկութիւն յուսացող-
ներու թշուառութեան պատճառ ըլլալ :

— Զարմանալի հակառութիւն, այնպիսի համարձակ կերպիւ կը
խօսիր, Տօրա՛, որ ատուգիւ կը շուարիմ. մի թէ այս Պ. Ալփօնսը
մէկ օրուան մէջ իր սատանայութենէ հրեշտակի՛ փոխուեցաւ :

— Շիտակը ես ալ չեմ գիտեր :

Իրենց խօսակցութեան միջոցին ժամանակը յառաջացած էր և
ժամը տասն և կէս էր :

Տօրա արագ բայց աճայն կերպիւ պատահանը ցօսկեց և լռիկ ա-
նոր երկաթեայ փեղկը բացաւ, և վերջէն վրայ բերաւ մէջ տեղէն
բաց միջոց մը թողլով՝ որպէս զի կարենար փողոցը դիտել :

— Ալիս կէս ժամ մնացած է, ինչ կը կարծես պիտի խաբուիմ
սպասելով — ըսաւ Տօրա :

— Շիտակը չեմ կրնար ստոյգ պատասխան մը տալ քեզ որով-
հետև տարօրինակ դէպքեր տեղի ունեցեր են ձեր մէջ, — ըսաւ
Ալիս :

— Բայց դո՛ւ Պ. Ալփօնսէ մի կասկածիր :

— Ուրեմն ի՞նչ բանի վրայ կը տարակուսիս :

— Պարոն Էտուարի դժգոհելուն վրայ՝ որ կարելի է : *

— Գուն ալ Պ. Կտուարի համար վտահ եղիր, որովհետև ազնիւ բնութեան տէր է և ոչինչ պարագաներէ չգժգոհիր :

Տօրայի դիմաց վրայ անսպասան ուրախութիւն երևցաւ :

Այս միջոցիս անգամ մը փողոցը դիտեց և լուծենէ զատ բան մը չգտնելով դարցաւ և ըսաւ Ալիսի :

— Ալիս, նայէ՛, լուսինը երկնից խիտ ամպերուն ներքև ծածկուած ըլլալուն չկրնար իր լոյսը թափանցել աշխարհի վրայ, և այս կերպով լուծիւնը մթութեան հետ միանալով սոսկալի տեսարան մը կը խաղան դուրսը, նայէ՛, Ալիս, ի՞նչպէս կը գտնես :

— Ստուգիւ սարափելի լուծիւն մը փրկեր է՝ բայց Կտուար ի՞նչպէս սիրտի կրնայ դալ :

Տօրա հառաչով մը պատասխանեց :

Աւերտին ժամացոյցը նայեցաւ, տանն և մէկին քառորդ կար :

— Կարծես վայրիեանները ժամերու փոխուեր են, կը դիտե՛ս Ալիս, վերջի անգամ ժամացոյցը նայելէս ՚ի վեր քառորդ մը անցեր է : սրտիս անձկութիւնը չափազանց կտրուցայ, ո՛հ, աներևոյթ ոգի մը չկայ որ երթայ և ըսէ իրեն « Տօրադ քեզ կ'սպասէ ինչո՞ւ չես աճապարեր դայն տեսնելու » :

Այս միջոցիս փողոցին մէջ ոտնաձայն մը լսուեցաւ :

Տօրայի սիրտը սաստիկ կերպով բարախել սկսաւ :

Անմիջապէս պատահանը աւելի վրայ բերաւ և մէջ տեղէն խիստ անձուկ միջոց մը թողլով սկսաւ գիտել դէպ ՚ի ոտնաձայնին տեղը :

Այն միջոցին Տօրայի զգացածը նկարագրել անհնարին է :

Բայց դժբաղդաբար քանի կը մտէր անցորդը՝ այնչափ Տօրա կը յուսահատէր, օտարական մ'էր այն որ անտարբերութեամբ պատահանին առջևէն անցաւ և աներևոյթ եղաւ :

— Բայց ի՞նչու այսչափ կ'ուշանայ, — ըսաւ Տօրա :

Ալիս տխուր մտածմանց ենթակայ ըլլելով չարատասխանեց :

— Ո՛հ, կ'զգամ, — ըսաւ Տօրա, — վտանգէ մը կը վախնաս :

Ալիս տեսնելով որ Տօրա անսխիճան սու աստիճան անձկութեամբ և յուսահատութեամբ կը պաշարուէր՝ մէկէն զուարթերես ըսաւ :

— Բայց միթէ քեր որոշած ժամը հասած է :

Տօրա վերստին ժամացոյցը նայելով պատասխանեց :

— Գեո. Հինգ վայրկեան կ'ուզէ :

Այս Հինգ վայրկեանները ըու.թեամբ անցուցին . Տօրա պատու-
հանէն անձկութեամբ փողոցը դիտելով, և Ալիս սենեկին մէջ ա-
ռանձին մտածելով :

Ժամացոյցին հարուածը տանն և մէկի նշան տուա :

Փողոցին մէջ սանաձայն մը լսուեցա :

— Ալիս , Էտուարն է , պահուէ՛ և երբէք մի՛ խօսիր , — ըսաւ
Տօրա արագ կերպով :

Ժամացոյցին տանն մէկերորդ հարուածը կը հնչէր երբ Էտուար
Տօրայի առջև կայնեցա պատուհանին վարը :

— Ո՛հ , Էտուար , թէև որոշեալ ժամանակին հասար՝ բայց գիտ-
նայի՛ր թէ մէկ ժամէ 'ի վեր ի՞նչ վիճակի մէջ էի :

— Տօրա՛ , կը տեսնե՞ս որ ճշդութիւն կը պահեմ , թէև մեր վեր-
ջի տեսութեան մէջ ժամադրութիւն որոշած չէինք , այսու ամենայ-
նիւ այնչափ քեզ կը սիրէի և գէմբզ տեսնել կուզէի , որ երբ Պ.
Ալֆօնսէ ձեր առաջարկութիւնը իմացայ՝ կարծեցի որ աշխարհ իմն
եղաւ :

— Ես մէկ բանէ շատ կը վախնայի , Էտուար , — ըսաւ Տօրա՛ :

— Ի՞նչ բանէ :

— Պարոն Ալֆօնսի նախանձոտութենէ :

— Այդ մասին ասպահով եղիր , Տօրա՛ , որովհետև քեզմէ աւելի
աղէկ կրնամ ըսել որ ես կը ճանչնամ Պ. Ալֆօնսը :

— Ուրեմն առաջարկութիւնս հաւատարմութեամբ քեզ իմացո՞ւց :

— Այո՛ , և սխաւ միամտօրէն զիս համոզելու ջանալ :

— Ի՞նչ բանի :

— Արպէս զի առաջարկութիւնդ ընդունիմ :

— Եւ մի՛թէ սխալի չընդունէ՞իր :

— Ո՛չ , Տօրա՛ , չէ թէ պիտի չընդունէի , հասա ինք այսպէս կը
կարծէր իմ անտարբեր կացութենէս , զոր այսպիսի դէպքերու մէջ
չմասնուելու համար սովոր եմ ունենալ , ուստի նոյն ձևն ալ իրեն
բանեցուցի , բայց երբ իմացայ իր մէկ խորամանկութիւնը և երբ

զիս երգմամբ վստահացուց որ մեզ գէշութիւն ընելու գիտաւորութիւն չունի՝ բողոքովին վստահ եղայ և հետեւութիւնը հիմակուան հոս գտնուիլս է :

Տօրա յետին ծայր գոհունակ կերպարանք մը առաւ :

— Բայց Էտուար , — ըսաւ Տօրա , — պիտի ներե՞ս ինձ ասանկ սոսկալի ժամանակ մը զքեզ փողոցները թափառեցնել տալու :

— Տօրա՛ , կուզե՞ս որ այս միջոցիս լերներու վրայ արշաւեմ :

— Բայց , պարոն Էտուար , անտարակոյս քիչ մը երկիրը կ'զգաս ասանկ ատեն փողոցի մէջ գտնուելէ ուր մթութենէ՝ և լուսութենէ ուրիշ բան չկայ և վտանգներ ալ թերևս կրնան սպառնալ :

— Բայց , Տօրա , գիտե՞ս որ մի և նոյն սիրտը թէ երկիրը և թէ սէր չկրնար զգալ , և ասիկա այնչափ ճշմարիտ է՝ որչափ ճշմարիտ է մեր մէկզմէկ սիրելը :

Տօրա ժպտեցաւ :

— Այսու ամենայնիւ թշնամիներ ունինք , Տօրա՛ , — յարեց Էտուար — որոնց աչքը անշուշտ մեր վրայ է , և որոնք մեր թշուառութեան եթէ չեն աշխատիր՝ մեր երջանկութիւնն ալ չեն ուզեր :

— Որո՞նք են այդ թշնամիները :

— Ընտանիքդ և աղգականներդ , որոնք կրնան զօրաւոր կերպով մեզ հակառակել :

— Բայց հոգ մի ըներ ատիկա :

— Աղէկ , բայց պիտի կրնաս յաղթել անոնց :

— Եթէ դու զիս սիրելէ չդադրիս՝ սիրով միացած երկու սիրտեր մահուանէ զատ ո՞վ կրնայ բաժնել :

— Ուրեմն ընտանիքիդ հակառակելու գիտաւորութիւն ունի :

— Անշուշտ , եթէ սիրոյդ մէջ չթուլնաս , գիտե՞ս ինչ պիտի ըլլայ իմ վերջս , այս աղէկ տպաւորէ՛ մտացոյց մէջ , եթէ զիս սիրես՝ երջանիկ պիտի ըլլամ , եթէ մերժես՝ թշուառութիւնս արագ պիտի հասնի :

— Ուրեմն երջանիկ եղիր , ես զքեզ յախտեան պիտի սիրեմ , արանց քեզի աշխարհս ինձ համար նշանակութիւն պիտի չունենայ , մահը միայն կրնայ զիս բոլ սէրէդ բաժնել . . . բայց :

Էտուար խօսքը չչարունակեց և խիստ խոհուն կերպարանք մը
տուա :

— Բայց , Էտուա՛ր , ի՞նչ բանի վրայ կը մտածես , ինչո՞ւ օ-
տանի խոհուն կերպարանք մը առիք յանկարծ , — ըսաւ Տօրա շը-
փոթած :

— Ոչինչ , բան մը չէ :

— Էտուար մի՛ պահեր ինձմէ , յանկարծ խօսքի թելը ընդհա-
տել , զուարթութենէ մտախոհութեան ենթարկիլ անկարելի է որ ա-
ռանց պատճառի ըլլայ . ո՛հ , Էտուա՛ր , զքեզ սիրելուս իրաւունքով
կը պարտաւորեմ զքեզ պատճառը իմացնելու , մի՛ պահեր ինձմէ :

— Լա՛ւ ուրեմն , Տօրա՛ , նախանձոտ մ՛ունինք :

— Ո՛վ է այդ :

— Միտ դի՛ր , ինձմէ յառաջ հոսկէ մէկը անցո՞ւ :

— Այո՛ :

— Տարօ՞ք էր :

— Քսան և հինգ տարեկանի մօտ կերեւէր , աւելի ծպտած քան
թէ սովորական զգեստ հագած էր , խիստ արագ քայլող և սակա-
ինչ գէր :

— Ան է , — ըսաւ Էտուար Տօրայի խօսքը ընդմիջելով :

— Ո՞վ :

— Ռօտովֆը , զոր կարծեմ կը ճանչնաս :

— Ո՛հ , այն խենթը , և դուն անորմէ կը վախնամ :

— Եթէ գիմացս ելլէ հոգս չէ , բայց կը վախնամ որ անծա-
նօթ տեղէ մտթին ատրճանակի դնտակ մը կամ սուրի հարուած մը
չընդունիմ գլխուս :

— Ո՛վ Աստուած , քանի որ այդպէս է՝ ի՞նչ պիտի ընես ու-
րեմն այդպէս անզէն եթէ անոր հանդպիս :

— Ապահով եղիք Տօրա , զինուած եմ :

— Բայց ի՞նչպէս զինուած եմ կ'ըսես , քանի որ ձեռքի նուրբ
գաւազանէդ զատ ուրիշ բան չեմ տեսներ վրագ , և առիկա ալ
աւելի զարդի կը ծառայէ քան թէ զէնքի :

— Կը սխալիս Տօրա , վրէժինդ բռնութեան ողւոյ զինուած եմ ,

եւ այս եօթնհարուածեան ատրճանակը կրնայ

Այս միջոցիս Էտուար ցոցոց Տօրայի եօթնհարուածեան ատրր-
Քանակի մը ծայրը , զոր իր մէջքը պահած էր :

— Ատուա՛ճ իմ , ուրեմն արի՛ւն պիտի հոսի ինձ համար , գոչեց
Տօրա այլազունս :

— Ապահով եղիր Տօրա՛ , ամեն բան կարգի կը մտնէ , առայժմ
համբոյր մի ձեռքէդ :

Տօրա իր թեւը երկնցոց պատուհանէն և Էտուար համբուրեց
զայն :

— Տօրա՛ , մնաս բարեա՛ւ , ինծի համար աղօթող եղիր :

— Էտուա՛ր , երթաս բարեա՛ւ , երկնից զօրութիւնը քեզ օգնու-
թեան հասնի :

Էտուար Տօրայէ՛ զատուեցաւ և սկստ դէպ ՚ի Գ . . . ՚ի կողմ յա-
ռաջանալ արագ քայլերով :

Տօրա նոյն միջոցին պատուհանին բաց միջոցը աւելի նեղցնելով
սկսաւ զԷտուար դիտել ուշադրութեամբ : Էտուար փողոցին մինչև
ծայրը ապահով հասաւ : Տօրա վտանգին կէսը անցնելուն վրայ ու-
րախացած և իր աչերը աւելի հեռուն դիտել չկարենալուն՝ պատու-
հանը գոցեց և ներս քաշուեցաւ :

Բայց երբ պարոն Էտուար կողմնակի փողոցը պիտի մտնէր՝ յան-
կարծ մտաւիայ ձայն մը զինք դողացուց :

— Էտուա՛ր , Էտուա՛ր կեցի՛ր , — կը հնչէր ձայնը :

Այս ձայնը Էտուարի ծանօթ էր , ուստի և զիմնալով որ իր նա-
խանձոտը իրեն համար դարանած էր՝ արագ շարժումով ետ քաշ-
ուեցաւ և ձեռքը իւր ատրճանակին ունելիին տարաւ :

— Ի՞նչ կողէ՞ք , պարո՛ն , — հարցոց Էտուար :

— Ո՛ւրկէ կուգաք , — ըսաւ Ռօստօլֆ երևելով :

— Ատիկա ձեզ չվերարերիր :

— Պարոն Էտուա՛ր , աղէկ կ'ընէք այս վայրկենիս եթէ քիչ մը
կակղութեամբ խօսիք :

— Այս միջոցիս կակղութեամբ խօսիլ օգուտ չըններ :

— Պարո՛ն , վերասին կը հարցնեմ , ո՛ւրկէ կուգաք :

— Ա երտաին կը պատասխանեմ, պարոն, թէ ձեզ չվերարերիր :

— Այս ամենայնիս պիտի ստիպեմ գրեզ . . . — գոչեց Ռօտովի
զայրազին :

— Ի՞նչ բանի :

— Տօրան սիրելէ դադրելու :

— Ռօտովի, կարողութեանդ չափը պիտոյիր, եթէ ոչ քեզ կը
ճանչցնեմ :

— Ի՞նչ, պարոն Էտուար, զիս կտիպէ՞ք . . . :

Այս միջոցիս արագ կերպով իր ձեռքը բռնած դաւաղանին մէջէ
շիշ մը դուրս քաշեց, որ կանդուսի մը չափ երկայնութիւն ունէր,
և գոչեց :

— Էտուար, Էտուար, դադրէ՛ Տօրան սիրելէ, եթէ ոչ այս սու-
րը զքեզ ապրելէ կը դադրեցնէ :

Էտուար ետ քաշուեցաւ և իր ատրճանակին ըլծակը վերցնելով
պոռայ զայրացած .

— Ռօտովի, Ռօտովի, եթէ նախանձտ մը զինուած ըլլայ՝ նա-
խատու մ'ալ վրէժխնդիր ոգի կունենայ :

Ռօտովի չի նշմարեց Էտուարի ատրճանակը և վրան յարձակելու
փորձ մի ըրաւ :

Էտուար աւելի ետ քաշուելով ըսաւ .

— Ռօտովի, Ռօտովի, պիտի կրնամ ատրճանակի մը եօթ հար-
ուածներուն գիմանալ :

Էտուարի այս խօսքին վրայ Ռօտովի արիւնը կարծես սառեցաւ,
ձեռքերը թուլնալուն սուրը գետին սահեցաւ, և ինք Էտուարի ոտքը
իյնալով գոչեց աղերսական կերպով .

— Ներէ՛, պարոն Էտուար, ներէ՛, վստահէ ասկէ վերջ ինձ և
պիտի տեսնես սր ապերախտ պիտի չգանուիմ, ո՛հ, ներէ՛, ներէ՛,
կը մըմնջէ՛ր շարունակ ծնրազիր :

— Ոտք ելիր, — գոչեց Էտուար որոտալիք, — ներողութիւնը
Աստուծմէ խնդրէ և ոչ ինձմէ, ա՛հ, անօրէն, չեմ գիտեր ինչո՞ւ
ձեռքս վրայ չեթար սպաննելու գրեզ, գրեզ որ վատ դատաճանա-
թեամբ կ'ուզէիր զիս կորսնցնել, կ'զգամ որ ամէն կերպով իրաւունք

ունիմ երջանկու թեանս ընդդիմացող զազան մը մէջ տեղէ վերջնելու, կ'զգամ ասիկա. բայց աղէ', կորսուէ', ալ քու խղճմտանացդ կը յանձնեմ ինքզինքս, գնա' :

Ռօտովֆ ոտք ելաւ, շիշը գեանէն առնելով վերստին գաւազանին մէջ անցուց. մտերիմ սիրոյ և երախտադիտութեան արտայայտութեամբ Կտուարի ձեռքը առաջարկեց, թոթուեց զայն իբր սիրոյ և բարեկամութեան նշան և ըսաւ .

— Պարոն Կտուար, ապագային մէջ անշուշտ Աստուած առիթ մը պիտի շնորհէ ինձ, որով կարող պիտի ըլլամ առ քեզ ունեցած երախտադիտութիւնս փորձով յայտնելու :

Այս ըսելով մեկնեցաւ հաստատ առաջադրութեամբ որ անկէ վերջը Կտուարի համար մինչև անգամ իր կեանքը զոհելու չվարանի :

Կտուար զատուելով Ռօտովֆէ անվտանգ իր տունը հասաւ :

Տօրա նոյն իրիկուն վայրկեան մը չկրցաւ քնանալ :

Գ Լ Ո Ր Ի Ե

Ո Ր Ս Ո Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Զմեռը անցած էր և զարնան արեւը աշխարհի կենդանութիւն կուտար, ծառերը իրենց տերևները կ'զգենուին, ծաղիկներ կը բուրէին, երկինք իր կամարը ամպերէ պարզելով քաղցր օրերու իբր առհաւատչեայ աշխարհի կը ցուցնէր :

Տօրա և Կտուար երջանիկ և անմեղ ժամերով իրենց օրերը կը քաղցրացնէին. հաճելի յարաբերութիւններ իրենց սէրը կատարելագործած էր, և առ ժամս հակառակօրդ մի իրենց վտանգ չէր ըստպատնար :

Էտուարի և Ռօտուլֆի մէջ պատահած դէպքէն ետք շարաթ ան-
ցած էր . այս միջոցին այս երկու նախկին հակառակորդաց յարա-
բերութիւնը եթէ թշնամական չէր ըսուեր՝ ցուրտ էր : Ռօտուլֆ աս-
սիրով կապուած կ'երևէր Էտուարի հետ , բայց Էտուար սրգողած .
Էտուարի այս զգացումին վրայ Ռօտուլֆ խիստ կը վշտանար , և թէև
իրաւացի կը համարէր՝ այլ սակայն պատահ առիթ մը կը վնասուէր իր
սիրաը Էտուարի բանալու և եթէ կարելի ըլլար գործնական կերպիւ
իր սիրոյն անկեղծութեան ապացոյց մի տալու :

Էտուար օր մը իր տան մէջ գտնուած ժամանակ ծառայ մը ներս
մտաւ և նամակ մը տուաւ :

— Ո՛րք տուաւ այս նամակը , — ըսաւ Էտուար բանալու աշխատե-
լով :

— Տուողը ինձ անծանօթ է , — պտտասխանեց ծառան :

— Եւ հիմա վա՞րն է :

— Այո՛ տէր իմ , և պտտասխանի կ'սպասեմ կ'ըսէ :

Էտուար նամակը բացաւ և հետևեալը կարդաց :

« Պարոն Էտուար ,

Օգերը քաղցր ըլլալուն որսորդութիւնը հաճելի կ'ըլլայ ,
ուստի եթէ կը հաճիք՝ կիրակի առաօտ միատեղ ելլենք ժամը Ծին :

Պարոն Էտուար կրնաք որ և իցէ դէպքէ մի ապահով ըլլալ .
և հաւատացէք որ ձեր նախկին թշնամին Ռօտուլֆ հիմա ձեր ամեն
անկեղծ բարեկամը եղած է :

Պտտասխանը անցապաղ , եթէ ընդունիք՝ մեկզմէկ ուր գտնել ինչ
ինչնեղու հաճեցէ՛ք :

ՌՕՏՈՒԼՖ Ե

Էտուար վայրկեան մի մտածելէ յետոյ ըսաւ ծառային .

— Ըսէ թղթաբերին որ Պ . Ռօտուլֆի պտտասխան մի կուտամ ,
Ծառան մեկնեցաւ :

— Ռօտուլֆ զիս որսորդութեան կը հրաւիրէ , — ըսաւ ինքնին Է-
տուար . — քիչ մը մտածել հարկ է իր առաջարկութեան վրայ , ու

ըովհէտեալ թէ և իր նամակը բարեկամական ոգւով գրուած կ'երևի՝ այրու ամենայնիւ կրնայ թշնամական ոգի ունենալ, որով և իր առաջարկութիւնը ընդունիլս կրնայ վտանգաւոր հետեւութիւն ունենալ, բայց եթէ միւս կողմանէ Ռօտովֆ ստուգիւ իր ատելութիւնը թողած և ինձ բարեկամացած է՝ չընդունիլս կրնայ զինք վշտացնել, և պատճառն ալ իր վրայ ունեցած անվտանգութիւնս ըլլալը իմանալ: Աղէկ կ'ըլլայ եթէ անդամ մի զԱլֆօնս տեսնեմ և իրմէ խորհուրդ մի առնում և զուցէ մեզ ալ կրնամ ընկերացնել:

Այս ըսելով առտուան ժամը տասին պարոն Ալֆօնսի տուն գնաց և զինք հօն դանելով ըստ.

— Բարեկամ, բաւական կարևոր խնդրոյ մը վրայ ձեզ խորհուրդ պիտի հարցնեմ:

— Ինչ է այն, — պատասխանեց Ալֆօնս:

Էտուար նոյն միջոցին Ռօտովֆէ ընդունած նամակը Ալֆօնսի ներկայացուց:

Ալֆօնս կարգաց զայն և պատասխան չի տուաւ:

— Ինչպէս, պարոն Ալֆօնս, պէտք եմ իր առաջարկութիւնը ընդունիլ, — ըստ Էտուար:

— Անտարակոյս, — պատասխանեց Ալֆօնս:

— Բայց կրնաս երեւոյցել իմ մտածմունքս:

— Ինչ, վտանգէ՞ կը վախնաս:

— Այո՛, վասն զի կարելի է:

— Ուրեմն ձեր զխանայու բանն է այդ:

— Բայց, պարոն Ալֆօնս, եթէ դու իմ տեղս ըլլայիր ինչ կ'ընէիր:

— Կ'ընդունէի հրաւերը:

— Եթէ Ռօտովֆի և իմ մէջ եղած դիպուածը ձեր մէջ պատահած ըլլար դարձեալ կ'ընդունէիր:

— Անտարակոյս, և պէտք եղածներն ալ կ'առնուի հետս ամեն կարելի վտանգաց առաջը առնելու համար:

Էտուար շփոթած մտիկ կ'ընէր առանց պատասխանելու:

— Բայց, — յարեց Ալֆօնս, — նամակը բարեկամական կերպիւ զրուած է :

— Այո՛, բայց չկրնա՞ր խորդտխ վրէժխնդրութեան մի համար դարան եղած ըլլալ :

— Կարելի է, բայց ինչպէս ըսի պէտք է ընդունիլ, վասն զի եթէ ստուգիւ ձեզ մտերմացած է՝ պիտի վշտանայ անշուշտ ձեր անվստահութեան վրայ :

— Ստոյգ է, — պատասխանեց Էտուար մտածկոտ :

— Ուրեմն քանի որ ստոյգ է մտածելու ինչ հարկ կայ :

— Պ. Ալֆօնս շատ բարդաւոր պիտի սեպէի զիս եթէ ընկեր մի ունենայի հետս :

— Ապահովութեան համար :

— Այո՛ :

— Ես ձեզ կ'ընկերանամ, պարոն Էտուար, եթէ իմ ներկայութիւնս անխորժ չերևի ձեզ :

— Ո՛հ, ինչ կ'ըսէք պարոն Ալֆօնս, ձեր ներկայութիւնը մեզ անխորժ ըլլայ :

— Այո՛, վասն զի կարելի է :

— Ընդհակառակն խիստ ակորժելի պիտի ըլլայ մեզ, այդ մասին ապահով եղիք :

— Ուրեմն ձեզ կ'ընկերանամ :

— Հաստատութեամբ կրնէք ատիկա :

— Այո՛ պարոն, ձեզ իմ խօսքս կ'ուտամ :

— Ուրեմն պարոն Ռօտոլֆի իմացնեմ՝ որ իր առաջարկութիւնը ընդունուած է :

— Այո՛, բայց ժամագրութեան տեղը ո՛ւր պիտի ըլլայ :

— Մեր տունը :

— Կիրակէ տուտօս ժամը մի՛ն, այնպէս չէ :

— Այո՛ :

— Ուրեմն ես որոշեալ ժամուն անպատճառ ձեր տունը կը գտնուիմ :

— Լա՛ւ, ես առ այժմ կը մեկնիմ չորհակապտութիւնս կանխիկ հասուցանելով :

— Երթաք բարեաւ պարոն Էտուար , ասանկ ոչինչ բան մը չընորհակալու թիւն ընդունելու չարժէր :

Էտուար զատուեցաւ Ալֆօնսէ և իր տունը հասնելէ յետոյ հետեւալ տոմակը գրեց Պ. Ռօտուլֆի .

« Պարոն Ռօտուլֆ .

Չեր բարեկամական նամակը ընդունեցայ , և ձեր առ իսունեցած պարտաւորիչ զգացմանց համար խորին շնորհակալութիւնս կը յայտնեմ , որտորգութեան համար ըրած հրաւերնիդ բնդունուած է , և Պ. Ալֆօնս ևս մեզ պիտի ընկերանայ . ուստի կը խնդրուի ձեզմէ որ կիսրակէ առաւօտ ժամը հինգին մեր տունը գանուիք որ ժամադրութեան տեղին է :

ԷՏՈՒԵՐ »

Նամակը կնքելէ վերջը տեղը հասցուց :

Կիւրակէ առաւօտ ժամը հինգի մօտ Ալֆօնս Էտուարի եկաւ իր խօսաման համեմատ :

— Պարոն Ալֆօնս , ի՞նչ կը յուսար , բարի վախճան մը պիտի ունենայ մեր որտորգութիւնը , — ըսաւ Էտուար :

— Ինչո՞ւ չէ , — պատասխանեց Ալֆօնս :

— Վասն զի զեռ կասկածը մտքէս չի փարատիր :

— Ապահով եղիք այդ մասին , բոլոր կարելի վտանգաց առաջը առնելու միջոց խորհած եմ :

— Ինչպէս :

— Այսինքն իր կողմէ վատարար յարձակման մի կամ վնաս հասցնելու կասկած եթէ ծաղի մտացս մէջ՝ անմիջապէս ատրճանակի մը հարուածով զինք դետին պիտի փռեմ :

— Ո՛հ , պարոն Ալֆօնս , ինչ անվեհեր բնութիւն ունիք , — ըսաւ Էտուար ուրախ կերպիւ :

Այս միջոցիս գուռը զարնուեցաւ :

— Էտուար , — ըսաւ Ալֆօնս , — անշուշտ Ռօտուլֆն է , կասկածոտ մի՛ երեկք իր առջև :

— Ո՛հ , սպասով եղի՛ք , — պատասխանեց Էտուար :

Ռօտողֆ վայրկենէ մը ներս մտաւ . Էտուար և Ալֆօնս գիմաւորեցին զայն և բարեկամական կերպիւ անոր թեր թոթուեցին :

— Պ . Էտուա՛ր , — ըսաւ Ռօտողֆ , — մեր մէջ պատահած արխուր դէպքին ժամանակ ձեր ցուցուցած վեհանձնութիւնը չէք գիտեր որչափ շարժեց սիրտս , ասոր ապացոյց մի տալու համար ստուգիւ պատրաստ եմ ձեր օգտին համար անձս անգամ զոհելու :

— Պարոն Ռօտո՛ղֆ , — պատասխանեց Էտուար , — դու իմ բընուութիւնս չի ճանչնալով անխոհեմութեան մը մէջ ինկար , բայց ես գիտէի ուղեղդ աղնուութիւնը և ապահով էի որ իմ շնորհքս վերջէն ինձ վտանգաւոր պիտի չըլլար :

— Շատ ճշմարիտ խորհեր էք , — ըսաւ Ռօտողֆ շնորհակալութեամբ :

— Ինչ և իցէ անցուկը մոռցուկ է , — ըսաւ Ալֆօնս , հիմա ներկայն նայինք , կը բաւէ որ ձեր բարեկամութիւնը անկեղծ և հաստատուն ըլլայ :

— Աստուծով , — պատասխանեցին Էտուար և Ռօտողֆ :

— Բայց հիմախօ հիմա , — յարեց Ալֆօնս , — ասանկ խօսքերով ժամանակ չի վատնենք , յարմար ատեն է ճամբայ ելլելու :

— Պարոն Էտուա՛ր , — ըսաւ Ռօտողֆ — երկու ձի ունիմ՝ դրան տալէ կապուած , մէկը ինձ համար և միւսը ձեզ , ձիով որսորդութիւնը քաղցր կըլլայ և յուսով եմ որ չէք մերժեր ընդունելու :

— Պ . Ռօտո՛ղֆ , զիս կը պարտաւորէք , — ըսաւ Էտուար :

— Արդէն կ'զգամ որ ես պարտաւորուած եմ , և ասանկ ոչինչ բան մը , ճշմարիտ կ'ըսեմ , ձեր ինձ ըրածին հետ համեմատելու երեւակայելը անգամ ծաղրելի է :

— Այո՛ , այո՛ , — ըսաւ Ալֆօնս , — ձիով որսորդութիւնը քաղցր կըլլայ : Պարոն Էտուա՛ր Պ . Ռօտողֆի առաջարկութիւնը պէտք չէք մերժել :

— Շնորհակալ եմ . պարոն Ռօտողֆ , — ըսաւ Էտուար , — և ձեր առաջարկութիւնը հաճութեամբ կ'ընդունիմ :

Ռօտողֆ շնորհակալութեան շարժում մի ըրաւ :

Ալֆօնս անմիջապէս ծառայ մի զրկեց իր տունը որ իւր ձիւն բերէ :

Քառորդէ մը պարոն Ալֆօնսի ձին ևս բերուեցաւ , և ամենքնին պատրաստուելով ճամբայ ելան :

Ժամէ մը քաղքէն քառական հեռացած բլուրներու վրայ որսորդութիւն կ'ընէին . բայց ձիերը յոյնած բլլախուն մտակայ խրճիթ մը դային և հոն ծերի մը յանձնեցին զանոնք որ դարմանէ :

Իրէնք բլուրին ետևի կողմէ հովիտ մը իջան զիմացի բլուրը հասնելու նպատակաւ , ուր տեսակ տեսակ թռչուններու առատութիւն բլլաք իմացուցած էր ծերը . և ստուգիւ տեղոյն կանանչութիւնը և ծառերուն առատութիւնը՝ որոնք բլուրին անտառի տեսարան մի տուած էին , ծերին ըսածը կը հաստատէին :

Մեր երեք որսորդները խօսակցելով և զուարճանալով կը քայլէին , բայց քանի կը յառաջանային զէտի մը ահեղ թառալելուն մանջիւնը աւելի յստակ իրենց ականջին կը հասնէր . քիչ վերջը նոյն զէտին ախուրը հասան , և տեսան որ սոսկալի արագութիւն ունէր . տասներկու կանգունի չափ լայնութիւն ունէր և խորութիւնը չափելով երկուքու կէս մարդաչափ գտան . ջուրը պզտոր էր և ահագին ծայրեր զէտին ընթացքին հետ կը թառալէին սոսկալի տեսարան մի տալով :

— Կ'նչ կըսէք , — ըսաւ Էտուար իր երկու ընկերներուն դառնալով , — սլիախ կրնանք անցնիլ այս գէտէ :

— Տեսքը սոսկալի է , — ըսաւ Ռօտովֆ , և կարծեմ խոհեմութիւն չէ փորձել :

— Բայց , — պատասխանեց Ալֆօնս , — քննենք նայինք քիչ մը կարելի է կամօրջ մի կրնանք գտնել :

Իր ընկերները հաւանեցան , և ամենքը միատեղ զէտին ափերէն առանց դատուելու զէտ 'ի արևելեան կողմը յառաջացան և քառորդի մը չափ ճամբայ ընելէ յետոյ իրենց բաղձանքին հասան . փառեայ կամօրջ մի տեսան , որու տեսքը թէև հաստատուն կերբէր՝ այլ երկու ոսնաչափ լայնութիւն ունէր . ուստի և մեծ զգուշութեամբ անփնաս միւս կողմը անցան , և արագութեամբ զէտ 'ի բլուրը յառաջացան : Զմայելի տեսարան մի անմիջապէս բացուեցաւ իրենց աչաց առջև , զէտին միւս կողմը գտնուած ժամանակնին բլուր

ըին գեղեցկութեան մէկ մասը միայն կերևէր իրենց . բայց հիմա բոլորովին յափշտակիչ երևոյթ մի բացուցաւ իրենց առջև : Թըռչուններու բաղմամբիւ տեսակէ առատութիւն մի կը տեսնուէր , սորոնց մտայ մեր որսորդներու աւրախութիւնը անսլայման եղաւ :

— Ճշմարիտ է այն խօսքը , — ըսաւ Ռօտալֆ , — որ գեղձուկը քաղաքացիէն աւելի ելջանիկ կ'ապրի , նայիցէ՛ք սա բլուրին գրասիւն տեսքը , նայիցէ՛ք , մէկ կողմէ մարդագետիմներ և բլուրներ և միւս կողմէ ընդարձակ ծովը իր կապոյտ տեսարանով մարդու սիրտը կը գրաւեն և աչերը կը յափշտակեն . Ճշմարիտ , քաղաքացին կեանք վարելու կերպը չզխտէր և ասանկ զմայլելի վայրերը թողնով վատասիրտ կենդանիներու նման կարծես խռոտչներու մէջ կը պահուի :

— Ստոյգ է , — ըսաւ Էտուար , — բայց քաղաքացի մարդուն ալ զուարճութիւնները ուրիշ տեսակ կ'ըլլան . սարահանդէաներ , սօնախմբութիւններ , թատրոններ և այլն , իրեն զուարճանալու միջոցներ են և որոնցմէ գեղձուկը դուրի է :

— Ստոյգ է , բայց բնական գեղեցկութիւնը մարդու աւելի հասածի կ'երևի , քան թէ արտեստական հանդէաները , նայէ՛՛ հոս ալ ծառեր , թռչուններ , մարդագետին , ծով և բլուրներ որանչելի տեսարան մի կը բանտն անցորդին առջև , և կրնամ ըսել որ մեր քաղաքացւոց վայելած զուարճութիւնները այս տեսարանիս առթած բերկրութիւններուն չեն հասարկիր :

— Այդ մատամբ մը Ճշմարիտ է . բայց զիսնալ սէտք է որ քաղաքացւոցմէ շատ քիչերը գեղջկական կեանց կը ցանկան , իսկ գեղջուկներու բոլորն ալ քաղաքացւոց կենցաղավարութիւնը ունենալիք փափաքին :

— Ասիկա իրենց անմտութեան տալ սէտք է . չեն ճանչնար իրենց առողջ օդ ունեցող վայրերու մէջ բնակելուն յարգը , և որուն սլատճառաւ այնչափ երկարակեսց կ'ըլլան :

— Բայց այս ալ յայտնի է անշուշտ , որ կը ճանչնան իրենց աղքատութիւնը ու թշուառութիւնը , գիտեն որ առաւօտը գլորենք աջ

խատու թեան և վշտերու կենթարկէ և իրիկունը մտածումներու և չոր հացի :

— Այդ խորհրդածութիւնները , — ըսաւ անդիէն Ալֆօնս , — թէ և շատ ընտիր են , այսու ամենայնիւ քաղքին մէջ պէտք են ըլլալ . հրացանները պատրաստ են և թուշուները զմեզ տեսնելով կը փախչին , և մենք ի՞նչու անփոյթ մնանք . յառաջանա՞նք մեր նպատակին :

Երեքնին ալ նոյն միջոցին ըլուրին ծայրն էին , որ բոլորովին տափարակ էր անտառի նման և քսան արտավարի չափ տարածութիւն ունէր . հոն մէկ մէկէ քիչ հեռանալով որսորդութեան սկսան :

Այս տեսարանը շատ հաճելի էր , հրացաններու ձայնը օդը կը դուրսնէր և թուշուներու երամակներ հրացաններու զնտակներէ զարնուած կը զլարէին ըլուրին վրայ :

Մէկ ժամու չափ այսպէս որսորդութիւն ընելէ յետոյ , Ալֆօնս՝ որ բաւական հեռացած էր եւս դարցաւ նապաստակ մը զարկած :

— Բարեկամ , — ըսաւ Էտուար , — որսորդութեան մէջ ունեցած յաջողակութիւնդ իմացնելու համար բերիր այդ նապաստակը :

— Ա՛յ , — պատասխանեց Ալֆօնս , — հասպ փոքրիկ թուշուներ շատ զարներուս ձանձրացայ անոնցմէ , ասիէ զատ կէսօրուան ուրախութեան համար կրնայ ճաշին փառաւոր կերպով ծառայել :

— Ա՛հ , պարոն Ալֆօնս , — ըսաւ Ռօտուլֆ , — ձեր բաղդին վերայ կը նախանձիմ , ես ալ այնչափ պիտի հեռանամ՝ որ կարենամ երկրորդ մը որսալ :

— Հեռանալու հարկ չկայ , — ըսաւ Ալֆօնս , — իմ զարկած տեղս նապաստակներու խոռոչներ տեսայ , և ապահով եմ որ եթէ քառորդի մը չափ դարանիս՝ կրնաս փափաքիդ հասնիլ :

Ռօտուլֆ ուրախ կերպով Ալֆօնսի ջուրուցած տեղը գնաց , և ստուգիւ կէս ժամէ յետոյ վերադարձաւ նապաստակ մի բերաւ , որ գեռ կենդանի էր :

— Պարոն Էտուար , — ըսաւ Ռօտուլֆ , — այս նապաստակը ձեզ կը նուիրեմ , և համարեա՛ թէ ձեր հրացանով սպաննած էք :

— Ա՛յ , պարոն Ռօտուլֆ , — պատասխանեց Էտուար , — քանի

որ ես անձամբ չզարկի չեմ կրնար ընդունիլ զայն իբր իմ հրացան-
նիս արդիւնքը :

— Լա՛ւ , — ըսաւ Ռօտովֆ , — իբր անկեղծ սրտե՛ եթէ նուէր
ըլլայ՝ չե՞ս ընդունիր :

Այս ըսելով վերստին նապաստակը Էտուարի ներկայացուց որ ըն-
դունի :

— Բայց , պարո՞ն :

— Պէտք էք ընդունիլ :

— Շնորհակալ եմ :

Այս ժամու չափ ևս որսորդութիւն ընելէ յետոյ իրենց անօթու-
թիւնը ձայն տուաւ որ ճաշի պատրաստութիւն տեսնեն :

Անմիջապէս բլուրին վրայ կրակ վառեցին և իրենց նապաստակ-
ներէ մին և քանի մը թուչուններ խորովելէ յետոյ՝ խորձերնէն պա-
շարքնին հանելով զուարթութեամբ ճաշեցին :

Այս ճաշէն վերջը երկու երեք ժամու չափ ևս որսորդութիւն ը-
րին զբերնին տուն տանելու նպատակաւ :

Այս ալ յաջողութեամբ կատարելէ յետոյ պատրաստուեցան
դառնալու :

Երեքնին միատեղ բլուրէն վար իջան և սկսան իրենց եկած ճամ-
բայէ յառաջանալ , և դէտին քով հասնելով նոյն կամուրջէն անց-
նելու պատրաստուեցան :

Բայց գծրադղութիւնը երջանկութեան մէջ ալ հասնելու չուշա-
նար , երբ պարոն Էտուար որ Ալֆօնսէ վերջը գէտէն պիտի անց-
նէր՝ կամուրջին վրայէ զգուշութեամբ կը յառաջանար , ինչպէս ը-
սինք յառաջ՝ կամուրջին լայնութիւնը նեղ ըլլալուն հաւասարակըշ-
ուութիւնը կորսնցուց այս անգամ և ոտքը սահելով գէտին մէջ գը-
լորեցաւ , և լողալ չգիտնալուն , թէև լողալու հմուտ եղողն ալ
մեծ դժուարութիւն կրնար կրել գէտին աստիկ ընթացքին դէմ ,
դէտը զայն առնուլ տանիլ սկսաւ :

Նոյն միջոցին Ռօտովֆ անմիջապէս հրացանը մէկզի նետեց , և
մէջքը գտնուած չուան մը Ալֆօնսի նետելով գէտին միւս կողմը՝ ինք
չուրին մէջ նետուեցաւ օգնութեան համար , ըսելով Ալֆօնսի որ

ինաց տուած ժամանակ չուանը իրեն երկնցնէ :

Ռօտովֆ արսաքոյ կարգի ուժեղէր և լողալու խիստ հմուտ , ուստի և քիչ միջոցի մէջ հասաւ Էտուարի քով , որ երբեմն ջուրին յատակը կ'ընկղզէր և երբեմն երեսը կ'երևէր . բռնեց թևէն և այս միջոցիս Ալֆօնս չուանը երկնցու ցած ըլլալուն մեծ դժուարութեամբ դէտին ասփունքը տարաւ և անվնաս ցամաք հանեց զայն : Էտուար երկիւղէն և ջուրին սատկութեան թալկացած և ճանաչողութիւնը բոլորովին կորուսած էր՝ ուստի Ռօտովֆ ասանց ժամանակ կորսնցնելու դէտին միւս կողմը անցաւ դարձեալ և հրացանը առնելով և վերստին կամուրջէն անցնելով իր բարեկամաց քով հասաւ : Ալֆօնս և Ռօտովֆ գրկելով զԷտուարը հինգ վայրկեանէ ծերին խրճիթը հասան և հոն պէտք եղած դարմանները հոգացուելով Էտուար ինքզինք դտաւ և պատահած դէպքին յիշատակութեամբ սկսաւ հարաչել , չէր գիտեր թէ ո՛վ էր զինք տղատողը , վասն զի իրեն օղնութիւն եղած ժամանակ ինք բոլորովին անզգայ էր : Աերջէն երբ Ալֆօնսէ խնայաւ Ռօտովֆի դիցազնական գործը՝ անմիջապէս իր աղատչին վզէն կախուելով գոչեց ցաւազին :

— Ռօտովֆ , Ռօտովֆ , ի՞նչ փոխարէն պէտք եմ տալ այդ վեհանձնութեանդ :

— Հանդարտէ՛ , Էտուար , — պատասխանեց Ռօտովֆ , — ես քեզ պարտաւոր էի իմ կեանքս , Աստուած իմ սիրտս և սերս յայտնելու համար միջոց չի խնայեց , ասով ես իմ ծանր պարտաւորութեանէս ազատեցայ կենաց գէմ կեանք շնորհելով :

Ձգեստնին շոքնելու համար ալ սպասած ըլլալնուն ժամանակ խիստ յառաջացած էր , արևը մարը մանելու վրայ էր , ուստի և պատրաստուեցան ճակրայ ելելու :

Չիկըր բերուեցան , և թէև ծերը աղէկ վարձատրուած էր՝ այսու ամենայնիւ ըսաւ .

— Պ : Էտուար , չէք գիտեր ի՞նչ փորձանք պիտի գար գլուխս :

— Ի՞նչ է այն , — ըսաւ Էտուար շփոթած :

— Ո՛հ , պարո՛ն , ձեր ձին երբ մարդադեաննին վրայ կ'արածուէ :

անմիջապէս կապը փրցուց և սոսկալի արագութեամբ սկսաւ փակու-
նել, և եթէ այս տղաս չըլլար՝ անշուշտ կորսուած պիտի ըլլար :—

Այս ըսած միջոցին ծերը տասն և ինն կամ քսան տարեկանի
մօտ պատանի մը ցուցուց :

— Եւ հիմա՞, — ըսաւ Կտուար :

— Ո՛հ, պարոն, վարձք մը տալու բարեհաճէ՛ :

— Շատ լաւ, — պատասխանեց Կտուար :

Եւ երբ իր զրպանը կը խառնէր ստակ հանելու համար՝ Ռօտովֆ
արդիւնց և ըսաւ .

— Պարոն Կտուար, ձին ինձ կը վերաբերէր, ուստի և անոր չը
կորսուելուն համար վարձատրելու իրաւունքը իմն է :

Այս ըսելով թալեռ մի հանեց և տղային տուաւ :

Ծերին ըրածը խաբէութիւն էր վասն զի հարուստ կարծելով
զանոնք ուղեց քիչ մը ստակ փրցնել :

— Հարուստները ապուշ կ'ըլլան, կ'ըսեն, շատ ստոյգ է, ըս-
տաւ ծերը և զուարթ իր խրճիթը մտաւ :

Երեք բարեկամները պատահած գէպքերուն վրայ խօսակցելով և
զուարճանալով երեկոյեան ժամը եօթին անվտանգ իրենց բնակարա-
նը հասան :

Կտուար և Ռօտովֆ ալ անկէ վերջը լարեկամ չէին, հապա
անձնուէր :

ՊԼՈՐԲ Զ.

Հ Ի Ի Ա Ն Դ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Քանի մը օրէ 'ի վեր Տօրա զԿտուար տեսած չէր :

Տխուր մտածումներ իր փափուկ սիրտը կը խռովէին և ցաւալի
վիճակի մը կ'ենթարկէին զինք :

—Ո՛՛՛հ , էտուա՛ր , էտուա՛ր , — կը գոչէր ցառապին , — ո՛ւր
ես , ինչո՞ւ չես երևիր , ինչո՞ւ քու գրաւիչ դէմքդ կը պահես ըզ-
քեզ պաշտողէն . ի՞նչ ունիս , ո՛՛հ , միթէ՛ գքեզ վշտացնելու ա-
ռիթ տուած եմ , միթէ սիրտդ վիրաւորեցի՞ . ակոս՛ս ինձ . ո՛՛հ , այս
քանի՛ օր է որ քու տեսքէդ զրկուած եմ . օ՛ր ըսի . — ո՛՛հ , տարի .
սիրոյ համար վայրկեան մի՛ օր է , օր մը՛ տարի , և տարին յաւի-
տենականութեան մէջ կը կորսուի : Սրտիս վշտերը կը ծանրանան .
Աստուած՛ իմ , ի՞նչ կ'զգամ :

Վայրկեան մի խորին մտածմանց մէջ ինկաւ :

— Բայց ի՞նչ կայ , — ոչ ինչ . միտիթարուիմ՝ ուրեմն , սիրոյ սիրա
մը պէտք չէ այսչափ թոյլ ըլլալ . քաջադերուժի՛ւն . միթէ՛ վտանգ
կայ , միթէ՛ չարի՞ք կ'սպառնայ . ո՛՛չ , ո՛՛չ , անշուշտ պատճառ մի ու-
նի ինձ՝ յաճախակի այցելութեան չի դալուս , և գուցէ՛ խոհեմու-
թիւն իսկ է , վասն զի ան ալ ես ալ կ'զգանք որ թշնամիներ ու-
նինք , է՛՛հ , սիրոյ թշնամին ալ որչափ որ զօրաւոր ըլլայ՝ կ'ընայ
միթէ՛ յաղթական ելլել :

Այս միջոցին իր քնարը՝ զոր յաճախակի կը զարնէր , պատէն
կախուած տեննելով ցատկեց և առաւ :

— Ո՛՛՛հ , առանձնութեանս ընկերն ես դու , եկ'ու , քու ներդաշնակ
ձայնը իմ՝ վշտերս կ'սրողէ :

Այս ըսելով տխուր եղանակով սկստ հետեւալը երգել .

Մինչդեռ , Տօրս առանձին
Իր հառաւարին կ'ապասէ ,
Ի՛նչ մի փախուտ վայրկենին
Իր անձկութիւնն կ'աւելցնէ :

Ինչ ընէ

Որ անձկութիւնն փարստէ .

« Հարեքէ՛ »

Կ'ըսէ սերը , « հարեքէ՛ » :

Բայց երբ ցերեկ կը սասի
Եւ տակաւին չերեւիր :

Երբ մտածումսք Տօրայի
Սիրտը խոռովեն՝ ո՛ն ի՛նչեր

Այն ատեն

Իրեն սիրտը փոփեն .—

«Մութին մէջ

Իսա այցելու կ'ըլլայ քեզ» :—

Բայց երբ գիշերն աչ նոյնպէս
Ցերեկուսն պէս աննշան
Սահի, Տօրա ո՛ն ի՛նչպէս
Համբերութեան տայ նշան.

Ի՛նչ ընէ,

Ըսէ՛ ո՛ն, սէ՛ր դու ըսէ՛ :

«Համբերէ՛,»

Կ'ըսէ սէրը «Համբերէ՛.»

Եթէ չէ՛

Ո՛ն կը գոչաս դու անկէ.

Ձի կրակի

Իսա սրտիդ մէջ կը փոխուի ,

Եւ կ'այրիս

Դու եւ անշուշտ կը մտնիրս :»

Այս երգիս մէջ եղած բուն անուններն էին Օսկար և Ամելիա .
բայց ինք փոխած էր զանոնք և Էտուարի ու Տօրայի յարմարացած :

Երգին վերջի տունը ցաւալի ներգործութիւն մի ըրաւ իր վրայ, և
եբբը խորին մտածմանց մէջ ընկղմած էր Ալիս ներս մտնելով ըսաւ .

—Երգի մը զրաւիչ ձայնը զիս դէպ ՚ի հոս շարժեց , Տօրա՛,
բայց դու ի՛նչու մտածկոտ երեւոյթ մի ունիս :

—Ալիս , Ալիս , ի՛նչ ընեմ ,— ըսաւ Տօրա , — դաժան բաղ-
դը կը կարծէի որ վրաս գթալու սկսած էր . բայց ո՛չ նայէ՛ , հի-
մա զիս իրեն խաղալիկ կ'ընէ : Ի՛նչպէս մտածկոտ չերեւիմ , եբբ ա-
մեն կողմէ ցաւալի խորհուրդներ վրաս կը բռնանան և զիս այնպիսի

վիճակի մը կ'ենթարկեն՝ որու մէջ ողբալէ և հառաչելէ ուրիշ հընարք չկայ մխիթարուելու :

— Շատ տկար սիրտ ունիս , Տօրա՛ , ինչ պատահեցաւ որ այդչափ ոչինչ տեղը կ'ողբաս . ինչ կայ , միթէ վտանգ մի կ'սպառնայ քեզ , միթէ յոյսերդ ցնդեցան : Ճշմարիտ ըսելու համար այդչափ տկար սիրտ մը սիրոյ յարմար չէ , պէտք ես արի ըլլալ վտանգներու մէջ , թէև հիմա վտանգ իսկ չկայ . իսկ ասանկ խաղաղ ժամանակի մէջ եթէ այդչափ խռովիս , ինչ պիտի ընես թէ որ արդելքներու իսկ պատահիս . Տօրա՛ , Տօրա՛ , սիրող սիրտ մը աներկիւղ պէտք է ըլլալ , ըսէ՛ նայիմ՛ , ինչ են այդ քու մտածումներուդ պատճառը :

— Ա՛չ լոկ մտածումներուս այլ և տրամութեանս սխառտը ըսէ : Հինգ օրէ ՚ի վեր զլէտուար տեսած չեմ . գիտե՞ս ինչ ըսել է սիրոյ համար հինգ օրը . — հինգ տարի՛ , հինգ դա՛ր . սիրտս այնչափ չէր վշտանար զինք չտեսնելուս եթէ իր վիճակին կամ վտանգի մը պատահած չըլլալուն վրայ տեղեկութիւն ունենայի . գու անտարբեր կերպիւ կ'ըսես թէ սիրտս տկար է սիրելու . Աստուած իմ սիրող սիրտ մը անզգայ պէտք է ըլլալ , կամ զինք չտեսնելուս համար անտարբեր պէտք եմ մնալ : Ատանց մը չսպառնալուն կամ իմ խառտած չըլլալուս ինչպէս կրնամ վտահ ըլլալ . ո՛ւր է ինք , ինչ եղաւ , եթէ ստուգիւ զիս կը սիրէր՝ զոր երդումով հաստատեց , ինչո՞ւ երկու տող գիրով իր վիճակին վրայօք ծանօթութիւն չի տար և իր բացակայութեան պատճառը չիմացնէր : Ալիս , Ալիս , գիմացդ խոսութիւնը՝ որ ալնիւ սրտիդ յայտարար կ'ըլլայ , կ'իմացընէ ինձ որ վիշտերս իրաւացի են և ինձ կարեկից կըլլաս :

— Իբրև ո՛նք ունիս , բայց զքեզ վերջի անգամ տեսած ժամանակ ինչպէս դատար զինք :

— Շատ եռանդոտ կերպիւ կապուած էր հետս :

— Ամեն ինչ որ և իցէ՛ դէպքի՛ մը տեղի չի տուաւ , որմէ անհաւատարմութեան կամ ուրիշ վտանգի մը վրայ կասկածէիր :

— Երբէ՛ք :

— Արեւմն բռնբռովն վտահ եղիր իր հաւատարմութեան վրայ :

անշուշտ խիստ ստիպողական պատճառ մի պիտի ունենայ քեզ այցելու թեան չի գալու :

— Բայց չէ՞ր կրնար երկու ատոյ գիրով ինձ իմացնել պատճառը :

— Բայց, Տօրա՛, դիտե՛ս որ շատ դժուար է ասանկի դէպքերում ջ նամակ հասցնելը, և դուք է՛ստուար ալ մատնուելու երկկուղով չի գրեր :

— Կը կարծե՞ս որ ատանկ ըլլայ :

— Անտարակոյս, վասն զի զԷստուար խոհեմ՝ երիտասարդ մի՛ ճանչցած եմ :

— Ուրեմն ի՞նչ ընել պէտք է հիմա :

Ալիս պատասխան չի տուալ :

Երկուքնին ալ քառորդի մը չափ մտածմանց մէջ ինկան, որմէ վերջը Ալիս ժպտելով մի ըստալ :

— Տօրա՛ :

— Ի՞նչ է այն :

— Պ. Ալֆօնսէ կրնաս տեղեկանալ ուղածդ :

— Այո՛, աղէկ բոհր :

— Ուրեմն պէտք ես անյապաղ իր հետ տեսնուելու ջանալ :

— Ապահով եղիր :

— Հիմա ալ տրտմութիւնդ անցած է, այնպէս չէ՞ :

— Մասամբ մը :

— Աստուծով բոլորովին հանդիստ կ'ըլլաս, ես առ այժմ՝ առանձին կը թողում քեզ :

Տօրա շնորհակալ եղաւ Ալիսէ, և Ալիս մեկնեցաւ սենեկին մէջ առանձին թողլով զՏօրան :

Տօրա առանձնութեան մէջ բաւական ժամանակ մնաց մերթ զմերթ և մերթ տխուր խորհուրդներու ենթակայ ըլլալով :

Պ. Ալֆօնս ամեն իրիկուն շուկայէ դարձած ժամանակ պարոն Շարլի տան առջևէ կ'անցնէր :

Տօրա գիտէր անոր անցնելու ժամը, և տեսնելով որ ժամանակը հասած էր՝ սխառահանը նստելով անոր սպասեց :

Պարոն Ալֆօնս որոշեալ ժամուն հոնկէ անցաւ, և Տօրա զգու-

շուժեամբ իմացուց անոր որ եթէ կարելի ըլլար՝ գիշերուան ժամը տանին պատուհանին առջև դանուէր :

Ալֆօնս ընդունեց և հաստատութեամբ խօսք տուա :

Գիշերը ժամը 10ին քառորդ մնալով Տօրա սկսաւ պատուհանին փեղկը վրայ բերած սպասել :

Ալիս մեկնած էր և տան մէջ ամեն ոք կը ննջէր :

Ժամը 10ին Ալֆօնս եկաւ իր խոստման համեմատ :

— Պ. Ալֆօնս, — ըսաւ Տօրա, — անշուշտ պիտի ներէք ինձ :

— Ինչ բանի համար :

— Ձեզ անհանգստութիւն պատճառելուս :

— Բողորովին մտքէդ հանէ այդ կարծիքը, բայց կընամ՝ հարցնել ինչ բանի համար զիս ուղեղդ :

— Այո՛, կարևոր բան մի պիտի հարցնեմ ձեզ և կը յուսամ որ ստուգութեամբ կը պատասխանէք :

— Ապահով եղիք :

— Սերմն ըսէք ինձ խնդրեմ, ո՛ւր է Էտուար :

— Ինչո՞ւ կը հարցնէք :

— Վասն զի կասկածներու մէջ ինկած եմ զինք չտեսնելուս :

— Բողորովին աղահոյս եղիք և կասկածնիդ փարատեցէ՛ք :

— Աղէ՛կ, բայց իր չերեւելուն պատճառը ինչ է :

— Գուցէ ստիպողական գործեր ունենալուն կարող չեղած է քեզ երևելու :

— Ճշմարտութեամբ պատասխանէ Ալֆօնս, — ըսաւ Տօրա հըրամայող կերպով :

Ալֆօնս շփոթեցաւ և պատասխան չի տուա :

Էտուար ըսած էր Ալֆօնսի որ իր հիւանդութիւնը չի յայտնէ Տօրայի :

— Պ. Ալֆօնս, — յարեց Տօրա, — երգմամբ կը պարտաւորեմ զքեզ ճշմարիտը խօսելու :

Ալֆօնս իմացաւ որ ալ սուտ պատրուակներ օգուտ պիտի չընէին, ըսաւ :

— Տօրա՛, պիտի վշտանաս անշուշտ :

Տօրա այս խօսքին վրայ դողաց և մէկէն հարցուց .

— Ի՞նչ կայ , պարոն Ալֆօնս , կտրուկ խօսքերով իմ՝ վշտերս մի աւելցնէր , խօսէ՛ համարձակ :

— Էտուար հիւանդ է :

— Հիւանդ է ըսկք :

— Այո՛ :

— Ափսո՛ս , ուրեմն ինչո՞ւ դողտնի կը պահէր :

— Վասն զի չուզեց քեզ յայտնել :

— Ի՞նչ պատճառաւ :

— Քեզ չի տրտմեցնելու համար :

— Ո՞վ Ատուած . . . բայց ի՞նչ է իր հիանդութիւնը :

Ալֆօնս պատմեց որսորդութեան մէջ Էտուարի պատահած տխուր դէպքը , որմէ իր հիւանդութիւնը հետեւած էր :

— Պ . Ալֆօնս շորհակալ եմ ձեզմէ , և անշուշտ պիտի ներէք ձեզ ծանրութիւն պատճառելուս :

— Ոչինչ բան մ'է ըրածս , — բայց միայն ասո՞ր համար զիս ուզեցիք :

— Այո՛ , ի՞նչ կայ :

— Ես կը կարծէի որ ուրիշ բան պիտի ըսէիք :

Տօրա տեսնելով որ պարոն Ալֆօնսի թեթեւութիւնը վերստին բռնած էր պատասխան չի տալով ներս քաշուեցաւ բարեւելէ յետոյ :

Պ . Ալֆօնս մեկնեցաւ :

Տօրա պատուհանին փեղկը դոցելով մեկնեցաւ ննջելու :

Բայց միթէ նոյն զիշերը վայրիեան մի կըցաւ քնանալ , անշուշտ ընթերցողը կրնայ դուշակել :

Առ այժմ ընթերցողը թող հաճի մեզ հետ Տօրան թողլով Էտուարի դատնալ :

Որսորդութեան մէջ Էտուարի պատահած դէպքը արդէն ամենու յայտնի է :

Նոյն դէպքին հետեւեալ օրը սոսկալի ջերմ մի եկած էր վրան և քանի կ'երթար կը սաստկանար , և այս ջերմին հետ ուրիշ հիւ-

ւանդու թիւններ ալ ծայերով՝ անանկ տկարացուցին զինք , որ քանի մ'օրուան մէջ ոչ շարժելու . և ոչ խօսելու . կարողութիւն մնացած էր վրան . բոլորովին ուժամարի և նիհար էր , և իր կենդանութեան յայտարար միայն իր տկար շնչառութիւնն և իր աչաց բիրեղութեան քրեմնա՛ի բացուիլու ու գոցուիլն մնացած էր : Ասոյն միջոցին ամեն զինք տեսնող անկարելի էր որ չի գլխար և կարեկցութեան աքաղաղ չի հասէր . չիչելով Էտուարի նախկին կայստատութիւնը , գեղեցկութիւնը և շնչահալի ձիւրքերը . ամեն որ ցառով կը գուշակէր թէ Էտուար հիւանդութեան զոհ հղած է , և կ'սկսէր դառն կերպով արտաստել . յաճախ այցելութիւններ տեղի կուեննային զինք մը խիթարելու և քաջակերելու համար թէ վասնպիսի երկիւղ մը չունէր . բայց ամառս , միթէ խելքն ու սրամտութիւնը՝ հիւանդութեանը կը տկարանան , միթէ հոգոյն սթամբութիւնը՝ որ այնչափ յայանի և տորօրինակ կ'ելեւէր իր վրայ , մարմնոյն տկարանալով կը նուազէր . երբէ՛ք , երբէ՛ք , վասն զի յայանի կը տեսնուէր ասոր ճըշմարտութիւնը Էտուարի խիստ ծանր օրերն անդամ . երբ զինք կը մտտահայնէին ապահովիչ խօսքերով՝ ժպտով միայն կը պատասխանէր , իբր թէ իր վիճակը ինք անոնցմէ աւելի աղէկ կ'զգար , և կամ թէ անոնց սրատիր խօսքերը՝ որոնք տղայքներ համարելու կը ծառայեն , իր ծիծաղը կը շարժէին :

Ինչ և իցէ այս ցտալի վիճակին մէջ դանուած ժամանակ հիւանդութիւնը ստակալի կերպով կը ծանրանար իր վրայ . այնպէս որ քանի մը շաբթուան մէջ բժիշկները իրենց յոյսը կարած էին , և Էտուարի ապաքինութեան համար կ'ըսէին թէ միայն Նախախնամութեան օգնութեան սպասել պէտք էր :

Մոռցանք իմացնելու որ Էտուարի ծնողքը բառակաւ ժամանակէ՛ի վեր վախճանած էին և իրեն խնամակալի տեղ մնացած էին իր երկու հղաւորները , որոնք կամոյլին կը սիրէին զինք և իր թշուառ վիճակին վրայ անպայման վիշտ և տրտմութիւն կ'զգային :

Թէև բժիշկները իրենց ձեռքը քաշած էին , թէև Էտուարի կացութիւնը ամեն յոյս արմատաքի կը խլէր՝ այսու ամենայնիւ դեռ չէին յուսահատած , դեռ անմիջական գարմաններ չէին զլանար , դեռ

նորանոր փորձեր կ'ընէին , դեռ ամեն ջանք չէին խնայեր , թէև ամեն ճիգ և աշխատութիւն մի և նոյն անօգուտ հետևութիւնք կ'ունենար :

Իր եղբարց սաստիկ թախանձանքէ ստիպուած քանի մը բժիշկներ խորհրդակցութիւն մի ըրին իր վիճակին վրայ :

Այս խորհրդակցութիւնը՝ որ Էտուարի ապագայ վիճակը սպասհովեց , անշուշտ նախախնամութեան անմիջական օգնութիւնն էր , որու գործիք եղած էին երկու բարեսիրտ եղբայրները :

Այս խորհրդակցութիւնը երկար վէճերու և անհամաձայնութեանց տեղի տուաւ , մինչև որ վերջէն Տօթթոր Բ . ի անհերքելի վաստերն ու նոյն արհեստին մէջ ունեցած հմտութիւնը վէճերու վերջ տուաւ հիւանդը խնամելու հոյր իր Վրայ աւանելով և զինք ամեն վտանգաց պատասխանատու ցուցնելով :

Ալ անիւ վերջը Տօթթոր Բ . ի բանեցուցած ազդու և կարևոր միջոցները և առողջարար դեղերը զօրաւոր փոփոխութիւն մի ներգործեցին Էտուարի վիճակին վրայ , անանկ որ քանի մը շաբթուան մէջ իր վտանգաւոր կացութենէ ազատած էր և քանի կ'երթար կ'առողջանար :

Վերջապէս այս զօրաւոր միջոցներու օգնութեամբ իր դժը տեղը եկաւ , ախորժակը բացուեցաւ և քիչ մը վերջը կարող եղաւ գաւազանով քաղքին մէջ շրջազայիլ :

Իր առողջութիւնը թէև վերստին ստացած էր և վտանդները բոլորովին անհետ եղած էին այսու ամենայնիւ իր նիհարութիւնը արտաբոյ կարգի էր :

Ինչպէս յայտնի է Չ . . . քաղքին օդը եթէ վատառուջ չըստ իր առողջարար ալ չէ , և Էտուարի համար ալ՝ որ հիւանդութենէնոր եղած էր , օդաէտ վտարեր օգտակար ըլլալուն՝ բժշկին խորհրդով դէպ ՚ի՞՞ . . . ձամբորդութիւն մ'ընելու պատրաստութիւն տեսնուեցաւ :

Իր ձամբորդութենէ երկու օր յառաջ հետևեալ նամակը ընդունեցաւ Պ . Ալֆօնսի միջոցաւ :

« Սիրելիդ իմ՝ Էտուար ,

Ապահով եմ որ Ձեր հիւանդութիւնը այնչափ անհանգրս-

տութիւնն չպատճառեց ձեզ՝ որչափ իմ վիշտս ինձի, ի՞նչ կերպով նկարագրեմ առանց ձեր ներկայութեան անցուցած երկար օրերու գէպքերը, անշուշտ Նախաինամութեան օգնութիւնը ինձ հասաւ որ կարող եղայ այսչափ վշտերու դիմանալ, գոհութիւնն Աստուծոյ, առողջութիւննիդ վերստին ստացեր էք, զոր հաւասար տեղէ իմացայ այս լուրը կենդանութիւն տուաւ իմ թշուառ ողւոյս և իմ յոյսերս նորոգեց : Էտուար, Էտուար, խնդրեմ մի զլանար այս գիշեր անդամ մի երեւելու, քու բացակայութիւնդ զիս կը տանջէ, և կ'զգամ որ եթէ աւելի երկար տեսքէդ զրկուիմ՝ թշուառութեան մէջ պիտի իյնամ :

Ձեռքերս կը դողան և չեմ կրնար ալ աւելի յառջանալ շատ բաներ ունիմ գրելիք բայց կարողութիւնս կը նուազի : Գիշերուան ժամը տասին մեր պատուհանին սուշև գտնուէ՛ կ'աղաչեմ :

Սիրովդ տանջուած

ՏՕՐԱՅ

Էտուար նամակը կարդալէ յետոյ ըսաւ Ալֆօնսի :

— Ո՛վ տուաւ քեզ այս նամակը :

— Տօրա իր ձեռքով :

— Ի՞նչպէս գտաք զինք :

— Սատիկ խռոված և գունատ :

— Գունատ ըսիք :

— Այո՛ :

— Ի՞նչ պատճառաւ գունատ էր :

— Պատճառը հարցոյցի իրեն և ըսաւ թէ անհանգստութեան մէկէր ժամանակէ մը ՚ի վեր :

— Ախտո՛ս, բայց հիմայ ի՞նչ ընել պէտք է :

— Նամակին մէջ ի՞նչ գրած է :

— Գրած է թէ երեկոյեան ժամը 10ին ինձ կ'սպասէ :

— Ուրեմն փութացէք խնդիրը կատարելու :

— Ի՞նչ կըսէք Ալֆօնս, ի՞նչպէս կրնամ գիշեր ժամանակ գուր

եղնել առանկ տկար վիճակի մէջ, ասկէ զատ երկու օրէ ճամբորդութիւն պիտի ընեն՝ դէպ ՚ի Պ. . . և ստիպուած եմ այս երկու օրս պատրաստութիւն տեսնել և դիշերները ազգականացս քով անցնել :

— Աւրեմն նամակով մի իմացուցէ՞ք ձեր պատճառները :

— Ա՛յ, նամակ չեմ գրեր . այլ կը խնդրեմ որ իմ կողմէս իմացնես :

— Հատ լաւ :

Այս ըսելով Ալփօնս մեկնեցաւ և Տօրայի իմացուց կտուարի նոյն դիշեր գալու անկարող ըլլալուն պատճառը :

Տօրա խոսոված էր այս լուրին վրայ :

Չմոռանաք իմացնելու որ Պ. Օսկար Տօրայի առ հտուար գրած նամակին օրինակը դտած էր , զոր Տօրա անզգուշութեամբ իր սենեակին մէջ թողուցած էր . ուստի և եղելութիւնը ընտանեաց ամեն անդամներու յայտնուեցաւ :

Սաստիկ վէճեր և խռովութիւններ տեղի ունեցան ասան մէջ . բայց ամեն սպառնալիք Տօրայի զգացածին վրայ չկրցան ազդեցութիւն մի ներգործել :

Տօրա տկարութեան նշան կը ցուցներ :

Սէրը հրոյ փոխուած էր :

ՔԱՆՈՒՄ Է՞

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

Հտուարի ճամբորդութեան առջի իրիկունս էր ճամբորդութեան հարազատ , Ալփօնս , Ատուլֆ նոյն իրիկունս հտուարի այցելութեան դացած էին :

Էտուարի թախանձանքէ ստիպեալ վերոյիշեալ անձերը նոյն գիշեր միատեղ պիտի ընթրէին :

Էտուար զուարթ և ուրախ էր , և իր սովորական շորհալի ձիրքերով ամենու սիրտը իրեն կը դրաւէր .

—Ուրեմն Պ . Էտուար , — ըսաւ Ռօտուլֆ , — այսպէս պիտի բաժնուիք մեզմէ :

—Գէպքերը ստիպեցին ասանկ ըլլալ , Պ . Ռօտուլֆ , — ըսաւ Էտուար , — բայց հոգ չէ միթէ մեր անկեղծութիւնը հեռաւորութեամբ պիտի տկարանայ , միթէ մեր յարաբերութիւնները պիտի չի շարունակուին , միթէ մեր սրտերը մէկզմէկ պիտի մոռնան , երբէք , երբէք . ասոր ապացոյց պիտի ըլլան անշուշտ մեր նամակները . իմ կողմանէ զանցառութիւն չընելու համար հաստատութեամբ խօսքս կուտամ :

—Արնաք ինձ համար ալ ապահով ըլլալ , — ըսաւ Ռօտուլֆ :

—Ես պարապ խոստումներ չեմ ըներ , Պ . Էտուար , — յարեց Ալֆօնս . — անշուշտ գիտէք որ ինչպէս արագութեամբ պիտի թըղթակցիմ հետերնիդ :

—Այո՛ , այո՛ , գիտեմ՛ , Պ . Ալֆօնս , որ ամեն շարաթ երկերկու նամակ պիտի ընդունիմ՛ ձեզմէ :

—Եւ չորս չորս հեռագիր :

Բարձրաձայն ծիծաղ մը յանկարծ լսուեցաւ :

—Պ . Ալֆօնս բարձրէն կը թռիք , — ըսաւ Քարլ , որ Էտուարի եղբայրն էր :

—Ինչպէս պարո՛ն , եթէ գէպքերը ստիպեն :

—Ժամ առ ժամ պէտք էք զարնել ան ատեն :

Ալֆօնս իմացաւ իր մեծարանութեան ո՛ւր կայացած ըլլալը և ընդունած պատասխանին վրայ իր ծիծաղն ալ շարժելով՝ սկսաւ ինքն ալ բարձրաձայն խնդալ :

—Ինչո՞ւ կը խնդաք Պ . Ալֆօնս , — ըսաւ Էտուար ժպիտով մի :

—Պ . Քարլի չափազանցութիւնը ծիծաղս շարժեց , — պատասխանեց Ալֆօնս :

—Շիտակը իրաւունք ունիք :

— Ես միամտութեամբ խօսեցայ այս խօսքը կարծելով որ կրնար իմ սրտիս անկեղծութեան ապացոյց ըլլալ . բայց հետևութիւնը ծագրելէ եղաւ :

— Աւելի աղէկ ըրիք Պ . Ալֆօնս , — ըսաւ Ռօտտլիֆ , — ասանկ զուարթ ժամերու մէջ ծիծաղաշարժ խօսքերը ախորժելի կ'ըլլան :

— Բայց , — ըսաւ Ալֆօնս , — գիտէ՞ք որ ծիծաղաշարժ խօսքերը վարվուուն մտքերէ կը յառաջանան :

Այս միջոցիս Պ . Քարլ Պ . Ռօտտլիֆի ականջ 'ի վար ըսաւ :

— Չրսեր նաև որ անհամ և անլի զուարճախօսութիւններն ալ սպասկաս մտքերու արդիւնքն են :

Ռօտտլիֆ ծիծաղեցաւ և զլուխը շարժելով Քարլի ըսածին իրաւունք տուաւ :

— Կը մտածեմ Պ . Էտուար , — ըսաւ Ալֆօնս , — թէ ատանկ քաղցր եղանակի մէջ ձեր ըրած ճամբորդութիւնը ո՛րչափ հաճելի պիտի ըլլայ . կասոյսա ծովը և երկնից կամարը մէկ կողմէ , և միւս կողմէ ծովային թռչուններու ճուղիքը և մօտեցող ու հեռացող ըլլորներու տեսքը մարդուս սիրտը կը գրաւեն և աչքերը կը յափշտակեն :

— Պարոն , — ըսաւ Ատոլիֆ որ վտիտ և կայտառ երիտասարդ մը էր և իր գեղեցկութեամբ զԷտուար կը գերազանցէր , — շիտակը բնութեան քաղցրութեան ճաշակը առած կ'երևիք , ես քանի մ'անգամ դէպ 'ի Պ . . . ճանապարհորդած եմ , բայց և այնպէս ձեր սկարազրածին պէս քաղցրութիւն մի զգացած չեմ :

— Պարոն , ձեզի պէս անձերը աչք ունին և չեն տեսներ , սիրտ ունին և չեն զգար :

— Բանաստեղծի մը պէս կը խօսիք , պարոն Ալֆօնս :

— Չեմ բանաստեղծ մը , այլ անմիտ մ'եմ . այսու ամենայնի պէտք էք զիսնալ որ այս անմիտը զիտէ իր ժամերը հաճելի կերպով անցընել :

Այս միջոցիս ծառայ մը ներս մտաւ , և իմացուց որ սեղանը պատրաստ էր :

Էտուար իր բարեկամաց հետ ընկերացած սեղանատունը մտաւ :

Էտուարի եղբայրները իրենց ուրախութիւնը յայտնելու նպատակաւ սեղանը փառաւոր ընելու համար բան մը խնայած չէին :

Ամենքն ալ սեղանը նստան . Էտուարի մեծ եղբայրը՝ որու անունը Պերնար էր , միւսներուն կը նախազահէր :

— Պարոններ , — ըսաւ Պերնար , — ասանկ ուրախ ժամելը հաղուպիւտ կ'ըլլան , և ամենքնիս ալ զուարթ և ուրախ ըլլալու զօրաւոր պատճառ ունինք , ևս իմ սիրելի եղբորս և դուք ձեր բարեկամին վտանգաւոր հիւանդութենէ բժշկուելուն համար . և կրնանք համարձակ խօսիլ որ 'Նախախնամութիւնը օգնութեան հասաւ :

— Այո՛ , Պ . Պերնար , — պատասխանեց Ալֆօնս , — և մենք հիմա պարտաւոր ենք մեր զինուոյ առաջին բաժակը 'Նախախնամութեան նուիրել :

— Աստուծոյ երկար կեանք մաղթելու համար , այնպէս չէ՞ Պ . Ալֆօնս , — ըսաւ Քարլ :

— Այո՛ , — պատասխանեց Ալֆօնս :

Բարձրաձայն և ընդհանուր ծիծաղ մը յաջորդեց այս խօսքին :

— Բայց ինչո՞ւ կը խնդաք , — կրկնեց Ալֆօնս :

— Ասան զի Աստուծոյ մահկանացու ըլլալը չէինք դիտել , — պատասխանեց Ռօտուլֆ :

— Պարոններ , այս իրիկուն բոլորովին փոխուած կ'երեւիք , բանի մը անգամ կ'ծու ծիծաղներով ինձ ակնարկեցիք :

— Պարոն Ալֆօնս , — յարեց անմիջապէս Քարլ , — պէտք էք զիտնալ որ երբէք զձեզ թշնամանելու կամ ծաղրելու դիտաւորութիւն չունինք . այս խօսքերուն բոլորն ալ զուարճութեան համար են , ուստի և վշտանալու իրաւունք երբէք չունիք . ասկէ զատ եթէ քեզ մը մտածէք՝ կրնաք անմիջապէս իմանալ որ այս խօսակցութեան մէջ եզած ծաղրելի խօսքերուն սկզբնապատճառը դուք եղաք . աւելի աղէկ Պ . Ալֆօնս , աւելի աղէկ , զուարթ ընկերութեան մէջ մեղամաղձոտ անձերը ատելի կ'ըլլան , որովհետեւ իրենց ծանր ընդթեամբ միւսներուն ուրախութեան արդեւք կ'ըլլան , ուստի և կը հետեւի ասկէ որ ձեր քաղցր բնաւորութեամբ ընկերութեան որչափ ախորժելի անգամ մ'լիք :

— Ինչո՞ւ այդչափ խոռոված կը խօսիք, պարոն Քարլ, պէտք էք զխանալ որ այնչափ փափուկ սիրտ մը չունիմ՝ որ ասանկ ոչինչ բաներէ վշտանամ, այս մտալն բոլորովին ապահով եղիք. կ'իմացընեմ ձեզ որ այս ծիծաղաշարժ խօսքերը զխոսմամբ ըրի տեսնելով որ Ռօտոլֆ ծանրութիւն կը բանեցնէ, և Ատոլֆի բերանն ալ բանալու համար պէտք էր անիմաստ խօսքեր խօսիլ. որովհետեւ ծիծաղող ակնարկներու բնական ախորժակ մը ունենալուն՝ հարկ էր անոր ալ խօսակցութեան նիւթ մատակարարել :

— Կեցցէ՛ Ալֆօնս, — ըսին ամենքնին միատեղ :

— Ընկերութիւն մի զուարթացնելու համար սատանայէ աւելի հընարք զիտէ, — ըսաւ Քարլ :

— Աղուէսի նման խորամանկ է, — ըսաւ Ատոլֆ :

— Բայց և այնպէս առիւծէ ալ աւելի վեհանձն ոգի ունի, բաժակ մի զինի իր կենաց համար, — յարեց Ռօտոլֆ :

Ամենքնին միատեղ բաժակնին վերջնելով Ալֆօնսի կենաց համար խմեցին :

— Բայց, — ըսաւ Ալֆօնս, — ես ալ առաջարկութիւն մի պիտի ընեմ ձեզ :

— Ի՞նչպէս, — ըսաւ Ռօտոլֆ :

— Ճիշդ՝ ձերինն նման և յուսամ թէ չի մերժուիր :

— Խօսեցէ՛ք :

— Ես ալ բաժակ մի պիտի առաջարկեմ :

— Որո՞ւ համար :

— Պ. Էտուարի կատարեալ բժշկութիւն և երկար կեանք մաղթելու համար :

— Պարո՞ն Ալֆօնս, մեզմէ աւելի խելացի փրթաք. աղէ՛, բարեկամներ, Պ. Էտուարի կենաց :

Այս խօսքին վրայ ամենքնին ալ կեցցէնորու ձայներով և զուարթութեամբ գտաթնին վերտոին պարպեցին Էտուարի առողջութիւն մաղթելով :

Քիչ վերջը ընթրիքը լմնալով ամենքնին սեղանէն ելան և միտ սինեակը գացին :

Հոն և րիու ժամու չափ զանազան նիւթերու վրայ զուարթութեամբ
խօսակցելէ յետոյ Ռօտուֆ և Ատուֆ մեկնեցան :

Էտուար և Ալֆօնս մինչև դուռը անոնց ընկերացան և անոնց
մեկնելէ յետոյ Էտուար ըսաւ Ալֆօնսի .

— Պ. Ալֆօնս , Տօրայի չկրնալ գալս իմացուցած ատենդ ի՞նչ
ըսաւ :

— Պատասխան չտուաւ , բայց բոլորովին խռոված էր :

— Ի՞նչպէս :

— Գրեթէ փոխուած սեսայ զինք , չեմ գիտեր թէ ստուգիւ ինք
փոխուած էր՝ եթէ աչերս նոյն օրը տկարութիւն ունէին :

— Բայց ի՞նչ բան տեսար որմէ փոխուած ըլլալու կարծիք ունե-
ցար :

— Տկարութեան նշաններ :

— Տկարութեան . բայց ի՞նչպէս :

— Իր գունատութիւնը աւելցած կ'երևէր , բայց և այնպէս հա-
ւաստի չեմ :

— Ալֆօնս , տխուր կասկածներ կ'արթննան մտացս մէջ :

— Ի՞նչպէս :

— Տօրայի ապագայէն կը վախնամ , եթէ ըսածներդ ստուգու-
թիւն ունին :

— Է՛հ . . . բայց Էտուար ի՞նչպէս եռանդով յարած է քեզ :

Էտուար պատասխան չի տուաւ :

— Ներեցէ՛ք տմարդի հարցմանս , Պ. Էտուար , — յարեց Ալ-
ֆօնս , — արդեօք դուք ալ նոյն եռանդով կը սիրէ՞ք զինք :

Էտուար անոր խօսքը չի լսելու տալով ըսաւ .

— Բայց , Պ. Ալֆօնս , ամենևին խօսք մի չըսա՛ւ :

— Ո՛չ , իր պատասխանը միայն իր աչերու խորշը եղած արտա-
սուքներն էին , որոնք զիս տեսած ատեն կը գոյանային և ձեր ա-
նունը արտասանած միջոցին իր այտերու վրայ կը գլորէին :

— Ճամբորդութիւն ունենալս իմացուցի՞ր իրեն :

— Ե. յո՛ :

— Անխոհեմութիւն բրեր էք Պ. Ալֆօնս :

— Ի՞նչպէս պարո՛ն, զայն գաղտնի պահելու համար բան մ'իմացուցած չէիք ինձ :

— Այո՛, բայց կրնայիք գուշակել որ պէտք չէր իմացուիլ :

— Պարոն Էտուա՛ր, ներեցէք, մարգարէութեան ոգի չունիմ :

— Ի՞նչ և իցէ, ուրեմն հիմա ամեն բանի տեղեակ է :

— Այո՛ :

— Բայց ասիկա զարմանալի կ'երևի, միթէ ճամբորդութիւնս իմանալէ վերջն ալ բան մը չըսա՛ւ :

— Այո՛, այն ատեն երկու խօսք միայն ըսաւ :

— Ի՞նչպէս :

— Խարուած և կորսուած եմ :

— Եւ դուք զինք հակառակը համոզելու համար չի ջանացի՞ք :

— Այո՛, բայց համոզուելու միտք չունեցողին երկինքէ հրեշտակ խակ իջնէ օգուտ չընէր, ասկէ զատ այսպիսի կերպով երբեմն կը խօսի որ իրաւունք ալ ունենալը յայտնի կ'ըլլայ :

— Ի՞նչպէս :

— Երբեմն երբեմն ձեր վրայ կը գանգատի :

— Ի՞նչ բան պատճառելով :

— Չեր նամակ չի գրելը :

— Բայց ի՞նչ հարկաւորութիւն կայ նամակ գրելու :

— Այո՛, մեծ հարկաւորութիւն կայ և աւելի մեծ իրեն համար, վասն զի քանի որ փոխադարձաբար մէզմէկ կը սիրէք, անշուշտ իրաւունք ունի ձեր չերևած միջոցին ձեզմէ նամակ խնդրելու :

— Բայց Ալֆօ՛նս, զիտե՛ս որ ասանկ դէպքերու մէջ նամակագրութիւնը կրնայ վտանգաւոր հետևութիւններու պատճառ ըլլալ :

— Ի՞նչո՞ւ :

— Վասն զի կրնայ իմ կամ իր գրած նամակը ուրիշի ձեռք անցնիլ, և անշուշտ ասանկ միջոցի մէջ այսպիսի դէպք մը զիտես որչափ մեծ չարիքներու պատճառ կրնայ ըլլալ :

— Բայց, Պ. Էտուար, չէ՞ք կրնար իմ միջոցաւ իրեն նամակ հասցնել ինչպէս ինք ըրաւ :

— Գարձեալ կրնայ վտանգաւոր հետևութիւն ծագիլ :

— Ինչպէս պարո՛ն , իմ վրայ վստահութիւն չունի՞ր :

— Ամենևին , Պ . Ալփօնս , ձեր վրայ ունեցած վստահութիւնս կատարեալ է :

— Ուրեմն ի՞նչպէս դժուարութիւն պիտի կրնայ ծագիլ :

— Կարելի է ինք ընդունելէ վերջը անխոհեմութեամբ ուրիշի մը ցուցնէ , կամ անզգուշութեամբ կորսնցունէ և թշնամոյ ձեռք անցնի :

— Այո՛ , այդպէս է , բայց ասիկա ես իրեն իմացուցի երբ ինք կը գանգատէր :

— Լա՛ւ , ի՞նչ ըսաւ ուրեմն :

— Ըսաւ թէ կարգալէս անմիջապէս վերջը կը պատուեմ կամ կայրեմ : այս խօսքին վրայ չկրցայ բերտնս բանալ և ստիպուեցայ իրեն իրաւունք տալ և ստիկա ձեզ իմացնելու համար խոստում ընել , ուրեմն ըսեցէ՛ք հիմա , եթէ իմ տեղս ըլլայիք՝ ի՞նչ կը սպասասխանէիք :

Էտուար պատասխան չի տուաւ :

— Պ . Էտուա՛ր , չէ՞ք պատասխաներ :

— Պարո՛ն , կ'ըսէի թէ ժամանակ չունենալուն կարող չեղած է գրել :

— Ո՛հ , ստիկա ես բանեցուցի իրեն , և անաչին պատրուակ մը էր , զոր լրջին մէջ ծածկել անկարելի էր : գիտէ՞ք անշուշտ որ որչափ խորամանկ աղջիկ մ'է , և ստոյգը անստոյգէն դատելու համար ի՞նչ վարպետ շուփիկ մը :

— Ուրեմն ստիկա՞ ալ չի յաջողեցաւ :

— Ո՛չ , բայց ես ձեր վրայ բան մը կը նշմարեմ :

— Ի՞նչ է այն :

— Հաստատաբար առջադրութիւն մի :

— Ի՞նչ բանի :

— Երբէք նամակ չի գրելու , եթէ սերդ ալ անհիմն է : որովհետեւ ձեր կերպերէ ասանկ կը գուշակուի , ձշմարիտ կըսեմ մեծ անխոհեմութիւն մի է ըրածնիդ . ասանկ պատուական ասորանք ձեռքէ փախցնելու չի գար , գոնէ ժամանակ անցընելու համար :

— Ալֆօնս , լու է և անխոհեմ խօսքերը մէկի թող , բեզ կիր-
մայնեմ որ խօսելէ յառաջ քիչ մը մտածես :

— Կտտակ ըրի , Պ . Էտուար :

— Բայց ասանկ կատակները միւսներուն նման անործելի չեն
ըլար :

— Ներեցէք , Պ . Էտուար :

— Ներելու բան չկայ , — ըսաւ Էտուար ժպտով մի , — միայն
սէտք էք ամեն մէկ խօսքերը կշռել և սպա խօսել :

— Իրաւունք ունիք :

— Անշուշտ չէք վշտանար այս կերպ խօսելուս , անկեղծութեան
մէջ սրտերը մերկ սէտք են ըլլալ օտարոտի և քաղաքավարական կեր-
պերէ , որպէս զի մէկ մէկու վրայէ կասկածները վերնան :

— Ճշմարիտ է , բայց առ այժմ կարծեմ հարկաւոր բան մը չը
կայ խօսելու , ուստի դիշեր բարի :

— Երթաք բարեաւ Պ . Ալֆօնս , վաղը առտու տեսնուինք :

— Անշուշտ :

Պ . Ալֆօնս մեկնեցաւ դէպ' իր տունը :

Էտուար դոցեց դուռը և իր սենեակը առանձնացաւ հանդստա-
նալու բողբոջին խորին մտածմանց ենթակայ եղած :

Նոյն դիշեր սաստիկ խռոված էր և կրնայ ըսուիլ որ մէկ ժամ
հազիւ ուրեմն կրցաւ ննջել և իր մտածումներու վերջ տալ :

Էտուարի մտածմունքը հետեւեալն էր :

Իր Տօրայի հետ ունեցած յարաբերութենէ դժգոհած կերեւէր ,
ինք կեղծ սէր մը ցուցուցած էր Տօրայի ամենեւին չմտածելով որ
հետեւութիւնը կրնար տխուր ըլլալ , բայց արդ զէպքերը փոխուած
էին և սպառնալիս երեւոյթ մի առած : Ար տեսնէր բացորոշ թէ-
ամեն կողմ իրեն համար ցաւալի էր . եթէ շարունակէր իր սէրը
կ'զգար որ վերջէն դադրեցնելու սխիտի ստիպուէր անանկ պարագա-
ներէ որոնք անդիմադրելի են , և ասոր օգուտը միայն այս կը
տեսնէր որ թշուառութիւնը սխիտի ուշանար հասնելու : Իսկ եթէ
անմիջապէս դադրէր սիրելէ՝ կ'զգար որ Տօրա սխիտի վտանգուէր , և
դուցէ նոյն վտանգին կայծերէն իր վրայ ալ ցայտէին և զինք լա-

փեկն , վասն զի զխտէր թէ եթէ Տօրս վտանգի ենթակայ ըլլար՝ ինք չէր կրնար ապահովութիւն գտնել , եթէ ոչ նիւթական՝ գէթ խղճի , գէթ անձնական պատուոյ , որոնց երկուքն ալ կեանքէ աւելի սիրելի էին իրեն : Երկու անդունդ կար իր առջև , երկուքն ալ սուկալի , մին՝ երջանկութեան , որու անստուգութիւնը և որու հետեւելիք զըջումն ու ապաշար կը գուշակէր . և միւսը՝ թշուառութեան , որու մէջ ինք պիտի չիյնար այլ զինք սիրողը , բայց եթէ երկրորդը ընդունէր՝ աւելի սոսկալի անդունդ մի պիտի բացուէր այն ատեն իրեն համար , ա՛յն է խղճինը , որ և ոչ մէկ բանով կրնայ լեցուիլ : Աարժես ապագան իր առջև կը պարզուէր . կը տեսնէր Տօրան որ մահուան անկողնոյ մէջ գունատ շուրթերով իր վերջի շնչոյն հետ իր անունը կ'արտասանէր , կը տեսնէր միւս կողմը ամբոխ մը որ իր ընթացքը կը պախարակէր և իբր մարդասպան կը հրատարակէր զինք : Ատնք իրական ապագայի մը տխուր նախազգացումներն էին , որոնք յաճախ կը պատահին սասնկ դէպքերու մէջ և որոնց հիմա ինք ենթակայ եղած էր :

Ի՞նչ ընէր ուրեմն , կամ ի՞նչ ընել պէտք էր , եթէ իր սէրը շարունակէր՝ իր անձը ատած պիտի ըլլար և ապագան թշուառացուցած , եթէ գողերցնէր՝ անմեղի մը մահ , պատուոյ կորուստ և խղճի անհանգստութիւն պիտի պատճառէր , ասոնց երկուքին երկրորդական և երրորդական թշուառութիւններ ալ պիտի հետևէին , մէկ կողմէ նիւթականի պակսութիւն , սրտերու անհամաձայնութիւն , և որ աւելի մեծն է , ընտանեկան երջանկութեան փոխարէն թշուառութիւն պիտի ունենար . վասն զի հոն ուր սէրը փոխադարձ չէր , կրնա՞ր միթէ երջանկութեան ստուերը երևիլ , միւս կողմէն փափուկ սեռէն արհամարհանք և անվստահութիւն , առանձնակի յանդիմանութիւններ , նախատինք և սպառնալիք , գէմբին վրայ իր խղճի անհանգստութեամբ գոյացած կնճիւռներ և ընդհանուրին առջև իրաւացի ամօթահարութիւն մը , ահա ասոնք պիտի կազմէին իր ապագան , բաղդին պատահարները ո՛ր կողմը որ մղէին զինք : Իր մը տածելու սկսելէ մինչև վերջը միայն այս որոշումը ըրաւ . սիրել , կամ գոնէ սիրել չուցնել և ինքզինք բաղդին բերումներու յանձնել :

և ո՛վ եթէ նոյն վիճակին ենթակայ եղած ըլլար , ասկէ աւելի ընտիր որոշում մը կրնար ընել :

Ինչ և իցէ այս տխուր մտածումներու մէջ տանջուելով և ամենեւին յոստոյ նշոյլ մի չի նշմարելով զիշերը դժուարութեամբ անցուց : Հետեւեալ օրը մինչև կէսօր ճամբորդութեան վերաբերեալ պէտքերը կարգադրեց ժամը չորսին պատրաստ գտնուելու համար , որովհետև նոյն միջոցին շոգեհասը պիտի մեկնէր դէպ ՚ի Պ . . . :

Կէսօր մէկ ժամ անցած էր նամակ մը ընդունեցաւ իր ծառային միջոցաւ :

— Ո՛վ տուաւ քեզ այս նամակը , — հարցուց Էտուար ծառային :

— Պ . Ալֆօնսը , — պատասխանեց ծառան :

Ասոր վրայ իր տխուր մտածումները վերստին նորոգեցան :

Նամակը բացաւ և կարգաց հետեւեալը .

« Ազնիւ Էտուարս ,

Առաջին նամակս անպատասխանի մնաց ձեզմէ , և ասոր անհիմն պատճառ մի ցուցուցեր էիր , իբր թէ ժամանակնիդ սուղ էր . ո՛հ , ասիկա անհաւատալի կ'երևի ինձ , երկու տող զիր գրելու ժամանակ չունենա՛լ , երկո՛ւ տող , որ մէկ մանրերկրորդի նշանակութիւն ունի . անկարելի է ասիկա ինձ հաւատացնել Էտուար , անկարելի է : Յրտութիւն մի կը նշմարեմ վրագ Էտուար , ցրտութիւն մի , զոր եթէ շարունակէք՝ զիս պիտի թշուառացնէ , անշուշտ կայ պատճառ մի ասոր , կայ , բայց ի՛նչ է : ո՛հ , ասիկա գուշակելը ինձ համար անսանելի է . վասն զի ուղղակի թշուառութիւնս գուշակած պիտի ըլլամ : Էտուար , աղէկ զիտեմ՝ որ այսօր է ճամբորդութիւնդ , երևէ՛ անդամ մի , երևէ՛ , եթէ ոչ վերադարձիդ պիտի չկրնաս զիս տեսնել :

Էտուար , երկու տող գրութիւնդ կամ վայրկեանական տեսութիւնդ բոլոր աշխարհի արժէքը ունի ինձ համար , ո՛հ ափսո՛ս , դեռ չի ճանչցար սիրոս Էտուար , արդեօք ամեն սիրահար ասանկ տարօրինակ վշտերո՛ւ ենթակայ կ'ըլլայ . արդեօք սիրոյ թշուառութիւն

և վերջա կը հետևին միշտ . . . : Կտուար, Կտուար, քու զիս սիրելու համար ըրած նուիրական երգումովդ կը պարտաւորեմ զքեզ անգամ մի երևելու, եթէ խղճի տէր ես ինչպէս կը ճանչնամ զքեզ, անշուշտ թշուառութեանս չես փափաքիր :

Միրովդ յափշտակուած
ՏՕՐԱԳՅ

Կտուար նամակը կարդալէ վերջը գոչեց .

— Աստուած իմ, այս ինչ սոսկալի շանթեր են որ գլխուս կիջեցնես, ինչ ընեմ հիմա, որո՞ւ գիմեմ, ինչպէս այս սոսկալի լսփիւրիսդ օսէն ազատելու միջոց գտնեմ, ուր անխոհեմութեամբ զըրեցայ, ալ կը բաւէ, վերջ տամ այս կատակերգութեան՝ որու մէջ բաւական ժամանակ խաղացինք, ուրանամ ամեն բան, մերժեմ իր սէրը, կարեմ իր հետ ունեցած յարաբերութիւնս, և ինքզինքս այս սոսկալի կացութենէ ազատեմ :

Այս խօսքէն վերջը ժամանակ մը լռեց, և իբր վերջին որոշում առաջադրեց իր մտքին մէջ այս մտածումը գործադրելու :

Բայց մարդս չկրնար այնչափ քարասիրտ ըլլալ որ առանց խղճի անհանգստութեան ուզածը գործէ, խիղճը երկասյրի սուր մ'է որ հոգին և միանգամայն մարմինը կը խռովէ, խիղճը դատաւոր մ'է, և այնպիսի դատաւոր մի՞ որ կաշառքի անընդունակ է, ամենու սրբտին մէջ կը հանգչի այս դատաւորը, ոմանց սրտին մէջ նուազ զօրութեամբ և ոմանց առաւել :

Ահա այս դատաւորը զինք կը նեղէր, մտածումներու յստակութիւն տալ կ'աշխատէր, անիրաւ որոշումները կը ցրուէր և զինք անստուգութենէ ազատելու կը ջանար . իր ներսը պատերազմ կար, պատերազմ երկու զօրաւոր ոտխներու կամաց և խղճի մէջ. երկուքնին ալ վայրկենական յաղթութիւններ կ'ստանային, նման երկու այնպիսի ըմբիշներու՝ որոնց արութիւնն ու յաջողակութիւնը հաւասար կ'ըլայ, կամքը կը վճռէր, խիղճը կը ջնջէր . խիղճը կը փափաքէր արգարութեան, կամքը կը հակառակէր, նախորդ վայրկենին ընդունածը յետայ վայրկենին կը մերժէր, իր մերժածը նոր եռանդով կ'ընդունէր և յետոյ սոսկումով մի կ'արհամարհէր, վերջա-

պէս այս երկու ոսոխներու անհամաձայնութիւնը իր անստուգու թիւնը տեսելը կը հաստատէր :

Նոյն միջոցին եթէ գիմադէտ մի զէտուար տեսնէր՝ պիտի չկրնար ստուգել թէ ուրախութեան եթէ տրտմութեան ենթակայ էր այն անձը : իր գէմքը վայրկեան առ վայրկեան տարբեր կիրքերէ տարբեր փոփոխութեան կ'ենթարկուէր : մերթ արտմութիւն կը պաշարէր զայն և մերթ ուրախութեան ստուեր մը նոյն տրտմութիւնը կը փարատէր : մերթ մասխոհ կ'երևէր և մերթ սթափ : մերթ կնճուարից և մերթ պայծառ : Ասոնք իր սրտի անհանդստութեան նշաններն էին՝ որ իր դիմաց վրայ կը գծուէին և իրեն միօրինակ զուարթ դէմքը այլայլ լեւով իբր բնութեան օտար էակ մը կը ներկայէին զինք :

Էտուար սրամիտ էր և երկար ատեն այս ներհակ կիրքերու ենթակայ ըլլալէ յետոյ գիտցաւ որ որոշում մի հաստատելու և իր անստոյգ վիճակէն ազատելու համար որչափ մտածէր՝ օգուտ պիտի չընէր և անկարող պիտի ըլլար դիտուորութիւն մի առաջադրելով զործագրել, վասն զի կ'զգար որ մերժել կամ ընդունիլ իր կարողութենէ վեր էր, այո՛, վեր էր : վասն զի զայն ընդունող աւարկաները անհամաձայն էին :

Ասիկա երկար դէպքերով փորձած ըլլալուն թողոց իր մտածմունքը և վերստին տան մէջ ճամբորդութեան հարկաւոր պէտքերը կարողացրելու զբաղեցաւ :

Ժամը երեքն էր Ալֆօնս իրեն եկաւ :

— Բարեկամ, — ըսաւ Ալֆօնս, — զքեզ դուրձերով զբաղած կը տեսնեմ :

— Այո՛, ճամբորդութեանս վերաբերեալ պէտքերը կը կարողացրեմ :

— Ես կը կարծէի որ ուրիշ զբաղման մէջ պիտի գտնեմ զքեզ :

— Ի՛նչպէս :

— Տօբայի երկրորդ նամակին պատասխան մի գրելու :

Էտուարի դիմաց վրայ վայրկեանական տրտմութիւն մի տիրեց և անհետացաւ . Ալֆօնս զայն չի նշմարեց :

— Բայց, — ըսաւ Էտուար, — ժամանակս սուղ էր ուստի և

անկարող եղայ պատասխանելու : Գիտէք Պ. Ալֆօնս որ ասանկ նեղ միջոցի մէջ մարդս հագար ու մէկ գործեր կ'ունենայ կատարելու և շատ անգամ կարևորները հողալու ժամանակ չունենար :

— Եթէ նամակ գրելու ժամանակ չունիք գոնէ անգամ մի երևեցէ՛ք :

— Ալֆօնս , կ'աղաչեմ այդ խօսքերը դոցէ՛ , ասանկ նեղ միջոցի մէջ ատոնց վրայ մտածելու ժամանակ չունիմ . վերադարձիս ամեն բան կը կարգադրուի , այսպէս իմացո՛ւր Տօրայի ալ :

Ալֆօնս ասոր վրայ այս նիւթը գոցելով ուրիշ խօսակցութիւն մի բացաւ :

Ժամը երեքը քսան անցած էր Ռօտովֆ և Ատովֆ ևս եկան :

Ամենքնին միատեղ ճամբայ ելան և ծովեզրը հասնելով նաւակ մը մտան և երեքուկէսին շոգենաւ հասան :

Քսան վայրկենի չափ զուարթութեամբ խօսակցելէ և իրենց բարեկամական նամակները անպակաս ընելու համար մէկ մէկու խոստում ընելէ յետոյ Ռօտովֆ , Ատովֆ , Ալֆօնս և Էտուարի երկու եղբայրներն Պերնար և Քարլ զԷտուար շոգենաւին մէջ թողլով քաղաքը վերադարձան :

Յաջող օդով շոգենաւը չորսին ճամբայ ելաւ և Էտուար իր ճամբորդութեան երրորդ օրը անվտանգ Պ . . . հասաւ : †

Ք Լ Ո Ւ Ն Է

Խ Շ Ն Ա Մ Ի Ն Ե Բ Ը

Ընթերցողք կը յիշեն անշուշտ ՚որ Տօրայի Էտուարի հետ անցած յարաբերութիւնը ընտանեաց ծանօթ եղած էր :

Ալ անկէ վերջը ի՛նչ մանու որ գէսքեր որ պատահած են Տօրայի յառաջանանք պատմելու :

Երբ զ՝ Օսկար՝ որուն Տօրայի եղբայրը ըլլալը զիտեն ընթիւ ընդդէմ Տօրայի առ Էտուար գրած առջի նամակին պատճէնը գտած էր՝ ան-
միջապէս անխոհեմ զայրոյթով մի կատարած տիկին Շարլի դիմած և
հղելու թիւնը խառն ՚ի խառն պատմելով անոր իրաւացի բարկութի-
ւնը զրգուած էր :

Տիկին Շարլ որչափ որ խոհեմ էր, հոս իր խոհեմութենէ թու-
լացաւ, և առանց ուղիղ մտածութիւն մի ընելու ապագային մէջ պա-
տահելիք ամեն կարելի պէպէտքուն վրայ՝ որոնք իր բռնելիք ընթաց-
քէն կախում ունէին անշուշտ, Տօրայի առանձնասենեակը դիմած էր
բարկացայտ և սպառնական երևոյթով մի :

Տօրա թէև մտախոհ էր նոյն պահուն բայց և այնպէս վայրկեան
առ վայրկեան ժպիտներ կ'երևէին իր կայտառ դիմաց վրայ, որոնք
անշուշտ իր երբեմնակի երազած քաղցր յոյսերու յայտարարներն
էին : Նոյն միջոցին այս երկու անձերը զարմանալի ներհակութիւն
մի ունէին մէկ մէկու, տիկին Շարլ անբնական խոժոռ կերպարանք
առած էր և Տօրա հրեշտակի, մէկուն դիմաց վրայէ սրամտութեան
հոբ կը ցայտէր, և միւսին հեզութեան ժպիտներ : Ո՛վ պիտի յան-
դգնէր Տօրայի դիմադրել, ո՛վ ամենէ արի սիրտերը, ամենէ հուժ-
կու անձերը անգամ իր մէկ ակնարկէ կամ հայեցուածքէ կը յաղ-
թուէին, բայց տիկին Շարլի համար՝ որ իր մայրն էր, այսպիսի
ակնարկ մը կամ հայեցուածք մը օգուտ չէր ըներ և իր սրամտու-
թիւնն ու բարկութիւնը չէր կակղէր. Տօրա ուրիշ բան մ'ունէր իր
մօրը սրտին ազդելու համար, անմեղութիւն ունէր, որ իր լուսնեայ
դիմաց վրայ կը շողար. բա՛բէ, տիկին Շարլ նշմարեց զայն, և ոչ
թէ նշմարեց հասարակացորոշ տեսաւ. պարիսպ մ'էր այն, անվը-
կանդ պարիսպ մը, որ տիկին Շարլի առջև կանգնած էր. զայն ար-
համարհելու և ոտքի տակ առնելու համար ապառաժ սիրտ մը կու-
ղէր :

Երբեմն վայրկեաններ կ'ըլլան որ դարերու զարմանքը կը շարժեն
և դարեր կ'ըլլան որ վայրկեաններու ծիծաղը կը զրգուեն : Ի՞նչ ըզ-
զաց տիկին Շարլ նոյն պահուն երբ Տօրայի հանդպեցաւ, իր սրտ-
մտութիւնը և զայրոյթը տեևեց եթէ դադրեցաւ, իր սիրտը կակղա-

ցա՛ւ ելժէ իր առջի կարծրութիւնը պահեց , տեսնե՛լք :

Տիկին Շարլ որչափ որ ցասմալից էր , չկրցաւ դՏօրա նոյն վիճակին մէջ տեսնել յետոյ իր զայրոյթը շարունակել , յաղթուեցաւ և արտասուաց երկու կաթիլներ իր աչերուն խորշերէ իր դեռ կայտառ այտերուն վրայ զլորեցան :

Այս արտասուաց կաթիլները զգայուն սրտի մը և մարդկութեան ազնուութեան յայտարարներն էին :

Ալ անկէ վերջը տիկին Շարլ չէր ինչ որ էր պահ մը յառաջ : Մէկ վայրկենի միջոցը պաշտելի արդիւնք մի արտադրած էր :

Նոյն վայրկեանը նուիրագործելու շարժառիթ եղած էր Տօրա :

Տիկին Շարլ ցաւալին և դողցես կարեկից կերպով մի հարցոյց Տօրայի .

— Տօրա , ինչո՛ւ այդպէս մեղամաղձոտ երևոյթ մի ունիս . զքեզ մտածմանց մէջ ընկզմած կը տեսնեմ , զուակի մը արտմութեան պատճառը մօրմէն գաղտնի չի մնար անշուշտ այնպէս չէ՞ Տօրա :

Այս հանգարտ խօսուածքը կայծակէ աւելի ստտիկ ներգործութիւն քրտ . իմացաւ Տօրա իր մօրը խօսակցութեան կէտը , տեղեակ էր արդէն ասկէ առաջ տան մէջ իրեն նկատմամբ պատահած դէպքերուն և խոսվութեանց , զգաց որ որոտումը մերձ էր , ուստի և ինքզինք կայծակին հարուածէն զգուշանալու պատրաստեց :

— Մեղամաղձոտութեանս պատճառը ձեզ անձանօթ չէ , մայր իմ ,
— պատասխանեց Տօրա զլուիը վեր վերցնելով , և իր հայեցումքը իր մօրը ուղղելով :

Զարմացաւ տիկին Շարլ իր ընդունած պատասխանին վրայ և սկսաւ ինքն ալ Տօրայի նայիլ . քանի մը վայրկեան իրենց աչերը մէկ մէկու հանդպեցան , այս քանի մ'անձուկ վայրկեաններու մէջ տիկին Շարլ ճանցաւ իր զուակը և Տօրա իր մայրը . կարող եղան մէկ մէկու սիրտ կարգալ . Տօրա սոսկաց , տիկին Շարլ ևս սոսկաց , վասն զի մէկ մէկու ներհակ զգացումներով համակուած էին նոյն միջոցին այն երկու անձերը , մէկը յանչափս սէր կ'զգար և մյուսը յանչափս արհամարհանք . երկուքնին ալ մեղադրելի չէին , վասն զի առաջնոյն սիրելու հասակն էր , և երկրորդին արհամարհելու :

երկուքնին ալ մեղադրելի էին . վասն զի երկուքնին ալ զգացողութիւնը տարապայման էր . բայց այս մասին ալ պէտք է անաչառ լերպիւ խստովանիլ որ բնութիւնն էր յանցարարութեան դործիքը, թէ երբէք բնութիւնը դատել յանցանք չի սեպուիր :

—Տօրա՛ . . . — ըստ տիկին Շարլ և իր սրտի յուզմունքէն չի կրցաւ իր խօսքը շարունակել :

—Բարորդի մը չափ վերստին լուծիւն տիրեց իրենց մէջ :

Որով վերջն տիկին Շարլ ըստ .

—Տօրա՛, լսեցի որ ապօրինաւոր բնթացքի մը մէջ կը դատուիս , իմ մայրական պարտաւորութիւնս է քու բարկեղ մտածել . հասակը անխոհեմ է , ուստի և ներելի կըլլայ քեզ առաջին անգամ այս պիտի սխալմանը մը :

—Ի՞նչ ապօրինաւոր բնթացք , — պատասխանեց Տօրա խոռոված .

—Ի՞նչ սխալմանը , խօսեցէք , մայր իմ , որպէս զի ես ոչ իմ յանցանքի ենթակայ ըլլալս խմանալէս և զգալէս մերջն ձեր խրատով ուղղուիմ :

—Ար սիրե՛ս եղեր

Տօրա իմացաւ իր մօրը խօսակցութեան հետեւութիւնը և զայն ընդմիջելով ըստ .

—Ար սիրե՛մ եղեր , այդ է մի յանցանքը . թող այդպէս ըլլայ . եթէ երբէք սէրը յանցանք կը սեպուի թող ես ալ նոյն յանցարարներէ մին ըլլամ , ուրեմն , մայր իմ , դու սէրը յանցանք կը սեպես , դու կը մերժես այնպիսի զղացողութիւն մի՛ որ նուիրական է , որու դու ենթակայ էիր անշուշտ երբ երիտասարդ էիր , երբ իմ հասակս ունէիր . ս՛հ , մայր իմ , եթէ երբէք սէրը պատճառ բռնելով զիս յանցարար սեպես՝ անպահով եղիր որ քու անցեալը դատած և երիտասարդութիւնը մեղադրելի ըրած պիտի ըլլաս :

—Այդչափ շուտ մի աճապարեր , Տօրա՛ , իմ վիճակիս և հասակիս պատճառաւ ես աւելի շատ փորձաւորութիւն ունիմ քան թէ դու : Ես սէրը չեմ արհամարհեր բնաւ , Տօրա՛ , ես սիրոյ թշնամի լեմ , անոր քաղցրութիւնը ես քեզմէ աւելի ազդու կերպիւ զգացել երբ երիտասարդ էի , երբ քու հասակը ունէի ինչպէս դու իսկ

քիչ մը յառաջ ըսիր : քայց իմն օրինաւոր էր , մթին և անստոյգ յոյսերէ ծնած չէր , այլ փոխադարձ զիս սիրողի մը սրտէ արտադրած էր , թշուառութիւն չէր խոտանար այն՝ վասն զի սլայծառ և երջանիկ ասպագայի մը յենած էր . կոյր չէր վերջապէս , վասն զի գատողութիւնը իրեն առաջնորդ ունէր , և իր ամեն մէկ քայլին նոր նոր ասպոցոյցներ կ'ընդունէր իր ասլաղային ասպահովութեան ինչպէս և եղաւ իսկ . քայց , Տօրա՛ , ցաւ է ինձ իմացնել որ քովիճակդ բոլորովին տարբեր և ցաւալի է , սէրդ անդուսպ և կոյր կիրքէ մը յառաջացած է և ոչ իրական և ասպահով պատճառներէ , Տօրա՛ , այդ ընթացքով չ'կարծես թէ երջանիկ պիտի ըլլաս , ամեն մէկ քայլիդ թշուառութիւնդ պիտի փութացնես : Բա՛րէ , ո՛վ է քու սիրած անձը , քսան տարեկան բաղդախնդիր պատանի մը , սրիկայ մը , որ մեր ընտանեաց ամենէ ազնիւ անդամը թշուառացնելու չի սոսկար : Ա՛վ անխիղճ երիտասարդ եթէ երբէք մայրական զգացողութեան և սիրոյ վրայ զաղափար մը ունենայիր՝ զույգէ թշուառ սրտիս այսպիսի վէրք մը չպատճառելու համար զութ զգայիր :

— Մա՛յր իմ՛ , ձեր կրքին բորբոքած ըլլալուն կը խօսիք ինչ որ անսլաւեհ է . սրիկայ չէ այն և ոչ անխիղճ . նա զիս կը սիրէ և ես զինք , սէրը երկու հոգի կը ճանչնայ և երբորդի մը վրայ չի մտածեր . ասոնք որդիական խոնարհութեամբ քեզ կ'իմացնեմ , որպէս զի թողուս այն ամեն միջոցները՝ զորոնք մեզ փնասելու համար դործադրել առաջադրած ես :

Տիկին Շարլի նախկին զայրոյթը ընդունած պատասխանին վրայ նորոգեցաւ :

— Տօրա՛ . . . — ըսաւ տիկին Շարլ ցասմնալից :

— Մա՛յր իմ՛ . . . — պատասխանեց Տօրա ցաւաղին :

Ա՛ սրտաշարժ տեսարան , մէկը իր դերիշնանութիւնը չարաչար կը դործածէր , և միւսը՝ արդէն յուսոյ և յուսահատութեան մէջ կէս մը ճնշուած իր վշտերը աճեցնող զօրաւոր հակառակորդէ մը գթութիւն կը հայցէր :

Մայրական զգացողութիւնը փափուկ կ'ըլլայ . մայր մը իր զաւակէ կը վշտանայ ոչինչ պատճառի մը համար , երբ կը տեսնէ թէ կը նա

խատուի կամ կը թշնամանուի այնպիսի մէկէ մը՝ զոր բնութիւնը
իր իշխանութեան ներքեւ գրած է . տիկին Շարլ ինքզինք թշնաման-
ուած համարեց ընդունած պատասխանով . ալ անկէ վերջը ամեն
գութ և կարեկցութիւն մարեցան անոր սրտի մէջէ . իր մայրական
դերիշխանութիւնը հակառակորդի մը թշնամութեան փոխուեցաւ .
արհամարհեց , ոտքի տակ առաւ այն ամեն զգացումները՝ զորս բը-
նութիւնը ծնողի մը սրտին մէջ կը հաստատէ իր զաւակը սիրելու
համար . իր զայրոյթը սաստիկ զրգռեցաւ , անհետացաւ իր դիմաց
վրայէ այն ծիծաղը՝ որ քառորդ մի յառաջ Տօրայի ողորած խան-
դակաթ հայեցուածքին հետքն էր . գարձուց իր բարկացայտ գէմ-
քը Տօրայի և ըսաւ .

—Տօրա՛, որովհետեւ յամառ ես , պիտի տեսնես թէ իմ մայ-
րական դերիշխանութեամբս ի՞նչ չարիքներ պիտի հասցնեմ քեզ :

—Մայր իմ , ըրէ՛ ի՞նչ որ ըսիր , և ես տեսնելով որ քու իմ
վրայ ունեցած դերիշխանութիւնդ զիս թշուառացնելու համար միայն
կը գործածես , ըսեմ որ կը գտնուի եղեր այնպիսի մայր մի՛ որ իր
զաւակին ապերջանկութիւն նիւթէ և անոր թշուառութեան համար
աշխատի . . . : Ո՛ր թշուա՛ռ ճակատագիրս , և այն իմ մայրս պիտի
ըլլայ և պիտի զինի ինձ դէմ :

Տօրայի սիրտը վիճկեցաւ , չկրցաւ իր խօսքը շարունակել , ար-
տասուաց յորդ վտակ մի իր կայտառ այտերու վրայէ վար սահե-
լով իր ոտից պատուանգանը թրջեց :

Այս ցաւալի պատասխանն ու Տօրայի տխուր երևոյթը տիկին
Շարլի գութը վերստին շարժեցին և անոր սրտմտութիւնն ու զայրոյթը
կրկին նուաճեցին :

—Բայց Տօրա՛, — ըսաւ տիկին Շարլ դաշն ձայնով , —ինչո՞ւ
յամառութիւն կը բանեցնես , ի՞նչ է քու երազածդ :

—Ոչ թէ երազածս հապա ապագայիս ստուգութիւնը , — ըսաւ
Տօրա իր մօրը զայրոյթին գազրելով խրախուսուած :

—Լա՛ւ , ի՞նչ է քու ապագայիդ ստուգութիւնը :

—Երջանկութիւն :

—Երջանկութիւն , և որմէ կ'սպասես ատիկա :

— Էտուարէ՛ս :

— Էտուարէ՞, ո՛հ այն քանն տարեկան յիմար պատանիէն , որ ծառայութեամբ շահած քանի մը դահեկանով հաղիւ ուրեմն կրնայ իր ապրուստը հայթայթել : Տօրա՛, Տօրա՛, ես քու մայրդ եմ , իմ պարտուցս , իմ ծնողական զգացմանցս համեմատ քու բարիքդ կը փափաքիմ . հաւատա՛ ինձ , դու այդ ընթացքով երջանկութեան շէս դիմեր հապա թշուառութեան :

— Սիրոյ մէջ թշուառութիւն չ'ըլլար , մայր իմ :

— Երբ կոյր է և նախատես չէ իր ապագան ալ թշուառութիւն է :

— Այր չէ այն ատրը որ երգմամբ նուիրողործուած է . հարստութիւն , փառք և պատիւ դանելու համար չէ որ մենք այն սէրը կըրգանք . մեր աղաղային երջանկութեան ապահով եղիք մայր իմ , որովհետեւ մեր երգումը անոր նշանաբանն է :

— Երգո՛ւմ , ուրեմն երգմամբ քու թշուառութիւնդ հաստատուցիր , ո՛ կոյր հասակ , որու մէջ խոհեմութեան ստուերը անգամ չերևիր . ուրեմն . Տօրա՛, ալ կարող ինձ եկաւ երգում ընելու . բայց իմն տարբեր կերպիւ պիտի ըլլայ . ալ իմ պարտքս է մեր ընտանեաց վրայ այսպիսի արատ մի չբերելու ջանալը , ալ ե՛ս պիտի ըլլամ այն անձը՝ որ դուցէ ներկային մէջ ձեր աչաց դահիճ մը երևի , թէև ապահով եմ որ ապագային մէջ իբրև հրեշտակ մը պիտի նկատէք զայն , Հիմա , Տօրա՛, իմ բոնելիք ընթացքս տալիք պատասխանէ՛ք կախում ունի , միտքդ ամբողջ՛ , կըռէ՛ ամեն մէկ արտասանելու խօսքիդ հետեւութիւնը , որոշմանդ վրայ աղէկ խորհէ՛ , որովհետեւ գրեթէ մահու և կենաց նման խնդիր մը պիտի ըլլայ քեզ ասիկա . մահու՛ քու պատուոյդ կորուստին՝ և կենաց անոր անարատ մնալուն համար . ուստի , Տօրա՛, եթէ աղէկ մի մտածելու համար ժամանակի թոյլտուութեան պէտք ունիս՝ օր մը կը շնորհուր քեզ . ինչպէս գտար , Տօրա՛, աղէ՞կ է այս միջոցը :

— Խօսեցէ՛ք , մայր իմ :

— Պիտի դադրի՞ս ալ յաւիտեանս զէտուար սիրելէ :

Տօրա խռովեցաւ այս հարցման վրայ , աչերը ցոլացան , իր կիւր

քը բորբոքեցաւ , և բարկացայտ գիմօք իր հայեցուածքը մօրը ուղ-
ղեց :

Գուցէ այս առաջին անգամն էր որ Տօրա կը բարկանար :

—Այդ հարցման համար ինձ խորհելու միջոց կ'առաջարկէիր , —
հարցոց Տօրա խորխտ կերպիւ իր մօրը :

—Այո՛ :

—Ասոր հարկաւորութիւն չկայ , ինդիբը խիստ կարևոր է ստու-
ղիւ . բայց իմ՝ տալիք պատասխանս ալ որոշուած է արդէն :

—Խօսէ՛ ուրեմն :

—Էտուարի վրայ զգացած սէրս յաւիտենական է , մայր իմ , և
ամեն սպառնալիք և թշնամութիւն կարող չեն զայն խախտել :

—Լա՛ւ ուրեմն , ես ալ այնպիսի միջոցներու պիտի զիմեմ , որ
զքեզ քու սէրէդ զաղբեցնելու ստիպելէ զատ՝ պատուոյդ ալ յաւի-
տենական կորուստ պատճառէ :

—Տեսնե՛նք :

—Այո՛ , պիտի տեսնենք անշուշտ , — բաւ տիկին Շարլ և բար-
կութեամբ սենեակէն դուրս ելաւ :

Ո՛ր թշուա՛ն Տօրա , քու սպազայ թշուառութիւնդ հոս իր ծը-
նունդը կ'առնու :

Մինչև այս կէտս իսկ Տօրա դեռ աննկուն էր . թէև իր յոյսերը
իրենց վախճանին մօտ կ'երևէին , թէև իր սիրոյ առարկայէ հեռի
էր , թէև զօրաւոր հակառակորդներէ շրջապատուած կը ճնշուէր .
այսու ամենայնիւ դեռ իր խիղճն ու սէրը անարատ մնացած էին
և չէին թողոր զինք որ յուսահատութեան մէջ իյնայ :

Բայց ի՛նչպէս անցուց նոյն օրը Տօրա , կամ այս ընդդիմախօսու-
թիւնը ի՛նչ հետեանք ունեցաւ . կը բաւէ միայն ըսել որ նոյն օր-
ուան ծագումը Տօրայի թշուառութեան սկիզբ տուաւ , և իրիկունը
չկրցաւ նոյն թշուառութեան վերջ տալ :

Տիկին Շարլ զՏօրա առանձին թող տալէ վերջը իր սենեակը ա-
ռանձնացած էր , և ինք իսկ կը ստակար իր բռնելիք ընթացքին վրայ՝
զոր գործադրել կը հրամայէր իր մայրական պարտաւորութիւնը և
կարգիլէր իր խիղճը : Ազգար որ այսչափ եռանդուն սիրով համա-

կուսած աղջկան մը հակառակիլը ուղղակի անոր երջանկութեան սպառնալ էր . կ'զգար որ իր ընթացքը ամենու գոհացուցիչ պիտի չըլլար , և թէ շատերու իր վրայ անհաճոյ կարծիքներ ունենալու առիթ պիտի տար . բայց միւս կողմէ՝ գիտէր որ այսպիսի դէպք մի անուղղակի կերպիւ իր պատուոյն ալ կ'սպառնար , գիտէր որ Տօրայի այս յամառ սէրը եթէ չի ջնջէր՝ անոր ապագայ թշուառութիւնն փութացուցած պիտի ըլլար , գիտէր որ Էտուարի նման երիտասարդներ , որոնք պատիւը խոստումներով անմեղ օրիորդներ ապերջանիկ ընելու խիղճ չեն ըներ , իր զաւակին երջանկութիւնն չէին կրնար պատճառել :

Այս մտածումները՝ որոնց ուղիղ դատողութեան արդիւնք ըլլալը անձխտելի է , կ'ստիպէին զինք ամեն կերպով հակառակիլ իր աղջկան և զայն իր սէրէ հրաժարեցնելու ստիպել :

Աւստի նոյն օրը երեկոյեան ընթրիքէ յետոյ տիկին Բօլի տուն գընաց մանաւոր այս կէտիս վրայօք անոր խորհուրդ հարցնելու :

Այցելութեան մը սկիզբները սովորական եղած քաղաքավարական ձեւերն ու հարցումները լմննալէ յետոյ տիկին Շարլ ըսաւ իր աղջկան տիկին Բօլի :

— Միրելի աղջիկս , իմ կենացս մէջ բաւական տառապանքներ կրթելէ յետոյ ալ կը յուսայի որ ասկէ վերջը խաղաղ և հանգիստ օրեր վայելելու կարող պիտի ըլլամ . բայց Աստուած՝ որու կամքը օրհնեալ ըլլայ , դեռ զիս արժանի դատած չէ իմ վշտերես ազատելու . ճակատագիրս դեռ ինձի համար մթին օրեր պահած է եղեր . հարուած մի իջաւ զլիտուս , զաւակս , այնպիսի հարուած մը՝ որ այս ծերութեանս մէջ դանակէ մ'աւելի խոցեց թշուառ սիրտս :

Տիկին Շարլի սիրաբ փղձկեցաւ և չկրցաւ իր խօսքը շարունակել , հաննց իր թաշկիմակը և իր աչերէ հոսած արցունքը սրբեց :

Տիկին Բօլ շփոթեցաւ իր մօրը խոռոված խօսիլը անանկով , չկրցաւ ըմբռնել անոր խօսակցութեան կէտը՝ որովհետեւ և ոչ մէկ բանի տեղեակ էր . իր սիրաբ ևս շարժեցաւ , գիտցաւ որ մեծ չարիքի մը կամ թշուառութեան մէջ կը գանուէր իր մայրը , բայց ասիկա չգիտնալուն հարցուց իր մօրը :

—Ի՞նչ կայ, մայր իմ, ի՞նչ կը նշանակէ տխուր երևոյթդ և այդ ցաւալի խօսքերը, ի՞նչ չարիք կամ թշուառութիւն պատահած է քեզ՝ որու համար այդչափ կ'ողբաս. ո՛հ, մայր իմ, կ'աղաչեմ շուտով խօսեցէք. որովհետև հաւաստի եղիք որ ձեր զաւակը իբր անստուգութեան մէջ ձեզմէ աւելի կը տազնայի,

—Տօրա — ըսաւ տիկին Շարլ և չկրցաւ իր խօսքը շարունակել :

—Ի՞նչ եղաւ Տօրա, — ըսաւ տիկին Բօլ երկիւղով պաշարուած :

—Տօրա ոչ ևս է ինչ որ էր յառաջ, ո՛հ, այն անմեղ և առաքինի հրեշտակս թշուառութեան մէջ ինկաւ :

—Թշուառութեան մէջ, Տօրա. բայց ի՞նչ կը խօսիք մայր իմ :

—Ուրեմն տեղեակ չե՞ս դու այս դէպքերուն :

—Հաւատացէ՛ք, այդ դէպքերուն վրայօք այնչափ տեղեկութիւն չունիմ որ ձեր խօսքերուն իմաստը անգամ ըմբռնելու անկարող կը գտնուիմ :

—Ձարմանալի բան. երբ դուրսը ամենքը ասիկա իրենց խօսակցութեան նիւթ ըրած են՝ մեր մէջը տակաւին ասոր անտեղեակ անձ մը կը գտնուի :

—Բայց պարզեցէ՛ք ձեր խօսքերը, մայր իմ. որ ես ալ կարող ըլլամ ձեր վշտերուն պատճառաց ծանօթանալ :

Տիկին Շարլ պատմեց անոր Տօրայի և Էտուարի մէջ եղած սէրը, իմացուց իր Տօրայի հետ ըրած խօսակցութիւնը, զուրյեց իր ընդունած պատասխանները և սոսկումով համակեց զտիկին Բօլ :

—Բայց, — ըսաւ տիկին Բօլ, — ես ամենեւին չեմ կարծեր որ Տօրա այսպիսի սխալման մը մէջ գտնուի. ասկէ զատ զԷտուար ալ պարկեշտ և խոհեմ երիտասարդ մի ճանչցած եմ մինչև հիմա, և չեմ յուսար որ այսպիսի յանդուգն գործի մը ձեռք զարնէ :

—Ես ալ ձիշդ ձեզ նման կը մտածէի. բայց արդ դէպքերը իմ կարծեացս հակառակը հաստատեցին : Տօրայի առ Էտուար գրած նամակի մը պատճէնը գտաւ Օսկարս, որու վրայ իմացուեցաւ Տօրայի ի՞նչ ըլլալը. բայց Էտուարի համար ունեցած կարծիքը իմինէս տարբեր է, ասոր նման քանիներ կան, որոնք սակաւ ինչ եթէ ծանօթ

խառնիքներէ չըլլան՝ հասարակ սրիկաներու կարգը կ'անցնին , և որոնք խարդախ քաղաքավարական ձևերու տակ անմեղ օրիորդներ թշուառացներու համար դարան կը լարեն , ահա՛ Տօրայի նամակը՝ զոր քովս պահած եմ , ա՛ն կարգաւ , բայց , ո՛հ , մտցայ ու ինձ նման դու ալ զրի անձանոթ ես :

— Եյս ըսելով արիկն Շարլ իր կուրծքէ հանած նամակը վերստին տեղէ դրաւ :

— Բայց Տօրա ևս անկարող է գիր գրելու , ինչպէս կարելի որ այս նամակը իրը ըլլայ :

— Ես ալ ատոր վրայ կը մտածէի , բայց Օսկարս ըսաւ որ զիր գրելու տեղեկութիւն ունի սակաւ ինչ :

— Խիստ տկար է , և անկարող է նամակ գրելու , հաղև տրեմն կրնայ կարգալ սրուն վրայօք յաճախ ցաւօք կը խօսի հետոս :

— Արեմն ինչպէս կրնայ ըլլալ ասիկա :

— Ստորագրութիւնը ի՛րն է :

— Այո՛ , Օսկարս ըսաւ որ իրն է :

— Արեմն ասիկա իրեն բերանէ ուրիշ մը գրած պիտի ըլլայ :

— Կարելի է , բայց այս ուրիշը ո՛վ կրնայ ըլլալ :

— Ես մէկուն վրայ կը կասկած իմ :

— Արո՛ւ :

— Ալիսի վրայ :

— Ալիսի՛ :

— Այո՛ :

— Ինչպէս կրնայ ըլլալ ատիկա , կը յուսաս՝ այդպիսի բան մը Ալիսէ :

— Հաւանական է , Ալիս գրելու տեղեկութիւն ունի , փոխադարձ մէկըմէկ խիստ շատ կը սիրեն , առելի անկեղծ սրտակիցներ են մէկ մէկու քան թէ ազգականն , ասիկ զատ Տօրա Ալիսէ զատ ո՛րմէ կրնայ նամակ ինդրել այսպիսի պարադայի մէջ :

— Այո՛ , ինձ ալ խիստ հաւանական կ'երեւի այդ կարծիքը , բայց հիմա ինչ ընել պէտք է :

— Ալիսի բերանը փնտռել , և որովհետեւ այսպիսի ծանրակշիռ

դէպք մի գաղանի պահէլու պիտի ջանայ , պէտք ես յառաջագոյն իմացնել անոր Տօրայի հետ ըրած տեսութիւնդ և ամեն դէպքերու տեղեակ ըլլալդ :

— Այո՛ , այդպէս է :

— Ասկէջ վերջն ալ , մայր իմ , ջանա՛ մանրամասն պարագաներու տեղեակ ըլլալ . իմացի՛ր թէ որո՞ւ միջոցաւ կը թղթակցին , թէ Ետուար նամակ զրո՞ծ է , և թէ եթէ զրած է՝ ի՞նչ կը պարունակէ . սէրերնին փոխադարձ է թէ չէ , անպատեհութիւն մի տեղի ունեցած է . ասոնք չէ թէ չգիտնալուդ քեզ կը զբուցիմ , մայր իմ , այլ կարելի է չկտրենաք յիշել որ յաճախ կը սրտասհի աւանկ պարագաներու մէջ :

— Այո՛ , այո՛ , շնորհակալ եմ , եթէ ասանկ նեղ միջոցի մէջ առանձին մնամ՝ կ'զգամ որ ոյծս պիտի չբաւէ Տօրայի այս յամար , կոյր և արմատացած աէրը ջնջելու : Այսպիսի դէպք մի ինձ համար մահէ աւելի անտանելի է և մեր ընտանեաց ալ մեծ անպատուութիւն է . դու ալ , սիրելի աղջիկս , այս ընտանիքին կը վերաբերիս , և ինչպէս իմ նոյնպէս և բու նուիրական պարտք է որ այս նորածիլ անպատեհութեան վերջ տալ , առ այժմ ես կը մեկնիմ և կը խընդրեմ որ այս դէպքը Պ . Բօլի ալ իմացնես , որովհետեւ կրնայ այնպիսի ժամանակ մը դալ , ուր անոր ալ օգնութեան կարօտութիւն ունենանք :

— Երթաք բարեաւ , մայր իմ , ապահով եղիր որ ես իմ ձեռքէս եկածը չեմ ինայեր , թէ ձեր սիրոյն և թէ Տօրայի համար , որ անխոհեմութեամբ այսպիսի դժբաղդութեան մի մէջ ինկած է :

Տիկին Շարլ շնորհակալ եղաւ , և բարևելով մեկնեցաւ դէպ իր տունը :

Տիկին Շարլի տուն դարձած միջոցին ժամը ՎՎը քառորդ անցած էր : Գուռը գոցելէ վերջը չեմ գիտեր ի՞նչ բնազդումէ մը մղուած անգամ մի Տօրայի առանձնասենեակը դնաց :

Սենեկին մէջ գտնուած ճրագին խղը հատնելու մօտ ըլլալուն , հազիւ ուրեմն կանթեղը աղօտ լուսով մի կը փարփար :

Անկողնոյն վարագոյրը բաց էր , Տօրա անոր մէջ կը ննջէր . իր

սպիտակ թևը անկողնէն վար կախուած էր . վերմակը իր մինչև կէս մէջքը ծածկած ըլլալուն իւր մարմարեայ կուրծքը բաց էր և շնչառութեան ժամանակ անանկ զրաւիչ վեհութեամբ մի կ'ընդարձակուէր որ անհնար էր զայն տեսնողի մը չզմայլիլ . տիկին Շարլ անոր հըրեշտակային կերպարանքը այնպէս հանդարտ և առանց կնճխոխ տեսնելով իր սրտի խորէ հառաչեց . ողբեց խօսակցիլ հետը , բայց անոր կանոնաւ որ շնչառութիւնը դիտելով քնացած կարծեց զայն . ուստի չուղբեց անոր հանդստութիւնը խռովել :

Ինչ աստիճան փափուկ է մայրական զգացողութիւնը և ո՛րչափ եռանդուն կ'ըլլայ անոր սէրն ու խանդաղատանքը իր զաւակին վրայ :

Ուստի և առանց ձայն հանելու վերստին դուրս ելաւ սենեկին դուռը գոցելով :

Բայց Տօրա ստուղիւ կը ննջէ՞ր նոյն պահուն , — ո՛չ . վասն զի անոր հազար ու մէկ ցիրուցան վիշտերն և մտածումները գիշերուան լուութեան մէջ իր յիշողութեան մէջ արթննալով անանկ արագ գործունէութեան մէջ դրած էին իր միտքն ու երեակայութիւնը որ չէր կրնար վայրկեան մի իսկ ննջել :

Տօրա փողոցի դրան բացուին ու գոցուիլը լսած էր , դիտած էր որ իր մայրն էր եկողը . որովհետև անոր տիկին Բօլի տունը երթալուն յառաջուց տեղեակ էր : Անմիջապէս նոյն պահուն ինքզինք անկողին նետած էր և վերմակը իր վրայ առած , որովհետև մինչև նոյն ժամը բազմոցին անկիւնը առանձին նստած մտածութեան մէջ ընկղմած էր . բայց երբ կանոնաւոր ոտնաձայնի մը դէպ 'ի իր առանձնասենեկին մօտիլը լսած էր , յանկարծ սուտ քուն մը ձևացուցած էր . որովհետև անանկ կերևէր իրեն որ իր մայրը գիշերուան մթութեան մէջ սուրի հարուածով մի իր կեանքը վերցնելու համար կը մտնէր իր սենեակը :

Բայց տիկին Շարլ խարուած էր թէև Տօրա զարհուրած :

Գիշերը լուութեամբ անցաւ :

ՊԼՈՒՐ

Կ Ս Կ Ի Ծ Ը .

Ընթերցողը սոյն պատմութեան ամեն կարևոր կէտերուն տեղեակ ընելու համար պատշաճ կը համարինք Տօրայի վիճակին վրայ ակնարկ մի նետելու :

Սոյն վերոյգրեալ ընդդիմախօսութիւնը իր սիրոյն այն ազդեցութիւնը ըրաւ՝ ինչ որ կընէ թեթեւ հողմ մի հաստարմատ ծառի մը այսու ամենայնիւ թէև իր սէրը առջի բորբոքովէ չի թուլացաւ՝ բայց իր անձնական ստողութիւնը մահատու հարուած մի ընդունեց :

Տօրա այն հաղուազիւտ անձերու դասին կը վերաբերէր՝ որոնք իրենց վիշտը իրենց սրտին խորը թաղելով և իրենց թշուառութեան հասնելուն գրեթէ ձեռնառու ըլլալով՝ պատշաճ կը համարին իրենց ճակատագրին յամբաքայլ մօտիլ, քան թէ զինիլ այնպիսի թշնամութիւններու դէմ՝ որոնց անիրաւութիւնը բացորոշ է իրենց :

Տօրա իր թշուառութեան մէջ իսկ վեհ էր, գերմարդկային էակ մ'էր այն . ասիկա թող երբէք չափազանցութիւն չի թուի, վասն զի թէև քիչեր գերմարդկային էակ ըսուելու արժանի են՝ այսու ամենայնիւ Տօրայի նման ալ շատ քիչեր երևած են աշխարհիս մէջ :

Մարդկային սեռի ճշմարիտ վսեմութիւնը թշուառութեան մէջ անյողդող կացութիւն և վեհութիւն ունենալով միայն կ'երևի . գիտցի՛ր թէ աշխարհային երջանկութիւններն ու թշուառութիւնները միայն մարդուս համար սահմանուած են, արիացի՛ր յեղձեղուն բաղդին հարուածներուն դէմ, մի՛ յուսահատիր երջանկութեան սահելուն վրայ, համբերութեամբ կրէ՛ անակնկալ թշուառութեան

մը հարուածը , խիղճդ և գատողութիւնդ քեզ առաջնորդ ըրէ՛ , և
ահա գու ևս նոյն վեմութեան կ'ենթարկիս :

Բայց Տօրայի օրերը ցաւայի կերպիւ կը տա՛հէին . իւրաքանչիւր օր
իր թշուառութեան նոր դոյն մի կ'ուտար և իւրաքանչիւր գարուն
իր կայտառ գիմաց վրայ գրողմած վարդը կը կորզէր :

Եր սիրտը ծփեալ ովկիանոս մի էր . հազար ու մէկ վիշտեր ու
ցաւեր ամհհի ալիքներու նման սէրը անհետ ընելու կը աքնէին .
սէրը այս բուռն ընդդիմութեան չկրցաւ գիմանալ , հրոյ փոխուեցաւ
և սկսաւ յամր յամր իր կեանքը լափել :

Բայց ինչո՞ւ միթէ Տօրայի վիճակին վրայ ասանկ յանկարծական
փոփոխութիւն մի երեցաւ , միթէ զարհուրած էր իր թշնամիներէ ,
ո՛չ . միթէ ընկճած էր , ո՛չ . միթէ զզջացած էր իր սիրոյն վրայ ,
ո՛չ , ո՛չ . այլ վասն զի զգաց որ խարուած էր , իմացաւ որ իր սի-
րած անձը անհաւատարիմ էր , ճանչցաւ իր ներկան՝ որ թշուառ և
ցաւայի էր , և սպազան որ մթին և անստոյգ էր . կարեվէր վըշ-
տացած էր ան : Արիտը յուսահատութենէ աւելի սոսկալի է . մարդ
յուսահատութիւնը կը ջնջէ այլ վիշտը զմարդս կը մաշէ :

Էտուար՝ ինչպէս յայանի է՝ մինչև իր մեկնիլը երկար ժամանակ
իրեն երեւած չէր , և իր թախանձումներու և նամակներու գէմ սուս
ու մուտ պատճառներ յառաջ բերելով խոյս տուած էր երեւելու .
և մեկնած էր այնպիսի սոսկալի պաղովութեամբ և անտարբերութեամբ՝
որ զուցէ միայն անհաւատարիմ սիրահարի մը յատուկ է :

Էտուար իր ճամբորդութեամբ գէպ ՚ի կեանք կը յառաջանար որ
ոչ նուազ եպերելի է , և Տօրա վշտերով գէպ ՚ի մահ կը դիմէր
որ ոչ նուազ երանելի է :

Ար պատահին անանկ գէպքեր՝ ուր անկենդան սիրտ մը կը պաշ-
տուի և կենդանի անձ մը կ'արհամարհուի , այսինքն դիակ մը նա-
խամեծար կը սեպուի , ինչո՞ւ , վասն զի մեռեալ սիրտը իր կենդա-
նութեան ժամանակ վեհութեան վառարան մի հանդիսացած կ'ըլլայ
և կենդանի սիրտը նուաստութեան :

Տօրայի վիճակը տակաւին իրեն և Աստուծոյ ծանօթ էր . քանի՛
զժուար է թշուառի մը իր թշուառութեան ենթակայ եղած ըլլալը :

գլխոնայլ, քանի՛ դառն է երիտասարդի մը՝ որու կենաց զարուհը գեռնոր կը փթաի, որու համար աշխարհս իր երջանկութիւնները կը պատաստէ, որու սիրտը երիտասարդական եռանդուն արեամբ կը վառի, սիրոյ համար ծնած և անոր քաղցրութեան ճաշակը առած կ'ըլլայ, ո՛հ, քանի՛ դառն է այսպիսի երիտասարդի մը զգալ թէ իր զարուհը անհետեւութեամբ վերահաս էր, թէ աշխարհային երջանկութիւնները անդառնալի կերպիւ իրմէ խոյս պիտի տային, թէ իր երիտասարդական կեանքը աշնանային տերեւի մը նման թառամելու մերձ էր, թէ իր սէրը փոխանակ երջանկութեան գէւլ 'ի տխուր անդունդ մի, գէւլ 'ի գերեզման իրեն ճամբայ պիտի բանար. ո՛հ, զգալ այս ամենը, և զգալ նաև թէ ինք անմեղ է, քանի՛ մեծ թշուառութիւն է :

Բայց Տօրայի ընտանիքը տակաւին զօրաւոր կերպիւ կը հակառակէր, իրեն. — ո՛հ, իր սիրոյն, իր սրտին՝ որ բոլորովին սիրով համակուած էր : Տօրա յետին աստիճան ցաւալի վիճակի մը մէջ կը դանտէր, մէկ կողմէ հակառակութիւն, նախատինք և սպառնալիք և միւս կողմէ անխիղճ Լտուարի անուր անհաւատարմութիւնը յետին թշուառութեան մէջ կը ձգէին զինք, ողորմելի զոհ մ'էր այն, ինկած երկայրի սուրի մը մէջ, որ միայն իր թշուառ սրտին վէրքը ընդլայնելու կը ծառայէր :

Թշուառութեան մէջ ինկող անձի մը հակառակիլը կը նմանի մահուան անկողնոյ վրայ հոգեւորող հիւանդի մը սիրտը դաշտնի հարուածներով վիրաւորելուն : Միթէ բնութեան գէմ չէին այս հակառակութիւնները, վասն զի ինչ կրնար ըլլալ սոյն ընդգիմութեանց նպատակը. — Տօրայի սէրը նուաճել, ո՛հ, արգէն սէրը զՏօրան նուաճած էր : Ալ շատ ուշ էր, երջանկութիւնը սահած և թշուառութիւնը մօտեցած էր : Բազլը խուսափած՝ և ճակատագիրը վերահաս էր : Միւրոյ ճիրաններու մտոնուած զոհի մը գէմ օրինաւոր միջոցները անհրաժեշտ են, բայց ո՛չ բունութիւն : Երբ նախկին զգուշութիւնները ասպարդին հեռութիւն կ'ուենան, երբ իրենց ձեռնարկած միջոցները զօրաւոր գիմադրութեան կը գլխին, երբ իրենց բռնած ընթացքը թշուառութեան արտոյ հասնելուն միայն կը նը-

պատե՛հ՝ հարկ է այն ատեն թողուլ զայն իր հաճոյից համեմատ ընթացք մի բռնելու . որովհետեւ ասանկ պարագաներու մէջ կամակոր բռնութիւնները կը նմանին հրդեհի մը հողմով անցնելու ջանքերուն :

Ինչ և իցէ՛ Տօրայի օրերը թշուառութեան շարք մի եղած էին : Ախշտ , տրամութիւն , ցաւ , նախատինք և սպառնալիք իր ապագային թշուառութեան գուշակներ կը լայլին իրեն :

Ամառուան պայծառ օրերու հետ սահած էին նաև իր պայծառ բերկրութիւնները . ոչ ևս արևը անատուեր ճառագայթներով կենդանութիւն կուտար աշխարհի , ոչ ևս ուրախ ողի մը սրտին զուարթութիւն կ'ազդէր . ոչ ևս մշակը իր ուժաթափ ծառէն վերստին պտուղ կ'սպասէր , ոչ ևս Տօրա իր թշուառ սրտէն երջանկութիւն կ'ակնկալէր . փքարեր աշունը աշխարհս կերպարանափոխ ընելու վրայ էր , անլուր վիշտեր սիրտ մը թշուառացնելու մերձ էին , հոս աշնանային ցրտահար տերև մի , հոն երիտասարդական վշտահար սիրտ մը մէկ մէկու զիմապատկեր կը հանգիստանային :

Աշնանային միզապառ և խոնառ առաւօտ մը Տօրա իր սենեակը առանձնացած էր : Քանի առանձնանար վշտերու անբառութիւն մը զինք կը պաշարէր , կարծես զինք նուաճելու համար :

— Ինչ հետեանք պիտի ունենայ այս վիճակս , — կըսէր իւրովի . — ամեն կողմէ նախատինք և սպառնալիք կրելու համար Աստուած իմ՝ կեանքս կ'երկարէ . միթէ թշուառութեան բաժակին մինչև մրուրը քամած չե՞մ : Ա՛հ , Էտուա՛ր , Էտուա՛ր , եթէ երբէք զխոնառ յիւր , եթէ երբէք զզայիւր այսչափ անհուն վշտերու մէջ գանուիլս , և որոնց պատճառ միայն քու սէրդ է , եթէ երբէք զզայիւր կըսեմ այն սէրը զոր ես կզգամ , ո՛հ , անշուշտ պիտի չպատահէին ի՛նչ որ պատահած են . բայց դարձեալ չեմ մեղադրեր քեզ , չեմ մեղադրեր կ'ըսեմ , վասն զի քու անտարբեր կացութիւնդ զիս յետին յուսահատութեան մէջ ձգելու թէև մերձ է՝ այսու ամենայնիւ դեռ կը կասկածիմ որ դուցէ՛ դաժան բաղդն է այս խաղերը խաղացողը և ոչ դու . վասն զի յաճախ , այո՛ , յաճախ քու սրտիդ ազնուութեան ապացոյցներն առի , առ իս ունեցած սէրդ զզայի , անզոյգ :

անպուզական երիտասարդ մի ըլլալդ ճանչցայ, թէն՝ ո՛հ, թէն քո լուծիւնդ, քու այսչափ հեռաւորութեան մէջ պահած լուծիւնդ զիս կը տանջէ:

Երեք ամիսներ, երեք ամիսներէ բաղկացեալ անհուն դար մը սահեցաւ և տակաւին քեզմէ լուր մի առած չեմ, եթէ ոչ քու սիրոյդ դէթ քու անձնական վիճակիդ նկատմամբ, որ իմ կեանքէս աւելի թանկագին, իմ կեանքէս աւելի պաշտելի է ինձ համար: Զարմանք, խաղ մը կը խաղայ մէջ տեղը, և որմէ գլխաւոր դերասանը բան մը չկրնար իմանալ, ի՞նչ տարօրինակ բան է այս, ի՞նչպէս այս իմ անստուգութեանս վերջ տալ պէտք եմ, նամակ մը գրել կը փափաքիմ իրեն, բայց կը դողամ երբ կը յիշեմ առջի նամակներուս անպատասխանի մնալը, միթէ ասիկա իմ սէրս չի՞ վերաւորեր, միթէ ինձ համար մահու չափ սոսկալի չէ՞ այսպիսի դէպք մի: Երկար ժամանակ է Ալֆօնս ևս երևած չէ. այս միամիտ երիտասարդը՝ որուն սրտին անկեղծութիւնը կը սիրեմ և բնութեան թեթևութիւնը կ'ատեմ, որուն մէկ աչքով կը ժպտիմ, և մուտով իր ընթացքը կը զիտեմ, այս Ալֆօնսը կ'ըսեմ, ինչո՞ւ միթէ այսչափ ինձմէ կը խուսի. բայց միտքս կասկած մը կ'արթննայ, մի՞ գուցէ Ալֆօնս իմ առջևս ամօթապարտ ըլլայ, մի՞ գուցէ այնպիսի դէպքի մը տեղի տուած ըլլայ՝ որով Էտուար ինձմէ վշտացած և սրդողած ըլլայ. այո՛, այո՛, այս կասկածս ստոյգ է, վասն զի երբ մեր սէրը տակաւին ուրիշի մը ծանօթ չէր, երբ մեր անմեղ ժամագրութիւնները մենք կը սնօրինէինք, երբ մեր զուարթ և երջանիկ սիրահարութիւնները նուիրական գաղտնապահութեան մէջ կը մնային՝ այն ժամանակները կ'ըսեմ, Էտուար ներկայէ բոլորովին տարբեր ընթացք մի ունէր. իր առ իս ունեցած անհուն սէրը կ'զգայի, կը պաշտէի զինք, կը պաշտէր զիս, անսահման երջանկութիւն կ'զգար ինձ հետ անցուցած ժամանակ. խանդակած զիս կը զիտէր ապշած, երգումներով և ուխտերով իր առ իս ունեցած սիրոյն անվերջ ըլլալը կը հաստատէր. բայց երբ երրորդ մի մեր մէջ մտաւ՝ երբ պաշտելի ժամագրութիւններու տեղ տաղտկալի բանակցութիւններ սկսան, երբ սրտաբուռն խօսքերու տեղ մտային զիրեր երևան ելան՝ ամեն բան կ'եր-

պարանոսփոխ եղաւ , ժամագրու թիւնները դադրեցան , յարարերու թիւնները կտրեցան , երգումները անզօր մնացին և ցնդեցան , սէրը չեմ գիտեր ինչն փոխուեցաւ , ատելութիւն տիրեց , անտարբերութիւն հասաւ , մոռացիտաւ թիւն յաջորդեց և ահա ստակալի լուծիւն մի իմ բոլոր յոյսերս ցնդելու մերձ է :

Հաւանական է , խիստ հաւանական է այս . վասն զի Արփօնս շատ անգամ ինձմէ վշտանալու պատճառներ ունեցաւ , ինչ կրնայի ընել , եթէ երբ ք քանի մը անգամ ինձմէ թշնամանուեցաւ՝ պատճառ իր թեթեւութիւնն էր , վասն զի յաճախ անանկ դէպքերու տեղի տուաւ՝ որոնց վրայ ոչ թէ միայն ես հասպառ բիշ մը եթէ ըլլար անշուշտ պիտի սրամուէր , արդ կարելի է Արփօնս ինձ դէմ վրէժխնդրութիւն բանեցնելու մտօք Էտուարի չարախօսութիւն մի բրած ըլլայ ինձմէ : Ո՛հ , եթէ ստոյգ է տախա՞ շատ սուղի պիտի նստի ինձ , շատ սուղի պիտի նստի իր խղճին . բայց ի՛նչ սր է , ճակատողրին պատրաստած դէպքերը փճացնել կարող չէ մարդկային բնութիւնը . ինչ սր պատահած են՝ սրտահասած են , և ի՛նչ որ պատահելիք են՝ պիտի պատահին : Շատ անգամ մարդս իր չարտրածած բանին հասնելուն յանդէտս կը նպաստէ , Աստուած այսպէս կ'ուզէ , մարդկան վրայ կը ծիծաղի . ի՛նչ զարմա՞նք , կը փախչիս և ահա կը բռնուիս , ազատութիւն կ'երեւակայես՝ և ահա կը մատնուիս , կը հեռանաս և ահա կը մտախ , յանկարծ ինքզինքդ գլորուած կը գանես այն անդունդին մէջ՝ որմէ արահա՞յ ըլլալ կ'երեւակայէիր : Ասոնք գերապոյ՜ի՛ Կասխախնամութեան մի կողմէ ազդարարութիւններ են մարդուս , թէ ինք կատարեալ զօրաւոր չէ և թէ պէտք չէ շարունակ իր վրայ վստահիլ :

Բայց դարձեալ կերկմտիմ՝ այս կարծեացս ստուգութեան վրայ որովհետեւ Արփօնս թէև իրաւունք ունի այսպիսի չարիք մը ինձ հասցնելու՝ բայց դարձեալ զանազան դէպքերով փորձած եմ իր սիրաւոր որ շարութենէ աւելի բարիք գործելու հակամէտ է և ասով սպաւոյց եղած են քանի՞ քանի՞ նեղ պարագաներու մէջ ինձ բրած երախտիքները . երախտիքներ ըսի , այս ալ յայտնի չէ , վասն զի բոլոր նամակներուս պատասխան մի գեռ ընդունած չեմ . ի՛նչ զարմա՞նք

ալ անստուգութիւնս վերջին ծայր հասած է . պէտք է վերջ տալ ասոր , տեսնեմ անգամ մի Արփօսը , հարցնեմ , քննեմ , իմանամ , ինչ որ պէտք է իմանալ , ինչ որ ինձ կը վերաբերի :

Ահա այս և ասոր նման մտածումներու ենթակայ էր շարունակ , անստուգութեան մէջ երջանիկ , անստղութեան մէջ թշուա՛ն : Շարունակ կը մտածէր , կը քննէր , կը քննադատէր , կ'որոշէր , կը վճռէր , կը հաստատէր և կը ջնջէր . վարվուուն էր իր երեակայութիւնը , բայց մթին էին և անստղոյ գէպքերու վիճակը . ինչ հետեւութիւն կրնար հանել իր մտածումներէ , որոնք՝ ինչպէս յայտնի է , խառնաշփոթ գէպքերու լափիւրիներոս մը ձևացած էին : Մէկ կողմէ Կտուար հեռացած , յարաբերութիւններ կորուած , նամակներ անպատասխանի մնացած , մտացկոտութիւն մի , անստուգութիւն մի և որ աւելի սոսկալին է , այս ամենու անմիջական հետեւութիւնը , վիշտ մը իր սիրտը կը մաշէր . միւս կողմէ զօրաւոր պիւնադրութիւն մի , նախատինք , սպառնալիք , անհաճոյ վարմունք , պատուոյ կորուստ , եթէ ոչ ընդհանուրի առջև՝ անշուշտ իր ընտանեաց և ազգականաց մէջ , բայց կը մտածէր ինք թէ այս հակառակութիւնները եթէ տեղի իսկ չունենային ինք երջանիկ պիտի ըլլա՞ր , և թէ Կտուար պիտի կատարէր ինչ որ խոստացած էր , ինչ որ երդմամբ հաստատած էր , այս ալ անստղոյ էր . վասն զի եթէ ասոնք պիտի կատարուէին՝ անշուշտ այս աստիճան մտացկոտութիւն և անտարբերութիւն տեղի չէր ունենար :

Բայց դարձեալ այս ալ մտքէն չէր հաներ որ , ինչպէս Կտուար յառաջ իմացուցած էր իրեն , անշուշտ չմատնուելու համար կուղէր շարունակ իրեն հետ յարաբերութիւն չունենալ . մանաւանդ այս գէպքը արդէն շատերու ծանօթ ըլլալուն , պէտք էր լրտեսներու իրենց վրայ ըրած գաղտնի հսկողութիւնը և շատերու կասկածները փարատելու համար բոլորովին անտարբերութիւն մի ցոյց տալ : Միշտ իր Կտուարի հետ ունեցած տեսութիւններու մէջ անոր առ ինքն ունեցած սէրը զգացած էր , միշտ զիտցած էր որ Կտուար երբէք փոփոխութիւն մի կրամ չէր . խոստում առած էր անկէ , երդում ընդունած էր իր սիրոյն անվերջ ըլլալուն վրայ . միթէ չէր գիտեր

Տօրա թէ նամակները , որոնք աւելի մտքի արդիւնք են քան թէ սրտի , ասանկ պարագաներու մէջ արժէք չէին ունենար . միթէ չէ՞ր դիտեր որ Ետուարի ցուցուցած այնչափ անհուն սէրը չէր կրնար դիւրաւ տկարանալ . այո՛ , դիտէր այս ամենը . կ'զգար ի՞նչ որ կարելի էր իր վիճակին մէջ զգալ . ամեն կարելիութիւններու վրայ կը խորհէր , ամեն հաւանականութիւններու վրայ կը մտածէր , բայց այս ամենու մէջէ չէր կրնար ստուգութիւն մի հանել :

Առաւօտէն դրեթէ մինչև կէսօր բոլոր այս մտածումներով անցուց իր օրը :

Ինչպէ՛ս սովորաբար յաճախ կը պատահէի աշնանային փոփոխական օդերու մէջ . կէսօր ժամանակ արեղական դեռ կիզիչ ճառագայթներէ ամպերը տեղի տալ սկսած էին և երկնից կապոյտ կամարը երթալով կը պարզուէր :

Տօրայի համար իր տունը ոչ նուազ անախորժ էր , վասն զի թրշնամանքներու , նախատինջներու և վշտերու բնակարան մի դարձած էր իրեն համար :

Ուստի և առաջագրեց նոյն օրը Ալիսի այցելութեան երթալ :

Կէսօր դրեթէ երկու ժամ անցած էր երբ Տօրա պատրաստուեցաւ տունէն մեկնելու աղախնոյն հետ :

Տիկին Շարլ զՏօրա մեկնելու պատրաստ վիճակի մէջ տեսնելով ըսաւ .

— Գէտ 'ի ո՛ւր երթալու դիտաւորութիւն ունիս , Տօրա՛ :

— Ալիսի այցելութիւն մի տալ է նպատակս . ասանկ եղանակի մէջ այսչափ պայծառ օդով օրեր հաղուադիւտ են , թէև աշնան մէջ ենք՝ բայց այս աշունը ամառուան ստուեր մի ունի դեռ : Զանա՛նք դեռ աւելի տխուր օրեր չի հասած զրօսնելու . գարունը սահած է , իմ գարունս բոլորովին սահած է . թոյլտուութիւն կը խնդրեմ՝ մայր իմ :

— Ի՞նչ նպատակաւ Ալիսի այցելութեան պիտի երթաս — ըստ տիկին Շարլ Տօրայի ըսածը չի լսելու տալով և հետաքրքրութեամբ :

Տօրա չէր գիտեր թէ իր մայրը իր սիրոյն մանրամասն պարագաներու վրայօք տեղեկութիւն առած էր Ալիսէ , ուստի և պատասխանեց :

— Միայն այս սրայծառ օրս զըօսանքով անցրնելու համար, մայր իմ :

— Զբօսանք — ըսաւ տիկին Շարլ այնպիսի անսովոր ծիծաղով մի՛ որուն վրայ Տօրա դողաց :

— Լա՛ւ — յարեց տիկին Շարլ, — բայց մտածէ՛ ամեն անգամ գործելէդ յառաջ :

— Ինչ ըսել կուզէք, մայր իմ :

— Ալ ինձ մի՛ հարցնէր, Տօրա՛, քանի որ ես չկրցայ զքեզ ըզգաստացնել, յուսալի եմ որ Ալիսէ կրնաս սակառ ինչ գոնէ խոհեմութիւն սորվիլ :

— Բայց :

— Գնա՛, գնա՛, Տօրա՛ — ըսաւ տիկին Շարլ արհամարհոտ կերպով անոր խօսքը ընդմիջելով, — մի՛ մտնար ամենու իմ յարգանքս տալու :

Տօրա զատուեցաւ իր մօրմէ անհնարին մտածմանց և վշտերու ենթակայ եղած :

Ար քայլէր, այլ չէր գիտեր թէ ինչպէս իր հազարումէկ վշտերը իր կանոնաւոր և շնորհալի ընթացքը խանդարելով քանի քանի անգամ իր շաւղէն խոտորեցին զինք : Տօրա կարծես թէ անծանօթ փողոցներէ կ'անցնէր, շատ անգամ իր ճամբէն խոտորեցաւ և ծառային ազդարարութիւնները զինք սթափեցին : Տօրայի միտքը բոլորովին տխուր մտածումներով զբառուած էր. իր մօրը հետ ըրած կարճատև խօսակցութիւնը անհնարին վիշտ մը քերպործած էր իր սրտին . Տօրա կը դողար քանի կը յառաջանար, վասն զի առած ամեն մէկ քայլին նոր նոր մտածումներ և կասկածներ կ'արթննային իր մտաց մէջ : Իր մայրը խօսակցութեան մէջ Ալիսը ակնարկած էր այնպիսի կերպով մը՝ որմէ անհնարին էր դոհացուցիչ հետևութիւն մի հանել. անշուշտ Ալիսի հետ տեսնուելով այս գէպքին մանրամասն պարագաները իմացած էր, ասիկա Տօրայի համար կրնար ծանր ըլլալ. իսկ եթէ այնպիսի տեսակցութիւն մի տեղի ունեցած չըլլար՝ ինչ հարկ կար Ալիսը ակնարկել. բայց Տօրայի համար այս մտածումներէ օգուտ քաղել անկարելի էր. մանաւանդ իր սիրտը

նատիկ խռոված ըլլալուն և այնպիսի տեղ մի գտնուելուն՝ ուր ամեն անցնող դարձողի ուշագրութիւնը իր վրայ էր՝ անհնար էր ամփոփ մտքով խորհիլ: Բայց Տօրա զարմացաւ երբ ծառային տան մը առջև կայնիլը տեսաւ, մինչև այն կէտը՝ ինչպէս սովորութիւն է ամեն մտածողներու, աչերը գետին յարած էր, և երբ նոյն միջոցին վեր առաւ՝ տեսաւ որ ստուգիւ հասած էին իրենց առաջադրած տեղը որ ոչ նուազ հեռու էր իրենց տունէն: Ինչ և իցէ Տօրա ներս մտաւ և ձամբեց ծառան պատուիւելով որ երեկոյեան ժամը հինգին վերադառնայ զինք տանելու:

Ալիս զՏօրա տեսնելով ըսաւ զուարթագին.

— Ո՛հ, Տօրա՛, բարի եկար, ո՞ր հողմը արդեօք զքեզ հոս մղեց:

— Ոչ թէ հողմը այլ վրադ ունեցած սէրս — պատասխանեց Տօրա այնպիսի զրաւիչ ժպիտով մի՛ որ կրնայ ըսուիլ թէ գուցէ միայն իրեն յատուկ էր:

— Երկար ժամանակ է որ պատեհութիւն ունեցած չենք առանձին տեսնուելու. երկար ժամանակուան մէջ ծանր դէպքեր պատահած են, Տօրա՛, տեղեկութիւն ունի՞ս:

— Տեղեկութիւն չունիմ, բայց քանի մը պարագաներ ինձ իրաւունք տուին գոչակելու թէ ստուգիւ ծանր դէպքեր պատահած պէտք են ըլլալ:

— Ինչ պարագաներ ձեզ այդպիսի դէպքեր գոչակելու իրաւունք տուին:

— Շատ և շատ պարագաներ, որոնք որչափ շատ էին՝ այնչափ ալ աննշան կ'երևէին ինձ, բայց այսօր, այսօրս, գեռ կէս ժամ յառաջ մօրս քանի մը խօսքերը զիս սարսափեցուցին, Ալիս՛ս, մօրս հետ տեսութիւն մի ըրած ես:

— Շատ ուղիղ գուշակեր ես, այո՛, Տօրա՛, և հիմա քեզ պիտի իմայնեմ:

— Ըսէ՛, ախանջս քեզի է:

— Բայց ներս մտի՛ր Տօրա՛ — ըսաւ Ալիս սրահին դուռը մատով ցոյց տալով, — միթէ հոս բակին մէջ ոտքի վրայ պիտի խօսակցինք:

Տօրա այնչափ շուարած էր Ալիսի խօսեցածներէ՛ որ բոլորովին մոռցած էր իր բակին մէջ գտնուիլը և ոտքի վրայ ըլլալը. ուստի Ալիսի ազդարարութեան վրայ սրահը մտաւ :

— Նստէ՛, Տօրա՛ — ըսաւ Ալիս բազմոցը ցոյց տալով, — շատ ուրախ եմ որ առանձին ենք :

— Ինչ մայրերնիդ հո՞ս չէ :

— Ո՛չ, դեռ կէս ժամ յառաջ դրացիի մը այցելութեան գնաց, և ապահով եմ որ երկու երեք ժամէն հազիւ կը վերադառնայ :

Էւ ստուգիւ նոյն օրը Ալիսի մայրը դրացիի մը այցելութիւն տուած էր :

— Բայց — յարեց Ալիս, — մօրս հետ տեսնուելու հարկաւորութիւն ունի՞ս :

— Ո՛հ, Ալի՛ս, Ալի՛ս, չե՛ս գիտեր որ մեր երկուքին համար առանձնութիւնը երջանկութիւն կը նշանակէ :

Ալիս ժպտեցաւ և ըսաւ .

— Լաւ ուրեմն, Տօրա՛, սխիւմ պատմել քեզ մեր տեսակցութեան գէպքերը : Եթէ չեմ սխալիւր՝ ասկէ դրեթէ երեք ամիս յառաջ, ինչ զարմանք որ այսչափ երկար ատենուան մէջ պատահութիւն ունեցած չենք երբէք մէկ մէկու հետ այսպիսի կարևոր խնդրոյ մի վրայ խօսելու, լաւ, ասկէ ելեք ամիս յառաջ երեքշաբթի օր մ՛էր, դեռ աղէկ կը յիշեմ, երբ ձեր մայրը մեզ այցելութեան եկաւ կէսօր դրեթէ ժամ մի անցած : Իր շփոթուն կերպարանքը, իր նոյն օրուան ունեցած անհանդարտ կերպերը, վերջապէս իր գիմաց վրայ նշմարուած բարկութեան նշանները ինձ իրաւունք տուին գուշակելու թէ նոյն օրուան այցելութիւնը քաւական ծանրակշիւ պատճառ մի պիտի ունենար. բայց, Տօրա՛, զարմանալի և սարսափելի կէտը այն էր որ եկած վայրկեանէ սկսելով իր աչերը ինձ ուղղած էր, մերթ սպառնական և մերթ հանդարտ կերպով. շուարած մնացած էի այս գէպքերէ և կը կարծէի թէ կը զառանցէի և կամ երազ կը տեսնէի, կը մտածէի լռիկ և չէի կրնար գտնել այնպիսի պատճառ մի որով համոզուէի ձեր մօրը ինձ գէմ վշտանա-

լու իրաւունք ունենալուն վրայ . իմ յանցանքի կամ սխալման մի ենթադրեալ եղած չըլլալս քաջ գիտէի . բայց ձեր մօրը սպառնալի աչերը կ'ստիպէին զիս որ իմ անմեղութեանս մէջ մեղք մը փնտուեմ . այլ ՚ի զ՛՛ր : Այսպէս շարունակ անատուգութեան մէջ կասկածներ և մտածումներէ շրջապատուած քառորդ մ'անցաւ որ ըստ իս տարիք մը երկարո՛ւթիւնը ունեցաւ , երբ ձեր մայրը ըստ մօրս երեքուն ձայնով մի . — Գիտեմ որ այցելութեան մի պարտապատշաճ կերպերը չկրցայ անթերի կատարել , բայց պատճառը ծանրակշիռ խնդիր մը և այս խնդրոյն պատճառաւ մտացս այս օրուան տարօրինակ խոռովութիւնն է . օրիորդ Ալիսի հետ առանձին տեսնուելու թոյլտուութիւննիդ կը խնդրեմ , և յուսալի եմ որ ներողամիտ պիտի ըլլաք : » Մայրս այս խնդիրը մեծ հաճութեամբ ընդունելով սենեակէն դուրս ելաւ նոյն վայրկենին զմեզ առանձին թողուով :

— Աւրեմի մայրերնիդ ամենեկին տեղեկութիւն մի չունի՞ այս գէպքերէն :

— Ո՛չ , մինչև նոյն օրը բան մը չէր գիտեր , և մինչև հիմա երբէք ինձ հետ ձեր խնդրին վրայօք խօսք մի ըրած չունի . բայց չեմ գիտեր աղէկ , կարելի է վերջէն իմացած ըլլայ և իմ առջևս խօսելու գիտաւորութիւն չունենայ :

— Ո՛հ , ի՞նչ աստիճան ծանր պիտի ըլլայ ինձ եթէ ձեր մայրն ալ այս գէպքերուն տեղեակ ըլլայ :

— Ատիկա այդչափ մտածելու արժանի բան մը չէ , ուրիշ կարելոր կէտեր կան՝ որոնք բաւական ծանրակշիռ են . մտիկ ըրէ՛ , Տօրա՛ , և խօսքս մի ընդմիջեր մինչև որ ամբողջ չվերջացնեմ :

— Աւշադրութեամբ մտիկ կ'ընեմ , Ալի՛ս , շարունակէ՛ :

— Լա՛ւ , երբ մայրս սենեակէն դուրս ելաւ , տիկին Շարլաւելի նշանացի կերպով քան թէ խօսելով իմացուց ինձ որ իրեն մօտենամ , ուստի աթոռս բազմոցին քով իրեն մտնեցուցի , « — Ալի՛ս , Աստուծոյ անուամբ կը պարտաւորեմ զքեզ ճշմարիտը ինձ ըսելու , » ըսաւ ինձ կէս մը հրամայող կերպով , և խոստում առնելէ յետոյ սկսաւ տեղեկութիւն խնդրել ինձմէ ձեր և Կտուարի մէջ եղած սի-

բոյն մանրամասն պարագաներուն վրայօք, նախ և առաջ քու բա-
րիքդ մտածել իմ պարտքս ըլլալուն բողոքովին անտեղեակ ձևացուցի
ինքզինքս, և սկսայ զինք համոզելու ջանալ որ Տօրայէ ալ անյու-
սալի է այսպիսի դէպք մի, բայց մայրերնիդ ինձ մտիկ ընելէ յե-
տոյ սրտմտեցաւ և ըսաւ. «Խոստումդ դրժեցիր, կը ստես Ալիս,
ես տեղեկութիւն ունիմ կատարեալ կերպով, յուսալի կամ անյու-
սալի ըլլալու բան մը մնացած չէ, այս դէպքը ինձ բողոքովին յայտ-
նի է,» և այսպէս երկարօրէն խօսելէ յետոյ իմացուց որ դադանի
պահելու ջանալը անօգուտ էր, ըսելով որ ձեզմէ իսկ խոստովա-
նութիւն մի առած էր։

— Խոստովանութիւն չէ, այլ յայտնի համարձակ իմացուցի իրեն
ամեն բան որպէս զի մեզ հակառակելէ գաղբի :

— Այդ մասին բողոքովին անխոհեմութիւն մի ըրեր ես, եթէ ու-
րանայիր գուցէ այս աստիճան ծանր հետևութիւն չէր ունենար :

— Ալիս, կ'աղաչեմ ինչ կը խօսիս, միթէ ուրանալ կարելի էր
այնպիսի պարագայի մէջ՝ ուր մեր սիրոյն վրայ կատարեալ տեղեկու-
թիւն ունենալը յայտնի կ'երևէր :

— Բայց գուցէ թեթև կասկած մը ստուգելու համար գքեզ փոր-
ձած էր :

— Բայց ինչ կըսես, միթէ կարելի էր փորձող անձի մը այնչափ
սպառնական կերպարանք ունենալ, այնչափ նախատինք և թշնամանք
տեղալ իր դիմացինին վրայ, ո՛հ, Ալիս, եթէ երբէք մօրս նոյն
օրուան սրտմտութեան հանդպելիր, ապահով եմ որ դու իսկ պի-
տի սոսկայիր, և մտքէ անցնելը անպամ անօգուտ պիտի համարէիր
այն մտածմունքը՝ զոր հիմա ինձ իմացուցիր :»

— Կարելի է այդպէս ըլլայ, բայց, Տօրա՛, մոռցայ ըսելու քեզ
որ իմ քու կողմէ Էտուարի գրած նամակս ցուցուց ինձ, ինչպէս
եղած է ասիկա, Տօրա՛, ինչ աստիճան մեծ անզգուշութիւն ըրեր
ես որ իրենց ձեռքը հասեր է, ինչո՞ւ անմիջապէս խրկելէդ վերջը
չպատուեցիր օրինակը :

— Այո՛, իմացայ ես ալ ասիկա, բայց ինչ կրնայի ընել. քանի
որ մոռացկոտութեամբ իմ առանձնասենեակս թողած էի զայն :

—Տօրա՛, կը տեսնեմ որ բողոք քեզ կը հակառակի :

—Յայտնի է ատիկա , բայց զարձեալ յուսալ պէտք է :

—Ստոյգ է :

—Նամակը քեզ ցոյց տալէ վերջը ի՞նչ պատահեցաւ :

—Ի՞նչ պիտի պատահի , ալ բոլորովին յաղթուեցայ և ստիպուեցայ բոլոր զիտցածներս իրեն իմացնել :

—Շատ աղէկ ըրեր ես . քանի որ ընդդիմութիւնները զօրաւոր կերպիւ սկսած են . քանի որ կարծուած վտանգը վերահաս է՝ վեհերոտութիւնը մեզ չօգտելէ զատ աւելի սխտի մնասէ : Բայց հիմա ի՞նչ ընել պէտք է , Ալիս , երեք ամիսէ ՚ի վեր Կոտուարէ լուր մի առած չեմ . խնդրեմ բտէք ինձ ի՞նչ միջոց մը բռնել պէտք եմ որ կարենամ իր վիճակին և սիրոյն վրայօք լիովին տեղեկութիւն ըստանալ :

Ալիս վայրկեան մի լռիկ խորհելէ յետոյ ըսաւ :

—Երբէք Ալֆօնսը տեսա՞ր :

—Քանի մը անգամ , բայց պատեհութիւն չունեցայ հետը խօսելու :

—Ուրեմն ջանա՛ հետը խօսելու պատեհութիւն մի գտնել , ապահով եմ որ կրնաս ուղածդ տեղեկանալ անկէ , վասն զի անշուշտ ա՛յ . Կոտուարի հետ կը թղթակցի :

—Այո՛, ես ալ այդ դիտաւորութիւնը ունիմ . ո՛հ , Ալիս շատ ընտիր սիրտ ունիս , կ'ազաչեմ մի զլանար ինձ օդնութիւնդ , եթէ առանձին մնամ՝ կ'զլամ որ որ և իցէ քանի մէջ պիտի չի յաջողիմ :

—Տօրա՛, ի՞նչ կ'ըսես , միթէ կարելի է որ այսպիսի պարագայի մէջ զքեզ թողում . անկեղծօրէն կը խօսիմ , և դուքէ դու խսկ դիտես , որ անձիս չափ և եթէ չեմ սխալիր՝ անձէս աւելի կը սիրեմ զքեզ :

—Գիտեմ , գիտեմ , քու իմ վրայ ունեցած անսպասան սիրոյդ շատ և շատ անդամ ասպցոյցներ առած եմ , որուն փոխարինելու համար սրտովին շնորհակալութենէ զատ բան մը չունիմ՝ առ այժմ :

Իրենց խօսակցութեան միջոցին ժամանակը յառաջացած էր և

Տօրայի վերջին բառերը գեո. լմնցած չէին երբ ժամացոյցը չորսի նշան տուաւ :

Երկու ժամ շարունակ խօսակցութեամբ անցուցած էին . բայց այս երկու ժամերը անանկ կ'երևէր իրենց որ քառորդի մը չափ շուտ սահած էին :

Աշնանային գիշերահասարէ վերջը երեկոյեան ժամը չորսը այն նշանակութիւնը կ'ունենայ՝ ինչ որ ունի ամառուան եօթնը կամ եօթնուկէսը :

—Տօրա՛, լսեցի՛ր ժամը չորս կը զարնէ, քանի՛ն մեզ այցելու թեան եկար :

—Երկու բին :

—Ուրեմն կարելի է որ մեր խօսակցութիւնը երկու ժամ տևած ըլլայ :

—Ի՞նչ գիտնամ, Ալիս, միշտ փորձած եմ որ երջանկութեանս ժամերը փայլակի նման շուտ կը սահին :

—Ստոյգ է, երջանկութեան ժամերը մարդուս աչաց առջև բոսկէ մը առելի երկար չեն երևիր : Բայց, Տօրա՛, կը հաճի՞ս դէպ ՚ի պարտէզ ընկերանալ ինձ :

—Մեծ հաճութեամբ :

Երկուքնին առանձին դէպ ՚ի պարտէզ յառաջացան :

Պարտէզը բառական սիրուն էր և թէև աշնան պատճառաւ գրեթէ անշուք էր՝ բայց իր գեո գրաւիչ տեսքը կ'ապահովցնէր անտողը թէ գարնան ժամանակ առաջին կարգի պարտէզներէ մին կըլլար :

Այս պարտէզին մէջ բառական ժամանակ ժուռ եկան, և երբ դուրս ելելու համար բակի ձևով ձեմելիէ մը կ'անցնէին, վասն զի մուցանք ըսելու որ պարտէզը երկուքի բաժնուած էր ձեմելիով մը, որուն երկու կողմերը մանիշակի բոյսերով, վարդենիի և նարկիզի սունկերով ծածկուած էր, Ալիս ծռուեցաւ գետին և վարդ մի առնելով՝ որ ոչ այնչափ ընտիր էր փոփոխական օդերուն պատճառաւ, Տօրայի տուաւ :

—Ո՛հ, Ալիս, շնորհակալ եմ, ո՛ւր էր որ Կտուար հոս ըլլար և ըսէի իրեն, «Ա՛ռ, Կտուա՛ր, այս վարդը քու Տօրայէդ իբր

նուէր» , և ան ինձի պատասխանէր

— «Ա՛լ ընդունիմ , Տօրա՛ , և շնորհակալ եմ : »

— Ո՛չ :

— Հապա՛ :

— «Ա՛ն , Տօրա՛ , փոխարէն իմ՝ սիրտս : »

— Բայց , Տօրա՛ , ատանկ չնչին նուէրի մը փոխարէն սիրտ մը խնդրել անիրաւութիւնն չէ՞ :

— Ո՛չ , Ալի՛ս , այդպէս չէ , ես արդէն իմն շնորհած եմ . ուստի և հիմա իրենը կը խնդրեմ :

— Ուրեմն , հիմա իրատունք ունիք :

Այս միջոցիս դուռը զարնուեցաւ :

— Ալիս դուռը կը զարնուի , արդեօք մայրերնի՞դ է :

— Կարելի է :

Ծառան դնաց դուռը բացաւ և եկաւ իմացուց որ աղախինը եկած էր զինք ընդունելու :

— Խիստ յարմար ատեն եկած է , Ալի՛ս , քեզմէ՛ սրտովին շնորհակալ եմ , մեկնելու ժամը հասաւ , ուստի մնաս բարև :

Կաթողին սիրով մէկզմէկ համբուրեցին , որմէ վերջը Ալիս ըսաւ .

— Երթաս բարեալ^ն , Տօրա՛ , մի՛ մոռնար ըսածս :

— Ո՛չ , ապահով եղիւր :

Տօրա մեկնեցաւ իրենց աղախնոցն հետ հաստատ առաջադրութեամբ որ իր առաջին դորձը զԱլֆօնս գտնելը ըլլայ :

Գ Լ Ո Ւ Խ Ե

Գ Ո Յ Ժ Ը

Տօրայի և Ալիսի մէջ եղած վերոյիշեալ սեսութիւնը անյուսալէ արդիւնք մը արտադրած էր :

Այսպիսի պարագայի մէջ ասանկ դէպքեր և արգելքներ իրաւամբ ուրիշներու մեծ ազդեցութիւն կ'ընեն, և որչափ որ հաստատամիտ և անվեհեր ըլլան՝ կ'ընկրկին, և փոխանակ բաղդին ձախող պատահարներու և արգելքներու դէմ մաքաւելու՝ կը յուսարեկին, և կը կորուսեն անտարակոյս՝ ինչ որ իրենց հաստատամտութիւնը և խոհանուութիւնը պիտի կրնար իրենց շնորհել :

Այլ Տօրա չէր ինչ որ ըստ երևութի կ'երևէր : Տղէտ զիմադէտներ թերևս խարուէին անոր շնորհալի, պարկեշտ և միշտ միօրինակ առանց կռիւի դէմքը տեսնելով . իրեն հետ յաճախակի յարաբերութիւն ունեցողը և փոխադարձ վստահութեան պատճառաւ զանազան նիւթերու վրայ սրձակօրէն վիճողը կը տեսնէր անոր ուշիմ և բնական ճարտարախօսութիւնը, ճշգրիտ պատճառաբանութիւնները և այն տրամաբանական ուղիղ դատողութիւնը՝ որով կը յայտնուէր իբրեւանդուն և յստակ մտքի և զաղափարներու տէր ըլլալը : Թերևս հետաքրքրութիւն թուի շատերու զիտնալ թէ Տօրա օրիորդ մը ըլլալով և ծաղիկ հասակի մէջ զանուելով ինչպէս այսչափ մտային կատարելութեան հասած էր, վասն զի յայտնի է որ Զ... քաղքին օրիորդաց մտաւոր կրթութիւնը խիստ թերի և սահմանափակ է . այլ պէտք չէ այս մասին զարմանալ ընթերցողը . ինչ բան կրնայ յաղթել բնութեան, կամ ինչ բան կրնայ հաւասարիլ բնութեան շնորհած ին մանաւանդ մտային կարողութեանց նրկատմամբ . ըթամիտ անձի մը ինչ օգուտ ունի կրթութիւնը, կամ երկարատե աշխատութեամբ ինչ արդիւնք կրնայ արտադրել այնպիսի միտքը՝ զոր բնութիւնը ակար և ամուլ ստեղծած է : Մտացի, սթափ և վարվուն երևակայութեան տէր անձի մը համար կարճատե կրթութիւնը մեծ արդիւնք կ'արտադրէ, և այս կը հաստատէ որ բնութիւնը կրթութենէ աւելի շնորհելու կարող է : Սոյն առմամբ կ'ըսենք Տօրայի համար ալ . թէ և մտաց կրթութեան և մշակութեան շրջանէ խիստ թերի անցած էր՝ այլ բնութիւնը անոր թերին լիովին լեցուցած էր . բնութիւնը թերևս անբննելի կամահաճութեամբ ուզած էր այնպիսի կատարելութիւն մի տալ անոր՝ որով կարենար իր գօրութեան վրայօք զաղափար մի տալ ամենու :

Հոս Տօրայի վրայ խորհրդածութիւն ըրած ժամանակնիս պարտադրուած ենք վերստին այնպիսի կերպով խօսիլ՝ որ թերևս չափազանցութիւն պիտի թուի շատերու . այլ մենք դրենք ինչ որ ճշմարիտ է :

Տօրա իր իննետասնամեայ հասակին մէջ յիննամեայ անձի մը փորձառութիւնն ու աաղանդը ունէր . բնութիւնը անոր կենաց ընթացքը կարճ սահմանած ըլլալուն համար թերևս ուղած էր տալ անոր այն ամեն կատարելութիւններն զորս տարիներէ վերջը պիտի շնորհէր :

Տօրա բաղդին ձախող արկածներու , արգելքներու և խոչնդոտներու առջև չէր ընկրկեր , և ոչ իսկ կը խաբուէր բոլորովին յուսոյ նշոյլներ և երջանկութիւն նշմարած միջոցին . յուսահատութեան մէջ յոյս կը վնասուէր նա , և յաջողութեան մէջ չէր շլանար , և կողէր նշմարել , շօշափել և թերևս արդիւել այն ձախող պատահարները՝ զորս ժամանակը պահած էր իր կարծեցեալ երջանկութիւնը խախտելու համար : Տօրա կատարեալ նախատեսութիւն ունէր ամեն բանի մէջ :

Եթէ կատարեալ նախատեսութեան հետ միանայ մաքուր և անդրբուելի սէր , եթէ սոյն մաքուր և անդրբուելի սէրը անօրէն ուխտադրուծի մը նուիրուած ըլլայ , և այն ուխտադրուծը սոսկացած չըլլայ ապերջանիկ ընելու այնպիսի օրիորդ մը՝ որ , ափսո՛ս , առանց իրեն թշուառանայութեան վաղահաս գերեզման մտնելու դատապարտուած էր , եթէ այն օրիորդը այնպիսի հրեշտակային սիրտ մը և ողի ունեցած ըլլայ՝ որ լքուիկ իր թշուառութեան վրայ առանց տրսնջալու և առանց ամենևին վրէժխնդրութեան փափաք մը յայտնելու , կամ զինք թշնամանողը թշնամանելու իր վիշտը իր սրտին խորը պահէ , այս ամենու հետ ինչ օգուտ կ'ունենայ կատարեալ անսխալ նախատեսութիւնը . բայց եթէ իր թշուառութեան վրայ կատարեալ համոզում և ազդու միջոց մը զինք ժամանակէն յառաջ սրտին ցաւէն մահուան զոհելու :

Այլ այս չէր ամենը , և պէտք չէր ասով լրանալ Տօրայի բոլոր յոյսերն , մտածութիւնները , երջանկութիւնը և նոյն իսկ կեանքը : Մարդկային նախատեսութիւնը որչափ սուր և յստակ ըլլայ՝ ասանկ

դէպքերու մէջ միշտ կարող չէ պարզել այն ամեն գաղտնիքները՝ զորս օրերը ժամերու կը յանձնեն և ժամերը վայրկեաններու, կարող չէ ճշդիւ գուշակել մարդս թէ ժամէ մը ի՞նչ տպագոյ պիտի ունենայ, թէ երջանկութենէ թշուառութեան անդո՞ւնդը պիտի դաճավիժի, եթէ թշուառութիւնը վայրկեանի մը, ժամի մը կամ օրուան մը մէջ իր երջանկութեան տեղի պիտի տայ :

Ասիկա անժխելի ճշմարտութիւն մ'է : Տեսեալէս կատարեալ նախատեսութիւնը իսկ շատ պարագաներու մէջ կը վրիպի : Ասանկ դէպքերու մէջ փոքրիկ արգելք մը, ըստ ինքեան աննշան դէպքմը մեծամեծ դժուարութիւններու պատճառ կրնայ ըլլալ, և կրնայ հիմնի վեր տասպալել այն ամեն կարգադրութիւններն ու յոյսերը՝ որոնք նախատեսութեամբ և խոհականութեամբ կարգադրեալ ըլլալով՝ աներկբայելի կարծուած են : Նոյնպէս փոքրիկ յաջողութիւն մը կամ մասնաւորի մը կամահաճութիւնը և թոյլտուութիւնը կրնայ բառնալ այն յուսահատութիւններն ու դժուարութիւնները՝ որոնք երջանկութեան կորսուած ըլլալը անտարակուսելի կը ցուցնէին : Այժմ չէ վճատիլ, վասն զի վճատելով կ'ընկրկի մարդս և ընկրկելով կը կորուսէ անտարակոյս, և փոքրիկ դժուարութիւններն իսկ անհետելու անկարող վիճակի մէջ կը դանուի : Նախատեսութեան շատ պարագաներու մէջ սխալական ըլլալուն համար պէտք չէ թողուլ զայն, այսպիսի դէպքեր խոհեմութեան կը կարօտին և խոհեմութիւն ըսելով չենք իմանար ընկրկելի : յուսալ պէտք է և գործել ի՞նչ որ օրինաւոր և անհրաժեշտ է, յոյսը արգելքները կը բառնայ, դժուարութիւնները կ'անհետէ և նոյն իսկ անկարելի համարուածը վայրկեանի մը մէջ իրականութեան կը դարձնէ :

Ո՛հ, Սէ՛ր, Սէ՛ր, անգամ մը միայն անոր սրտին մէջ սահեցար, և ալ իրեն համար աշխարհիս անկարելի համարուած բանը գրեզ մերժելը եղաւ : Քանի որ գրեզ մերժելը անկարելի է, քանի որ առանց իր յոյսերու և երջանկութեան լուսն անողորբելի թշուառութիւնն և մահը անտարակուսելի պիտի ըլլան իրեն համար՝ ինչո՞ւ համար իր երջանկութեան ընդդիմացող արգելքները անհետելու չի ջանալ, ինչո՞ւ համար մասնաւորներու հակառակութիւններն ու թշնամութիւն-

ները , որոնք անհուն , նուիրական և պաշտելի սիրոյ զպացումի անջև
խիստ աննշան բաներ են , չի արնիլ սարսապուռ ջնջելու . միթէ
յիմարութիւն չըլլա՞ր այսպիսի ընթացք մը , վասն զի ո՞վ կրնայ ը-
սել թէ ուրիշներու հաճոյքը կամ կամքը կատարելու համար անձ
մը պէտք է զոհել իր պայծառ մտածութիւններն , յոյսերը , եր-
ջանկութիւնը և նոյն իսկ կեանքը : Ա՛չ , ո՛չ , այսպիսի անբնա-
կան զաղափար մը կամ սկզբունք մը նոյն իսկ բարբարոսներու մէջ
չի գտնուիր , ուր մնաց որ ազգի մը ըստ կարի քաղաքակրթեալ մա-
սին մէջ ընդունելի ըլլայ . ուրեմն զարմանալի չէ՞ այս որ ասանկ
ծանրակշիռ պարագայի մէջ ինչպէ՞ս կրնայ ընդդիմութիւն ծագիլ
նոյն իսկ այն անձերու կողմէ՞ որոնք Տօբայի կորուստով իրենց սրտին
մէկ մէկ անդարմանելի վէրքեր պիտի բանային : Այլ ար-
սո՛ս , ասոր պատճառը որչափ որ տարօրինակ նոյնչափ բնական եղած
է շատ մը ազգերու մէջ . կոյր նախապաշարում , ինչքե՛րու , ստաց-
ուածոց , չափահասութեան , աղքատութեան սնտախի և աննշան խըն-
դիրներ , որոնցմով կը զինին խել մը անձեր մաքառելու համար
սիրոյ գէ՛մ , անհո՛ւն և նուիրակա՛ն սիրոյ , զոր ջնջելու համար
պէտք է նախ և յառաջ սիրտը բարախելէ դադրեցնել :

Տօբա Ալիսի ազգարարութեան համեմատ տեսնուած էր Պ . Ալ-
ֆօնսի հետ և իմացած էր անորմէ թէ Պ . քաղքին մէջ Կտուարի
առողջութիւնը կատարեալ կերպով կը բարոքէր . թէ ամեն նա-
մակներու մէջ զինք կը յիշէր . թէ իր ունեցած միակ վիշտը Տօ-
բայէ հեռի ըլլալն էր . թէ իր սէրը նոյնն էր և երբէք փոփոխու-
թիւն մը կրած չէր . թէ Պ . քաղքէն քիչ ատենէ մեկնելով Զ .
քաղաքը հասած ժամանակ իրենց երջանկութեան լման համար ա-
մենեին միջոց մը ձեռքէ պիտի չլծողուր . թէ Տօբայէ կը ինդրէր
որ համբերութիւն ունենար և ջանար իր հակառակորդները կէս մը
ողոքով և կէս մ՛ալ ընդդիմադրութեամբ իրենց հակառակութենէ ետ
կեցընել :

Տօբա ասոնք իմացաւ և մտածեց . մտածեց և ամենեւին չկրցաւ եղ-
բակացութիւն մը հանել : Զարմանալի կը թուէր իրեն թէ ի՞նչպէ՞ս
կրնար ըլլալ որ Կտուար զինք այնչափ սիրելէ և ապահովիչ խոս-

ստուժներ ընելէ յետոյ՝ ամենեւին երկու տող գիր չգրեն իրեն, միթէ
հոս ալ մատնութենէ կը վախնար, ինչ ատեն կրնար նամակը Պ.
Ալֆօնսի միջոցաւ իրեն հասցնել. վասն զի Պ. Ալֆօնսի հաւատար-
մութիւնը, իրենց վրայ ունեցած սէրը և իրենց բարեոյն անկեղծու-
թեամբ փափաքող ըլլալը անտարակուսելի էր : Հոս երկու բան գը-
տաւ, կամ այն էր որ Էտուար չափազանց խոհեմութիւն բանեցնե-
լով չուզած էր իրեն նամակ ուղղել : կամ այն էր որ Պ. Ալֆօնս
կը ստէր. և այս վերջի կարծիքը աւելի զօրաւոր երեցաւ իրեն :
վասն զի շատ անգամ երբ Էտուարի նամակները կը խնդրէր Պ.
Ալֆօնսէ իրեն վերաբերած մասերը կարդալու համար՝ Ալֆօնս միշտ
կը պատճառէր թէ իր քով չէին գտնուեր նամակները, և այսպէս
Տօրա ամենեւին կարող չեղաւ Էտուարի առ Ալֆօնս ուղղած նամակ-
ներուն մէկն իսկ տեսնելու :

Բայց այս կարծիքին վրայ իսկ ապահով չէր : վասն զի սէրը
այնպիսի բնազդում մ'է՝ որ միշտ մտքը գէպ' իր յոյսերու նպաս-
տող կարծիքները կ'ուղղէ : Ար մտածէր թէ ինչ մասնաւոր օգուտ
մը կրնար ունենալ Ալֆօնս զինք խաբելով, կը մտածէր ասոր վրայ
յաճախակի և օրը տասն անգամ երջանկութեամբ և յոյսերով լըց-
ուած կը դռչէր կէս մը յիմարի պէս : — Ա՛չ, անկարելի է որ Ալ-
ֆօնս զիս խաբէ, անկարելի է :

Ո՛ր ցաւալիդ Տօրա՛, գուն քու վիճակիդ վրայ այնչափ տեղեկու-
թիւն չունէ իր որչափ Ալֆօնս. Ալֆօնս միշտ զքեզ տեսած ժամա-
նակ կը ցաւէր, վասն զի քու կայտառ դիմացդ մէկ փոքրիկ փոփո-
խութիւնն ու գունաստութիւնը իսկ իր սուր և հսկող աչքերէն չէր
վրիպէր : Ալֆօնս իր օրաին բնաձիր գլխոտութեամբ կը գլխար վե-
րադ և զքեզ չի վշտացնելու և քու ազնիւ և դիւրազգած սիրտդ վըշ-
տերով և ցաւերով չվիրաւորելու համար՝ կ'ընէր ինչ որ կրնար,
թէ և ստութիւն թէ և խարդախութիւն :

Էտուար ստուգիւ կը թղթակցէր Պ. Ալֆօնսի հետ. բայց Տօ-
րայի նկատմամբ բառ մը անգամ չէր գտնուեր անոր նամակներու
մէջ, և Ալֆօնսի Էտուարի կողմէ Տօրայի ուղղած բոլոր խօսքերը
չինձու էին :

Այս պատճառաւ էր որ Ալֆօնս Էտտարի նամակները Տօրայի ցուցներէ միշտ կ'զգուշանար :

Այսպէս Տօրա իր օրերը վերստին կէս մը անստուգութեան մէջ կ'անցներ :

Քանի մը շարաթներ անցան այս դէպքերէ և ահա Չ. քաղքին մէջ տարաձայնութիւններ ելլել սկսան :

Շատ տեղեր կ'ըսուէր թէ Էտտարի վիճակը Պ. քաղքին մէջ խիտ ծանրացած էր . ուրիշներ կ'ըսէին թէ իր հիւանդութիւնը անբուժելի էր , և թէ օդափոխութիւնը ուրիշ օգուտ մը պիտի չունենար , բայց եթէ մահը քանի մը օր ուշացնել . իսկ անդին բաղմամբիւ մաս մ'ալ կ'ըսէր թէ Էտտար Պ. քաղքին մէջ մեռած էր :

Ուսկէ կուգային այս տեսակ տեսակ գոյժերը : Ո՞ր հեռագիրը , ո՞ր նամակը կամ ո՞ր անձը բերած էր ասիկա . յայտնի չէ . բայց այս ստոյգ է որ այս գոյժերու վերջներ քանի մը օրուան մէջ ամեն կողմ տարծուեցաւ և ամենէ իբր աներկբայելի ճշմարտութիւն մը ընդունուեցաւ : Ոմանք լացին իր վրայ , ոմանք ցաւեցան և շատեր ալ անտարբեր կեցան ըսելով որ « Էտտար իր վաղահաս մահուան պատճառ ինք եղաւ . . . » :

Տիկին Շարլի ականջը հասաւ այս գոյժը որ մեծ աւետիս մը սեպուեցաւ իրեն , և անանկ կարծելով որ Տօրայի յամառ սէրը անտարակուսելի կերպով պիտի ջնջուէր իր սիրահարին մահը խնայողա՞ծ ժամանակ՝ առանց ամենևին հետևութիւններուն վրայ մտածելու իր որսորդ հակառակորդները փարատող վազրի մը յատուկ ծիծաղով Տօրայի սենեակը մտաւ :

Տիկին Շարլ հօս երկրորդ անգամ սխալեցաւ , և իր այս երկրորդ սխալմունքը Տօրայի ապագայ թշուառութիւնը անտարակուսելի բրաւ :

Տօրա սոսկաց իր մօրը անբնական ծիծաղով պատած կերպարանքը տեսնելով :

— Է՛հ , Տօրա՛ — ըսաւ տիկին Շարլ առանց ամենևին համբերել կարենալու , — բու սիրական Էտտարը մեռաւ , նայինք ալ քու հազար և մէկ զիշերներու պալաաներդ և սիրային երջանկութիւններդ և ցնորքներդ վերջ պիտի ունենան :

Տօրա շփոթեցաւ և իր ականջներու լսածին չճառատալով հարցոց փօրը .

— Ի՞նչ լսիք , մա՛յր իմ , չկրցայ իմանալ ըսածնիդ :

— Ըսի թէ Կտուար մեռաւ — ըսաւ տիկին Շարլ անանց միւս խօսքերը կրկնելու , վասն զի այնչափ կտրեորութիւն չունէին :

— Կտուար մեռա՛ւ , ուրեմն ես ալ կորսուած եմ — ըսաւ Տօրա յանկարծ ցատկելով և դունատ վերստին բազմոցին վրայ իյնալով :

Տիկին Շարլ տեսնելով Տօրայի տարօրինակ դունատիւք դողաց և լռիկ սենեակէն դուրս ելաւ :

Տիկին Շարլ խաբուեցաւ կարծելով որ Կտուարի մահը Տօրայի սէրը պիտի ջնջէր . Կտուար ամենու համար մեռած էր , բայց ոչ իրեն համար : Տօրա քիչ ժամանակէն կ'ուզէր տեսնել զայն , և տեսնելու համար իր կեանքն իսկ զոհելու պատրաստ էր , կը հաւատար որ Կտուարի ողին երկինքն էր , և թէ ինք հոն պիտի կրնար տեսնել զայն , Տօրայի ուզածն ալ այս էր : Ալ անկէ վերջը ի՞նչ էր իրեն համար կեանքը , — բայց եթէ զինք վշտերու հետ շղթայող բռնաւոր մը , և ի՞նչ էր մահը . — բարեբա՛ւր մը , հրեշտա՛կ մը , Աստուած՝ մը որ զինք երկնից մէջ իր սիրականին հետ յախտենապէս պիտի միաւորէր :

Ալ անկէ վերջը ամեն բան կերպարանափոխ եղաւ . Տօրա կատարեալ կերպով յուսահատեցաւ . իր մօրը տուած գոյժը իր սրտին սոսկալի վէրք մը բացաւ , և այն ահռելի հիւանդութիւնը՝ որ իր սրտին մէջ արմատացած ըլլալով յամրաբար կը մաշէր զինք , սոսկալի արագութեան փոխուեցաւ և քանի մը օրուան մէջ իր կայտաւ այտերը տժգունելուն՝ զինք տեսնողներու մտաց մէջ ախուր կասկածներ կ'արթննային :

Տօրա կտրճքի ցաւի անբուժելի հիւանդութեան ենթարկուած էր :

ՔԼՈՒԲ ԵՒ

ՏՕՐԱ

Այս գէպքէ վերջը տիկին Շարլը զարհուրած էր և երկիւղով սրաշարուած :

Տօրա սովորականին հակառակ խիստ լռիկ և խոհուն կեանք մը կ'անցընէր, և երկար ժամեր և երբեմն ալ ամբողջօր իր առանձնասենեակը քաշուած ոչ ոք կ'ընդունէր ներսը :

Ինչ կ'ընէր Տօրա ասանկ առանձին սենեկի մը մէջ փակուած և ամենու հետ հաղորդակցութիւնը կտրած ըլլալով :

Տօրա՝ որովհետև բողոքովին յուսահատուած էր Էտուարէ, զգուած էր նաև կեանքէ և աշխարհային որ և է երջանիութիւն և բերկրական առարկաներ չէին կարող իր սրտին վշտերը փարատել և ծիծաղ մը, զէթ փայրկենական ծիծաղ մը իր դիմաց վրայ երևցընել : Իր փակարանին մէջ, վտան փակարան անուանել պէտք է գայնքան թէ առանձնասենեակ, ուր կամովին փակուած էր, սոսկալի բաներու վրայ կը խորհէր : Ա՛ռգէր թողուլ իր ծանր մարմինը՝ որ կարգելուր հոգւոյն թուշիլ դէպ 'ի երկնային կամարը և հոն զուգիլ Էտուարի հետ, կեանքէ զգուած էր. բայց անձնասպանութեան սոսկալի ոճիրէն կը զարհուրէր : «Ո՛հ, մա՛հ, հասիր և վերջացուր կեանքս և զիս այս անտանելի վշտերէ ազատէ» կը գոչէր յաճախակի, և որու կը յաջորդէր խորին լութիւն մը՝ զոր կ'ընդհատէին երբեմնակի սրտի խորէ մղուած հառաչներ :

Ապերջանիկ սիրահարի մը վիճակին վրայ զազափար ունենալու համար պէտք է միայն անոր վիճակը ունենալ : Ինչ կրնայ ընել

այնպիսի թշուառ՝ որ բաղդին տհարկու հարուածները ընդունելէ՝ երջանկութեան կորուստէ, թշուառութեան բաժակին մինչև մրուրը քամելէ յետոյ՝ դեռ իր կենաց միջօրէին մէջ գտնուի : դեռ ներս կայն սոսկալի ըլլայ և ապագան աղմկալի և գուժարեք, դեռ յուսոյ քանի մը մնացորդ նշոյլներն իսկ աղօտ կանթեղի մը բեկ բեկ լոյսերու նման մարեղու սկիին : Ինչ ընել պէտք է այնպիսի թշուառը, միթէ պէտք է աւելի երկար ապրելու փափաքիլ, երբ դիտէ թէ կեանքը զինք վշտերու հետ կը շղթայէ իսկ մահը այն շղթաները կը խորտակէ : Այսպիսի ճակատագրի մը ենթարկեալ անձի մը միտացորդ օրերը բոլորովին ողբալի և անտանելի կ'ըլլան :

Այլ Տօբա կ'սկսէր տակաւ առ տակաւ իր վիճակին ծանօթանալ, և իր գլխու տաքութեան և սրտի անհանգստութեան ինչ ըլլալը խմանալով : սկստ օրտովին գոհ ըլլալ բաղդին այս չարագուշակ շնորհէն . վրան զի ասով անձնուսպանութեան սոսկալի ոճիր մը իր մտքէն բոլորովին արտաքսեց :

Այնչափ յուսահատած էր և այնչափ անձկանօք մահուան կ'ըրպասէր՝ որ իր գլխու տաքութեան և սրտի անհանգստութեան բըրօնած միջոցին մէկէն իր գիմաց վրայ այնպիսի ծիծաղ մը կը պատէր : զոր ստուգիւ երջանկութեամբ, յուսով և սիրով լցուած էակ մը անդամ չկրնար ունենալ :

Իրեն համար ալ աշխարհիս մէջ երջանկութիւն, յոյս և սէր նշանակութիւն չունէին . իր կոյս սիրտը անդամ մը սիրած էր էակ մը, բայց այն էակը հիմա երկրիս վրայ չի գտնուելուն՝ իր սէրը նսեւ աշխարհիս մէջէ վերացած էր և հասած էր դէպ ՚ի այն վայրը՝ ուր կը գտնուէր իր սիրոյ առարկան :

Արջապէս Տօբա իր Ֆիզիզական կենաց վիճակին խնդարիլը ոճ բողակի դիտաւրով ինքզինք կատարեալ երջանիկ կը համարէր, և յաճախ կ'ըսէր իւրովի . «Քիչ մը ևս համբերել պէտք է :

Ինչպէս ըսինք յօդուածնուս սկիզբը, տիկին Շարլ տարսափով պատշարուած և բոլորովին շփոթած էր : Տօբայի դիմաց տեղունիլը և սրբօտի անհանգստութիւնը շատ պարագաներու մէջ դիտելով անդապի զՋայ իր անխոհեմ ընթացքին վրայ, որուն պատճառաւ իրեն իսկ

հետեւելիք անհնարին վիշտերն ու ցաւերը շատ ուշ ուրեմն կըցաւ ըմբռնել :

Տիկին Շարլ որչափ որ այնուհետեւ որոշեց իր ընթացքը մեղմել² այսու ամենայնիւ չէր համարձակեր վերստին Տօրայի հետ խօսիլ այս պարագային վրայ , այլ աւելի բացորոշ խօսիմք : տիկին Շարլ ծընողական զուժ և կարեկցութիւն լիովին ունէր : այլ իր հպարտութեան և կնային մեծամտութեան չէր թողոր խոնարհիլ իր սուղկան և համամիտ երեխի անոր՝ որու դեռ քիչ օր յառաջ այնչափ բնդդիմացած և իր աննուաճելի սէրը նուաճելու համար այնչափ ապօրինստոր միջոյնբրու դիմած էր : Այլ այս իր մեծամտութիւնը և հպարտութիւնը սրտածառ կ'ըլլային Տօրայի սպառնացած դուժալի ապագան անդարմանելի ընելու :

Տիկին Շարլ՝ որովհետեւ Տօրայի արթնութեան ժամանակ անոր մօտելու չէր զօրեր կամ թէ չէր համարձակեր , գիշերները նիրհած ժամանակ երկար ժամեր անոր անկողնոյն քով կ'անցնէր , և կը գիտէր այն ճակատը՝ որ մերթ կը կնճռէր և կը քրտնէր , այն սիրտը՝ որ շնչառութեան ժամանակ կ'ուռէր և կ'ընդարձակուէր , այն հառաչները՝ որ սրտի խօրէն մղրելով , իր կենաց թելը աւելի մաշեցնելու կը ծառայէին , այն անունը զոր ինք կը պաշտէր և զոր արտասանած միջոցին ընդստ իր անկողնոյն մէջ կը ցատկէր :

Տիկին Շարլ ասոնք կը տեսնէր և կը զարհուրէր , կիմանար որ իր գործածած ընդդիմութիւնը իրեն շատ սուղի պիտի նստէր , կ'զգար որ Տօրայի վիճակը դէպ 'ի կորուստ կը գիմէր , կ'զգար որ էտուարի մահը Տօրայի սէրը չի ջնջելէ զատ աւելի ամբաստնագած էր : ոտտի որոշեց անգամ մը Տօրայի հետ տեսնուիլ , անոր համաձայնիլ : Զանալ իրեն սպառնացող թշուառութեան առաջը առնելու համար ուրիշ սիրական մը առաջարկել անոր և բոլորովին հաճ և հաւան ըլլալ անոր ընտրածին :

Տիկին Շարլ կը յուսար այս կերպով² յաջողիլ և փոթորկալի ապագան անհետել :

Աստի օր մը առաջարկեց Տօրայի ստանձին տեսութիւն ընելու Տօրա արդէն իր մօրը հակառակութեան մեղմացած ըլլալը գիտէր :

այլ գիտէր նաև որ շատ ուշ սլծափած էր . գիտէր որ եթէ իր մայրը իրեն հաւանութիւն տար՝ անօգուտ պիտի ըլլար . իսկ ասոնց հակառակ դէպք մը անկարելի էր , վասն զի չէր կրնար զինք սիրելէ դադրեցնելու սպառնալ քանի որ էտուար մեռած էր : Այսպէս տեսնելով որ իր մօրը առաջարկութիւնը մերժելով օգուտ մը պիտի չքաղէր , նոյնպէս ընդունելով ֆեռաս մը պիտի չկրէր , ընդունեց :

Տիկին Շարլ իր առաջարկութեան ընդունուելուն վրայ իրապէս և ոչ երևութապէս փոխուեցաւ . զարմացաւ իր աղջկան հեզ և ներող բնաւորութեանը վրայ , որ տակաւին չէր խորշեր զինք տեսնելու , ինչ ատեն ինք անոր ասերջանկութեան ստեղծին պատճառն եղած էր . ուստի և բոլորովին զուարթ և ուրախ գէմքով մտաւ Տօրայի առանձնասենեակը :

Տօրա տեսնելով իր մօրը գիմաց ժպտիլը յանշափա ուրախանալով ելաւ և զիմաւորեց զայն :

Տիկին Շարլ իր աղջկան ճակատը համբուրեց կամոզին և Տօրա իր մօրը ձեռքը :

Երկուքնին ալ նստան բազմոցին վրայ և քառորդ մը լռութեամբ անցնելէ յետոյ տիկին Շարլ՝ որ լռութեան մէջ զՏօրա կը գիտէր , երբ նա մտախօս գլուխը ծուած էր , տեսնելով անոր գիմաց անօրինակ փոփոխութիւնը և գունատութիւնը , չկրցաւ իր արցունքը զսպել և սկսաւ հեծկտալով արտասուել :

Տօրա սլծափեցաւ իր մտածութենէ տիկին Շարլի հեծկտալը լսելով և անհամբերութեամբ հայեցուածքը իր մօրը ուղղելով հարցուց .

— Ինչո՞ւ կ'արտասուէք , մայր իմ , մի՞թէ իմ ներկայութիւնս է զձեզ խռովողը . եթէ այդպէս ըլլալը զիտնայի՛ կը մերժէի ձեր առաջարկութիւնը թէ և մեծ երջանկութեան մը աւետիս ըլլար ինձ :

— Մի՛ խռովիր , Տօրա՛ , իմ արտասուքս տեսնելով , քու բնութեանդ բարութիւնը և սրտիդ ազնուութիւնը ու վեհութիւնը ճանչնալէս վերջը չեմ կարող կեղծ ու պատիք խօսքերով և շարժումներով երևիլ քեզ : Այո՛ , պէտք են ար քցսուել այս աչերս ՚ի փո-

խարին այն արցունքներու և վշտերու՝ որոնց պատճառ եղաւ այս իմ կարծր և անզուժ սիրտս :

— Ի՞նչ ըսել կուզէք , մայր իմ :

— Ըսել կուզեմ որ որովհետեւ ես գքեզ շատ վշտայուցի՛ իրաւունք է որ ես ալ վիշտեր կրեմ : Այլ Տօրա իմ վշտերս դուն միայն կրնաս անհետել , դու միայն կրնաս ազատել զիս այն անստոյգ և անտանելի վիճակէն՝ ուր կը գտնուիմ հիմա իմ անխոհեմութեանս պատճառաւ : Տօրա՛ , դուն զիս ամեն վշտերէ , մտածութենէ , թըշուառութենէ և նոյն իսկ մահէ , այժ՛ , ստոյգ և սոսկալի մահէ պիտի կրնաս ազատել եթէ մի միայն առաջարկութիւնս ընդունիս :

Տօրա կ'զգար որ իր մայրը հակառակութենէ բոլորովին դադրած էր՝ այսու ամենայնիւ իմացաւ որ իր առաջարկութիւնը ի՛նչ որ ալ ըլլար պիտի չկրնար ընդունիլ :

Աստի ըսաւ իր մօրը ,

— Խօսեցէ՛ք :

— Բայց նախ և յառաջ , Տօրա՛ , ո՛հ , յանուն Աստուծոյ կը պարտաւորեմ գքեզ ընդունելու խոստում ընել :

— Մայր իմ երգմամբ մի՛ բռնաբարեր իմ որոշելու իրաւունքս :

— Ո՛հ , Տօրա՛ , նպաստաւոր է քեզի համար :

— Աւրեմն քանի որ նպաստաւոր է ինձ , ի՛նչ հարկ կայ յառաջուց երգմամբ պարտաւորել զիս ընդունելու . միթէ այնչափ անխեղք եմ որ իմ բարիքս իսկ մտածելու կամ որոշելու անկարող ըլլամ :

— Բայց կը կասկածիմ որ չի մերժէք :

— Աւրեմն քանի որ ձեր առաջարկութեան մերժուելուն վրայ կասկած ունիք՝ ըսել է ինձ նպաստաւոր չէ , և ինձ նպաստաւոր չըլլալով ինչպէ՛ս կուզէք զայն գործադրելու համար ինձմէ երկում առնուլ :

— Ո՛հ , Տօրա՛ :

— Խօսեցէ՛ք համարձակ . ի՛նչ հարկ կայ երկարելու :

— Լա՛ւ , սկսիմ ուրեմն , Տօրա՛ , զիտես որ ես ժամանակաւ եքեռ քանի մը օր յառաջ գքեզ քու սէրէդ դադրեցնելու համար սե՛

պօրինաւոր միջոցներու գիմեցի . գիտես որ քու թշնամիներուդ առաջինը եղայ . գիտես որ քու իրաւացի բարկութեանդ , գժգոհութեանդ , և թերեւ չարամաղթութիւններուդ արժանի եղայ . գիտես որ զքեզ քու որոշումէդ խախտելու համար միջոց մը չինայեցի թէ և ապօրինաւոր և ստորին . բայց , Տօրա՛ , հարկ է քեզ իմացնել այս ի՞մ նախկին ընթացիցս պատճառք : Առաջին՝ որ քու ընտրած անձդ ըստ ամենայն մասին քեզ անյարմար էր . երկրորդ՝ որ քու ամուսնութեանդ համար հարկ եղած յարմարութիւնները չունէիր . երրորդ՝ որ զաղանի կերպով հաղորդակցութիւն հաստատելիր Էտուարի հետ , և այս վերջինը գիտե՛ս ի՛նչ նշանակութիւն ունի մեր ազգին մէջ . զաղանի հաղորդակցութիւնը և սիրահարութիւնը , Տօրա՛ , պատուաւոր օրիորդի մը արժէքը խիստ կը կտրէ և անոր անունը խայտառակութեամբ ամենու բերանը կը ձգէ : Չէի ուզեր , Տօրա՛ , այսպիսի ծանր պարագայի մէջ թէ քու և թէ իմ անուանս արատ բերելու համար քեզի համամտիլ . հարկ էր հակառակիլ , և հակառակեցայ , ռատի և կրնաս գուշակել որ ես ալ իմ բռնած ընթացքս արդարայնելու համար զօրաւոր պատճառներ ունէի , պատուո՛յ ինզիր , Տօրա՛ , պատուո՛յ , թէ ինձ և թէ քեզ համար :

— Չարմանակի կը թուին ինձ ձեր խօսքերը , մայր իմ . այլ քանի որ դուք ձեր սիրտը պարզեցիք՝ հարկ է որ ես ալ իմն պարզեմ : Էտուարի վրայ ունեցած կարծիքդ բոլորովին սխալ է . ի՛նչ բանի վրայ կը կայացնէք , մայր իմ , երիտասարդի մը ամուսնութեան արժանաւորութիւնը կամ յարմարութիւնը . միթէ հարստութեան , ո՛հ , ի՛նչ հաճոյք կ'զգան արդեօք այնչափ բազմաթիւ հարուստ անձեր՝ որոնք երջանակութեան ճաշակը առած չեն փոխադարձ սիրով կապուած չըլլալուն համար . որչափ ապաշուներու և զըլումներու ենթարկուած են անթիւ երիտասարդներ՝ որոնք ամուսնութեան ժամանակ մարմնոց կատարելութեանց միտ գրած են և ոչ հոգւոյն , և որոնք մարմնոց գեղեցկութեան վատթարած միջոցին դադրեցուցած են նաև իրենց զազանային սէրը . այո՛ , զազանային սէրը , վասն զի այս օրինակ սէր միայն անբաններու յատուկ է . որչափ զանազան թշուառութեան և ասերջանակութեան հանդուստ էն բազ-

մաթիս անձեր՝ որոնք առանց փոխադարձ սիրոյ կամ առանց մէկ մէկու բնաւորութեան տեղեակ ըլլալու ամուսնացած են իրարու հետ : Էսպայն սէրը , մա՛յր իմ , կը մերժէ մարմնոյն թերութիւնները , այլ մարմնոյն սէրը այնչափ կոյր է՝ որ անկարող կը գանուի հոգւոյն թերութիւնները մերժելու : Մեր սէրը , մա՛յր իմ , մեր հոգւոյն ծնունդն էր և ոչ մեր զգայական մտութեանց արդիւնքը . հազիւ մեր հոգիները զիրար ճանչցան՝ և ահա մէկզմէկ սիրեցին : Մեր սէրը հարստութիւն , փառք և պատիւ զանելու համար չէր . այլ իրական երջանկութիւն , որ պիտի կատարուէր մեր երկոքնուս միաւորութեամբ . մեր սէրէ գուրս փառասիրութիւն չպիտի ըլլար մեզի համար , և մեր երջանիկ սիրոյ մէջ թշուառութիւնը յախտեանս մուտք չպիտի գտնէր : Ասոնք մտային ցնորքներ կամ բորբոքեալ երեւակայութեան մը զգոնացումներ չի համարիք ընտ . եթէ Կտուար կենդանի ըլլար , ափսո՛ս , եթէ Կտուար կենդանի ըլլար հիմա , և դուք ձեր այդ ներկայ վարմունքը շարունակէիք , պիտի տեսնէիք որ իմ ամեն ըսածներս իրականութիւն պիտի գտնէին . պիտի տեսնէիք որ ձեզ ցնորք երեւածները աներկրայելի ճշմարտութեան պիտի փոխառէին , պիտի տեսնէիք որ ցնորեալ երեւակայութեան մը ծնունդ համարուած կարծիքներ՝ պիտի գործադրուէին : Ա՛հ , մա՛յր իմ , շատ ուշ արթնցար . Կտուար մեռած է և ինձ համար ալ ամեն յոյս և երջանկութիւն կորսուած են :

— Կտուար մեռած է , այո՛ . բայց ձեզ համար չէ թէ անպտահելի յուսոյ՝ այլ իրական երջանկութեան գուռեր բացուած են , ուրկէ հարկ է որ մտնէք և պիտի մտնէք անտարակոյս :

— Դ՛նչ ըսել կ'ուզէք , մա՛յր իմ :

— Ըսել կուզեմ՝ Տօբա՛ , թէ քանի որ Կտուար մեռած է հիմա , զոր , հաւատա՛ ք ճշմարտի կ'ըսեմ , ներկայ ժամուս մէջ զուակնբուս վրայ ունեցած սիրոյս հաւատար սիրտը կը սիրեմ . արդ քանի որ Կտուար մեռած է՝ յիմարութիւն պիտի ըլլայ քեզի ողբալ վիշտ մը՝ որ անդարմանելի է , և արհամարհելու մերժել ապագայ մը՝ որ խիստ փայլուն է . և որուն առ թէ լիք բերկրութիւնները պիտի մոռցնեն քեզ անտարակոյս անցելոյն դատն յիշատակները :

—Այո՛, մայր իմ, կը յուսամ որ քիչ տունէ պայծառ և յուսալի ապագայ մը պիտի ունենամ — ըսաւ Տօրա մաախոհ :

—Անտարակոյս — պատասխանեց ակիին Շարլ կարծելով որ իր աղջիկը սկսած էր համաձայնիլ իր դիաաւորութեան, բայց չկրցաւ Տօրայի արտասանած խօսքերուն զարհուրելի իմաստը ըմբռնել :

—Մայր իմ, կ'ազաչեմ պարզեցէ՛ք ինծի համար դամ՝ ապագանիդ :

—Տօրա՛, ինչպէս ըսի, մեռած անձէ մը յոյս չսպասիր. հետևաբար անոր համար օրեր թշուառայնել յիմարութիւն է : Հիմա, Տօրա՛, որովհետև անկարելի է քեզ վերստին էտուարը գտնել աշխարհիս վրայ՝ ընտրէ՛ տրիշ մը բոլորովին ազատ կերպով և սրտիդ ախորժածին միտ գնելով, և աներկմիտ եղիր որ ո՛վ որ ալ ըլլայ պիտի ընդունուի իմ զուակացոյ մէջ :

Տօրայի գէմքը խոժոռեցաւ տիկին Շարլի այս խօսքերուն վրայ, այլ տեսնելով իր մօրը այսչափ քաղցրութեամբ և սիրով իր հետ խօսիլը՝ մէկէն փոխեց իր դիմաց խոժոռութիւնը և ժպտով, ո՛հ, թշուառութեան դրոշմը կրող ժպտով մը ըսաւ .

—Մայր իմ, անկարելի բաներու վրայ մի՛ մտածէք, էտուարի նուիրուած այս սիրալը անկարելի է որ տրիշն նուիրուի : Գուք իմ խօսքերուս իմաստը չկրցաք ըմբռնել անտարակոյս որ ասանկ անընդունելի առաջարկութիւն մը լղկք ինձ, ուրեմն բացատրեմ, այո՛, քիչ ատենէ պայծառ ապագայ մը պիտի ունենամ՝ բայց ոչ երկրիս վրայ, հո՞ն երկնից մէջ՝ ուր էտուարս ինձ կ'սպասէ և ուր ես ալ երթայով անոր հետ անտարակոյս յարիտենասպէս պիտի զուգիմ. ասոր աներկմիտ եղիր, մայր իմ : Եթէ դուն իմ վիճակիս ինչ ըլլալը իմանալով քու ընթացքդ փոխեցիր՝ ես ալ իմ վիճակիս վրայօք տեղեկութիւն ունիմ, և ալ ինծի համար, սիրելի մայր իմ, աշխարհիս մէջ երջանկութեան առարկաներ մի՛ վնասուէք. ինչ որ ալ ըլլան քու երջանկութիւններդ և խոստումներդ պիտի չկրնան այրած սիրտս վերակենդանայնել. — որմէ վերջը վեհութեամբ և պայծառութեամբ լի գէմքով ըսաւ առանձին . «Ո՛չ անկարելի է որ Տօրա իր սէրը էտուարի նուիրելէ յետոյ ուրիշի ալ նուիրէ :

Տիկին Շարլ Տօրայի այս խօսքերը լսած ժամանակ գոգցես կայծա-
ֆէ զարնուածի պէս եղաւ :

Մէկէն իր նստած տեղէն փլելով և իր մայրական արժանապատ-
ւութիւնը մոռնալով փարեցաւ Տօրայի ծնոց և գոչեց խելայեղիալ
անձի մը պէս :

— Ո՛հ, Տօրա՛, դժա՛ մօրդ սր քաւ յամառութեանդ պատճառաւ
զարհուրելի ապագայ մը պիտի ունենայ :

— Ժամանակին իմ վրաս դժայող մը չեղաւ, մայր իմ, և չի-
մա ես ուրիշի՞ դժամ ինք լինքս թշուառացելով :

— Ո՛հ, Տօրա՛, դժա՛ — կը մրմնջէր տիկին Շարլ չեծկտալով :

— Ես որ արդէն թշուառութեան մէջ ինկած եմ ինչպէս կրնամ
դժալ վրագ, մայր իմ, երբ դուք ձեզ սպառնացող գաժաբերա-
պագայէն չեռի կը գանուիք :

— Ընդունէ՛ առաջարկութիւնս, Տօրա՛, և մի յամառութիւն
բանեցնե՛ր :

— Անհնար է, մայր իմ, այդ անկարելիութեան վրայ բնաւ մի՛
մտածէք :

Տիկին Շարլ տեսնելով որ անհնար էր Տօրայի անյողողող և
զարհուրելի գիտաւորութիւնը խախտել՝ սեննակէն դուրս ելաւ գող-
ղզալով :

Տօրա կատարեալ երջանիկ էր վասն զի իր գիտաւորութեան հա-
կառակողները վերջապէս նուաճուած էին :

ՔԼՈՒԲ ԺԲ.

Վ Ե Ր Ա Գ Ա Ր 2

Ինչպէս բխնք Տօրայի սիրաբ լափող զարհուրելի հիւանդու-
թիւնը արագութեամբ կը յառաջանար :

Այս ստեղծելի հիւանդութիւնը՝ որ սկսած միջոցին խիստ անդղտլի է աննշան և փոքրիկ անհասկացողութիւններ պատճառելուն համար, արմատանալէն վերջը աննուաճելի կ'ըլլայ և ամեն բժշկական գեղեր և հնարքներ չեն կրնար անոր առջևը առնուլ :

Արդէն շատունց սկսած էր իր սրտի անհասկացողութիւնն ու դիտու տաքութիւնը . այլ պարագաները այնպէս բերին որ այս անհասկացողութիւնը կարծես սնունդ առաւ և մէկէն իր զարհուրելի ներգործութիւններովը երևան ելաւ :

Հարկ է իմացնել որ սրտի անբուժելի հիւանդութեան ենթարկեալ անձի մը վիճակը ժամանակէն յառաջ կը վատթարի եթէ վիշտեր և մտածումներ անոր միացած ըլլան . և մեծ գիտողութիւններով փորձուած է որ յուսահատութիւնը, անդարմանելի վշտերը և մահաւանդ ապերջանիկ սիրահարութիւնը մեծ և զօրաւոր պատճառներ կ'ըլլան այս անբուժելի հիւանդութեան ենթարկուելու :

Իր շարպուշակ հազը արդէն սկսած էր, գլուխը թեթեւ ցաւ մի կունենար, ախորժակը տկարացած էր, սիրտը անհանգստութեան մէջ ըլլալուն շնչառութեանը մեծ դժուարութիւն կուտար, ծնոցերը, ո՛հ, այն առոյգ և զօրաւոր ծնոցերը սկսեցին վատոճնալ, իր զանազան տկարութեանց համեմատ կերպարանափոխ եղած էր նաև իր դէմքը :

Տիկին Շարլ յաճախակի բաց տեղեր ժուռ ածելու կը տանէր զՏօրա, գիտնալով որ ազատ և զով ոչը անոր տկարութիւնը և վատթուրութիւնը բաւական կը կազդուրէր :

Օր մը երբ վերատին առաջարկեց Տօրայի ընտանեօք հանդերձ ճեմնելու՝ Տօրա իր մօրը թեկէն բռնելով բերաւ զայն հայելին առջև և բտաւ :

— Մայր իմ, նայէ՛ հայելին մէջ, գիմացս այսչափ նիհարութիւնը և զուստութիւնը տեսնելով ի՞նչպէս կ'առաջարկես ինձ բաց օդին ճեմնելու :

Ահա՛ այս կերպ Տօրա իր վիճակին վրայ ուրիշներէ աւելի տեղեկութիւն ունէր :

Բաց ընթերցողը թող հաճի մեզ հետ թողուլ սու այժմ զՏօրա

և դատուղ մեզ արդէն ծանօթ եղող երեք անձերու :

Ռօտուլֆ, Ալֆօնս և Ատուլֆ ծովեզերքը սրճարան մը նստած էին, որ տաքութեամբ կը խօսէին իրարու հետ հեռուեալ կերպով :

— Պարոններ — ըսաւ Ռօտուլֆ, — այս պարագան բաւական ծանրակշիռ է . բոլոր Զ . . . քաղքին մէջ տարածուած է թէ Կտուար մեռած է . այսպիսի տարածայնութիւն մը ինձ կասկած կը պատճառէ . անտարակոյս սուանց պատճառի չկրնար ըլլալ . պէտք է ստուգել ասիկա :

— Այո՛ — ըսաւ Ատուլֆ, — և ես կը զարմանամ այս տարածայնութիւններու վրայ, երբ կը մտածեմ թէ ինչպէս կրնայ ըլլալ որ Կտուար մեռած ըլլայ քանի որ անցեալ շաբաթ տակաւին իր մէջ նամակ ընդունեցայ, միթէ մէկ շաբթուան մէջ Կտուար այսչափ ծանրացաւ և մեռաւ :

— Պարոն — կրկնեց Ռօտուլֆ, — մէկ շաբաթը երբեմն անկարելիութիւններ կ'ընէ : Գուցէ դիպուածով, կամ անխոհեմութեամբ և կամ այս մէկ շաբթուան մէջ իր վիճակը ծանրանալով իրեն մահը փութացուցած է և նամակէ յառաջ հեռագիրը բերած է այս գուժարեր լուրը, միթէ անկարելի է ասիկա :

— Ո՛վ կրնայ ըսել թէ անկարելի է, բայց երանի՛ թէ ձեր ենթագրութիւնները սխալ ըլլային :

— Տա՛յր Աստուած որ այդպէս ըլլային, բայց մենք հիմա պէտք չենք ստուգել ասիկա :

— Անտարակոյս — պատասխանեց Ալֆօնս, որ ցայն վայր մտախոհ քառ մը արտասանած չէր :

— Ուրեմն ինչպէս ստուգել պէտք է ասիկա :

— Քալեցէք հեռագրատունը և հոն հեռապիր զարնեք և իմացընենք նաև պատասխանին անյապաղ ղրկուիլը :

— Քա՛ջ է, քալեցէք ուրեմն, երկու ժամէն մեր անհանց ստութիւնը վերջ պիտի ունենայ :

— Երանի՛ թէ յաջող լուր մը առնէինք :

— Աստուծով այդ կերպ կ'ըլլայ :

Երեքնին միտտեղ ելան հեռագրատունը գացին և որպէս զի ե-

Թէ՛ Էստուար կենդանի բլլար այսպիսի շուտափոյթ հեռագիրէ մը կասկածի չեմթար՝ պատուիրեցին այս կերպով քաշել հեռագիրը :

« Պ. Էստուար : ո՛ր օրը մեկնելէիք Էմայա՛ր մեզէ : »

Եթէ՛ ասոր պատասխան մի չի դարձ այն ատեն հեռագրատան սաշտօնատան պիտի իմացուէր անոր վիճակին վրայօք անյապաղ տեղեկութիւն տալ :

Բայց բարեբաղդաբար երկու ժամէ՛ հետեւեալ պատասխանը ընդունեցան :

« Ես մեկնելէս քէտէ՛ք : Կարգէալ առողջ ըլլալու : Վաղը առաստօր ոչորէ մեկնէ՛ք Ձ՛ր . . . քաղցին համար :

ԷՏՈՒՆԻ

Այս աւետարիւր պատասխանին վրայ մեր երեք բարեկամաց ուրախութիւնը անսպասան եղաւ :

Ալֆօնս գիտէր աիկին Շարլի և Տօբայի մէջ պատահած դէպքերը , ուստի անմիջապէս աիկին Շարլի հետ խօսելու համար իր բարեկամներէ թողլտուութիւն խնդրեց և հեռացաւ աննոցմէ :

Հինգ վայրկեանէ հասաւ իր առաջագրած տեղը և դուռը զարնելով մանրեղկորդէ մը աիկին Շարլի ներկայացաւ :

Ալֆօնսի դիմնոց վրայ տարօրինակ ուրախութիւն մը կար :

Տիկին Շարլ տեսաւ այս ուրախութիւնը բացորոշ , ուստի և զարմանքով հարցոյց .

— Ի՞նչ է այն , Պ. Ալֆօնս , կրնամ քու այդ դիմնոց տարօրինակ զուարթութեան պատճառը իմանալ :

— Տիկին , աիկին , Էստուարի մահը սուտ աւաճայնութիւն մ'է եղեր :

— Ի՞նչպէս :

— Երբ մենք ալ լսեցինք այս ձայները քանի մը անձերէ՛ զարմացանք , վասն զի դեռ քանի մը օր յառաջ ես և իմ մէկ քանի բարեկամներս անորմէ նամակ ընդունած էինք :

— Պ. Ե՛րջը :

— Կասկածելով որ յանկարծական զժբողդու թիւն մը կրնար Լուսուարի մահ պատճառած ըլլալ՝ մեր սոսկալի անստուգութեան և մըտատանջութեան վերջ տալու համար իրեն հեռագրեցինք :

— Եւ պատասխան առ ի՞ք :

— Այո՛ :

— Եւ որով :

— Կոյն ինքն Լուսուարէ : որ կ'իմացնէր մեզ իր առողջութեան կատարելագէտ վերստանալը և մէկ օրէն հոս գալու համար՝ քաղաքէն մեկնելու աւետարեք լուրը :

— Ո՛հ : Այո՛ Եւրֆօնս : Աստուած վարձահատոյց ըլլայ քեզ, զիս մեծ վշտերէ ազատեցիր :

— Այո՛, այո՛, կը հաւատամ ըսածնուդ, տիկին : բայց կ'աղաչեմ՝ այս բերկրառիթ լուրը յանկարծակի մի՛ իմացնէր Տօրայի, գուցէ այսպիսի անյուսակ լուր մը յանպատրաստից լսելուն անհանգիստ ըլլայ :

— Ո՛հ : այո՛, ապահով եղի՞ք :

Եւրֆօնս մեկնեցաւ և տիկին Շարլ Տօրայի առանձնասենեակը յառաջացաւ ուղղակի և սովորականին պէս զայն վերստին մտախոհ բազմոցին վրայ նստած դտաւ :

— Ե՛հ, Տօրա՛ — ըսաւ տիկին Շարլ բռուն ջանադրութիւն մը ընելով իր դիմաց վրայ երևած անսպասան տրտութիւնը անյայտ ընելու համար . — Ե՛հ, Տօրա՛, ըսէ՛ նայիմ : Ի՛նչ բաներու վրայ կը մտածես այդպէս խոհուն կերպով :

— Ի՛նչ բաներու վրայ կրնամ մտածել, մայր իմ, միթէ չէ՞ք գիտեր, մի միայն յախտենականութեան վրայ :

— Եւ ինչո՞ւ այդպէս միշտ յախտենականութեան վրայ կը մտածես : միթէ այդպէս շո՛ւտ ձանձրացար աշխարհէս որ կ'աճապարես այդչափ շուտ յախտենականութիւն երթալու ուր ժամանակին ամենք՝ նիս ալ պիտի երթանք :

— Իմ ժամանակս հասած է արդէն :

— Եւ ի՛նչ է այդ կարծեացդ պատճառը :

— Արովհեստե Էտուար մեռած է՝ ինչ համար ալ աշխարհս անբերութեամբ է :

— Չարմանալի բան , Տօրա՛ , դիտէի քու սիրոյդ տարօրինակութիւնը . բայց այդչափ բուռն ըլլալը չէի հաւատար . միթէ ստուղիւ այդ աստիճան կը սիրէի՞ր զԷտուար :

Տօրա երթալով ապշութեամբ և զարմանքով կը պաշարուէր իր մօրը այսպէս հանդարտութեամբ և պաղութեամբ խօսիլը անսնելով :

— Միթէ ատոր տարակոյս կա՞յ — պատասխանեց Տօրա՛ :

— Այո , եսթաղրեմք թէ Էտուար կենդանի ըլլար , ինչ պիտի բնէիր :

— Պիտի երջանկանայի :

— Ի՞նչ կերպով :

— Ի՞նչ կերպով որ ըլլար :

— Ատիկա սխալ կարծիք մ'է . բայց , Տօրա՛ , որովհետեւ եսթաղրութեան մէջ ենք , եթէ զքեզ մերժեր ինչ պիտի բնէիր :

— Փոյթ չէ իր կենդանութիւնը միայն կարող սքտիք ըլլար իմ թշուառութիւններս անհետելու :

— Ուրեմն , Տօրա՛ , թողունք եսթաղրութիւնները և դառնանք ճշմարտութիւններու . սիրադ ամուր բռնէ՛ , վասն զի երջանկութեան անյուսալի լուրերն ալ շատ անդամ թշուառութեան ստիպի գոյժերու նման ներգործութիւն կ'ընեն մարդուս :

— Խօսեցէ՛ք համարձակ , մա՛յր իմ , բոլորովին աներկմիտ եղիք ո՛ր և է դէպքէ՛ , պատրաստ եմ ձեր տալիք ուրախալի լուրը լսելու . . . բայց եթէ չեմ սխալիր՝ արդէն դու շակիցի :

— Ուրեմն , Տօրա՛ , աւելի աղէկ կ'ըլլայ եթէ դու խօսիս — ըստ սիկին Շարլ Տօրայի իր ըսելիքը դու շակելուն վրայ յանչափս ուրտխացած :

— Էտուարի մահը սուս է ըսել կուզէք արդեօք :

— Այո՛ , բայց ուրկէ իմացաք :

— Եւ ոչ մէկէ , միայն ձեր խօսքերը ինչ այս կարծիքը ստի՛նս :

քայց արդեօք ստոյգ է , մայր իմ , ո՛հ , յանուն Աստուծոյ ճշման
րիար խօսէ :

— Այս՛ Տօրա՛ , սոյահոյ կղիր , հոս եղած տարաձայնութիւն-
ները առտ են եղեր , Պ . Ալֆօնս , որ հեռագիր քաշելով խնայած
էր , նոյնը ինձ ալ եկաւ հասկցուց , ասկէ զատ վաղը հոս դալու
համար Պ . . . քաղքէն ճամբոյ պիտի ելլէ եղեր :

Աւայրկենի մը մէջ Տօրայի դէմքը կերպարանափոխ եղաւ , ման-
րերկրորդի մը մէջ իր դունատութիւնը անհետացաւ և իր այտերը ի-
րենց նախկին կայտառութիւնը վերստացան :

— Ո՛հ , մայր իմ , յանչափս շնորհասարտ եմ . եթէ այս ստոյգ
ըլլայ՝ պիտի չհակառակիս ինձ անշուշտ , այնպէս չէ :

— Ամենեին , Տօրա՛ , պիտի տեսնես ասկէ վերջը որ ես քու եր-
ջանկութեանդ համար քեզմէ աւելի պիտի աշխատիմ :

Տօրա իր մօրը ձեռքը քաշեց համբուրեց ու երախտադիտութեան
և ուրախութեան արցունքներով թռչեց զայն :

— Տօրա՛ — յարեց տիկին Շարլ , — ես քեզմէ աւելի երջանիկ
եմ գբեզ երջանիկ տեսնելուս , առայժմ կը թողամ գբեզ քու
պայծառ յոյսերուդ և մտածմանցդ մէջ և կը հեռանամ քեզմէ :

Կարծես մէկ վայրկեանի մէջ Տօրայի բոլոր մարմինը նախկին ա-
ռուգութեան դարձաւ , զլիտ , սրտի և մարմնոյ այլ և այլ մասե-
րու անհանգստութիւնները բոլորովին անհետացան : Ալ այնուհետե-
ղարհուրելի կ'երևէր իրեն մահ՛ը՝ որու զեռ ժամ մը յառաջ անձ-
կանօք կ'սպասէր , բոլորովին պայծառ յոյսեր և մտածումներ իր միտքը
չըջապատած էին և երեք օրուան մէջ ամենեին անհանգստութեան մը
հետքը չի մնաց , վասն զի Կառուարի կենդանութեան րերկրառիժ
լուրը մեծ ազդեցութիւն ըրած էր իր սրտին :

Միայն իր զիմաց կայտառութիւնը որչափ որ վերադարձած էր ,
իբր այտերու վրայ , գունատութեան փորձիկ նշան մը անջնջելի մնա-
ցած էր :

Երեք օր խիստ երջանկութեամբ և առանց վշտալի դէպքի անցաւ :

Երրորդ առաւօտ , որ Կառուար պիտի գար , Ռօստոլֆ , Ալֆօնս
Ատոլֆ , Քարլ և Պէրնար , սրանց վերջի երկուքին Կառուարի եղբայր

ները ըլլալը գիտեն ընթերցողք , խիստ կանուխ ծովեզերք գացած էին և տեսնելով որ շոգենաւը բաւական մօտեցած և խարխիս ձգելու վրայ էր՝ անմիջապէս նաւակ մը նստան և հինգ վայրկեանէ հասան շոգենաւը :

Ամենքը մէկէն զարմացան յանկարծ Էտուարի քաջատողջ վիճակը և գիմաց զարմանալի կայտառութիւնը տեսնելով :

Մէկէն անոր վզէն փաթթուեցան , կաթողին համարոյցին զայն : Վերջապէս ըրին ինչ որ բաւական ժամանակէ յետոյ վերստին մէկզմէկ տեսած բարեկամներ կ'ընեն : Իրենց սրտին ուրախութիւնը լիովին յայտնելու համար միջոց մը ձեռքէ չէին թողար :

— Այսպէս ուրեմն , սիրելիդ իմ Էտուար — ըսաւ Ալֆօնս — վերստին գտանք մէկզմէկ . շիտակը ըսելու համար ամենևին չէի յուսար որ այսչափ առողջ և կայտառ պիտի տեսնէի զձեզ :

— Իրաւունք ունիք այդ մասին , բայց Պ . . . քաղքին առողջարար օդին վրայ զաղափար մի չունենալնուդ համար կարծեմ այդ կերպ կը խօսիք . եթէ այս օդափոխութիւնը չընէի և հոս մնայի հաւատացէ՛ք : որ վիճակս չի բարւոքելէ զառ թերեւ վատթարէր . ահա՛ Պ . Ատոլֆը որ կրնայ ըսածս ստուգել :

— Ճշմարիտ է — ըսաւ Ատոլֆ — օդաւէտութեան մասին Պ . . . քաղքին նման շատ քիչ քաղաքներ կը գտնուին :

— Իրաւունք ունիք — յարեց Ռօտոլֆ , — և անտարակոյս այս պատճառաւ պարոն Էտուարի առողջութիւնը այսչափ կատարելագործուեր է քիչ ժամանակուան մէջ :

— Անշուշտ :

Այս խօսակցութիւնները հազիւ լրացած էին , երբ-Քարլ և Պէրնար , որ Էտուարի սնտուկները առնելու զբաղած էին , եկան իմացուցին որ սնտուկները նաւակ փոխադրուած ըլլալուն կրնային իրենք ալ միկնել :

Ամենքնին միատեղ նաւակը նստան և քանի մը վայրկեանէ ցամաք ելան :

Էտուարի Չ . . . քաղաքը հասնելուն երրորդ օրը Պ . Ալֆօնս կանչուեցաւ տիկին Շարլի կողմէ :

Ալֆօնս փութաց երթալու :

Տիկին Շարլ առանձին սենեակ մը տարաւ զայն , և Տօրայի վիշակը մանրամասն նկարագրելէ , անոր արագային սպառնացած թըշուառութիւնը և առ էտուար ունեցած սիրոյն տարօրինակութիւնը յայտնելէ յետոյ ըսաւ .

— Պարոն Ալֆօնս , երբէք Տօրայի վրայօք խօսք բացի՞ր էտուարի հետ :

— Գեո. ոչ :

— Եւ միթէ ինքն ալ տմենին խօսք մը չըսա՞ւ :

— Ո՛չ :

— Ի՞նչպէս կը դանես զինք , Պ. Ալֆօնս :

— Ինչ որ խօսիմ՝ կընայ ըլլալ որ սխալած ըլլամ , տիկին :

— Եւ ինչո՞ւ :

— Վասն զի տակաւին այնպիսի պարագայ էր չպատահեցաւ , որով կարենայի իր այս կէտին վրայ ունեցած դիտաւորութեան ինչ ըլլալը իմանալ :

— Ուրեմն ի՞նչպէս պիտի յաջողիս :

— Այդ մասին աներկմիտ եղիւր , տիկին , առանձին տեսութիւն մը պիտի ընեմ իր հետ այս կէտին վրայօք , և անտարակոյս մեր տեսութեան հետեւութիւնը քեզ կ'իմացնեմ :

— Քա՛ջ է , բայց այդ տեսութիւնը որչափ շուտ ըլլայ՝ այնչափ օգտակար է :

— Անտարակոյս և ես վաղը իրիկուն քեզ կ'իմացնեմ :

— Պ. Ալֆօնս , երախտապարտ եմ :

— Ոչինչ բան մ'է ընելիքս :

— Ո՛չ հաւատի եղիք որ ինձի համար մեծ արժէք ունի :

— Ուրեմն մնաք բարեաւ :

— Ի կրկին տեսութիւն , աղնիւ Պ. Ալֆօնս , յուսամ ժամադրութեանդ մէջ ճշդութիւն պիտի պահես :

— Աներկմիտ եղիք :— Ըսելով մեկնեցաւ տիկին Շարլի տունէն և Պ. էտուարի երթալով նոյն իրիկուն առանձին տեսութիւն մը խնդրեց իրմէ :

էտուար հաճութեամբ ընդունեց զայն :

ՊԼՈՒԻ ԺԳ՝

Ա Ն Տ Ա Ր Բ Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Խոռար գուշակեց Ալֆօնսի իր հետ տեսութիւն մի խնդրելուն՝
պատճառը :

Արդէն Տօրայի վիճակին վրայօք լիովին տեղեկութիւն ունէր և
կզգար որ աղմկալի ապագայ մ'իրեն համար կը պատրաստուէր :

Իր անցեալը իր մտայ մէջ աղէկ տպաւորուած ըլլալուն, յիշեց
իր յարաբերութիւնները, խոստումները, ժամագրութիւնները, վեր-
ջապէս երդումը, այն զարհուրելի երդումը՝ որով կը պարտաւորէր
յմահ սիրելու զՏօրա . այս ամենու վրայ կը մտածէր, կը տեսնէր
պատճալի ներկայն՝ որ իր անցեալ անխոհեմութեան ծնունդն էր, կը
քննէր իր կացութիւնը՝ որ բոլորովին անյարմար էր իր խոստումը
գործադրելու : Իր նիւթական, մարմնական, բարոյական, այո՛, բա-
րոյական թերութիւնները մեծ արգելք կ'ըլլային այսպիսի գիտաւո-
րութեան մը :

— Է՛հ — կըսէր իւրովի : — Ի՞նչ այսչափ մտատանջութիւն, մի-
թէ կարելի է այսպիսի խոստումներու գործադրիլը . միթէ սիրահա-
րութեան մէջ ամեն ինչ ճշմարիտ կ'ըլլան . միթէ ժամագրութիւննե-
րու մէջ արուած ամեն ծիծաղելի խոստումներն ու ոխտերը միշտ
կը գործադրուին : միթէ օրիորդի ուղղուած սիրոյ ակնարկ մը կամ
խօսք մը միայն ամուսնանալու գիտաւորութիւն ունեցողները կ'ընեն :
միթէ այսչափ երիտասարդներէ բոլորն ալ այս տեսակ յարաբերու-
թիւններէ հեռի են : Զարմանք, ամենէ չհաւանած երիտասարդ իմի
հինգ կամ վեց օրիորդներու հետ յարաբերութիւն և՛ սիրահարու-

թիւն կ'ունենայ, և ինչ պէտք է հետևցնել ասկէ, միթէ նոյն ե-
 րիտասարդը պարտաւոր է անոնց ամենու հետ ամուսնանալ. զար-
 մանալի՛ բան. այն ատեն պէտք էր ուրեմն ամենեւին օրիորդի մը
 հետ չի խօսիլ և յարաբերութիւն չ'ունենալ, վասն զի ահաւասիկ
 բռնադատուած պիտի ըլլար ամուսնանալ որո՛ւ հետ որ խօսէր, կամ
 սիրոյ ակնարկներ ընէր. այսպիսի սովորութիւն մը անկարելի է
 Փոյթ չէ թէ Տօբա ինձ սիրահարած ըլլալուն կ'ուզէ հետս ամու-
 սնանալ. այլ ինք չզիտէր թէ երիտասարդի մը համար ինչ նշանա-
 կութիւն ունի ամուսնութիւնը. ինք չզիտէր թէ քսան կամ քսաննը
 կու տարեկան երիտասարդի մը համար ամուսնութիւնը օրերու թըշ-
 ուառութիւն է: Ինք զիս կը սիրէ եղեր, միթէ ես ալ պարտաւո-
 րուած եմ զինք սիրելու. ինք առանց ինձ պիտի թշուառանայ ե-
 ղեր, միթէ ես ալ պէտք է որ թշուառանամ այսպիսի անխոհեմ դործ-
 քի ձեռնամուխ ըլլալով: ո՛չ, ո՛չ, մարդ մը նախ և յառաջ պէտք
 է իր օգուտը մտածել և սպա ուրիշներ: Ես եթէ իրեն ծանօթա-
 ցայ, հետը յարաբերութիւն հաստատեցի, և երբեմնակի խոստում-
 ներ ըրի՝ ուրիշ նպատակաւ չէր բայց եթէ հաճելի զտաղում մի
 ունենալու համար: Ինք պէտք էր քիչ մ'այսպիսի դէպքերու ծա-
 նօթութիւն ունենալ. զիտնալ որ ըստ սովորութեան առանց նշան-
 տուքի ամուսնութիւն չըլլար, զիտնալ որ իր առջև ելող որ և է
 երիտասարդի պէտք չէր վտատհիլ. զիտնալ որ թէ երիտասարդ և
 թէ օրիորդ կրնան այս տեսակ յարաբերութիւններէ հաճոյք զղալ եթէ
 իրենց կոյր փառասիրութիւնը զսպեն. զիտնալ որ սիրահարութեան
 մէջ որ և է խոստումներ և ուխտեր անղօր կ'ըլլային և պէտք չէր
 այն տեսակ խոստումները բոլորովին ճշմարիտ կարծելով ընդունիլ:
 Զամբողջութենէ գեռես վերագարձայ, առողջութիւնս հազիւ ուրեմն
 բարուրեցաւ և ահա այս տեսակ գլխացառութիւններ կը պատրաս-
 տուին ինձ համար. քաջախբութիւն, և ոչ իսկ մտածելու արժա-
 նի խնդիրներ են. մերժե՛նք իր սէրը, ուրանանք ամեն բան, բոլոր-
 ըզովին անտարբերութիւն ցոյց տանք, և թողունք որ այս գլխացա-
 րութիւնը ինքնին անհետի: »

Ահա այս տեսակ խորհուրդներու մէջ կը գտնուէր իր միտքը

իր անխիղճ սիրտը՝ որ Տօրայի այնչափ վշտերու պատճառ եղած էր, իր ցոփութիւնը՝ որ անմեղի մը օրերը կը թշուառացնէր, իր նենգաւոր ուրացութիւնը և անտարբերութիւնը որ Տօրայի մահաբեր ապագան պիտի հաստատէին, ամենեւին խղճի տաղնապ մը չէին պատճառեր իրեն :

Այսպէս էտուար որոշեց Պ. Ալֆօնսի խօսքերուն անտարբեր մընալ և միշտ ժխտողական պատասխաններ տալ անոր :

Երեկոյեան ընթրիքէ յետոյ ժամը իննի միջոցներ Ալֆօնս էտուարի տուն գնաց ժամադրութեան համեմատ :

էտուար Ալֆօնսի խնդրանաց համեմատ առանձին սենեակ մը մտաւ անոր հետ :

Երկուքնին ալ նստան :

— Պարոն էտուար, դիտէ՞ք արդեօք ինչ պատճառաւ ձեզմէ առանձին տեսութիւն մը խնդրեցի — հարցուց Ալֆօնս :

— Ո՛չ, բայց կարծեմ՝ անցեալ քանի մը դէպքերու վրայ խօսելու :

— Աւելի ներկայ դէպքերու, այս ներկայ դէպքերը ձեր անցելոյն ծնունդն են, և մեծ յարաբերութիւն ունին ձեր անձին հետ :

— Ի՞նչ ըսել կուզէք :

— Ըսել կուզեմ՝ թէ ձեր այն անցեալ ընթացքը փոթորկալի ապագայի մը պատճառ եղաւ :

— Իմ ո՞ր անցեալ ընթացքս. պարզեցէ՛ք խօսքերնիդ :

Ալֆօնս իմացաւ որ էտուար փոխուած էր :

— Պ. էտուար, միթէ ստուգիւ չէք իմանար խօսքերուս ի՞նչ բան ակնարկելը, թէ կը կեղծէք :

— Աեղծելու հարկաւորութիւն չկայ Պ. Ալֆօնս, կը տեսնեմ որ բորբոքած կը խօսիք. ստուգիւ պարզեցէ՛ք խօսքերնիդ :

— Լաւ, Տօրայի համար ի՞նչ դիտաւորութիւն ունիք :

— Ի՞նչ դիտաւորութիւն ըսել կուզէք :

— Ի՞նչ որ խոստացած էք պիտի կատարէ՞ք :

— Ի՞նչ բան խոստացած եմ :

— Զինք սիրել և երջանկանայ :

— Ի՞նչ կը հետևի ատկէ :

— Կը հետևի որ խոստացած էք պատուաւոր ամուսնութիւն մը ընել :

— Ո՞ւր խոստացուած է ատիկա :

— Մի՞թէ չէ՞ք գիտեր :

— Այո՛, գիտեմ, բայց կ'ուզեմ գիտնալ նաև թէ դուք ալ գիտէ՞ք :

— Անտարակոյս . Պ . Բօլի պարահանդէսին և ուրիշ ժամանակ ալ ձեր ժամագրութիւններու մէջ :

— Լաւ , պարո՛ն , պարահանդէսի մէջ պատահած գէպքերու կամ խօսքերու ի՞նչ արժէք ունենալը գիտէ՞ք արդեօք :

— Այո՛, պարո՛ն :

— Գիտէ՞ք նաև թէ այն տեսակ հանդէսներու մէջ երիտասարդները ի՞նչ զգացում կ'ունենան :

— Այո՛, գիտեմ :

— Գիտէ՞ք նաև թէ նոյն տեսակ հանդէսներու մէջ առջև ելլող օրիորդին սիրար չվիրաւորելու և անխոհեմութեամբ երջանկութեան ժամը չկորուսելու համար ի՞նչ ընթացք կը բռնեն երիտասարդները :

— Այո՛, ալ գիտեմ :

— Գիտէ՞ք որ այս տեսակ յարաբերութիւններու մէջ երբեմն անկարելիութիւններ կը խոստացուին :

— Այո՛, գիտեմ :

— Գիտէ՞ք որ այն տեսակ խօսքերու անհիմն ըլլալը թէ օրիորդի և թէ երիտասարդք առ հասարակ գիտեն :

— Այո՛ :

— Ուրեմն , պարո՛ն , ի՞նչ պէտք է հետևիլ իմ խոստումներէ՞ ինքնին դատեցէ՞ք :

— Ըսել կ'ուզէ՞ք ուրեմն թէ ձեր բոլոր խոստումները կե՞ղծ էին :

— Անտարակոյս :

— Եւ մի՞թէ չի գուշակեցի՞ր թէ այսպիսի խոստումներու չի գո՞ր

Ճարդուելով զէշ հետևութիւններ կրնային ծագիլ :

— Կը տեսնեմ որ տղու պէս կը խօսիս . ընդհակառակը եթէ
գործարուէին՝ կրնային զէշ հետևութիւններ ունենալ :

— Եւ ինչո՞ւ — հարցուց Ալֆօնս զարմանալով :

— Վասն զի , պարո՛ն , ես պիտի թշուառանայի նիւթականի
պակսութեան , անչտիահասութեան և ուրիշ հազար ու մէկ խնդիր-
ներու պատճառաւ , հետևաբար ինձ հետ միացողն ալ պիտի թըշ-
ուառանար :

— Գ . Էտուա՛ր , խիստ տարօրինակ կը խօսիք , կ'երևի որ Տօրայի
անցելոյն վրայ տեղեկութիւն մը չունիք :

— Եւ ի՛նչ է Տօրայի անցեալը :

— Խիստ ազմկալի և տխուր օրեր անցուց ձեզ համար :

— Եւ ինչո՞ւ ինձ համար :

— Վասն զի ձեզ սաստիկ սիրահարած ըլլալուն և ձեր խոստումներու
չգործարուիլը տեսնելուն՝ որոնց համար ձեր հեռաւորութիւնը թէև
պատճառ կը բռնէինք , օգուտ մը չորաւ . իր ապագային համար խիստ
մտատանջութիւններ պատճառեց մեզ :

— Ի՛նչ փոյթ , միթէ պարտաորուած եմ խենթ աղջկան մը զա-
ռանցումները իրացնելու համար ինքզինքս կուրօրէն թշուառութեան
մէջ նետել :

— Գ . Էտուա՛ր , ինչո՞ւ քանի մը ամսուան մէջ այդկերպ փոխ-
ուեր ես , դուն որ զիս կը սաստէիր , երբ առ Տօրա ունեցած սի-
րոյդ թուլութեան վրայ կը խօսէի քեզ , հիմա պէտք է իր այդչափ
ցրտանալ :

— Գ . Ալֆօնս , բարեկամ ենք ուստի և վտահոթութեամբ ճշմա-
րիտը կը խօսիմ քեզ . այն ժամանակները տակաւին կը յուսայի
Տօրայի հետ երջանիկ ժամեր անցընել , ուստի և չէի ուզեր իմ սի-
րոյս պաղութեան յայտնուիլը . բայց հիմա , Ալֆօնս , իմ սիրտս
խիստ փոխուած է . քաշած երկարատև հիւանդութեանս պատճա-
ռաւ սիրոյ զգացումն բոլորովին թմրեր է , և հետևապէս ամենևին
փափաք մը չեմ զգար վերստին սիրահարական յարաբերութիւններ
հաստատելու : Ասկէ զատ այս իմ նախկին յարաբերութենէս պատ-

ճառած քանի մը գէտքեր համարձակութիւնս սեղմեցին , և հիմա կ'աշխատիմ բոլորովն հեռանալ Տօրայէ և մերժել իր սէրը , քան թէ երկրորդ անգամ իր հետ յարաբերութիւն հաստատելով բոլորովն վտանգաւոր կացութեան մէջ գտնուիլ :

— Բայց , պարոն , այդպիսի ցուրտ անտարբերութիւն մի Տօրայի մահատու հարուած մը պիտի ըլլայ :

— Եւ ինչո՞ւ :

— Վասն զի զձեզ չափազանց սիրելուն երբ ձեր մահուան աղետաբեր լուրը առաւ՝ քանի մը օրուան մէջ վիշտեր և յուսահատութիւն իր վիճակը այնչափ վատթարեցին՝ որ կուրծքի հիւանդութեան նշաններ երեցան իր վրայ , և հազիւ ուրեմն այս աղետալի նշանները անհետացան ձեր մահուան ստուծիւնը իմանալով :

— Իմ մահուանս — ըսաւ հտուար զարհուրած :

— Այո՛ , պարոն , ձեր մահուանս :

— Եւ ո՞վ հնարած էր ատիկա :

— Հով , ջուր , օդ , վերջապէս յայտնի չէ . բայց այս ստոյգ է որ զեռ ութ օր յառաջ բոլոր Ձ . . . քաղքին բնակիչները զքեզ մեռած կը կարծէին :

— Եւ գուր հաւատացի՞ք :

— Կասկածեցանք . ուստի և այն հեռագիրը՝ զոր Պ . . . քաղքէն մեկնելէ մէկ օր յառաջ ընդունեցար , մեր կասկածները ստուգելու համար քաշուած էր :

— Լաւ ուրեմն , հիմա՞ :

— Հիմա , պարոն , որ ձեր կենդանութեան աւետաբեր լուրը զայն վերակենդանացոց , աներկմիտ եմ որ ձեր այդ անտարբերութեան հարուածն ալ խիտա ազդու և մահաբեր պիտի ըլլայ իրեն համար :

— Ըսիք թէ , Պ , Ալֆօնս , Տօրայի վրայ կուրծքի հիւանդութեան նշաններ երեւած էին , այնպէս չէ՞ :

— Այո՛ , յառաջ , բայց հիմա նոյն նշաններու հետքը անգամ մը նայած չէ :

— Ալֆօնս , մի խարուիր , այս հիւանդութիւնը կը ննջէ այլ չի :

մեռնիր , կը ննջէ աւելի կատարութեամբ արթննալու համար . եթէ ըստուգիւ այդ նշանները տեսնուած են՝ կը հետեւի որ Տօրա անտարատուսելի կերպով կուրծքի հիւանդութեան ենթարկուած է : Գուք իմ բարեկամս ըլլալով ինչպէս կ'ուզէք համոզել զիս որ ինքզինքս այսպիսի թշուառութեան մը ենթարկելու համար ձեզ խօսք տամ :

—Ո՛հ , պարոն , ազահով եղիք որ ձեզ թշուառութիւն պիտի չհետեւի , բայց Տօրա , ո՛հ , Տօրա առանց քեզի պիտի կորսուի :

—Եւ ինչպէս կը դատէք , պարոն , ինչպէս ինձ թշուառութիւն պիտի չհետեւի կրօնք , քանի որ անոր կուրծքի հիւանդութեան ենթարկիլը դիտէք :

—Ենթարկուած չէ , պարոն . այլ քանի մը աննշան դէպքեր մեզ կասկած առին , որոնք հիմա բոլորովին անհետ եղած են :

—Անհետ ըլլալը անկարելի է , պարոն . ուրախալի պարագաներ կրնան մեզմեզ այս հիւանդութեան ազդեցութիւնները , բայց ոչ բոլորովին ջնջել , հիմա , պարոն , խօսէ՛ , ինչէ գիտաւորութիւնդ :

—Խնդրել որ չի մերժես զՏօրա , բարեսիրտ եղիր , Կտուա՛ր , չես գիտեր ո՛րչափ գքեղ կը սերէ , չես գիտեր զիս տեսած ժամանակ ինչպիսի զգացումով ձեր վրայօք լուրեր կը խնդրէր , չես գիտեր որչափ ընդգիմութեանց հակառակիցաւ , թշնամանքներ կրեց և վհատելի ժամեր ունեցաւ , քու սիրոյդ համար , այս՛ , մի միայն քու սիրոյդ համար : Իրեն ընդգիմացող արդեւքները՝ որոնք խիստ աղբու էին , չկրցան իր սիրոյն ներգործութիւն ընել . վասն զի աներկ-միտ էր որ փոխադարձ ևս կը սիրուէր քեզմէ : Այսչափ ստակալի դժուարութիւններ կրելէ յետոյ ինչ պիտի զգայ արեւօք երբ ձեր պաղութիւնը , ձեր խոստումներու ցնդիլը , վերջապէս ձեր այդ անտարբերութիւնը տեսնէ , ինչ պիտի ըլլայ , Կտուա՛ր , ինչ . բայց եթէ յուսահատիլ , վշտանալ , թշուառանալ և վերջապէս ժամանակէ յառաջ գերեզման մտնել : Կտուա՛ր , անշուշտ որոշակի կը տեսնես որ քու անտարբերութեամբդ Տօրայի զարհուրելի ապագայ մը կը պատճառես , քու

Կտուար չթողուց որ Ալֆօնս իր խօսքը շարունակէ և ընդմիջեց զայն ըսելով .

— Ալֆօնս , գոցէ՛ այդ խօսքերը , կը տեսնեմ որ դատողութիւնդ տողու մը ունեցածին պէս սահմանափակ է և երբէք հեռատեսութիւն չունի : Գու չես կարող գուշակել իմ կացութեանս ի՛նչ ըլլալը , դու չես կրնար գուշակել թէ ինչպիսի սպագայ մը պիտի պատրաստուի ինձ համար եթէ այդպիսի զարհուրելի առաջարկութիւն մը ընդունիմ , վերջապէս դուն չես կրնար հեռատեսել այն ամեն դժուարութիւնները , արդեւքները , սպերջանկութիւնը և վերջապէս այն հազարումէի շար հետեանքները՝ որոնք պիտի հետեւին ինձ եթէ այդպիսի անխոհեմ ընթացքի մէջ դանուիմ . ուստի կ'աղաչեմ գոցէ՛ այդ խօսքերը , և ոչ իսկ յարաբերութիւն պիտի ունենամ և ոչ իսկ պիտի խօսիմ ասկէ վերջ Տօրայի հետ . այո՛ , այս ասանկ պէտք է ըլլալ , վասն զի ժամանակ չունիմ վերստին գլխացաւութեան հանդպելու :

— Աւրեմն որոշած էք ասկէ վերջ Տօրայի վիճակին բոլորովին անտարբեր մնալ :

— Այո՛ պարո՛ն :

— Պ . Էտուար , գթացէ՛ք Տօրայի :

— Եւ ո՞վ պիտի գթայ ինձ :

Ալֆօնս մտախոհ չի պատասխանեց :

Երկուքնին ալ լռիկ հինգ վայրկեանի չափ առանց խօսակցութեան անցուցին :

Ալֆօնս իմացաւ որ Էտուարի անյողգող դիտաւորութիւնը խախտել բոլորովին անկարելի էր , ուստի և ելնելով մեկնելու պատրաստուեցաւ :

— Պարո՛ն — ըսաւ Էտուար Ալֆօնսի ձեռքը բռնելով , — բարեկամ ենք , չէք վշտանար անշուշտ այս պարագայիս մէջ ձեզ համաձայնելու անկարող գտնուելուս :

— Ի՛նչ կայ վշտանալու , պարո՛ն Էտուար . բայց ամսո՛ս , չէք գիտեր թէ ի՛նչ զգացումով հոս եկած եմ . գիտէք որ ձեր մէջ եղած դէպքը և ոչ մէկ բանի մէջ ինձ կը նկատէ , հոս գալուս պատճառը մի միայն գութս էր , թշուառ Տօրայի վրայ զգացած դուրս :

— Այո՛, ճշմարիտ կը խօսիմ որ քու սրտիդ բարութիւնը և զը՛ծ թոտութիւնը լաւ կը ճանչնամ. բայց և այնպէս քեզ փոքրիկ խրատ մը ունիմ տալու, և որ այս է, ասկէ վերջ պէտք էք այսպիսի պարագաներու մէջ ջանալ ձեր բունելիք ընթացքին համար քիչ մը նախատեսութիւն տնենալ:

Արժօնս չպատասխանեց և մեկնեցաւ:

Էտուար՛ որչափ որ մեծ զգուշութեամբ կարող եղած էր Ալֆօնսի առջև իր սրտին վրդովը չյայտնել՝ Ալֆօնսի մեկնելէ վերջը վայրկեան մը մտածելով զզայց ի՛նչ սոսկալի վիճակի մէջ գտնուիլը: Որչափ որ Տօրայի հիւանդութեան պատճառաւ զայն մերժելու համար մեծ իրաւունք մը ունենալ կը ցուցնէր Ալֆօնսի՛ այսու ամենայնիւ իր սուր երեակայութեամբ ալ մէկէն ըմբռնեց որ Տօրայի այս դժբաղդութեան սկզբնապատճառ ինք եղած էր, վասն զի իր երկար բացակայութեան մէջ զայն մոռցած էր, երկու տող զիր գրած չէր անոր, վերջապէս բոլորովին անտարբեր մնացած էր և իր յարաբերութիւնները բացարձակապէս կտրած: Գիտէր Տօրայի իր վրայ ունեցած անպայման սէրը, և գիտէր որ զայն մերժելը անոր թշուառութիւնը փութացնել էր. այլ այս ամենու հետ նաև կը տեսնէր որոշակի որ ընդունին ալ իրեն խիստ անյարմար և իր ապագայ երջանկութեան ալ հարուած մը պիտի ըլլար: Ասոնք ամենը գիտէր, ուրեմն ինչո՞ւ այսպիսի անխորհուրդ ընթացք մը ունեցաւ. — վասն զի միայն ներկայ ժամը ուրախութեամբ և հաճոյքով անցընել կը նայէր և ոչ յետագայ ժամուն մէջ հետեւելիք դէպքերն ու պարագաները:

Վերջապէս այս անխօհեմութեան մէջ կը տեսնուի որ Էտուար ամենեկին նախատեսութիւն չունէր:

Նոյն գիշերը մտատանջութեամբ անհանգիստ և բոլորովին յուսահատական մտածումներով անցուց:

Հետեւեալ իրիկուն Գ. Ալֆօնս իր ժամագրութեան համեմատ տիկին Շարլի երթալով պատմեց անոր իր բաժներն ու ընդունած պատասխանները. զորոնք լսած միջոցին տիկին Շարլ կայծակէ զարնուածէ աւելի եղաւ. վասն զի այսպիսի անակնկալ դժբաղդութիւն մի իր երեակայութեան մէջ անդամ յղացած չէր: Իր աղջկան ապա-

զայ թշուառութեան պատճառը իմացաւ թէ ո՛վ էր . մինչև այն կէտը իր անցեալ ընթացքը կը պատարակէր երբեմն իւրովի և երբեմն ալ Տօրայի առջև . բայց ալ անկէ վերջը իմացաւ որ իր ազջիկը անօրէն , անխղճ և ուխտադրուժ անձի մը խաբեբայ խոստումներու զոհ եղած էր :

Ալֆօնսի առջև իր ներս զգացած կսկիծին և առ Էտուար ունեցած բուռն բարկութեան և ոչ իսկ նշան մը յայտնելով աղաչեց զայն որ բարեհաճի համոզել զԷտուար անգամ մը իր հետ տեսութիւն ընելու :

Այս առաջարկութիւնն ալ հետեւեալ առտու մերժուեցաւ Էտուարէ :

Էտուար այս տեսակ գործերու մէջ եփուած հանած վարած մ'էր և զիտէր թէ ի՛նչ կերպով կրնար առանց վնասու այս տեսակ վատանգաւոր կացութիւններէ սղատիլ :

Վերջապէս օրեր անցան այս կերպով և երբ Տօրա երբեմն իր մօրը և երբեմն Ալֆօնսի կը հարցնէր Էտուարի չերեւելուն պատճառը՝ անոնք մէկ մէկ սուտ կը կեղծէին . վասն զի կզգուշանային Էտուարի անտարբերութիւնը յայտնել , զիտնալով որ այսպիսի անակրնկալ զէպք մը մեծ հարուած մի պիտի տար Տօրայի առողջութեան :

Սոյն միջոցին տիկին Քօլի ընտանիքը Մ․․․ զիւղաքաղաքը գացած էր ամառնային օդափոխութեան համար :

Տիկին Շարլ բացօթոջ կը տեսնէր որ Տօրայի ֆիզիկական վիճակը վերստին խանգարելու վրայ էր , որուն զլխաւոր պատճառն էր Էտուարի երբէք չերեւիլը , որոշեց զայն պատրուակով մը Մ․․․ զիւղաքաղաքը զրկել իր քրոջ տունը հոն ամիսի մը չափ օդափոխութեամբ կազդուրելու համար :

Ուստի օր մը Տօրայի ըսաւ .

— Տօրա՛ , ամառնային եղանակի մէջ կը գտնուինք , զիտես որ քաղաքային զուարճութիւնները ոչ համ ունին և ոչ հատ , չես ուզեր զէպ 'ի Մ․․․ երթալ հոն քանի մը օր ուրախութեամբ և զուարճութեամբ անցընելու համար :

— Քրոջս տունը :

— Այո՛ , եթէ կուզես երթալ , Տօրա՛ , ըսէ՛ , երբէք սրտիդ հաճոյքը
չեմ՝ բռնաբարեր , աղաս կամացդ կը յանձնեմ :

— Ապահով եմ որ Մ . . . ի մէջ հոսկէ աւելի դժուարութեամբ
պիտի անցընեմ՝ օրերս :

— Եւ ինչո՞ւ . օգուտէտութեան մասին սքանչելի . պարտէզներու ,
այդիններու , բլուրներու և ուրիշ զանազան դրուող վայրերու տեղ
մ'է . ինչո՞ւ դժուարութեամբ պիտի անցընես օրերդ :

— Աման զի , մայր իմ՝ բոլորովին պիտի չկարենամ զէտուար
տեսներու . դիտես որ ինձ համար ամեն բնական գեղեցկութեան և
երջանկութեան առարկայ միայն էտուարս է . ուստի , մայր իմ , հոս
որ ինձ այնչափ մօտ է և չեմ կրնար զինք տեսնել , ինչպէս պիտի
կրնամ այնչափ մղձեններով իրմէ բաժնուելէ յետոյ զինք տեսնել :

Տիկին Շարլ Զանաց բռնի զուարթ դէմք մը ցուցնել և յաջողե-
ցաւ :

— Հա՛ , հա՛ — ըսաւ տիկին Շարլ , — Ե՛րբ է մի ձեր Մ . . . եր-
թալու դժկամակելուն պատճառը . ուրեմն , Տօրա՛ , քեզ իմացնեմ
թէ ինչ պատճառաւ դքեզ Մ . . . զրկել կ'ուզեմ . ցայս վայր մե-
ծամտութեանս չէի թողուր յայտնել քեզ այնպիսի պարագայ մը՝ որ
իմ անձնական արժանաւորութեանս վայչող կ'երևէր . այլ քու եր-
ջանկութիւնդ իմ երջանկութենէս և կեանքէս աւելի նախամեծար է
ինձ համար . ուստի միտ դի՛ր . Էտուար քեզմէ աւելի կ'ուզէ հետդ
տեսնուիլ , այլ չհամարձակիր զայլ հոս լսելով իմ ձեր սիրոյն գէմ
ցուցած նախկին հակառակութիւնս . այնչափ Զանացի զինք Պ . Ալ-
ֆօնսի միջոցաւ համոզել որ համարձակ գայ , անկարելի եղաւ . միայն
աղաչերու խնդրեր է Պ . Ալֆօնսէ զիս համոզել որ թողում դքեզ
Մ . . . զրկել քրոջդ , ուր կը խոտանայ քեզ յաճախակի տեսնուիլ
և ազատօրէն հետդ խօսիլ . ուստի , Տօրա՛ , այս պարագան դիտ-
նալով կարծեմ՝ վերստին պիտի չուզես երթալ :

Տօրա ժպտեցաւ իր մօրը վերջին խօսքերուն վրայ և ուրախութեամբ
պաշարուած մէկէն հարցոց :

— Ո՛հ , մայր իմ ճշմարիտ կը խօսիք արդեօք , պատասխանեցէ՛ք՝
կ'աղաչեմ , կրկնեցէ՛ք վերստին :

— Այո՛, Տօրա՛, ճշմարիտ կը խօսիմ, Պ. Էտուար ըսեր է թէ անկարելի է իրեն հոս հետդ տեսնուիլ, և խնդրեր է անյապաղ Մ. . . ի մէջ տեսութիւն ընել հետդ. եթէ չես հաւատար հարցո՛ւր Պ. Ալֆօնսի :

— Եւ ո՞ւր գտնեմ Ալֆօնսը :

— Հոս վարն է, վասն զի հիմա բերաւ այս երջանկաւիթ լուրը, ես ալ կասկածելով որ չհաւատայիք խօսքիս

— Ի՞նչ կը խօսիք, մա՛յր իմ, և ինչո՞ւ ձեր խօսքին պիտի չի հաւատամ :

— Ահնար ըլլալ, ուտի այսպիսի բան մը կասկածելով պատուիրեցի իրեն քանի մը վայրկեան սպասել որ եթէ հարկ ըլլար այս լուրին ճշմարտութիւնը հաստատելու համար երևար քեզ :

— Ուրեմն թող հոս դայ, չէ թէ ձեզ չի վստահելուս կողմ զինք տեսնել՝ այլ կողմ իր բերնէ իմանալ Էտուարի առաջարկութիւնը :

— Լա՛ւ.— ըսաւ տիկին Շարլ և ծառան կանչելով պատուիրեց նոյն սենեակը հրաւիրել Պ. Ալֆօնսը :

Տիկին Շարլ յառաջագոյն հրահանգ տուած էր Պ. Ալֆօնսի այս պարագային մէջ իր բռնելիք ընթացքին վրայ :

Ալֆօնս մանրերկրորդէ մը սենեակը մտաւ :

— Շատ ուղիղ նախատեսեր էք — ըսաւ իր խօսքը տիկին Շարլի ուղղելով, — կ'երեւի որ ձեր ըսածին չհաւատաց :

— Ո՛չ, պարոն Ալֆօնս, չէ թէ չհաւատացի, այլ ուղեցի քեզմէ իսկ լսել Էտուարի առաջարկութիւնը :

— Լա՛ւ ուրեմն Տօրա՛, շուտով պատրաստութիւն տե՛ս վաղուան համար, վասն զի հաւանական է որ հետնեալ օրը կիւրակէ ըլլալուն դայ :

— Առանձին պիտի դայ :

— Ո՛չ, ինձ հետ :

— Ո՛հ, Պ. Ալֆօնս, պէ՞տք եմ վստահիլ ձեր խօսքին :

— Գիտես որ աւելորդ խոստումներ ընելու սովորութիւն չունիմ՝ վստահէ՛ ինձ և պիտի չսխալիս :

— Յանչափս շնորհակալ եմ :

Ալֆօնս մեկնեցաւ :

Նոյն օրը անմիջապէս պատրաստութիւն տեսնուեցաւ և հետևեալ առտու մեկնեցաւ դէպ ՚ի Մ . . . :

Հոն նախկին կիրակէին հետ ուրիշ երկու կիրակէնք ալ անցուց , և երբ նամակով կը հարցնէր Էտուարի այնչափ ուշանալուն պատճառը՝ միշտ պատասխան կ'ընդունէր թէ ամեն կիրակէ դժբարդդարար անախնկալ պարագաներ արգելք կ'ըլլային իր խոստումը կատարելու :

Տիկին Շարլ յաճախ կը թախանձէր Պ . Ալֆօնսը որ համոզէր զԷտուար անգամ մը Մ . . . երթալու , բայց չէր յաջողեր :

Աերջապէս Ալֆօնս զօրաւոր պատճառներ ցուցունելով և թախանձելով կրցաւ Էտուարէ խոստում առնել յառաջիկայ կիրակէ Մ . . . երթալու համար :

Տօբայի անմիջապէս իմացուեցաւ ասիկա :

Տօբա նոյն օրը վերահաս երջանկութեան յոյսերով և մտածումներով բոլորովին յսփշտակուած ըլլալուն՝ խիստ կերպարանափոխ եղած էր : Իր այսերը կայտառ և բոցալառ էին , իր սեւա աչերը ուրախութեան փայլակներ կը ցայտէին . իր զիմաց շնորհալիութիւնը իմանալու համար հարկ էր մարմարեայ ընտիր արձաններու կամ եկեղեցիներու մէջ նկարուած հրեշտակներու գէմքը տեսնել . իր վարդապոյն այսերու շուրջը , քիթը , կերպարանը , ճակատը և վիզը ջնջ սպիտակութիւն մը ունէին , որու գունատութիւն ըլլալը կրնար իմանալ ուշագրութեամբ դիտող մը : Պաշտերու և պարտէզներու մէջէ իր հաւաքած ծաղիկներէ երկու վարդ ընտրած էր , մին կարմիր և միւսը ձերմակ , որոնցմէ առաջինը իր գլխուն աջ կողմը զետեղած էր , և երկրորդը իր սպիտակ և աննման կուրծքին վրայ , որ անկիւնաձև մինչև վիզը բաց էր իր ընտիր կերպասէ շիջազգեստին մէջէ : Աերջապէս Տօբայի նոյն օրուան մոզիշ շնորհալիութիւնը , հրեշտակային կերպարանը և գրաւող յատկութիւնները ճշգրտակէս նկարագրելու համար Էօժէն Միւի նկարագրական ճարտար գրիչը պէտք էր :

Աւաօտեան ժամը տասի միջոցներ ծառան Տօրայի գանուած սենեակը մտաւ և իմացուց որ Ալֆօնս և Էտուար եկած էին :

Ալֆօնս զրկած էր այս ծառան , որպէս զի Տօրա յանկարծակի տեսներով զԷտուար անհանգստութիւն չզգայ :

Տօրա անմիջապէս իր տեղէ ցատկեց . վազեց հայելիին առջև . դիտեց իր կերպարանքը , շտկեց թեթևակի իր վարսերը և հայելիին մէջ անդրադարձող իր գլխաց գոհունակութեան ժպիտ մը արձակելով զէպ'ի դուռը սրացաւ և գիմառորեց զանոնք :

Տօրա զԷտուար տեսած ժամանակ գունատեցաւ և իր սրտի բուռն զգացումէ յաղթուելով նուաղեցաւ :

Էտուար զՏօրա այնպիսի գունատ վիճակի մէջ տեսներով զարհուրեցաւ :

Տօրա վերցուելով քովի սենեակը տարուեցաւ սակաւ ինչ հանգստանալով սթափելու համար :

Տիկին Բօլ իմացուց Էտուարի որ միշտ իր վրայ կը մտածէր , իմ վրայ կը խօսէր , և թէ շատ անգամ այսպիսի յանկարծական դէպքերու ժամանակ կը նուաղէր , — Բայց , յաւելցուց , այս անգամուան նուաղիլը ուրախալի պատճառէ մը յառաջացած ըլլալուն անտարակոյս պիտի չմնասէր իրեն և դեռ ևս պիտի օգտէր ալ :

Սակէ վերջը ինզրեց պարտններէ որ կէսօրուան ճաշը միասեղ ընելու հաւանութիւն տան :

Ալֆօնս անմիջապէս ընդունեց և Էտուար պարտաորեցաւ ընդունելու :

Ժամը մէկի միջոցներ Տօրա նոյնն էր ինչ որ էր առաւօտեան ժամը տասին :

Իր այտերու կայտառութիւնը , դիմաց շնորհալիութիւնը , վերջապէս այն ամեն չնաշխարհիկ յատկութիւնները՝ զորս առաւօտուն իմ վրայ ունէր , վերագարձած էին իր անձին :

Տիկին Բօլ դիտնալով սր Տօրայի նոյն վիճակը բոլորովին բարութելու համար հարկ էր օգաւէտ տեղեր ճեմելու ելլել՝ առաջարկեց նոյն Ալֆօնսի և Էտուարի միասեղ ժուռ զալու բարեհաճիլ :

Իր առաջարկութիւնը հաճութեամբ ընդունուեցաւ . ուստի և Տօրա Էտուարի թեր մանելով և տիկին Բօլ Ալֆօնսի յառաջացան դէպ ի բլուրներ , ուր ծառերու ստուերներու ներքե զմայլելի տեսարան ունեցող տեղ մը մէկ մէկէ բաւական հեռու երկու խումբի բաժնուած նստան , Էտուար Տօրայի հետ և Ալֆօնս տիկին Բօլի :

Էտուար դողաց երբ ինքզինք Տօրայի հետ առանձին գտաւ :

— Ահա , սիրելիդ իմ Էտուար — ըսաւ Տօրա Էտուարի ձեռքը բռնելով , — ահա երկարաւ բաժանուամէ յետոյ վերստին միացանք , անտարակոյս մեր պատմութիւնը ընելու , մեր սէրը նորոգելու , և իրապէս երջանկանալու համար երկարօրէն խորհելու : Պատմութեանս մասին կ'ըսեմ թէ անանկ սոսկալի ժամեր ունեցայ՝ ուր եթէ ուրիշներ գտնուէին թերևս կը յուսահատէին . սիրոյս մասին կ'ըսեմ թէ նորոգելու հարկ չկայ , սկիզբ ունեցաւ այլ վախճանի մասին յախտենական է , և այն որ յախտենական է՝ ոչ հին կ'ըսուի և ոչ նոր . իսկ իրապէս երջանկանալու խնդիրը քեզմէ կախեալ է , զոր պէտք է այս ժամուս իմանամ , վասն զի , Էտուար , տակաւին իմ ապագային նկատմամբ որոշ գաղափար մի չունիմ՝ մինչև ցարդ մէկմէկու յաջորդող յուստոու և յուսահատական դէպքերու պատճառաւ :

— Տօրա՛ , որովհետև առանձին ենք , քննենք նայինք թէ ինչ կերպով իրապէս երջանկի պիտի ըլլանք . վշտակից եմ քեզ քու յաճախակի յուսահատական վիճակի երթարկելուդ պատճառաւ , այլ Տօրա՛ , որովհետև ճշմարիտը պէտք է խօսինք , այդ բոլորին քու անխտհեմութիւնդ պատճառ եղած է , ինչ հարկ կար տտանկ ծանրակշիռ բան մը երևան հանելու , յուզելու , և ժամանակէն յառաջ պտուղ քաղելու համար անխտհեմ միջոցներու գիմելու :

— Ինչ ըսել կուզէք , Էտուար — ըսաւ Տօրա Էտուարի բանեցուցած այս յանդիմանական ձեէն զարմացած :

— Ըսել կ'ուզեմ , Տօրա՛ , թէ դուն կամովին դժուարին պարագաներու հանդպեցար , թէ այնպիսի ընթացք մը բռնեցիր՝ որով իրաւամբ ուրիշներու հակառակութիւնը և թշնամութիւնը վրագդարձուցիր , մեր մէջ իսկ դեռ չի հասունցած խնդիր մը առիւր քաջ :

քշեցիր և այն աստիճանի հասուցիր զայն՝ ուր ահաասիկ ևս ալ քու ապաղայ թշուառութեանդ, անպատուութեանդ և թերևս վտանգներուդ ալ մասնակից պիտի ըլլամ :

— Ինչ խնդրի քաշքրտութիւն, ինչ ապաղայ թշուառութիւն, անպատուութիւն և վտանգ, շեմ կրնար ըսածդ ըմբռնել, ինչո՞ւ այդպէս չորս կողմէ ծով ըրած կ'ուզես զիս ալ քեզ պէս անոր մէջ նետուած կարծեցնել . բացատրէ՛ ըսածդ, Էտուա՛ր, որովհետեւ ինձ միջին կ'երևի :

— Ա՛ւր, բացատրեմ մեր դաղանի և թերևս աննպատակ յարաբերութիւնները այն աստիճանի հասած էին՝ ուր ալ շատերու և մանաւանդ վտանգաւոր անձերու յայտնուեցան . այնպիսի անձերու՝ որոնք իրաւունք ունէին մեր յարաբերութեանց, ժամադրութեանց, և հաղորդակցութեանց հակառակելու . ասոնց զլիսաւորը մայրեւնիդ էր, որ հակառակելով քեզ գրեթէ յուսահատութեան մտեցոց և ինձ ալ բաւական անախորժ դէպքերու տեղի տուաւ . այլ Տօրա՛, ասոնք բոլոր քեզ ծանօթ են, և հիմա աւելորդ կը սեպեմ անցելոյն տխուր դէպքերով քու դիւրազգած սիրտդ վիրաւորել . ուստի խօսինք ինչ որ է մեր գիտաւորութիւնը :

— Իբրաւունք ունիս այդ մասին, Էտուա՛ր, և ես կը խոստովանիմ թէ մայրս ինձ այնչափ հակառակեցաւ, այնչափ թշնամանց և այնչափ ապօրինաւոր միջոցներ գործածեց և սպառնալիքներ ըրաւ որ ստուգիլու յուսահատական ժամեր ունեցայ . այլ իմ բաղդս այնպիսի կերպով կարողադրուած է եղեր՝ որ միշտ փոփոխական դէպքերու ենթակայ ըլլայ . երբեմն յաջող պարագաներ զիս կը քաջալերէին, երբեմն ձախող դէպքեր զիս կը վհատեցնէին, օրուան մէջ հազար անգամ յոյսէ՛ ՚ի յուսահատութիւն կը գործէի և յուսահատութենէ՛ ՚ի յոյս կը վերածնէի . այլ այս ամեն արդէ՛քներն ու անստուղութիւնները հիմա ցրուեցան և մեր առջև ազատ և փայլուն ապարէզ մը բացուեցաւ նոյն իսկ մօրս հաւանութեամբ անոր մէջ ուղածնուս պէս յառաջանալու համար :

— Եւ ինչ տեսակ ասպարէզ է մեր առջև բացուածը :

—Ազատութեան ասպարէզ, ուր պիտի կրնանք կատարել ինչ որ ուզինք, կամ ինչ որ առաջուց մէկ մէկու խոստացած ենք :

—Տօրա՛, ազատութեան ասպարէզ մանելու համար դիտես որ հարկ է ամենայն մասամբ ազատ և կարող վիճակի մէջ գտնուիլ . կ'իմանամ քու ինչ բան ակնարկելի , փափաքելի է ինձ քեզմէ աւելի անոր արագօրէն գործադրիլ . փափաքելի է ինձ այսչափ երկար ձախորդութիւններէ յետոյ սրտիս ամենէ աւելի ակտրժած բանին վաղահաս կատարուիլ . այլ , Տօրա՛, ինչպէս ըսի , եթէ այսպիսի բան մը շուտով չլուխ հանելու համար մէկ հաւանողական պատճառ կրնամ գտնել դժուարութեամբ , տառաջան զայն ցող մեծօղական պատճառներ բացորոշ կը յայտնուին ինձ , որոնք անկարելի կ'ընեն ինձ այսպիսի երջանկութեան մը շուտով հասնելու :

Տօրա այս խօսքին ՚րայ վայրկեան մը մտածեց և ապա բտա .

—Էտուա՛ր , անիմաստ խօսքերէդ բան մը չկրցայ իմանալ , բացատրէ՛ ինչբեմ :

—Տօրա՛, կը տեսնեմ որ փորձառութիւնդ թերի է և անանկ կը կարծես որ ասանկ ծանրակշիռ բան մը գործադրելը անոր վրայ խօսելու չափ դիւրին է . մեզ դէմ եղած նախկին հակառակութիւններն որչափ որ բտա երևութիւն զօրաոր կ'երևէին՝ կամաց կամաց տկարանալով անհետ եղան և այս բտածս կ'ակնարկէ միայն քու ընտանեացդ կողմէ եղած ընդդիմութիւնը , այլ ամեն դժուարութիւն անհետացած չեն ասով : Հաւատա՛ խօսքիս , Տօրա՛, այնպիսի պարագայի մը մէջ կը գտնուիմ՝ ուր եթէ ուրիշ մը բլար գուցէ բոլորովին կը խլէր իր խոստումները , և իր վիճակին մանրամասն սարգանները դիտնալով անտարախոյս բացարձակապէս կը մերժ'ը այսպիսի դիտարութեան մը գործադրութիւնը . այլ ես այնպէս չիմ և պիտի չըլամ ցմահ . ես զքեզ կը սիրեմ , Տօրա՛, կը սիրեմ այո՛ , և թերևս քու առ իս զգացած սէրէդ աւելի սիրով , ես ալ կը փափաքիմ Տօրա՛, որ որչափ կարելի է շուտով երջանկանանք , ես ալ կը փափաքիմ որ նորանոր դժուարութիւններ երևան չելլելու համար շուտով վախճան տանք ասոր . այլ ինչպէս անհետենք ներկայ դժուարութիւններն , հակառակութիւններն վերջապէս

այն հազար ու մէկ արգելքներն՝ որոնք չորս կողմն պաշարած են ,
ինչպէս անհետներ ասոնք Տօրա՛, ինչպէս :

— Բայց ինչ են այդ մտածութիւններն , վիշտերը և անհամար
դժուարութիւններն ու արգելքները՝ որոնց ենթարկած կը սեպես ինք-
զինքդ :

— Թէ և մեծամտութեանս չէի թողուր ամեն ինչ քեզ յայսնել՝
այլ հարկ է , նիւթականի մասին անկարողութիւնս զիտես , ամուս-
նութեան յարմար հասակ մտած չեմ . ես ալ աղէկ զիտեմ որ եթէ այս
դէպքը տարածայնութիւն իմ եղբարցս և ազգականացս կողմէ զօրաւոր
զիմադրութիւն պիտի կրեմ , զիտես որ , Տօրա՛ , մարմինս քաշած եր-
կարատե հիւանդութեանս պատճառաւ զեռ բոլորովին կազդուրած
չէ , և անտարակոյս այսպիսի բանի մը չէ թէ միայն գործադրիլը
այլ և անոր վրայ խորհիլն և այս տեսակ յարարերութեանց ենթար-
կիլն իսկ առողջութեանս վատթարելուն պատճառ պիտի ըլլայ , և
այսչափ չարիքներ հետեւելէ վերջը , Տօրա՛ , կարծածիզ պէս երջա-
նիկ պիտի չըլլանք , այլ իրապէս պիտի թշուառանանք , այս՛ , պի-
տի թշուառանանք :

— Ուրեմն ինչ է զիտաւորութիւնդ :

— Մտիկ ըրէ՛ , Տօրա՛ . զիտես որ կուրօրէն պէտք չէ գործենք
այնպիսի պարագայի մէջ՝ որ մեր ասպազայ վիճակը պիտի որոշէ .
զիտես որ իմ փափաքս չէ թէ վայրկենական հաճոյք մը ունենայ է ,
այլ ջանալ ցմահ երջանիկ վիճակ մը պատրաստել . զիտես որ եթէ
հիմա անխոհեմութեամբ ելլենք և գործելու սկսինք՝ շատ դժուար
րին պարագաներու պիտի հանդպինք . իմ փափաքս , Տօրա՛ , զքեզ
երջանիկ ընել է և ոչ թշուառ . կարծես ընդ աղօտ կը նշմարեմ
այն ամեն չարիքներն՝ որոնք պիտի հետեւին մեզ եթէ այսպէս զե-
ռահաս ամուսնանանք : Այն որ խոհեմութիւն և համբերութիւն ու-
նի որ և է դէպքէ չի վշտանար և անտարակոյս երջանիկ կըլլայ իմ
թշուառութեան մէջ իսկ , զիսնալով որ իր ապերջանիկութեան պատ-
ճառ ինք եղած չէ , և թէ ինք ամեն կարելի միջոց անոր դէմ գոր-
ծածած է : Տօրա՛ , եթէ այս զիտաւորութիւնդ հիմա գործադրենք
կ'զգաս անշուշտ որ մեզ ասպազայ թշուառութիւն նիւթած պիտի ըլ-

լանք , և այս գիտնալով , Տօրա՛ , խօսէ՛ ինչ ընթացք բունել նա-
խամեծար է :

— Գու ինքնին խօսէ՛ :

— Համբերենք որ ժամանակը բարեպատեհ առիթ մը շնորհէ մեզ ,
ամեն կողմէ իրապէս ազատ , կարող և յարմար վիճակ ունենանք
և ապա մեր դիտաւորութեան գործադրելը շատ դիւրին պիտի ըլլայ
մեզ :

— Ո՛հ , Էտուա՛ր , կը տեսնեմ որ ամենեւին դժուարութիւն չէք
զգար այդպէս անիրաւ որոշումներ ընելու մասին , ցայս վայր քու
ինձ յայտնած պատճառներդ , դժուարութիւններդ և արդելքներդ
մտիկ ըրի , և չէի ուզեր զանոնք ընդհատել մինչև որ քու ապագայ
ընթացիցդ ամբողջ ուրուապիծը ինձ յայտնեցիր . այլ հիմա հարկ է
սիրելիք իմ Էտուար , հարկ է որ ես ալ ցոյց տամ քեզ այն ան-
դիմադրելի պատճառներս և իրաւունքներս՝ որոնք եթէ ուշի ուշով
դատես , պիտի ցուցնեն քեզ քու որոշմանդ որչափ վտանգաւոր ,
ապարդիւն և թերեւս յիմարական ըլլալը . դու կը կարծէիր թէ այդ-
պիսի պատճառներ իմ սէրս պիտի թուլցնէին . դու կը կարծէիր
թերեւս թէ երեւակայական թշուառութիւններու կասկածը զիս պիտի
տազնապէր . ասիտ՛ս Էտուար , քու ցայս վայր արտասանած խօսքե-
րէդ ամենեւին սիրոյ յայտնութիւն մի չեղաւ , քու ցայս վայր ինձ
ուղղած կեղծ համակրական խօսքերդ չի կարծես որ իբր ճշմարիտ
ընդունած եմ , քու նախկին ընթացքդ պարսաւելի էր և ապագայ ըն-
թացքդ ալ զարհուրելի ընելու կը տքնիս . դու կուզես այնպիսի դա-
րաններու մէջ մացնել զիս՝ որ բոլորովին հաճ և հաւան ընդունիմ
այն ամեն որոշումներդ՝ որոնք անուղղակի կերպով զիս պիտի թըշ-
ուառացնեն . այն աստիճան ազատօրէն որոշումներ կ'ընես՝ որ բո-
լորովին կը շփոթիմ , և երկու բան միայն կրնամ գտնել այս պաղ-
ընթացքիդ վրայ . մին՝ որ և անհաւանական է , դժուարութիւն-
ներն բոլորովին անհետել , և միւսը՝ այս կերպով ինձմէ յարա-
բերութիւններդ դադրեցնելով թէ իմ սէրս մարել և թէ ա-
պագային մէջ պատահելիք որ և է դէպքէ զգուշանալ , ինչ կեր-
պով յայտնեմ քեզ իմ սէրս , զգացումներս և սրտիս անհուն վիշ-

անբըր, Ո՛Տ, Էտուա՛ր, ո՛Տ, տարփելիդ Էտուա՛ր, ահա քեզ կուրծքս, ճեղքէ զայն, և սխտի տեսնես որ սիրտս մի միայն քու սիրովդ զբաւուած, մի միայն քու երբեմնակի հարուածներովդ չարաչար վիրաւորուած է. չես դիտեր, Էտուա՛ր, թէ ի՞նչպէս անցուցի օրերս, ո՛Տ, Աստուած իմ, ինչ ստակալի ճգնաժամեր ունեցայ. ի՞նչ բնդհանուրի առջև անպատու թիւն, ի՞նչ թշնամանք, յուսահատութիւն, վիշտ և թախիծ մի միայն քու սիրոյդ համար, ցիբեկուան տխուր դէպքերու յիշատակը մնա՛ս անջնջելի ըլլալուն գիշերներն ալ անոնց վրայօք չարագոշակ և ահուեղի ցնորքներով կը տարապէի, և բոպէ մը անգամ, ո՛Տ, Էտուա՛ր կը լսե՛ս, բոպէ մը անգամ չէի կրնար խաղաղ և հանգիստ քուն ունենալ: Ափսո՛ս, կը տեսնեմ որ սիրոյ զգացում ամենն ինչ չունիս և այս գոցէ միայն ինծի համար. այլ որպէս զի այս աննուաճելի զգացումին ի՞նչ ըլլալը լաւ մը լսե՛րունս, հարկ է որ իմ վրձակս ունենաս, զգաս ի՞նչ որ կ'զգամ, և փափաքիս ինչ որ կ'փափաքեմ: Ո՛Տ, ի՞նչ է սէրը, — իր սկզբնաւորութեան մէջ երջանկութիւն, արմատանալէն վերջը հոյն ինքն անմահութիւն, և դ՛պքերու ու սպարազաներու հակառակած միջոցին իրապէս թշուառութիւն. դէպ ուզիլ նպատակին հասնող սիրոյ՝ դրախտ մը կ'ստատէ, և անկէ վրիպողին՝ գերեզման, երջանկութիւն կամ մահ. միջին կէտ չկայ սիրոյ համար, այլ Էտուա՛ր, որովհետև դուն քու ապագայ կենացդ վրայօք ինձ փոքրիկ զաղափար միտտիր, փութամ ես ալ իմ ապագայիս համար ճըմարիտ անդեկութիւններ տալ քեզ, վասն զի կ'զգամ անոր իրապէս ի՞նչ վախճան ունենալը

Տօբա հոս չկրցաւ իր սրտի յուզմունքը բռնել, այսերը շատ գունեցան, և իր յուզման սրածատ առ ձայնը հեծկտալու փոխուելով, միայն քանի մը կտրուկ և անիմանալի բառեր լցեցան իր խօսքերուն:

Էտուարի սիրտը աստիճանաբար կ'սկսէր խռովիլ և անձկութեամբ պաշարիլ:

Քառորդի մը չափ երկուքնին ալ մտախոհ զլուխնին ծռած բառ մը անգամ չարտասանեցին:

Երկուքնին ալ սկսեր էին գունատիլ, այլ Էտուարի գունատութիւնը այն աստիճան էր՝ ուր բացորոշ կը յայտնուէր անոր սրտին մէջ տեղի ունեցած տարօրինակ յուզմունքը :

—Տօրա՛ — ըսաւ Էտուար ջանալով իր դիմաց սովորական ժպիտը տալու, —Տօրա՛, կը տեսնեմ որ քիչ մը յառաջ բնութեանդ վերայ ըրած դիտողութիւնս սխալ չէ եղեր, կամ փորձառութիւնդ ստուգիւ թերի է, և կամ զիս յանդիմանելու, նախատելու և վրաս գէշ գաղափարներ ունենալու բնական ախորժակ ունիս : Ինչո՛ւ ամեն բանի լաւ մը հմտութիւն չունենալով այդպիսի յանցանքներ և մտքէ չանցած կարծիքներ կը գտնէք ինծի համար, ո՞վ երբէք ըսած է քեզ թէ սէրս անհիմն եղած է, ո՞վ խաբած է ըզքեզ, ո՞վ վիրաւորած է քու աչնիւ և պաշտելի սիրտդ, ե՛ս, որ առանց քեզի ոչինչ եմ, ե՛ս, որ բողոքովին ինքզինքս քեզ նուիրած եմ, ե՛ս, որ յսկամայից այսչափ ժամանակ քեզ չերեկոյս միայն քու բարիքդ մտածած եմ, ե՛ս քու սիրտդ վիրաւորեմ, զքեզ խաբեմ, ո՛հ, զարհուրելի է այս կարծիքը, կը ցնորէ զիս, և ի՛նչպէս յղացաւ ասիկա քու մտքիդ մէջ, միթէ իմ չերեկոյսս պատճառաւ : Ա՛հ, Տօրա՛, բսէ՛, այնչափ հակառակորդներու մեր չորս կողմը պաշարելէ յետոյ ի՛նչպէս տակաւին համարձակօրէն առանց վտանցի քեզ երեւէի, ի՛նչպէս իմ յարաբերութիւններս քեզ հետ վերստին հաստատելի, ի՛նչպէ՛ս շարունակ քեզի հետ թղթակցէի և վերջապէս երջանիկ ժամեր ունենալու համար քու դժբաղդութեանդ պատճառ ըլլայի, թէ և քեզմէ յառաջ անտարակոյս ինձ պիտի հասնէր դժբաղդութիւնը : Այլ, Տօրա՛, ես իմ անձիս օգտէ առելի քու բարիքդ կը մտածէի, ես որ ուրիշներու կողմէ քեզ հասնելիք չարիքներն ու հակառակութիւնները արգիլելու կը ջանայի, ե՛ս, ի՛նչպէս կրնայ ըլլալ որ զքեզ խաբած և վերջապէս իմ քեզ ըրած խոստմանս անհատարիմ գտնուած ըլլամ, բացատրէ՛ ասոնք, Տօրա՛, իմացո՛ւր ինձ, որովհետեւ չեմ կրնար մեկնել քու կարծիքներդ որոնք ինձ համար խրթին առեղծուածներ են, ի՛նչպէս կրնայ ըլլալ որ ես քու բարիքդ մտածեմ և քեզ չարիք հասցնեմ, այսպիսի ներհակ զգացումներ ո՞վ կրնայ ունենալ, ո՞վ, և ոչ մէկը :

— Եւ ստուգիւ քու անցեալ կենաց մէջ բռնած բնթացքդ ինձ դժուարին հանելուկ մը եղած էր, զոր մինչև վերջին ժամանակներս դեռ չկրցեր էի լուծել և զոր քիչ ատեն յառաջ կրցայ իր բոլոր պարագաներով իմանալ. զարմանալի կը թուին ինձ, Էտուա՛ր, ո՛հ, Էտուա՛ր, զարմանալի կը թուին ինձ քու արտասանած խօսքերդ. զարմանալի կը թուի ինձ քու մինչ ցարդ իմ բարոյս համար աշխատիլ կեղծելդ: Ո՛հ, Էտուա՛ր, դուն չէ՛իր այն անձը՝ որ ճամբորդութենէդ յառաջ բաւական շարաթներ ինձ չերեցար. դուն չէ՛իր այն Էտուարը, ո՛հ, այն յաւիտենական սէր խոստացող Էտուարը՝ որ երկարատե բացակայութեան մէջ երկու տող դիր իսկ չդրեց ինձ, և որ բոլորովին մոռցաւ զիս, այո՛ մոռցաւ. սրախս խորէն ներքին բնազդում մը կ'ազդէ ինձ որ այս կարծիքս ճշմարիտ է: Ո՛հ, Էտուա՛ր, ասոնք մերժել՝ այո՛ կրնաս, բացատրութիւններով հակառակը համոզել զիս, այո՛. բայց ուրանա՛լ, բնա՛ւ, երբէ՛ք. խօսէ՛ Էտուար, այսչափ զքեզ սիրող սիրտ մը, քու վրագ մտածող միտք մը ինչ կրնար ըլլալ. ի՞նչ, բայց եթէ թշուառ, ապերջանիկ, և միշտ վիշտերէ և յուսահատական մտածումներէ շրջապատուած:

— Տօբա՛, կը տեսնեմ որ դժուարութիւն կը ցուցնես իմ հաւանողական և իրաւացի պատճառներուս զիջանելու, ի՞նչպէս համոզել պէտք է զքեզ, քանի որ քու մտացդ մէջ արմատացած են իմ վերայօքս սխալ և ինձ անընդունելի կարծիքներ, հազար անգամ ըսի քեզ թէ իմ անցելոյս մէջ անանկ դէպքեր պատահեցան՝ որ հարկ էր մեր յարաբերութիւնները առժամանակեայ կերպով դադրեցնել, քու միտքդ և երևակայութիւնդ չափազանց սիրով միայն գրաւուած ըլլալուն բոլորովին անկարող էիր նախատեսել այն ծանր դէպքերը՝ որոնք մեզ պիտի հետևէին եթէ ես խոհեմութիւն չընէի և յարաբերութիւններս չընդհատէի. այլ որովհետեւ այս դէպքերը երբէք չի պատահեցան, կամ գոնէ թեթեւ կերպով մեզ սպառնացան և անհետ եղան՝ հիմա զիս կը մեղադրես իբր ուխտագրութ, անհաւատարիմ, և թերևս խաբերայ երիտասարդ մը: Ո՛հ, Տօբա՛, վայրկեան մը մտածէ՛, և պիտի տեսնես որ մեր այսօրուան վայելած ազատ

տութիւնը իմ անցելոյս խոհեմութեան արդիւնքն է . հաւանէ՛ պատ-
ճառներուս , Տօրա , ընդունէ՛ անոնց ճշմարտութիւր , զորոնք քեզ
աւելի փայլուն երևցնելու համար չեմ ուզեր սեթեթեալ խօսքե-
րով յայտնել . ի՛նչ որ կ'զգամ սրախ մէջ և ի՛նչ որ ճշմարիտ
է՛ այն իմացոցի քեզ . մի՛ տարակուսիր խօսքերուս անկեղծութեան
վրայ , հաւատա՛ սիրոյս որ այնչափ եռանդուն , այնչափ անկեղծ և
անսահման է . ո՛հ , միթէ ինձ պէ՛ս ամե՞ն անմեղի ալ զժուար է
իր անմեղութիւնը հաստատել :

Այս խօսքերուս վրայ Էտուար մտախոհ կերպարան մը կեղծեց ,
այտերը շառագունեցան , և որ գուցէ իր խղճմտանքին չհանդուր-
ժելով իր դիմաց վրայ դժագրիչն էր , վերջապէս այնպիսի տխուր ,
սրտադրաւ և յուսակտուր կերպարան մը ձևացուց որ ալ Տօրայի
անկարելի եղաւ . Էտուարի սիրոյն անկեղծութեան տարակուսիլ , ուս-
տի անմիջապէս երջանկութենէ՛ արբշխու փարեցաւ անոր վիզը և իր
գլուխը ծանրանալուն թողուց որ Էտուարի ուսին վրայ լյնայ :

Իրենց սիրտերը մէկ մէկու ընդհարած էին , և Էտուար իր կուրծքին
վրայ զգաց Տօրայի սրտին սաստիկ բարակումը :

Էտուար այս գրկախառնութենէ հաճութիւն և միանգամայն զար-
հուրանք կ'զգար . անանկ կ'երևէր իրեն որ Տօրայի իր վիզը շրջա-
պատող թևերը իր ճակատագիրը անոր հետ միացնող անբակտելի
շղթաներ էին :

Էտուարի սիրտը անհանգիստ էր . իր խիղճը զարհուրելի վրդով-
ման մէջ էր իր բռնած ընթացքին համար :

Քառորդ մը Տօրայի անսահման երջանկութիւն ազդեց . բայց այս
քառորդը մանրերկրորդէ մը աւելի արագութեամբ սլացաւ իրեն հա-
մար :

Երջանկութիւնը խիստ արագութեամբ կը վառնէ իր ժամըր :

Ի վերջոյ թողուց Էտուարի վիզը . Էտուար ուրախ էր և միանգամայն
սրտում :

—Ո՛հ ուրեմն— յարեց Տօրա , —ալ երջանիկ եմք , այնպէս
չէ՞ , Էտուար , ո՛հ , պաշտելիք իմ Էտուար , ի՛նչ յիմար եմեղեր
որ քու վրագ այնչափ դէշ կարծիքներ ունեցայ , և դեռ քիչ մը

յառաջ զքեզ այնչափ յանդիմանեցի, զքե՛զ որ հրեշտակի մը սիրտը ունիս, զքե՛զ, որ զիս այնչափ կը սիրես եղեր, ներե՛ Էտուար, ներե՛ իմ՝ սխալմանցս, տգիտութեանս տո՛ւր արտասանած խօսքերուս անպատեհութիւնը :

Էտուար չի պատասխանեց :

— Այ մեր ապազան որոշուեցաւ, մեր ճակատադիրը երջանկութիւն է եղեր, մեր սրտերը միաորեւի՞թ անտարակոյս ապապային մէջ երջանկութեան տիպար և մաքուր սիրոյ օրինակ պիտի ըլլան ուրիշներու, այնպէս չէ՞ Էտուար :

Էտուար տակաւին չէր պատասխաներ :

— Ո՛հ, խռոված ես. կը տեսնեմ որ քու նախկին խօսքերուդ թելը կորուսած ես. ուրեմն շարունակեմ՝ ես խօսքս. հիմա որ այսչափ ճշմարիտ սիրով կը սիրենք մէկգմէկ, այսչափ անկեղծութեամբ մէկմէկու յարած ենք, և ամենին մեզ ընդդիմացող մը չունինք՝ անտարակոյս ապապային մէջ անցելոյն նման դժուարութիւններ պիտի չունենանք, և համարձակօրէն պիտի կրնանք մեր յարաբերութեանց և տեսութեանց երջանկութիւնը վայելել :

Էտուար Տօրայի այս խօսքերուն վրայ կ'ակօ՛ւր գունատիլ :

— Բայց ի՞նչ կ'զգաս, Էտուար, անհանգիստ կը տեսնեմ զքեզ, ի՞նչ ունիս, ի՞նչ է այդ գունատութեան պատճառը. աղէ՛, ոտք ելիր, ճեմնք միատեղ դէպ ՚ի բլուրներ, քայլելով կը կազդուրիս :

— Այո՛, խռոված եմ, և քայլելու հարկաւորութիւն կ'զգամ, պատասխանեց Էտուար յետին ծայր մտախոհ :

Երկուքին ալ միատեղ ելելով յառաջացան դէպ ՚ի բլուրներ :

Տօրա շարունակ զուարթ էր և զԷտուար ևս զուարթացնելու համար միջոց մը ձեռքէ չէր թողուր. բայց Էտուար միշտ տրտում և մտախոհ էր :

Եթէ երկար ժամանակ զտիկին Բօլ և զԼլլիֆօնս մէկ կողմ թողլով անպատեհութիւն մը ըրած ենք, ընթերցողէ ներողութիւն հայցելով կը խնդրեմք որ հաճի մեզ հետ վերոյիշեալ անձերու դառնալ առ այժմ :

Լլլիֆօնս և տիկին Բօլ ջերմ խօսակցութեան մէջ կ'երևէին :

Տիկին Բօլ կրտէր .

— Երբէք փոխուած չես , Պ . Ալֆօնս , միշտ կրակոտ և վար-վուռն և գեղանի աղջիկներու սիրահար ես , սիրոյ այսչափ տարա-պայման զգացողութիւն երբէք ուրիշի մը վրայ տեսած չեմ :

— Տիկին , եթէ Աստուած կինը ստեղծելով անոր սքանչելի գեղ և շնորհ տուած է՝ ուրիշ նպատակաւ չէ բայց եթէ իր հրեշտակ-ներու հիանալի գեղեցկութեան վրայ մարդուս գաղափար մի տալու . ո՛հ , ինչ զգացում պէտք է ունենալ այնպիսի էակ մը՝ որ այսպիսի պաշտելի արարածներու առջև չի ծնրադրեր և զանոնք անպայման սիրով չը սիրեր :

— Պ . Ալֆօնս , զուարճալի են բսածներդ , այսու ամենայնիւ որչափ զուարճալի նոյնչափ ալ ճշմարիտ կը խօսիք . միջէ սատուիւ կը ծնրադրէք այնպիսի գեղանի օրիորդներու առջև :

— Ար պաշտեմ իսկ զանոնք , տիկին , ես իմ մտքովս անպէս կ'ըմբռնեմ թէ ո՛վ որ կը սիրէ էակ մը՝ պէտք է պաշտէ զայն . առանց սիրոյ պաշտել կամ կեղծաւորութիւն է , կամ բոնաբարու-թիւն և կամ տղիտութիւն :

— Լա՛ւ , քանի որ այդիերոյ կը խօսիս , ներէ՛ համարձակութեանս որովհետև հետաքրքրութիւնս յաղեցնելու համար կ'ուզեմ մէկ գաղանիքդ իմանալ :

— Խօսեցի՛ք համարձակ տիկին , ձեր խօսքը գրծելը ինձ համար անկարելիութիւն մ'է :

— Հնորհակալ եմ . ուստի ահառասիկ բսեմ . սիրոյ զգացմանդ տարօրինակութիւնը գիտնալէս և ինձ իմացնելէդ 'ի վեր թէ հարկ է ամենագեղեցիկ և շնորհալի օրիորդներու առջև ծնրադրել , կու-զեմ իմանալ թէ դուք առ հասարակ ամեն գեղանիներու առջև կը ծնրադրէք , թէ այն ամենու մէջէ միայն մէկուն :

— Ժամանակաւ միայն մէկու առջև կը ծնրադրելի և 'ի սրտէ կը պաշտելի զայն , անզուգական տատրակ մ'էր իր գեղեցկութեամբ , պարկեշտութեամբ և առաքինութեամբ . այլ այս տատրակը , ափ-տո՛ս , յափշտակեցին ինձմէ . նոյն յափշտակելով զրիւցին նաև զիս իմ երջանկութենէ , յոյսէ և ամին բանէ , այսպէս ըլլալով որչափ որ

ի սկզբն զառն կսկիծննր ունեցայ՝ պարաւորեցայ ՚ի վերջէ զայն մոռնալու համար ուրիշներու սէր նուիրել . որչափ որ շատերու յաջողեցայ , այսու ամենայնիւ զայն մոռնալ անկարելի եղաւ ինձ :

— Եւ այն էակը կը սիրէ՞ր զքեզ — հարցուց տիկին Բօլ , որ կ'իմանար Ալֆօնսի խօսքերուն զո՛վ ակնարկելու :

— Համողած էի թէ կը սիրէր . բայց դէպքերը հակառակը հաստատեցին :

— Զարմանալի՛ բան , երբ դէպքերը քու կարծեացդ հակառակը հաստատեցին՝ ինչ կը խորհէիր անոր վրայ :

— Ի՞նչ կրնայի խորհիլ , բայց եթէ յուսահատութիւն . բայց բարեբաղդաբար նոյն օրերը բանաստեղծի մը հեղինակութիւնը ձեռքս ըլլալուն՝ երբ հետեւեալ կտորը կարդայի թէ « Անոջ մը խօսքերը ճշմարտութեան կողմէ արժէք չունին » , զարմացայ և սակաւ ինչ խորհելով և երբ իմ՝ վիճակիս նայելով զդայի անոր ճշմարտութիւնը՝ ըսի ինքնովին . այս անձը անշուշտ փորձառութեամբ գրած է . անտարակոյս այսպիսի դէպքեր ուրիշներու ալ պատահած են . ուստի հարկ է մխիթարուիլ , և ազագային մէջ օրիորդի մը հետ յարաբերութիւն հաստատած միջոցիս հարկ է ծանրութեամբ շարժիլ , և խորամանկութիւններով ցրել անոր խորամանկութիւնը :

— Ար՞ն խորամանկութիւնը :

— Այսինքն անոր՝ որու հետ ապագային մէջ յարաբերութիւն պիտի հաստատէի :

— Իմացայ : Այն էակը՝ զոր քու ձեռքէդ յափշտակեցին , բոլորովին կտրեց քեզմէ իր յարաբերութիւնները :

— Ա՛յ , ո՛չ , գրեթէ միշտ միատեղ ենք . բայց ի՞նչ օգուտ տիկին , մեր այս մերձաւորութիւնը ինչի կը նմանի գիտե՞ս , երջանկութեան՝ որ մօտը կ'ըլլայ և չես վայելեր , հարստութեան՝ զոր հեռուէն կը տեսնես և չես կրնար ստանալ :

— Հա՛ , մոռցայ . Ալֆօնս , ձեր սիրած այն օրիորդը գեղեցիկ էր :

— Չափազանց :

— Ա՛յ աղաչեմ՝ նկարագրեցէ՛ք զայն որովհետեւ նախանձս կը գրդուէր :

— Կախանձելու հարկաւորութիւն չունիք , բայց ինչպէս նկատուողին՝ հրեշտակ մը՝ որ զեղեցիութենէ աւելի գեղեցիկ կերպարան մը և առաքինութենէ աւելի առաքինի ողի մը ունէր : Ռաֆայէլ մը ըլլալ պէտք էի անոր անշուղակի կերպարանը գծելու և Լամարթին մը՝ անոր հոգւոյն կատարելութիւնները ճշգիւ բացատրելու համար : Ար լսե՞ս տիկին , եթէ ես այս օրիորդին ներքին և արտաքին ամեն կատարելութիւնները ճշգրտապէս նկարագրեմ՝ կրնամ այս վայրկեանէ սկսեալ իբր առաջին բանաստեղծ պարծիլ :

— Հա՛ , հա՛ — ըսաւ տիկին Բօլ Ալֆօնսի բանեցուցած չափազանցութենէ չկրնալով իր խնդուրը բռնել :

— Այդպէս են կիները միշտ կը խնդան այն երիտասարդներու վերայ՝ որոնք սիրոյ ենթակայ են :

— Չէ՛ , այդ պատճառաւ չէ , Պ . Ալֆօնս , միայն ձեր գովեստին չափազանցութեան վրայ շարժեցաւ ծիծաղս :

— Գովեստի չափազանցութիւն չեմ՝ բնէր . ընդհակառակը այս մասին խիստ ազահե՛ծ : Բայց , տիկին , գիտէ՞ք թէ երիտասարդ մը իր սիրած էակէն աւելի գեղեցիկ չկրնար գտնել թէև բազմաթիւ ըլլան :

— Չկրցայ իմանալ ըսածդ . քիչ մը յայտնի խօսէ՛ :

— Ասել կ'ուզեմ թէ ամեն մարդ իր սիրածին միայն ամենագեղեցիկ կ'ըսէ և անոր թերութիւնները կարծես երբեք չկրնար նշմարել :

— Հա՛ , սետա՞ր ուրեմն որ քու նախկին գովեստիդ ուրիշներ ալ վկայ բռնելու համար խիստ դժուարութիւն պիտի կրես :

— Ո՛չ , ամենեւին , իմ խօսքս անոնց համար չէ որոնք ոչ սիրոյ զգացում և ոչ գանազանելու կարողութիւն ունին . բայց ենթադրենք թէ ձեր ըսածին պէս ըլլայ , միթէ իմ այսչափ իրեն նպաստաւոր զգացումներ , իր զեղեցիութեան վրայ հիացում յայտնելէ յետոյ՝ կ'զգա՞ք որ զինք անկեղծօրէն բոլոր սրտով կը սիրէի :

— Անտարակոյս , այդպէս պէտք է ըլլայ :

— Ուրեմն այս մասին ես յանցաւոր չեմ , և վերստին կ'զղամ բանաստեղծին խօսքին ճշմարտութիւնը :

— Հա՛ , աղէկ ըսիր , ինչպէս էր այն խօսքը :

—Թէ կնոջ մը խօսքերը ճշմարտութեան մասին արժէք մը չունին :

—Բայց , Պ . Ալֆօնս , անիրաւ մի' ըլլար . այդ մասին բազմաթիւ յօդեր , գուցէ այն էակը պարտաւորուած էր ուրիշի նուիրուելու և գուցէ իր այն վիճակին մէջ իսկ քու վրայ համակրութիւն ունի դեռ , ինչպէս դու իսկ քիչ մը յառաջ ըսիր թէ գրեթէ միշտ միատեղ էք . ըսէ' , այն ատեն անիրաւութիւն ըրած պիտի չըլլաս եթէ զայն յանցաւոր համարի :

—Իրաւունք ունիս , բազմա յօդեր չէ եղեր . այսչափով ալ դո՛՛ս ըլլանք :

—Նայէ' — ըսաւ տիկին Բօլ այն միջոցին որ Տօրա և Էտտար դէպ 'ի բլուրներ յառաջանալու համար քանի մը քայլ առած էին :
—Նայէ' Տօրան և Էտտարը , ինչպէս գլուխին մէկ մէկու առած ժռռ գալու ելեր են . քալէ' միանա՛նք անոնց :

Անմիջապէ՛ս ելան և երբ անոնց բաւական մօտեցան՝ տիկին Բօլ տեսնելով Էտտարի մատախոհութիւնը ըսաւ կամայ մը Ալֆօնսի ,

—Էտտար տխուր կ'երևի , ինչո՛ւ է արդեօք :

—Գուցէ համբոյր մի ինդրած է Տօրայէ , և նա ալ մերժած է : պատասխանեց Ալֆօնս :

Տիկին Բօլ վերստին չկրցաւ իր խնդուքը բռնել :

Անոնց հանելով բաւական ժամանակ ժռռ եկան , տիկին Բօլ յանչափս ուրախ էր տեսնելով Տօրայի գոարթութիւնը :

Բաւական ժամանակ խօսելով և զրարձանալով ճեմելէ յետոյ Էտտար իմացուց Ալֆօնսի որ շոգեկառ քին մեկնելու ժամանակը մօտ էր :

—Բայց — ըսաւ Ալֆօնս , —տիկինը և օրիորդը վերադարձնե՞նք տունը և ապա մեկնինք , վասն զի հոս առանձին պիտի մնան :

—Ո՛չ անհող եղիք — ըսաւ տիկին Բօլ , — Պ . Բօլ այսօր քա՛ղաքը գործ ունենալուն իմացուցած է ինձ որ այս շոգեկառ քով պիտի կրնայ գալ , հետևաբար ձեր գացած միջոցին ինք հոս պիտի հասնի :

Ուստի և ուղղակի կայարանը գացին :

Էտուարի գիմաց վրայ յանկարծ ուրախութեան վայրկենական փայ-
մը երևցաւ և անհետ եղաւ :

Ոչ որ նշմարած էր զայն :

Զարհուրելի որոշում մը ըրած էր :

Հինգ վայրկենէ հասաւ շողեկառ քը և ուղևորները թողլէ յետոյ
ձամբորդները առնելու զանգակը հնչեց : Ալֆօնս իր շնորհակա-
լութիւնը տիկին Բօլի և Տօրայի յայտնելէ յետոյ մտաւ առաջին
կարգի օթեակ մը :

Էտուար աննշմարելի կերպով խոնարհեցաւ տիկին Բօլի առջև
առանց բառ մը արտասանելու , և Տօրայի սպառնական խոժոռ
հայտածք մը ձգելով և մնաս բարև մը իսկ չըսելով կրքով մտաւ
Ալֆօնսի մտած օթեակը :

Տօրա չհամարձակեցաւ օթեակին սպառ հանին մօտելու , վասն զի
անոր վարագոյրը անմիջապէս գոցուեցաւ ներսէն :

Ներքը կէքոտ վէճի մը սկսիլը լսեց : բայց բառերը չկրցաւ որո-
շել :

Վայրկեան մը մտածեց և կատարելապէս իմացաւ Էտուարի ի՛նչ
ըլլալը :

Շողեկառ քը հազիւ մեկնած էր և ահա Տօրա նուազեցաւ կայա-
րանին վրայ :

Անմիջապէս կառք մը փոխադրուելով առն տարուեցաւ :

ՔԼՈՐԻ ԺԳ.

ԷՏՈՒԱՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Ղառնանք հիմա շողեկառ քին այն օթեակը՝ ուրկը գտնուէին
Էտուար և Ալֆօնս :

Ժամը Հինգը քառորդ անցած մեկնած էր Մ․ ի կայարանէն՝ վերադառնալու համար , հեռեւորար արեւը տակաւին իր հորիզոնական բարձրութեան մէջ կիզող ճառագայթներ կ'արձակէր :

Շողեկառքը արշաւասոյր կը յառաջանար . լերներ , ձորեր և անտառներ հազիւ ուրեմն կ'երևէին և ահա կ'աներևութանային աչաց տեսութենէ :

Փոխանակ ընտ թեան սրանչելեաց վրայ հիանալու կատաղի վէճի մը ենթարկուած էին մեր երկու պարոնները :

Ինչպէս ըսինք արդէն շողեկառքը չմեկնած վէճը սկսած էր :

Էտուար հազիւ ուրեմն օթեակը մտած էր , և ահա բարկացայտ գոչած էր Ալֆօնսի :

— Պարոն , դուն պարտաւորեցիր զիս ընել ինչ որ կամացու հապտակ էր . պատիւս , արժանաւորութիւնս և յարգս ոտքի տակ առի , և այս մի միայն քու պատճառաւ :

— Ի՞նչ ըսել կ'ուզէք , պարոն — ըսաւ Ալֆօնս այս բարկացայտ և անախտայ յարձակումէ վրդուլած :

— Ըսել կուզեմ թէ ստեցիր պարոն , և այս որովհետեւ քու պատճառաւ է՝ օր մը նաև պէտք եմ անոր հատուցումը պահանջել քեզմէ . կը լսե՞ս պարոն , պէտք եմ հատուցումը պահանջել :

— Ի՞նչ պատճառաւ ստեցիր պարոն , որո՞ւ դէմ գործածեցիր ստահօտութիւնը . ե՞ս զքեզ գրողեցի նոյնը ընելու . ըսէ՛ , պարոն , որովհետեւ քու մինչ ցարգ արտասանած խօսքերէ չկրցայ բան մը մակարեւրել :

— Ի՞նչ պատճառաւ ստեցի՛ , կը հարցնես ուրեմն թէ ի՞նչ պատճառաւ ստեցի . վասն զի պարտաւորուած էի . վասն զի այնպիսի պարագայի մը ենթարկեցայ՝ ուր անհնար էր Տօբայի բարբանջումներու և ցնորքներու չի համաձայնիլ զինք այնպէս հալեմաշ , վատոյժ , տկար և դուռնատ տեսնելով : Քու միտքեայ ինձ դէմ լարած դարանիդ յաջողիլ իմ ամիսներով խորհած և որոշած գիտաւորութեանս ակնկալութիւնները վեր ՚ի վայր կործանեց :

— Գարա՛ն , ձեզ դէմ դարա՛ն լարած եմ , բացատրէ՛ ըսածդ պարոն , որովհետեւ կը տեսնեմ որ մարդարէանալու սկսար :

— Մարգարէանալ չէ այս, պարո՛ն, այլ շշափելի ճշմարտութիւն մի յայտնել. ըսէ՛, ինձ քու դադանի նպատակդ. իմացո՛ւր թէ ինչ պատճառներէ ստիպեալ զիս այսօր հոս բերելու համար այնչափ աշխատեցար. բայց լու՛ն, քու բացառելէ յառաջ ես ահաւասիկ ճշմարտութիւնը քեզ յայանեմ. քու նպատակդ, պարո՛ն, զրս թշուառացնել էր. զիս հոս մղեցիր, որպէս զի քու անիրաւ դիտաւորութիւնները գործադրին : Ձե՛մ կրնար գուշակել թէ ինչ դադանի ակնկալութիւն մի կ'սպասես իմ թշուառութենէ :

— Ար թշնամանես զիս, Էտու՛ար, և դիանես թէ քու բարկութիւնդ քեզ չերեցնէր արտասանած խօսքերուդ ծանրութիւնը : Իմ նպատակս, պարո՛ն, Տօրայի սպառնացած թշուառութիւնը յամել էր. զքեզ հոս բերի որպէս զի թշուառ աղջիկը իր կորուսած տարիներէ ամիս մը շահի : սակաւ ինչ ոգևորի : Ար պաշտէ, կը սիրէ զքեզ ընդդէմ քու անոր ցոյց տուած կատաղի և անիրաւ ատելութեան : Չկարծես թէ երեակայած եմ որ դու քու նախկին պարսաւելի ընթացքդ պիտի փոխես, ասիկա անտարակուսելի է : Ինքզինքդ պատուոյ և արժանաւորութեան սաստիկ դիւրագգած կը ներկայես. մի խօսիր այլ ևս ասոնց վրայ, վասն զի ասոնց արժէքը քեզ ճանչցնելու համար պիտի պարտաւորիմ բոլոր ցայս վայր քու այս դէպքին նկատմամբ բռնած ընթացքին պարսաւելի խարդախութիւններն ու խարէութիւնները երեան հասնելու. որոնք ինչպէս գիտես, գաղանի չեն ինձմէ :

— Ինչ ըսել կուզես, պարո՛ն :

— Ինչ ըսել կ'ուզե՛մ. քանի որ դու անիրաւ ըլլալով կը ջանաս բոլոր խարդախութիւններդ և խարէութիւններդ իբր արդարութեան և մաքուր խղճի առաքինական գործեր ինձ կլլեցնել, ես սիտի դեզելիմ, պարո՛ն, նոյն իսկ ճշմարիտ իրողութիւնները յայանելով արդարութեան պաշտպան կանգնիլ և բարեկամական զգացումէ աւելի խղճի ձայնին հնազանդիլ : Եթէ պատիւ և արժանաւորութիւն մեծ արժէք ունէին քովդ՝ ինչո՛ւ ուրեմն նախապէս զայն քու ազատ կամօքդ արհամարհեցիր և անպատուեցիր. սէրդ նուիրեցիր Տօրայի, զինք երջանկացնել խոստացար և խաբեցիր, և խաբելով

չէի՛ր գիտեր միթէ պատուոյդ և արժանաւորութեանդ կարեւի՛ր հարուածներ տալդ . այլ ոչ, ասիկա անկարելի է . վասն զի գուցէ դու իսկ գիտես որ այս սիրահարական դէպքին շնթարկած աւելի խոհեմ, արժանաւոր և յարգելի ընթացք մի ունէ՛իր քան թէ հիմա որ բողբոլվին զառամեալ և խելաթափ անձի մը յատուկ կերպով կը գործես :

— Խելաթափ և զառամեա՛լ :

— Այո՛, պարոն, խելաթափ և զառամեալ : Չկարծես որ զքեզ պարտաւելու կամ թշնամանելու նպատակաւ կը խօսիմ հետդ, բնա՛ւ . տեսնելով քու առ իս անիրաւ յարձակումդ զթացի վրագ քան թէ վշտացայ, և այս բոլոր խօսքերս, գիանաս որ, բարեկամէ մը, մտերիմէ մը առ քեզ աշդարարութիւններ են : Էտուա՛ր, աղ՛կ միտ դի՛ր ըսած իս . եթէ բարեկամ մի քու այս ընթացքիդ այսչափ կը հակառակի, ի՛նչ պիտի ըսեն արդեօք քեզ համար մեզ անձանօթ եղողները . ի՛նչիւր ընելու և խօսելու պիտի չաշխատին արդեօք քո թշնամիներդ, վասն զի անտարակոյս ո՛նիս, և որոնք յարմար առթի կ'սպասեն զքեզ թշնամանելու, անպատուելու և բամբասելու : Էտուա՛ր, Էտուա՛ր, զգուշացի՛ր . անտարակոյս այս դէպքը օր մը իր ամբողջ պարագաներով ամենու ծանօթ պիտի ըլլայ . ժամանակը բան մը մթութեան մէջ չդահեր, մանաւանդ այս տեսակ դէպք մը :

Երկար և խորին լուծիւն մի տիրեց Ալֆօնսի վերջի խօսքերուն : Էտուար իր գլուխը օթեալին պատահանէ գուրս հանեց . բայց անմիջապէս սրարտաւորեցաւ վերստին ներս քաշել :

— Պարոն, ըսաւ Էտուար, հովին գիմահարութիւնը ստակալի է :

— Ատիկա ապացոյց մ'է շողեկաւ քին ընթացքին խիստ արագութեան :

Եւ ստուգիւ շողեկաւ քը անտառներու և դաշտերու մէջ զրտնուելուն և վտանդէ մը կասկած չունենալուն խիստ արագութեամբ կը յառաջանար :

— Քանի՞ վայրկիսնէ կը յուսաք որ Ք . . . ի կայարանը կրնանք հասնիլ :

— Գրեթէ քսան վայրկիսնէ և ապա կէս ժամ ևս Չ . . . մանելու համար :

—Ուրեմն շուրջ յիսուն վայրկեան ունինք զեռ . ձանձրալի պիտի ըլլայ այսչափ միջոցը :

—Չէ՛, կրնայ մարդս ինքզինք զբօսցնել արտաքին տեսարաններու ուշ դնելով :

Եւ ստուղիւ ի՞նչ սքանչելի էին բնութեան հոյակապ տեսարաններու ակնթարթի մը մէջ կրամ փոփոխութիւնները : Աւերներ կերելին և անոնց վրայ հիանալու ժամանակ չէիր գաներ . դաշտեր կերելին և չէիր կրնար անոնց զմայելի տեսքով զբօսնուի : Խրաքանչիւր վայրկեանի մէջ տեսարաններու կրամ փոփոխութիւնը կը ցւէր նաև մտածումները , սքանչացումը և զարմանքը : Ամեն ինչ թէ տեսլական և թէ խնցական փոյլակի մը արագութիւնն ստացած էին :

Մարդս այնպիսի պարագայի մէջ մեկ մեկու յաջորդող տեսարանները անշաճ նայելէ զատ բան մը չկրնար բնել :

Էստուար և Ալֆօնս օթեակին ներսէ կը դիտէին բնութեան հոյակապ ճարտարապետին տաքեր հրաշակերանները :

«Բառ որդի մը չափ այսպէս խոհուն և լռիկ բառ մը չարտասանեցին երկուքնին ալ :

Որմէ վերջը Էստուար՝ որ Ալֆօնսի զինաց նստած էր , ելնու իր տեղէ և Ալֆօնսի նստած բազմոցին վրայ նստաւ ուր կրնային չորս հինգ հոգի հանգստութեամբ նստիլ :

—Պարո՞ն— բաւ Էստուար յանկարծ կնճռալի խնդրի մը լուծում տուողի յատուկ ժպիտով , —որովհետև իրիսա դժբաղդութեան մէջ ինկած եմ այսօրինակ վշտերու և մտածումներու սթամճատաւ , որոնք չորս կողմն պաշարած կը սարտափեցնեն զիս , և որոնք չէ թէ իմ յարգս և սրտիւս նսեմայնելու միայն կ'սպառնան՝ ալ և առողջութեանս սաստիկ կը վնասեն . միջոց մը դատայ , որով պիտի կրնամ այս բոլոր ձախորդութիւններէ և թէ ոչ բոլորովին գէթ ըստ մասին ազատիլ :

—Ի՞նչ տեսակ է այդ միջոցը :

—Աւրտին ճամբորդութիւն մի ընել կը խորհիմ ,

—Աւելի աղէկ կրնայ ըլլալ եթէ ըսէք թէ Տօբան գաղցնի հարուածով մի սպաննելու վրայ կը խորհիք :

— Եւ ինչո՞ւ պարո՞ն , ի՞նչ բան կրնաս ստատել իմ այսպէս կատա-
ուած կաշկանդուած մնալովս . միթէ երբէք կ'երևակայես ո՞ր պիտի
հաւանիմ կամ այն աստիճանի ապուշ պիտի ըլլամ որ ձեռքս նուի-
բեմ Տօրայի , Տօրայի՛ որ անտարակուսելի կերպով կործքի հի-
ւանդութեան ենթարկուած է , և ասիկա ես աչօքս դիտեցի : Ար ցը-
նորիմ կարծես այսպիսի խնդրի մը վրայ խորհելով , և հաւաստի ե-
ղիր որ երակներուս մէջ սարսուռ կ'զգամ : Ի՞նչ , պարո՞ն , իմ ա-
պագաս վշտաց և հառաչանաց մէջ անցունելո՞ւ համար նեանմ'ինք-
զինքս կուրօրէն այն վիճը , այն զարհուրելի անդունդը՝ ուր սիրտս
ամենէ զարհուրելի տանջանքներով պիտի մաշի :

— Ար սխալիս , պարո՞ն , եթէ կը կարծես թէ իմ նպատակս
զքեզ համոզել է որ ձեռքդ նուիրես Տօրայի : Այս պարագայիս
մէջ ձեր քանի մը կարծիքներու կը հաւանիմ , և քանի որ կ'ընէք
թէ ստոյգ ապացոյցներով իմացաք անոր կուրծքի հիւանդութեան
ենթարկիլը , հարկ է նաև դիմանաք որ եթէ այդպէս ըլլայ՝ ինչպէս
քու նոյնպէս և անոր ընտանեաց կողմէ՝ զօրաւոր դիմադրութիւններ
պիտի ծագին այսպիսի միաւորութեան դէմ . վասն զի յայտնի է որ
ամուսնութիւնը այսպիսի ակտի ենթարկող անձի մը կենաց դաշտնի
հարուած մ'է , և որ ժամանակէ խիստ յառաջ կը տապալէ , կը
ջնջէ կեանքը աղեկտուր դէպքերով : Իսկ սէրը , ո՛հ , յուսատու սէ-
րը կը կազդուրէ , կը վերանորոգէ սիրտը , և եթէ անոր անհնչանա-
լը շարգիլէր՝ դէթ անտարակուսելի է որ կ'ուշայնէ կործանումը , և
իմ նպատակս , պարո՞ն , Տօրայի կեանքը ըստ կարի երկարել է ,
սիրոյ , ո՛հ , սիրոյ յուսադրութեամբ և երազներով շոյելով զայն :

— Այլ պարո՞ն , դիտե՛ս որ եթէ ես վերստին սկսիմ Տօրայի հետ
յարաբերութեան մէջ մտնել՝ բարեսիրական նպատակաւ աշխատելուս
փոխարէն ապագային մէջ իմ պատուոյս ալ շատ կողմերէ հարուած-
ներ պիտի ուղղուին :

— Եւ ինչո՞ւ :

— Վասն զի քանի որ Տօրան սպառնացած սովակի ձախտագրէ մը
փրկել անհնարին է , անոր մահուանէ վերջը ի՞ր կենդանութեան
ժամանակ բռնած ընթացքս հազար ու մէկ խենթ ու խելաւ բա-

ցատրութիւններու տեղի պիտի տայ :

— Ամենեկն , սարսո՛ն , այդ կողմէ բնաւ հոգ մը ունենալ պէտք չէք . կը բաւէ որ զգաք թէ ձեր ընթացքը գովելի էր . կը բաւէ որ խիղճդ որ և է կերպով դքեղ չտանջէ : Օտար բարբանջումներ ներքին համոզման և խղճի անսորբութեան դէմ ի՞նչ ազդեցութիւն ունին :

Այս միջոցին շոգեկառքին Ք. . . ի կայարանը հասնիլը ընդհատեց նաև իրենց խօսակցութիւնը :

Հինգ վայրկեանի չափ ճամբորդներ հանելու և ընդունելու համար սպասեւէ յետոյ , շոգեկառքը վերստին ճամբայ ելաւ Չ. . . հասնելու համար :

Էտուար խիստ մտախոհ կ'երևէր :

Քանի մը վայրկեան վերստին լուծեամբ սահեցան :

Որմէ վերջը Էտուար ըսաւ Ալֆօնսի :

— Այր զարմանամ ես այս աղջկան բնաւորութեան վրայ որ մեր նախկին աննշան յարաբերութիւններէ և ժամադրութիւններէ ծիծաղելի երազներ ստեղծեր է , ամենօրեայ պատահած դէպքերէ երբէք տարբերութիւն չունէին մեր յարաբերութիւնները . և ի՞նչ , պէտք էր ինք իր տղայական երևակայութեամբ այնպիսի բաներ ակնկալել որոնց դործադրութեան անկարելիութիւնը իմանալու համար հինգ վայրկեանի չափ հասուն խորհիլը կը բաւէ : Ալֆօնս , Ալֆօնս , ես այս պարագայիս մէջ թերևս սխալած եմ , այլ սրտիս խորէ կ'զգամ որ յանցաւոր չեմ :

— Քու սխալիլը , Էտուար , միայն այն կէտին վրայ է որ անոր ի՞նչ բնաւորութեան և միտումներու տէր ըլլալը ստուգելէ յառաջ հետը յարաբերունթիւն հաստատեցիր , և այս պարագային մէջ ինքն ալ յանցաւոր չէ վասն զի խարուեցաւ , թէև քողքը է ինձ հաւատալ թէ դու չխաբեցիր : Այլ Էտուար ձեր յարաբերութիւնները առիթ տուին որ սէրը իր վերջին սահմանի զօրութեամբ իր վրայ բռնացաւ և որ պատճառ պիտի ըլլայ նաև իր կորստեան :

— Իմ յարաբերութիւններս իր սիրոյ սաստկութեան պատճառ եղան , և կը հաւատամ , սարսո՛ն , երբ քեզ հաւատեմ պատուոյս

վրայ երգում ընելով որ առաջին անգամ իր հետ գտնուած միջոցիս իմ սիրային բառ մը արտասանելէ յառաջ՝ զգացի անոր առ իս ըզգացած համակրական սաստիկ սիրոյ զգացումը, և որով ես ալ քաջալերութեայ անոր հետ համարձակօրէն խօսելու և այսպիսի պարագայի մէջ ուրիշներու նման զինք հաճելու համար խենթ ու խելառ խոստումներ ընելու :

— Եւ ահա՛ այդ խոստումները զինք վստահացուցին որ երջանիկ պիտի ըլլայ . և այդ խոստումներու չի գործադրին է որ իր թըշուառութիւնը փութացուց :

— Աղէկ պարոն, եթէ դու իմ տեղս ըլլայիր՝ ինչ ընթացք պիտի բռնէիր . կամ մինչև հիմա որ հազար անգամ այս տեսակ դէպքերու հանդպած ես, ըսէ՛ ինձ, երբէք այնպիսի ընթացք մի ունեցած ես, որ իմինէս փոքրիկ տարբերութիւն մի ունենայ, եթէ այո՛, իմացո՛ւր, և ես պատրաստ եմ քեզմէ ներումն խնդրելու և կատարելու՝ ինչ որ որոշես :

Ալֆօնս չի պատասխանեց և զլուխը օրելով Էտուարի ըսածներուն իրաւունք տուա :

Քանի մը վայրկեան դարձեալ լուրթեամբ անցուցին :

Որմէ վերջը Ալֆօնս ըսաւ .

— Լա՛ւ, պարոն, հետաքրքիր եմ իմանալու թէ Մ․․․ի մէջ այնքան ժամանակ անոր հետ առանձին ըլլալով ինչ ընթացք բռնեցիր . վասն զի Տօրայի գէմբը զուարթ էր, և հիմա քու խօսեցածներէ՛ կը զարմանամ և չեմ կրնար իմանալ թէ ինչպէս կրնայ ըլլալ ասիկա :

— Այո՛, զուարթ էր, վասն զի պարտաորուած էի իր քմայ համաձայն շարժիլ քանի որ իր հետն էի . այլ երբ կայարանը հասանք՝ ընթացքս փոխեցի և այնպիսի կերպով իր հետ վարուեցայ և անանկ սպառնական խոթող հայուածքով մի իմացուցի անոր իմ առինքն ունեցած անտարբերութիւնս՝ որով անտարակոյս պիտի իմանայ առանձնութեան մէջ ըսած խօսքերուս ստուրթիւնը :

— Կարեւի՛ք պիտի վշտանայ, պարոն, եթէ ըսածդ ստոյգ է :

— Այո՛, ստոյգ է, պարոն, ինչպէս ստոյգ է մեր անձերու գործը :

յութիւնը : քու բոլոր համոզիչ խօսքերդ ամենեին կարող պիտի չըլլան զիս համոզել որ վերստին իր հետ յարաբերութեան մէջ մննեմ . վասն զի ալ կարողութիւն չունիմ կեղծաւորութեան գիմակ կրելու . վասն զի ալ անկարելի պիտի ըլլայ համոզել զինք թէ կը սիրեմ , քանի որ զինք ատելուս զօրաւոր ապացոյցներով համոզուեցաւ :

—Ուրեմն ի՞նչ իմացնել պէտք է տիկին Շարլի որ անհամբերութեամբ ձեր տեսութեան հետեւութիւնը իմանալու կ'սպասէ :

—Մեր տեսութեան հետեւութիւնը իմանալո՞ւ կ'սպասէ , և ի՞նչ կ'աչնկալէ ասկէ . Ալֆօնս , կ'աղաչեմ բացարձակասէս իմ դիտաւորութիւնս Տօրայի յայտնելէ յետոյ , աւելորդ պիտի ըլլայ պատիր յոյսերով խարխրել տիկին Շարլը՝ որու խաբուիլը այնչափ կարեւորութիւն չունի . ուստի յայտնէ՛ անոր ի՞նչ որ ճշմարիտ է :

Ասկէ վերջը ալ բոլորովին լուծեամբ անցուցին :

Քանի մը վայրկեանէ շողեկաւքը հասաւ Ձ . . . ի կայարանը , ուր հտուար և Ալֆօնս օթեակէն ելելով զատուեցան մէկ մէկէ :

Ալֆօնս՝ ինչպէս որ պատուիրուած էր էտուարէ , Մ . . . ի մէջ հտուարի և Տօրայի մէջ պատահած դէպքը բոլոր իր ճշմարիտ պարագաներով յայտնեց տիկին Շարլի :

Տիկին Շարլ զարհուրեցաւ Ալֆօնսի ըսածները լսելով և չկրցաւ իր յորդ արտասուքը զսպել :

Հետեւեալ առաւօտ մարդ զրկուեցաւ Մ . . . Տօրան Ձ . . . վերագարձնելու համար :

ՄԱՌԻՔ ԺԵՐ

ՅՈՒՍԱՀԱՏՈՒԹԻՒՆ

Այս դժբաղդ պարագաներու վրայ տիկին Շարլի զգացած բուռն

և իրաւացի սրտմտութիւնը, գութը, կարեկցութիւնը նկարագրու-
անհնարին է:

Թշուառ կինը, որ ամենեւին միջոց մը չէր զնանար իր աղջկան ըս-
պառնացած թշուառութեան առաջքը առնելու համար, բոլորովին
շուարած և սարսափած մնաց Էտուարի պազ անտարբերութիւնը ի-
մանալով, որուն պատճառաւ հետևելիք անհնարին վիշտերն, յու-
սահատութիւնը, դաժան և վաղահաս մահը բացորոշ կը նշմարէր:

— Եղո՛ւկ քեզ, ո՛ր Տօրա — կը գոչէր տիկին Շարլ ցաւազին,
— ևս առաւել եղո՛ւկ ինձ որ այս և ասոր նման չարագուշակ օրեր
տեսնելու դժբաղդութիւնը պիտի ունենամ: Ա՛ւր էր որ այն սոսկալի
ախար՝ որ քու վրայ բռնացած քու սիրուն և պաշտելի սիրտը յամբա-
բար կը մահէ: այս վայրկեանէ անհնարին կատաղութեամբ իմ վրայ
հասնելով քեզմէ յառաջ մահէր, վերջացնէր այս կեանքը՝ որ վշտե-
րու, ցաւոց, հառաչանաց և յուսահատ սգոց ենթակայ ըլլալու հա-
մար կ'երկարի: Ա՛հ, քանի՛ պատիժ յոյսերով կը խաբուէի ամեն
անգամ որ քեզ կը տեսնէի. քանի՛ պայծառ ակնկալութիւններ կը
ծլէին մտացս մէջ քու վաւրոն, կայտառ, պարկեշտ բնութիւնը
և շնորհալի ու գեղեցիկ դէմքը տեսնելով: Հազիւ ուրեմն տասն և ինն
դարնանց շրջան մը ըրած է քու հասակը, և այլ ևս ո՞ր դիտէ ինչ
զարհուրելի շրջաններու ենթակայ պիտի ըլլայ:

Կարծես ընդ աղօտ կը նշմարեմ ապագային սեռ օրերը. ահա
կը վերագառնաս Մ... է յուսահատ և ցաւալի վիճակի մէջ ինկած.
վերասին կ'սկսիս քու զարհուրելի առանձնական կեանք վարելը որու
մէջ յուսահատ մտածումներ և հառաչներ արտասանելէ զատ
բան մը չկայ և որով աղետալի հիւանդութիւնը զօրանալով պիտի
մահէ և հիւժէ գքեզ... եւ ապա... ո՛հ ափսո՛ս...:

Ո՛վ Ատուած, ներէ՛ եթէ քու ամենազօր կամբդ եւ ապագային
գաղտնիքը հետազօտելով միզապարս կը գանտ իմ, այլ ինչ կը խօ-
սիմ, յիմար եմ, միթէ մայրական զգացողութեամբ է որ կը խօ-
սիմ եթէ ճակատագրային պատգամներ կարձակեմ: Ի՞նչ, միթէ հը-
նար է, միթէ կարելի է որ երկինք այսպէս շուտ, այսպէս յուսալի
հասակի մէջ Տօրայի մահը ճակատագրած ըլլան...:

Ո՛Տ, ՍԷՐ, ՍԷՐ, կենացս ամբողջ շրջանին մէջ այս առաջին անգամն է որ դքեզ քու արդիւնաւոր և երջանկառիթ պաշտամանդ ներհակ վիճակի մէջ կը տեսնեմ: Ո՛ւր են քու երջանկութիւններդ — ահա՛ քեզ թշուառութիւններ, ո՛ւր են ցնորքներդ և սիրային պալատներդ. — ահա՛ քեզ հառաչանքներ և զարհուրելի խուսափումներ մարդկային ընկերութենէ, ո՛ւր են քու զմայլելի բերկրութիւններդ. — ահա քեզ զարհուրելի սրամաշտօքներ:

Ափսո՛ս, և ինչո՞ւ այսպէս ո՛ սէր, ինչո՞ւ այսօրինակ ընթացքով մտար Տօրայի սիրտը: Այլ ի՞նչ կը խօսիմ ո՛ սէր, դու յանցաւոր չես, դու քու պաշտօնդ լիովին կատարեցիր. դու լոկ զցացողութիւն մ'ես որ ՚ի բարին և ՚ի չար կրնաս գործածուիլ. դու քու պարտքեզ աւելի բան մը չըրիր: Այս աղետալի դէպքին մէջ յանցաւորը կամ սխալողը Տօրայի մտքը, դատողութիւնը և իմացականութիւնն էին, և ի՞նչ կ'ակնկալէիր այս սիրահարութենէ ո՛ Տօրա՛. ինչո՞ւ հասուն կերպով չի մտածեցիր այս նորօրինակ սիրոյ վրայ. ի՞նչու նաև քննութեան տակ չառիր հատարի ընթացքը՝ որու խարեբայ, նենգաւոր և չարակամ ըլլալը ես շատ յառաջ զգալով կ'իմացնէի նաև քեզ մերթ սպառնալի և մերթ աղերսական կերպով, ափսո՛ս, դու կը կարծէիր թէ ես քեզ հակառակիլ կ'ուզէի, դու կը կարծէիր թէ ես քու երջանկութեան արգելք ըլլալ կ'ուզէի. ափսո՛ս, միթէ կարելի է որ մայր մը իր զաւակին ապերջանկութիւն նկատէ, քանի որ անոր երջանկութիւնը իր անձնական երջանկութենէ բնաշտարբերիր: Այլ ասոնք, Տօրա՛, քեզ բոլորովին անընդունելի կ'երևէին, վասն զի զեռհաս ըլլալով փորձառութիւնդ տկար և հետեւաբար անկարող էիր իրաց վիճակին նայելով ապագային վրայ դիտողութիւններ և գուշակութիւններ ընելու:

Ո՛Տ Տօրա՛, ինչո՞ւ ժամանակին միտ չդնէիր մայրական ազդարարութիւններու՝ որ բոլորովին քու բարեացդ և երջանկութեանդ պատճառ պիտի ըլլային. ինչո՞ւ արհամարհէիր այնպիսի խրատներ՝ որոնք անտարակուսելի կերպիւ հասուն փորձառութենէ քեզ կ'ընծայուէին: Ո՛Տ Տօրա՛, ինչպէս շատերու նոյնպէս և քեզ կուրցուցած էր սէրը, դատողութիւնդ կորուսած էիր, իմացականութիւնդ խանգարած, և

կնքուով մը այնպիսի խելագրութիւն մէջ ինկած՝ ուր ուրիշներու
հաճոյցից գործիք ըլլալէ ուրիշ բան չէիր կրնար ըլլալ ինչպէս որ ե-
ղար : Ա՛յլ Աստուած , ալ պիտի խօսիմ , ինչ որ չեմ ուզեր խօսիլ ,
միթէ այս գործքին մէջ քու նախահինամութիւնդ բացակայ է .
միթէ քու անհուն և հրաշալի արդարասիրտութեանդ վայել է որ ան-
մեղ մը թշուառ , աստերջանիկ և վաղահաս մահուան ճիրաններու զոհ
ըլլայ . և յանցաւոր մը , և չարասիրտ մը , և անխիղճ մը անպատիժ մնայ :
․․․ Ա՛յլ Տէ՛ր , գուցէ քու անքննելի խնաստութեամբ ասկէ բա-
րութիւն մը պիտի արտադրես . բայց ե՛ս , ե՛ս , կը պաղատիմ որ ցոյց
տաս ինձ այնպիսի միջոցներ՝ որով կարենամ անմեղ աղջիկս թրշ-
ուառութենէ , ցաւերէ և անժամանակ մահուան ճիրաններէ ազատել .
և ես այն աստե՛ն ինչեր պիտի չընեմ . պիտի ընեմ այո՛ ամեն բան .
ամեն բան պիտի զոհեմ մինչև պատիւս և անձս . մարդկային կա-
րողութենէ աւելի պիտի աշխատիմ քու ինձ ազգած զօրութեամբ .
վերջապէս պիտի ընեմ ինչ որ պէտք է ընել մայր մը երբ խնդիրը
իր զաւակին կենաց և մահուան վրայ է : »

Այս կերպ էին տիկին Շարլի բուն զոհացումները , յուսահատու-
թիւնը տարապայման էր և գերմարդկային կարողութիւն մը պէտք
էր զայն ջնջելու : Իր կսկիծները ծփուն հողմայոյղ ովկիանու ալիք-
ներունման սոսկալի էին , և որոնք ահապին լափի րինդոս մը ձևա-
նալով կ'ընդդէմն իր իմացականութիւնը , գատողութիւնը և խելքը :
Ա՛յն զէր , կ'աշխատէր փրկաւէտ միջոցներ գտնել այն անկարող էր
ըստ արժանւոյն խորհելու և որոշելու : Իր մայրական արժանապատ-
ւութիւնը վիրաւորուած էր . կը տեսնէր որ անխիղճութենէ գոթ և
կարեկցութիւն արհամարհուած էին , և կրէր իւրովի շուարուն և ապ-
շած . « Միթէ բնութիւնը բացառութիւններ ունի՞ եղեր , միթէ կա-
րելի է որ այս տեսակ անխիղճ և անօրէն անձեր գտնուին աշխար-
հի մէջ :

Այս կերպ տիկին Շարլ առանց յաջողութեան ելք մը գտնելու
անցոյց իր օրը :

Նոյն իրիկուն Տօրա վերադարձաւ Մ․․․ է :

Քանի զարհուրելի՞ վտփոխութիւն , օ՛ր իր նախկին օրուան մեղիչ

գեղն ու շնորհք . ո՛ւր էր պապած դիմաց վարվուուն կայտառու թիւնը . ո՛ւր իր շնորհալի և եռանդուն ձիրքերը : Այն աչերը՝ որ սիրոյ կայծակներ կը ցայտէին , և որոնց առջև երիտասարդ մը յափշտակուած կը մնար , կարծես իրենց զօրութիւնը կորուսած էին . իր դէմքը վերստին պատած էր շարագուշակ դեղնութեամբ , և որ ներքին տրամութեան մը գրոշմը կը կրէր . իր սեաւ մեծ աչերու մէջ կը նշմարուէին իր մեծ վիշտերը , այնպիսի վիշտեր՝ որոնց առջև կեանքը կը փձանայ , ինչպէս կը վձանայ ծաղիկ մը խորշակէ :

Աղիտալի հիւանդութիւնը՝ որ արդէն շատ յառաջ իր սրտին մէջ արմատացած և որ ժամանակ մը երջանկատիւթ պարագաներու պատճառաւ թմրած էր , սկսաւ կատաղութեամբ երեւան ելլել և Տօրայի աղաղան թշուառացիներու սպանալիքներ ընել :

Տօրա իր Ֆիզիզական կենաց հանգամանաց տեղեակ էր շատ յառաջ . այլ կը յուսար նաև որ եթէ սէրը՝ որ այս հիւանդութեան պատճառ եղած էր , գոհ ըլլար , պիտի ջնջուէր նաև իր ախտը : Այսպէս կ'ենթադրէր Տօրա , և այսպէս ենթադրելու իսկ իրաւունք ունէր . վասն զի յաճախ փորձած էր այս հիւանդութեան ընթացքը և դիտած էր որ յուսահատութիւնը անոր կատաղութեան և յոյսը զայն կակղելու պատճառ կըլլային : Այլ հիմա որ բոլոր իր յոյսերը ցնդեցան Էտուարի առ ինքն յայտնած ատելութեամբ և անտարբերութեամբ՝ ալ բոլորովին յուսահատեցաւ իր առողջութեան վերստանալէ և բոլորովին հաճ և հատան կուզէր համբերել այն տանջանաց և ցաւերու՝ որ այս հիւանդութեան ընկերներն են :

Չարմանք , միթէ Տօրա ալ բացորոշ գիտնալէ վերջ որ Էտուար զինք չե սիրէր , ինքն ալ միթէ զազրեցուցած էր իր սէրը՝ որ այնչափ անհուն և անսահման էր : Միթէ իր զգացողութիւնը վիրաւորուած էր դիմացինին ներհակ զգացումէ . ո՛չ , ո՛չ , Տօրա սիրած էր անգամ մը և ալ չէր կրնար ատելու . իր սէրը այնպիսի սէր մ'էր՝ որ ըսկսելէ վերջը բնաւ չի դադրիր և զոր ուրիշի մը վրայ փոխադրել անհնարին էր : Իր առ Էտուար զգացած սէրը ինչ որ էր յառաջ օրոյն էր նաև հիմա . երբէք փոփոխութիւն մը կրած չէր . արդէն

չատունց իբ յետին սահմանը հասած էր, և այս^ո զգացողութիւնը ալ աւելի չէր կրնար աճիլ:

Կը զարմանար Տօրայ, և չէր կրնար իր անձին վրայ դատողութիւն ընելու. կը զարմանար թէ ի՛նչպէս տակաւին կը սիրէ այնպիսի էակ մը՝ որ զինք կ'ատէ: Չէր ուզեր փոխադարձաբար զայն ատել. կ'ուզէր մոռնալ զայն, յախտենապէս մոռնալ, չյիշել անգամ մի ևս, այլ անհնար էր. միշտ իր երեակայութիւնը անով դրաւուած և իր սիրտը անկէ տիրուած էր: Աւելի զիւրին էր թերեւս իր անուներ, իր անձը, իր ո՛վ ըլլալը մոռնալ քան թէ Էտուարը. վերջապէս Էտուար իր սիրոյն չատուածը, սրտին իշխողը, և երեակակայութեան առարկայն եղած էր:

—Ա՛հ, Էտուա՛ր, Էտուա՛ր, կը գոչէր ցաւազին, ինչո՞ւ այս կերպ զքեզ սիրէի. կամ ինչո՞ւ պարտաւորեցիր զիս այսկերպ զքեզ սիրելու, քանի որ այսօրինակ ընթացք մը պիտի ունենայիր: Ո՛հ, ի՛նչպիսի խարուսիկ երջանկութեամբ պաշարուած էի որ վայրկեան մը անգամ չէր սահեր ՚ի զուր որ զքեզ չյիշէի. ժամ մը չէր անցներ որ սիրային խորհրդածութիւններս ընդհատէին. օր մը չէր անցներ որ սիրոյդ պատճառաւ դժուարութիւններու չհանդպէի և զանոնք սպառ սպուռ անհետելու համար ամեն ջանք ՚ի գործ չդնէի. չյաջողեցայ՝ Էտուա՛ր, բայց եթէ յաջողէի իսկ ի՛նչ պիտի շահէի. — ՈՒՆՅԵՆՑ. ճակատագրէն յախտենապէս քու սիրոյդ համար զո՛հ մը որոշուած է եղեր, ես եղայ այն, թո՛ղ ուրեմն զոհուիմ...:

Շատ անգամ, Էտուա՛ր, երբ առանձին կ'ըլլայինք, երբ աչերս աչերուդ յարած սիրտդ կարդալու կը ջանայի, երբ վստահ դէմքդ ինձ ժպիտներով կը պատասխանէր, երբ աղու բերանդ հազար ու մէկ սիրային խօսքերով զիս վստահելու կը ջանար՝ սէրս կը բորբոքէր, արիւնս կ'եռար, կը կորնցնէի ինքզինքս, կը պատրաստուէի գիրկդ նետուիլ և փարիլ քեզ յախտենապէս. բայց ախո՞ս, կարգիլէր ինձ, և ի՛նչ բան. — ԱՆՅԱՅՏ ԲՆԱԶԳԻՈՒՄ ՄԸ:

Երբ ընկերութեան մէջ քեզ հանդպէի, երբ տեսնէի թէ ուրիշներ քեզ կը մօտենան, քեզի հետ կը խօսակցին՝ կը նախանձէի, կը բարկանայի անոնց դէմ. վստահ չէի ուզեր որ քու շըն-

չած օգդ անոնք շնչեն . քու քայլած տեղդ անոնք քայլեն . քու նստած տեղդ անոնք նստին : Ա՛ռլէի այնպիսի առանձնութեան մէջ հետդ ըլլալ՝ ուր օտարի մը ներկայութիւնը մեր շնչած օգը չապականէր , ուր օտարի մը խօսքերը մեր սիրային խորհրդածութիւնները չընդհատէին . և երբ մեկնէիր՝ կ'ուզէի նստած տեղդ նստիլ , վասն զի երջանկութիւն կ'զգայի . քայլած տեղդ քայլել՝ վասն զի հաճութիւն կ'զգայի , քու շնչած օգդ իմ թշուառ սրտիս կենդանութիւն կուտար : Ար տեսնե՞ս Էտուա՛ր , թէ ի՞նչպէս յիմարաբար կը սիրէի զքեզ : Էտուա՛ր , Էտուա՛ր , սէրն ալ իր խնայութիւնները ունի , գիտե՞ս դու ինչ է սէրը . — Ո՛չ , ՎԱՍՆ ԶԻ ԶԶԳԱՅԻՐ , ՎԱՍՆ ԶԻ ԶԻՍ ԶՍԻՐԵՑԻՐ :

Այսպէս էր իմ սէրս , այսպէս : Անձս բողբոլին քեզ նուիրուած էր . բարէ՛ , ի՞նչ էր ինձ համար աշխարհս , և ի՞նչ իր բերկրութիւնները . աշխարհս ինձ համար դու էիր Էտուա՛ր , և դու ինձ համար աշխարհս և անոր բերկրութիւնները քու մէջդ . կը բովանդակէիր : Արհամարհ ակնարկ մը միայն նետեցի դէպ ՚ի այն կեսնաբը՝ որ ինձ սահմանուած էր և որով գուցէ կրնայի երջանկի ըլլալ : Քեզի յարեցայ , զքեզ պաշտեցի . վասն զի դու ինձ երջանկութիւն խոստացար . հաւատացի , յուսացի , սիրեցի . օրին մէկը քու կդ ըլլալով երջանկի ըլլալ երեակայեցի . բայց ակսո՞ս , թե՛ թե հողմ՝ մի , քու անողորբելի ՈԶԳ՛ զիս թշուառացուց . թշուառացո՞ւց , ո՛չ , վասն զի մինչև այս կէտս իսկ տակաւին զքեզ կը սիրեմ : Էտուա՛ր , ես քեզմէ աւելի գերազանց եմ , վասն զի ես սէր կ'զգամ : Սէրը հողույն ծնունդն է , հողին անմահ է , և սէրը մահուամբ չոչնչանար : Ես իմ մահուանէս վերջ իսկ տակաւին քեզմէ պիտի չբաժնուիմ . քու մօտդ պիտի ըլլամ . անտեսանելի , անշօշափելի այլ զգալի կերպով և գուցէ իսկ զարհուրելի երևիմ քեզ , վասն զի , Էտուա՛ր , դու իսկ կ'զգաս որ քու անցեալ կենաց մէջ սխալ քայլեր առած ես :

Ա՛հ , Էտուա՛ր , Էտուա՛ր , ինչո՞ւ ետ քաշեցիր այն ձեռքը՝ որ ինձ նուիրուած էր . ինչո՞ւ անհաւատարիմ գտնուեցար այն խոստումներու և ուխտերու՝ որոնք մեր երկուքուս ապագայ երջանկութեան գրաւական եղած էին :

Բայց ի վաստուած, կասկած մը կ'արթննայ մտացս մէջ. ըսէ՛, Էստուար, ըսէ՛, ուխտադրուծ Էտուար, միթէ այն քու ինձ նուիրած ձեռքդ ուրիշը շահեցաւ. կամ ինձմէ հեռանալով կուզէիր ուրիշ տիրուհի մը զինք սիրելուդ ապացոյցներ տալ :

Ո՛հ, Էտուար եթէ ստոյգ է ասիկա, եթէ երբէք իմ ճակատադիրք քուկդ չըլլալ է միտ զիր ըսած իս, Էտուար, գոնէ զիս մինչև մահս սիրէ. գոնէ մահուանէս վերջը ուրիշ մը սիրէ. որպէս զի ասով այլ ես դարհուրելի վշտելով չտատապի հոգիս, հոգիս որ բոլորովին քեզ նուիրուած է : Այո՛, Էտուար մահուանէս վերջը սիրէ՛. թո՛ղ որ այս խոչընդոտը մէջ տեղէ վերնայ և քու ազատութեանդ ասպարէզը ընդարձակուի. վասն զի Էտուար ես քու ազատութեանդ թշնամին էի, վասն զի ես քեզ մատանջութիւն եղած էի, այնպէս չէ՞ Էտուար, ո՛հ ափսոս . . . :

Ո՛հ, միթէ երբէք պիտի կարենամ մոռնալ Հոկտեմբերի հինգը : Այն ցառոց, արամութեան, վիշտերու և յուսահատութեան կիրարակէն. այն Մ . . . ը և մեր գաշտերու մէջ ման գալը, այն քու արտասանած շողորթ խօսքերդ, քու խաբերայութիւններդ, վերջապէս կայարանը, այն ոճիւրներ արտադրող, յուսահատութիւն և տարակայման վիշտեր բուրոզ կայարանը միթէ պիտի կարենամ մոռնալ : Կենացս մէջ ակուր դէտքերու սեղի պիտի տամ եթէ միայն Մ . . . ը յիշեմ. անցելոյն մէջ կրած դժբաղդութեանցս աղետալի յիշատակը շարունակ մտացս ներկայելով պիտի խռովէ զիս և իմ կեանացս մնացորդ կարճատև օրերը դառնութեամբ և հառաչներով պիտի լեցնէ :

Ո՛հ Էտուար, Էտուար : միթէ պիտի կարենամ դու մոռնալ անցեալը. միթէ արտաքին հակառակորդներէ (վասն զի անտարակոյս պիտի ունենաս) կամ նախասփնքներէ ժամանակին բխումով ճողոպոբելով պիտի կարենամ ներքին սոսկալի հակառակորդի մը հարուածներէ զոյշ մնալ. ԽԻՂՃԸ՛, ԽԻՂՃԸ՛, ԽԻՂՃԸ՛ . . . : Այս նուիրական հուրը, այս անկաշառ գատաւորը, այս երկնային պահապանը՝ զոր բնութիւնը մարդուս սըտին մէջ կը հաստատէ երբ նա բարին ու չարը որոշելու տրամադիր կըլլայ. այս դատաւորին կրտսէ՛ :

այս խղճին հարուածներէ ինչպէս պիտի կրնաս ինքզինքդ ապահովել :

Այլ ինչ կը խօսիմ . միթէ բնութիւնը բացառութիւններ ունեցած չէ . միթէ մինչ ցարդ խղճի զգացողութեան նշան մը տուած ես . միթէ անցելոյն մէջ բռնած զարհուրելի լնթացքդ անպարտն անխղճութեանդ ապացոյց չէ : Ո՛չ , ո՛չ էտուար , քու անցելոյն մէջ բռնած ընթացքդ խղճէ առաջնորդուած չէր , և անտարալոյս նաև ապագային մէջ չկրնար զքեզ սանջել այնպիսի զգացում մը զոր ունեցած չես :

Այսկերպ էին Տօբայի մտածումները , ամեն օր սենեակին մէջ առանձնացած կ'սկսէր իր զարհուրելի և յուսահատ մենախօսութիւնը . որու մէջ մերթ ընդ մերթ այնպիսի կերպով իր խօսքերը էտուարի կ'ուղղէր՝ որ կարծես թէ ստուգի իր քով ըլլալով անոր հետ կը խօսէր :

Տիկին Շարլ յաճախ զօրաւոր միջոցներ դործածելով կ'աշխատէր զՏօբա իր յուսահատ մտածումներէ սթափել . այլ անհնար կ'ըլլար բո՛րք իր ազդու միջոցներով անոր աղեալի մենասիրութիւնը արգիլել : Մերթ կ'սպառնար , մերթ կ'աղերսէր Տօբայի վերստին ընկերութեանց մէջ մտնել զուարթ և երջանիկ ըլլալու համար . Տօբա միշտ կը մերժէր անոր առաջարկութիւնները , աղերսներն ու ըսպառնալէքը : Արծես յիսնամեայ անձ մը եղած էր , որու աշխարհային զուարճութեանց փափաքը մարած կ'ըլայ : Ձէր կրնար մոռնալ էտուարը , միշտ էտուարը կը յիշէր . առանց էտուարի չէր կրնար որ և է կերպով երջանիկ ըլլալ . էտուար իրեն համար աշխարհի նրշանակութիւնն ունէր . չկար էտուար չկար նաև իրեն համար աշխարհա և անոր երջանկութիւններն ու բերկրութիւնները : Ինչ բան որ առաջարկելով տիկին Շարլ կ'ուզէր զինք զբօսցնել և մոռցնել անցեալը . հանգէտներ , զուարթ ընկերութիւններ , զուարճութիւններ և այլն , բո՛րք աաղտկութիւն կը պատճառէին և իր սրտի անձկութիւնն աւելի կ'աճէին :

Այսօրինակ վշտերով և յուսահատութեամբ Տօբայի կենաց յատկացեալ վերջի աշունը սահեցաւ մէկ կողմէ զարհուրելի անտարբերութեամբ և միւս կողմէ աղետալի յուսահատութեամբ :

Չմեռուան ցուրտն , անձրևները , հովերն ու ձիւները սկսած էին Չ . . . ի մէջ , և Տօրայի միջակը այս խիստ օգերուն պատճառաւ երթալով կը վատթարէր :

Տիկին Շարլ ահ ու դողով պաշարուած էր :

Օր մը իր աղջկան հետ առանձին ըլլալով ըսաւ .

— Տօրա՛ , մի՛շտ տրտում և տխուր . և ինչո՞ւ այդպէս : Չուարթ եղիւր և ընկերութեանց մէջ մտիւր , ուր քու հասակդ ունեցողներ երջանիկ կ'ըլլան :

— Գուցէ ուրիշներ . բայց ոչ ես :

— Ի՞նչ ըսել կ'ուզես :

— Թշուառ սիրտ մը ընկերութեամբ չկրնար երջանկանալ :

— Հասա՛ս ի՞նչպէս :

— Նոյն խկ սրտին թշուառութեան պատճառ եղող վէրքը բուժելով :

— Եւ ի՞նչ է սրտիդ վէրքը :

— Եւ չե՛ս գիտեր մի՞թէ :

— Ա՛հ , դարձեալ նոյն խորհուրդներու վրայ . ցրուէ՛ այդ մտածումները , Տօրա՛ , ոյտնք անփորձ երեակայութեան մը երազներեն :

— Եւ ինչո՞ւ երազ , մա՛յր իմ :

— Հասա՛ս ի՞նչ կրնանք անուանել այդ տեսակ մտածումները որոնք մինչ ցարդ քեզ օգուտ մը չընելէ զատ նաև մեաս պատճառեցին և կը պատճառեն :

— Եւ ի՞նչ մեաս պատճառեցին , մա՛յր իմ :

— Այդ քու մենասիրութիւնդ , այդ քու մարդկային ընկերութիւններէ խորհելու միտումդ՝ որ միայն քու անխոհեմ սիրահարութեանդ արգասիքն են , մի՞թէ մեաս չե՞ն տար թէ քու առողջութեան , թէ երջանկութեան և թէ քու պատուդ . վասն զի Տօրա՛ , իբրև մայր քեզ ազդարարութիւն կ'ընեմ որ այդ անխոհեմ սիրահարութիւնդ ահաճոյ մեկնութիւններու տեղի տուած է շատերու :

— Եւ մի՞թէ կը հաւատաս , մա՛յր իմ , երբ քեզ հաւատեմ որ կենացս ամենէ երջանիկ ժամերը առանձնութեանս մէջ կը դտնեմ : Կը զարմանամ թէ ի՞նչպէս զիս ապերջանիկ կ'անուանես երբ կ'զգամ

Թէ իմ խորհուրդներս, իմ բռնած ընթացքս զիս դէպ 'ի երջանս
կութիւն կ'առաջնորդեն :

— Գէպ 'ի երջանկութիւնս — կրկնեց տիկին Շարլ յանկարծ գար-
հուրած, — Տօբա', խօսիմ ալ ինչ որ գուցէ մինչ ցարդ անծա-
նօթ է քեզ, բտէ', կեանքդ կը սիրես :

— Եւ ինչո՞ւ այդ հարցումը բրիր :

— Ըսէ', Տօբա', կը սիրես կեանքդ :

— Ա իճակիս ներածին չափ :

— Տօբա' զգուշացիր. քանի որ սրատիւ և արժանաւորութիւն քեզ
առջև յարգ չունին՝ հարկ է զիմնաս որ այդ ընթացքդ առողջու-
թեանդ վատթարելուն ամենէ զխուսոր սրատման է :

— Գիտէի ատիկա շատ յառաջ, մայր իմ, և կը կարծէի թէ
դու անծանօթ ես այս կէտին. այլ հիմա որ զիտես ինչ որ ճըշ-
մարիտ է, յայտնեմ նաև քեզ ինչ որ ընել որոշած եմ ճակա-
տացիրս :

— Գո՞ւ որոշած ես ճակատացիրդ :

— Այո', տարօրինակ կ'երևի քեզ ատիկա :

— Եւ ինչ, միթէ իշխանութիւն ունիս անոր վրայ :

— Բա՛ղբ, իմ զարհուրելի հակառակորդս պէտք չէ միշտ յայն-
նող ըլլալ. ես սկսի թո՛թվեմ բողոքին լուծը վրայէս այնպիսի
կերպով՝ որու ուրիշներ թշուառութիւն անուն կ'ուտան :

— Եւ ինչպէս :

— Քանի որ ապրելով ապերժանիկ պիտի լլլամ միշտ, ինչո՞ւ
որ մեռնելով անզգայ չըլլամ, և վիշտերս ու ցաւերս կենացս հետ
չվերջացնեմ :

Տիկին Շարլ զարհուրեցաւ և բարկացայտ ըսաւ Տօբայի .

— Տօբա', կը հրամայեմ քեզ իմ մայրական իշխանութեամբ
ընթացքդ փոխելու, առողջութեանդ հոգ տանելու և կատարելու
անյապաղ ինչ որ քու բարեկամներդ և ազգականներդ քու բար-
եացի համար անօրինեն :

— Եայր իմ, կ'իմանամ ըսածդ, և սրտովն շնորհակալ եմ քեզ
իս յայտնած անսահման սիրոյն համար :

— Պարտաորութիւնս է , Տօրա՛ւ . ամեն ծնողաց զլիաւոր փափաքը զուսկաց երջանկութիւնն է :

— Այդ կերպով զիս երջանիկ պիտի չկրնաք ընել . սիրոյ համար ծնած էի , սիրոյ համար պիտի մեռնիմ : Իմ ընթացքս արդիւիշուհամար ձեր գործածած ամեն միջոյները զիս աւելի շուտ պիտի թրշուառայնեն . վասն զի վիշտերուս վրայ ուրիշ վիշտեր պիտի աւելցնէք . հաւաստի եղիք ըսածիս ճշմարտութեան :

Տիկին Շարլ յուսահատական բարկութեամբ և վիշտով համակուած վերստին զատուեցաւ իր ազջիկէն :

Երկար և հատուն կերպով մտածելէ յետոյ իմացաւ որ Տօրայի զգացումն հակառակելով անոր թշուառութիւնը արդիւիշուհամար էր . ուստի որոշեց այնպիսի կարողարթիւններ ընել՝ որ Տօրայի զգացումն համապատասխանելով կարող ըլլան սպառնացած վտանգը եթէ ոչ բուժորովն անհետել՝ զէթ ուշացնել :

Քանի մը շարաթներ անցան և Տօրայի հիւանդութիւնը այն աստիճանի հասաւ՝ որ հարկ եղաւ բժշկաց ամենօրեայ հսկողութեան ներքև դնել :

Բժիշկներէ ամենքն ալ սկիզբէ՛ի վեր Տօրայի ապագայ վիճակին բարոքելու սրատասխանատուութիւնը իրենց վրայ չառին :

Օր մը տիկին Շարլ կանչեց Ալֆօնսը :

— Ո՛հ պարո՛ն , այս ի՛նչ դժնդակ փորձանք մ՛է որ մեր ընտանեաց երջանկութիւնը վեր ՚ի վայր ազմեց :

— Քաջակերութի՛ւն , տիկին , և ի՛նչ կայ :

— Ի՛նչ պիտի ըլլայ . Պ . Ալֆօնս , ի՛նչպէս պիտի կարենանք համոզել զԷտուար որ զէթ Տօրայի վիշտերը և ցաւերը մեղմացնելու համար վերստին անոր հետ տեսակցի : Ապահովցո՛ւր զինք որ իրեն համար ապագային մէջ վտանգ մի պիտի չծագի ասկէ . իմացո՛ւր իրեն որ բարութիւն մը պիտի գործէ , որ թշուառ մը երջանիկ պիտի ընէ . ո՛հ , Ալֆօնս , Ալֆօնս , միթէ՛ անկարելի՞ է ասի՛լա :

— Ցաւօք սրտի կ'ըսեմ , Տիկին , որ բուժորովն անհնար է :

— Արեմն ի՛նչ ընել պէտք է :

— Ես իսկ ձեզ պէս չեմ գիտեր թէ ի՛նչ ընթացք բռնել հարկաւոր է :

Տիկին Շարլ խոհուն մտածեց :

Ապա ըստ Ալֆօնսի .

— Մի՞թէ կարելի չէ՞ որ Տօրայի յուսադրական և սիրային խնամումներով լի նամակ մը գրէ :

— Կաշխատիմ զինք համոզելու , բայց դարձեալ յոյս չունիմ :

— Արեմն , Գ. Ալֆօնս'նս , եթէ չյաջողես՝ դուն գրէ՝ Էտուարի ըստ սիրապար թեամբ Տօրայի ողորմած . ամեն կերպով ջանա՛ մտնահասցնելու որ ինք ևս փոխադարձ կը սիրուի Էտուարէ և աղաչէ որ ինք անձնական առողջութեան հող տանի . վերջապէս դու ինձմէ աւելի աղէկ դիտես անշուշտ գրելու կերպը . այսպէս կը յուսամ որ կըրնանք ժամանակ մը շահիլ :

— Իհաս լաւ է գտած միջոցնիդ , և աներկմիտ եղբք որ ամենայն ճգամբ պիտի աշխատիմ՝ հաստարելու :

— Հնորհապարտ պիտի ըլլամ ձեզ ցնահ :

— Ոչինչ բնն մ'է բրածս , մնաք բարեա՛ւ .

— Երթաք բարեա՛ւ :

Ալֆօնս մեկնեցաւ և տիկին Շարլ վերադարձաւ Տօրայի քով :

— Բաջալերութիւն , Տօրա՛ , աւետիա կ'ուսամ՝ քեզ . Էտուարէ նամակ մը պիտի բնդունիս : Այտչ սիրահարը աակալին երևական յախան վասնդներէ վախնալով չհամարձակիր քեզ երևելու , և Ալֆօնսի իմացուցեր է որ քեզ նամակ մը գրելու գիտաւորութիւն ունի իր սրտին զգացումները լիովին յայտնելու համար :

— Ա՛հ , իր սրտին զգացումները պիտի յայտնէ . և մի՞թէ չը յայտնեց Մ. . . ի մէջ ինչ գիտաւորութիւն ունենալը : Ա՛հ , մայր իմ սրտիս վիշտերը ծանրանցնելու ուրիշ միջոց մը կ'ուզէ գործածել :

— Ի՛նչ կըսես , Տօրա՛ . մի՞թէ յիմար էս . կ'իմանամ քո ինչ բան ակնարկելը . բայց եթէ զքեզ չսիրէ՞ ինչ հարկ կայ նամակ գրելու , որով պիտի հարկադրի հետդ վերստին յարաբերութեան մէջ մաննել : Ես քու կարծիքէդ չեմ , Տօրա՛ , ես աւելի յաջող լիւր մը կը յուսամ ասկէ . բայց որովհետեւ կարծիքնիս սարքեր է՝ ըստ պատենք որ նամակը յայտնէ մեր երկուքուս կարծեաց որո՛ւ ամենք ըլլալը . բայց ներսէս կ'զգամ որ յաջող լուր մը պիտի աւանդէ :

Տօրա մտածեց և իրաւունք տուաւ մօրը ըտածին :

Նոյն իրիկուն Տօրա փողոցը նայող սենեակին պատուհանը նստած էր Ալֆօնսի սպասելով, բայց նամակ չենդուռեցաւ :

Հեռեկեալ իրիկուն վերստին երբ կ'սպասէր՝ տեսաւ Պ. Ալֆօնսը որ աչքը պատուհանը անհամբեր երևոյթով կ'անցնէր :

Ալֆօնսի անհանդարտութեան պատճառ Պ. Շարին էր, վասն զի այս ծերը իր սովորութեան համեմատ ամեն իրիկուն դրան առջև աթոռը դրած կը նստէր և կը դիտէր փողոցին անցուղարձը :

Պ. Ալֆօնս իբր թէ կը ջանար Պ. Շարլէ գաղտնի նամակը յանձնել Տօրայի :

Տօրա գուշակեց և պատուհանին ապակեայ փեղկը բացաւ :

Ալֆօնս պատուհանին վարէ անցնելով նոյն միջոցին, անմիջապէս ուժով մը ներս նետեց նամակը երբ Պ. Շարլ փողոցին միւս կողմը պատահած վէճ մը դիտելով զբաղած էր :

Նամակը սրահին վարի ծայրը օթոցին վրայ ինկաւ :

Տօրա որ հիւանդութեան զայրանալուն պատճառաւ ուժածմամբ հանդարտ հանգարտ կը քայլէր, անմիջապէս կարծես նորօրինակ ոյժ մը ստանալով երկու քայլով յառաջացաւ դէպ ՚ի սրահին խորշը և նամակը առնելով աւելի պատուեց զայն քան թէ բացաւ և անյաղարջար կարգաց հեռեկեալը :

Պաշտելիք իմ Տօրա՛ :

Զեմ՝ զիտեր թէ պիտի կարենամ այս նամակովս ինքզինքս արդարացնել, բա՛րէ, հաւաստի եղիւր, Տօրա՛, որ իրազէս յանցար որ չեմ: Այս նամակս սրտիս յայտարարը և անվերջ և անասման սիրոյս ապացոյց մ'է եթէ զայն ուշի ուշով կարգաս և առանց անցեղոյն վրայ տեսութիւն մ'ընելու գասես: Անցեալը Տօրա՛, դժբեղակ եղաւ երկու քնուս համար. դժնդակ եղաւ քեզ՝ վասն զի աս նամակ պարտղաներ պատահեցան՝ ուր թերեւ ինձ համար անհաւարտութեան կասկածներ ունեցար, դժնդակ եղաւ ինձ՝ վասն զի հարկեցուցիւ պատճառներէ պարտաւորուած էի անտարբեր ընթացի

մը ունենալ և սրահել ու չյայանել սէրս, սէրը՝ որ այն նուիրական զգացումը՝ զոր ներշնչած էր ինձ, քու սև որակ աչաց մէջ առ իսյայանուած համակրութիւնը : Այլ Տօրա՛, ինչպէս սր դիտես, սէրը բունութեամբ առիւի կը զօրանայ, սպառնալիքները կ'արհամարհէ և ամեն իրին անհաճոյ առաջարկութիւնները բացարձակապէս կը մերժէ քանի որ փոխադարձ է, քանի որ կ'զգայ որ եթէ կը սիրէ նաև կը սիրուի : Այսպէս Տօրա՛, ինչպէս գիտես ժամանակաւ ես ալ ուրիշներու իշխանութեան ներքև էի և չունէի այն ազատութիւնը՝ որ հարկաւոր էր մեր նպատակը գործադրելու . հետևաբար ուրիշներու կասկած չտալու համար հարկադրուած էի ըստ կարի հեռանալ քեզմէ, և թողուլ քաղզիւն հաճոյից իմ իրական միակ երջանկութեանս կատարուիլը . այլ բաղդը, Տօրա՛, շարունակ իր խաղը սիրահարներու վրայ կը խաղայ . վասն զի կարծես հաճութիւն կ'զգայ անոնց տանջանքը տեսնելով, և այսպէս մեզ նաև երկար ժամանակ իր հաճոյից գործիք ըրաւ :

Ա՛հ, Տօրա՛, հաւաստի եղի՛ր որ ես ալ զարհուրելի ժամեր ունեցայ : Մտածէ՛ անգամ մը երկու երկսայրի սուրի մէջ մնացած որ կողմը որ դառնայի՛ թշուառութիւնը անտարակուսելի էր . եթէ առ քեզ զգացած սէրս յայանէի հրապարակաւ՝ ինձ իշխողներու կողմէ զօրաւոր դիմադրութիւններ պիտի կրէի, եթէ պահէի պիտի հարկադրուէի, քու կենսատու տեսութենէ՛ զրկուելու և քեզ ալ իմ վրայ յօք կասկածներ պատճառելու, ինչպէս որ եղաւ իսկ : Այլ Տօրա՛, միթէ իմ շփոթուն ընթացքէ, իմ անցելոյն մէջ ունեցած կերպերէ և վարմունքէ՛ չէի՛ր զգար իմ առ քեզ զգացած սէրս : Քարէ՛, կուզէի հեռանալ քեզմէ, մտնալ, չիշել զքեզ, այլ անհար էր . մայնէ՛ա մ'էի՛ր որ զիս գէտ 'ի քեզ կը քաշէի՛ր . վերջապէս ալ առելի համբերել անհար էր . սէրը պահելով կ'զգայի որ կրակի կը փոխուէր և կ'այրէր ու կը մրկէր սիրտս : Քաշեցի գիմակս և բացարձակապէս յայանեցի որու որ անկ էր իմ նպատակս . իմ միակ նպատակս՝ որ քեզ հետ երջանկանալ էր . դիմադրութիւնները տախտիս կը շարունակուին սաստկութեամբ . այլ ապահով եզրը որ ամեն հակառակութիւն և թշնամութիւն պիտի ցնդին և անհետան

Թէ դու սէրէդ չի թուլնաս, եթէ ցվերջ զիս սիրես, ուստի, Տօրա՛, հաւաստի եղիր որ մեր ապագան երջանիկ պիտի ըլլայ: Առանց քեզի աշխարհս խաւարին բանտ կ'երևի աչացս, և ուր որ դառնամ՝ միտշ ձանձրութիւն, տաղանկութիւն և ահաճութիւն կ'ըզամ. վասն զի թէ և իրարմէ զտոտած՝ միշտ քու վրայ կը մտածեմ, և անհրաժեշտ կ'ըլլայ միտքս ուրիշ առարկայով զբաղեցնել:

Տօրա թեքնս զարմանք պիտի պատճառէ քեզ որ ինչպէ՛ս այս նախ մակը քեզ զրելէ յետոյ տակաւին չեմ երևիր քեզ, այլ այսչափ որ սպասեցիր՝ քիչ մը ևս համբնէ: Վասն զի տակաւին այնպիսի պարագաներ կան՝ (զորոնք ժամանակին պիտի խմանաս և ինձ իրաւունք տաս) որ կ'ստիպեն զիս կարճ միջոց մի ևս քու երջանկաւթմ տեսութենէ զրկուիլ. քաջալեւութի՛ւն, փայլակի մը պէս արագ պիտի սահի այս միջոցն ալ, որու պիտի յաջորդէ մեր ճշմարիտ երջանկութեան և անբաժան միաորութեան թուականը:

Տօրա՛, գաղտնի տեղերէ քու վրայօք պեղեկութիւն կ'ստանամ, և ցաւօք սրտի կ'ըսեմ՝ թէ լսեցի որ բաւական տոննէ՛ ՚ի վեր անձնական սկարութիւն ունիս. Տօրա՛, բարոյական վիշտերը Փիզիկական կենաց խանդարման պատճառ կ'ըլլան շատ անպակ. ցրուէ՛ մը քածուսները, կասկածները և վիշտերը եթէ ունիս՝ վասն զի ըրջութիւն անտեղի են: Ա՛հ, ինչպէ՛ս կարելի է արդեօք սրտիս զգացումները քեզ յայտնել, զրիչս սկար է Տօրա՛, վերջապէս կ'ըսեմ, մի՛ վերժեր զիս, առանց քիզի թշուառ պիտի ըլլամ, վասն զի միայն քեզի համար կ'ապրիմ, ուստի յուսա՛, մանաւանդ վատահ եղբի՛ր սիրոյս որ անհուն և անսահման է և հոգ տար քու անձնական առողջութեան և քանա՛ որ օր յառաջ առողջութիւնդ ստանաս. վասն զի ժամանակը մօտ է:

Կամակս հաւերութիւլ կը վերջայնեմ խօսքս. նամակս կը համբուրեմ, վասն զի անկիս ինձմէ աւելի երջանիկ է, վասն զի քու տեսութեանդ պիտի ներկայի, քու աչաց դիտողութեան պիտի եմթարիլ, վերջապէս քու զողար և փափուկ ձեռքերէ պիտի շօշափուի, քանի որ ես զորի եմ տակաւին այս երջանկութենէ. ուստի՛

հեռուէն սիրային համբոյրներս զըկելով և զքեզ Աստուծոյ խնամոց
յանձնելով :

Մնամ

Սիրովդ յափշտակուած

ԷՏՈՒՆԲ

Տօրա նամակը ամբողջապէս կարդալէ յետոյ միայն այս խօսքս
ըսաւ :

— Հատ ուշ արթնցար, էտուա՛ր, շատ ուշ արթնցար :

ՊԼՈՒՐԻ ԺԶ.

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Հետևեալ օրն տիկին Շարլ Տօրայի հետ տեսնուիլ մտածեց,
Գիտէ՞ր որ նախորդ իրիկունը Տօրա նամակը ընդունած էր. այ-
սու ամենայնիւ նամակին պարունակութիւնը իրեն անձանօթ ըլլա-
լուն տարակոյսի մէջ էր թէ իր դորձածած միջոցը յաջողած էր
թէ չէ :

Որոշեց քառորդ մը խոհուն կերպիւ մտածել այս պարագային
վրայ և ապա ներկայանալ Տօրայի որպէս զի իր բռնելիք ընթաց-
քին կերպը որոշէ :

Ար մտածէր որ եթէ Տօրա՝ որ այնչափ սրամիտ էր, այս նա-
մակին ստութիւնը զգար, ինչ զարհուրելի հետևանքներ պիտի
յաջորդէին, այն ատեն յուսոյ քանի մը մնացորդ նշոյններն իսկ բո-
լորովին պիտի սպառէին և յուսահաստութիւնը առանց դիմադրու-
թեան պիտի փութացներ թշուառութեան ընթացքը : Տօրա որչափ
որ զգացած էր իր էտուարէ խարուած ըլլալը, այսու ամենայնիւ
շարունակաբար իր սիրոյն նպաստաւոր լսած խօսքերը բոլորովին հաս-

տասած չէին իր յուսահատութիւնը , և այսպէս չկրնալով հաստատապէս որոշել իր վիճակին ինչ ըլլալը անստուգութեան մէջ մնացած էր : Իրեն սպասահամ ամեն ներհակ պարագաներու վրայ կը մտածէր , ամենէ ալ ուղիղ հեռութիւններ կը հանէր ուշիւ կերպով , այսու ամենայնիւ չէր կրնար որոշ եղբակացութիւն մը հասնել , վասն զի ամեն իր գտած հեռութիւններն հաւանական կ'երեւէին :

Տիկին Շարլ , որ այնչափ խորագէտ էր , յաճախ փորձած էր իր աղջկան այս վիճակը և շատ անգամ յաջողած էր անոր խիստ յուսահատ վիճակին մէջ անանկ միջոցներ գործածել որ Տօրայի բոլոր վիշտերն ու յուսաբեկութիւնը կը ցրուէր :

Տիկին Շարլ մտածեց թէ ինչ որ ալ ըլլար նամակին ազդեցութիւնը՝ ամենին յայտնի պիտի չըլլար որ նամակը իրմէ ւարդուած կեղծ գրութիւն մ'էր . իսկ ներհակը մտածելով եթէ Տօրա այսպիսի կասկած մը յայտնէր տիկին Շարլ ապահով էր որ կրնար զայն բոլորովին ջրել , վասն զի այս տեսակ դէպքերու մէջ իր ունեցած թղտայ պատրաստութիւնը և յաջողակութիւնը անմանօթ չէր իրեն :

Աստի ուղղակի Տօրայի առանձնասենեակը գնաց :

Նոյն օրը Տօրայի դիմաց վրայ սովորականին ներհակ գուարթութիւն մը կ'երեւէր . տիկին Շարլի ուզածն ալ այս էր , վասն զի ասով բոլորովին համոզուեցաւ որ նամակը իր յուսացած արդասիբը արտաբերած էր :

Աստի ըսաւ Տօրայի ,

— Բարի լոյս , Տօրա՛ , այսօր զքեզ խիստ զուարթ և տուելի առողջ կը տեսնեմ :

— Այո՛ , մայր իմ՛ , վիճակս այսօր աղէկ է , այնչափ աղէկ որ կարծեմ թէ բնաւ յառաջուց տկար չեղայ :

— Այո՛ , այո՛ , ուրախ եմ , այլ ատոր պատճառը ըսեմ նայէ՛ , երեկուան ընդունած նամակդ է գուցէ . զիտեմ ասիկա , վասն զի երեկ իրիկուն երբ պատահանր նստած էիր՝ ես ալ սրահին հետ համոզողակցութիւն ունեցող ներքին սենեակին դրան վարագոյրին տակէ քեզ կը դիտէի , և տեսայ նամակին սրահին խորը նետուիլը , քո

զայն առնուլդ և կարգալդ : Ահնացս կէտը կուտայի նոյն միջոցին նամակը կարգալու համար . վասն զի հաւաստի եղիր որ ես քեզմէ անհանգիստ էի , այլ չուզելով զքեզ նոյն վայրկենին խոսիլէ , համարերեցի , բայց Աստուած գիտէ որ ինչպէս անտանելի դժուարութեամբ անցուցի երեկ զիշեր :

Տօրա ժպտելով պատասխանեց իր մօրը ,

— Մայր իմ , յանհունս շնորհապարտ եմ քու ինձ յայսմանս նրապատար զգացմանդ համար , և հաւաստի եղիր որ սատուիկ կը ցարիմ քու նախորդ գիշերուան ունեցած անհանգստութեան վրայ , այլ կ'երգնում որ եթէ գիտնայի , կամ մանտանդ նոյն միջոցին միտքս եթէ մէկ բանով գրաւուած չըլար և զքեզ յիշէի՝ անտարակոյս պիտի ցուցնէի նամակը . ներողամիտ եղիր այս կերպ խօսելուս , մայր իմ , գիտես որ կեղծաւորութիւն չունիմ :

— Ո՛հ , այո՛ գիտեմ , ապահով եղիր . բայց կ'աղաչեմ կարգաւ անդամ մը :

Տօրա ամբողջապէս բարձրաձայն կարգայ նամակը :

Տիկին Շարլ մտովին զարմացաւ Ալփօնսի նամակին ձևին վրայ .

— Է՛հ , Տօրա՛ , ալ անկարելի է յուսալ , ալ բացորոշ յայտնի է որ Էտուար քեզ չսիրէր այնպէս չէ :

— Ի՞նչ ըսել կ'ուզէք , մայր իմ — հարցուց Տօրա շփոթուն :

— Խօսքիս իմաստը չկըցար ըմբռնել ուրեմն . ըսել կ'ուզեմ թէ երևակայական կասկածներդ և մտատանջութիւններդ պիտի շարունակուին դարձեալ :

— Ո՛հ , այո՛ հասկցայ , բայց , մայր իմ , գիտե՞ս որ ես մէկ բանէ կասկած ունիմ տակաւին և որու կարծեմ դու ալ իրաւունք պիտի տաս :

— Ըսէ՛ նայիմ , Տօրա՛ :

— Ար կասկածիմ որ նամակը կեղծ չըլայ , վասն զի թէ և նամակը քանի մը հաւանողական պատճառներ ունի՝ այսու ամենայնիւ իր տակաւին չերևելու համար խնդրած միջոցը քիչ մը կասկածելի է :

— Տօրա՛ , կը զարմանամ թէ ի՞նչ նորր գիտողութիւններ կ'ընես ,

այո՛ ստոյգ է — ըստ տիկին Շարլ այնպիսի կերպով իրաւունք տալով Տօրայի որ բոլորովին չյայտնեց իր ձև ընելը , և քանի մը վայրկեան մտածել կեղծելով՝ յարեց ապա — բայց , Տօրա՛ , աղէկ միտքս եկաւ , կարծեմ նամակին մէջ իր չերևելու համար ունեցած պատճառները յայտնած է . անհիմն է այդ կատկածդ . և հաւատի եղիր որ քիչ ասենէ՛ կ'երևի . բայց որովհետև բոլորովին ապահով ըլլաս , ես քեզ կը խոստանամ զանկա հոս բերել տալու . ասիկա շատ դիւրին բան մ'է , և կ'զգամ որ կամովին պիտի գայ . վասն զի եթէ՛ դալու փափար չունենայ կամ զքեզ չսիրէ՝ կարելի է այսպիսի սիրաբորբոք նամակ մը դրել քեզ որով վերստին հետդ յարաբերութեան մէջ մտնելու փափաքիլը յայտնած է :

— Ստոյգ է — ըստ Տօրա մտախոհ :

— Ի՞նչ բանի վրայ կը մտածես :

— Կը մտածեմ որ ի՞նչ տարօրինակ են բաղդին փոփոխութիւնները . միթէ՛ երեք օր յառաջ մեր մտքէ՛ կ'անցնէ՞ր որ մեր ցաւալի յուսահատութիւնը այսպիսի ուրախութեան պիտի փոխուէր : Բայց , մա՛յր իմ , ե՛րբ պիտի գայ Էտուար :

— Տօրա՛ , հիմա որ ալ կասկածելու բնաւ պատճառ մը չունինք , զիտես որ հարկ է նաև մեր կողմէ ալ ըստ կարի դողչ և խոհական ընթացք մը ունենայ : Բարդէն զիտես որ նամակին մէջ զքեզ սիրելուն անձխտելի աղայոյցներ տուած է . զիտես որ իր շերտիլը ի՞նչ խառն և գաղտնի պատճառներու համար է , զիտես որ յիշած է նաև թէ կարճ միջոց մը ևս չերևելու հարկադրուած է զանազան գաղտնի պատճառներով : Այս ամենը զիտնալով անկեղծօրէն ըսէ՛ ինձ , Տօրա՛ , զինք հոս բերելու համար եթէ՛ աշխատիք հիմակուհի մա կ'զգամ՝ որ իրեն մեծ թշնամութիւն մը ըրած պիտի ըլլանք , և ո՞վ զիտէ՛ գուցէ նաև վտանգի կ'ենթարկենք զինք . ուստի խնդրեմ կարճ միջոց մը ևս համբերութիւն , գէթ տասնուհինգ կամ քսան օր անցնի այս նամակին վրայ , և ապահով եմ որ այս միջոցը գեր չի լրացած իրմէ՛ գոհացուցիչ լուր մը պիտի ընդունինք . չհասունցած պղուղը քաղելը , Տօրա՛ , զիտես որ թէ՛ ծառին և թէ՛ քաղը՞ դին կը փետէ :

— Աւրեմն :

— Ամեն բան ինձ ձրէ : արդէն բարեկենդանի սիզմնաւորութեան շարաթ մը մնացած է , և անտարակոյս թաղին մէջի դիմակաւորութիւնները տասնուհինգ կամ քսան օրէ կ'սկսին . այս առիթը մեզի շատ նպաստաւոր պիտի ըլլայ : Տօրա՛ , բան մը ըսե՛մ քեզ , կը դիտեմ որ յառաջ բարդը որչափ որ քեզ կը հակառակէր հիմա ալ նոյնչափ և դուցէ ալ աւելի քեզ կը նպաստէ :

— Ա՛հ , այո՛ ստոյգ է , մա՛յր իմ , և դիտե՛ս որ բարեկենդանի մէջ մեզ այցելութիւն տուած ժամանակ իր հակառակորդները բընաւ տեղեկութիւն պիտի չունենան . վասն զի անկարելի է դիմակաւոր անձի մը հետքը բռնել :

— Անտարակոյս , որչափ ուրախ եմ դիտե՛ս , Տօրա՛ . վասն զի կը տեսնեմ որ առաջուան պէս հաւանողական պատճառներս չես մերժեր :

Տօրա ժպիտով պատասխանեց :

Տիկին Շարլ զատուեցաւ Տօրայէ :

Իր դիմաց վրայ տարօրինակ զուարթութիւն և գոհունակութիւն կ'երևէր : Երբ ուրախութեամբ արջիւ իր գործածած միջոցին յաջողութեան վրայ կը մտածէր՝ յանկարծ տրտմութեան և մտածմանց սև ամպ մը անհետեց իր դիմաց վրայէ ուրախութեան և զուարթութեան նշանները . ճակատը կիճռուեցաւ , աչերը խոհուն և կոր ձև մը առին , և երկար ատեն խոհուն դեմին նայելէ յետոյ ըսաւ ցաւաղին .

— Ափսո՛ս , ի՛նչ ճակատալիք է այս . միթէ ե՛ս պիտի ըլլայի Տօրան խարխրողը . միթէ ե՛ս իր սրտին վէրքերը բուժելու համար այս տեսակ ասարդիւն միջոցներու պիտի դիմէի . ափսո՛ս , Տօրայի քաջաւերութիւն տուած ժամանակս կ'զգամ որ ես ինքս օգնութեան և մխիթարութեան կարօտ եմ . իր վէրքերը բուժելու աշխատած ժամանակս կ'իմանամ սրտիս ահուելի վէրքերուն ընդլայնիլը : Խեղճ և անմեղ աղճիկ , որ այսպէս յարատև վիշտերէ և թախիծներէ դէպ ՚ի անհիմն և վայրկենական երջանկութիւն և սուտ երջանկութեան դէպ ՚ի ստոյգ և զարհուրելի վշտաց , հառաչանաց և յու-

սահառութեան անդունդը դահալիժելու դատապարտուած եւ . և ե՞րբ պիտի ըլայ այս աղետալի շարեաց վախճանը : Արդէն իր կրած վիշտերը իր առողջութեան սաստիկ հարուած մը տալով այնպիսի դժնդակ ախտի մը ենթարկեցին զինք՝ որմէ ազատումը եթէ ոչ անյուսալի անշուշտ երկրայելի է :

Տիկին Շարլ որչափ որ կարելի էր վշտացած էր և անհնարին մը տածմանց և յուսահատութեան մէջ ընկրված՝ այսու ամնայնիւ տակաւին կը ջանար այնպիսի միջոցներ գտնել որով կարենար Կատարը համոզել և այսպէս իր Տօրայի առած խոստումը կատարել : Ասիկա եթէ յաջողէր մեծ ակնկալութիւններ պիտի արտադրէր . առաջին ժամանակ շահիլ , երկրորդ՝ Տօրայի թեթև կասկածներն՝ որ երթալով կ'աճէին՝ բոլորովին անհետել , և եթէ այս ուրուագիծը մտածուածին պէս յաջողութիւն գտնէր՝ կը յուսար սիկին Շարլ որ նաև հիւանդութեան անհետելուն ու կրնար նպաստել :

Ընթերցողը չ'արձէ թէ սիկին Շարլ իր աղջկան հիւանդութեան ինչ ըլալը չէր գիտեր :

Տիկին Շարլ անտարակուսելի կերպով գիտէր իր աղջկան վիճակը . գիտէր որ այնպիսի ահոեղի ախտի մը ենթարկուած էր որ ամեն բժշկական գեղերն ու գիտութիւնը ՚ի գերև կը հանէր . գիտէր որ անանկ ստակալի հիւանդութիւն մ'էր Տօրայի ունեցածը՝ որ թէև յամբարար կը մաշէր գրեթէ երբէք անհանգստութիւն չպատճառելով , այսու ամնայնիւ աներկրայելի էր որ մահատու էր :

Ուրեմն զարմանալի չէր որ ինչպէս այս ամենը գիտնալէ յետոյ տակաւին սնտալի և անհիմն մտածումներու գործադրութեան մէջ Տօրայի ապագային բարոքելուն ապահովութիւններ կը փնտռէր :

Այլ ասիկա ամեն յուսահատ անձերու բնական է : Անեղը անսահման ուկիհանոսին վրայ նաւաբեկողը տախտակի մը կտորը , կը սեղմէ իբր իր ազատութեան ապահովութիւն , առանց մտածելու որ այն ստակալի անեղութիւնը լափելու համար կեանքը ժամանակի , անունդի և գերմարդկային դժի հարկաւորութիւն ունի :

Կամ ուրիշ կերպով , միթէ կարելի՞ է մօր մը համոզուիլ որ իր աղջիկը պիտի մեռնի , մինչև նորա հոգեվարը , մինչև յետին շունչը

կը կարծէ թէ պիտի ապրի այն , վասն զի այն աստիճան բունն են մայրական դորովը , սէրն ու խանդաղատանքը՝ որ ամեն ճշմարտութիւններու կը հակառակին , ամեն իրաւացի խօսքերն ու կարծիքները կը մերժեն ասանկ պարագայի մէջ , և անանկ կը յուսան որ բնութիւնը մայրական զգացման հարուածիլը տեսնել չախորժելով մինչև բացառութիւններ ընելու պիտի զիջանի :

Ո՛հ , եթէ Եղիարհիս անհուն տառապանաց , վշտաց և տանջանաց մէջ ճշմարիտ երջանկութիւն մը կայ՝ այն ալ թշուառութեան մէջ մարդուս մտքին մէջ յղացած յուսոյ նշոյլներն են :

Բնութիւնը՝ զոր կը տարակուսիմ՝ մա՞յր անուանելու թէ մօրու , ինչ զարմանալի վիճակի ենթարկած է զմարդս , ամեն վիշտերու , ամեն ճախորդութեան և ամեն թշուառութիւններու մէջ չզրկէր զայն անզուգական մխիթարիչէ մը , բարեբար նեցուկէ , վերջապէս յոյսէ : Մահուան անկողնոյ վրայ հոգեվարդը անձ մը որ արդէն կէս մը մեռած է՝ կը յուսայ տակաւին ապրելու . կառափնարին վերայ մահապարտ մը՝ ճիշտ այն միջոցին որ կացինը իր գլուխը մարմնէն պիտի բաժնէ , կը յուսայ տակաւին ներողութիւն գանելու , վերջապէս ինչ է մարդուս կեանքը , — յուսոյ յարատեւ ընթացք մը , յուսով կը ծնինք , յուսով կ'ապրինք , նոյնպէս և յուսով կը մեռնինք : Այլ ինչ զարմանք , որչափ որ յուսոյ մէջ երջանկութիւն կը գտնենք՝ յուսոյ իրականութիւն գտած միջոցին կը կորուսենք նաև երջանկութիւնը . վասն զի նոր նոր յոյսեր կը ծնին . վասն զի անհուն և անսահման են մարդուս փափաքները :

Գառնանք Տօրայի :

Այս դէպքերէ քանի մը օր վերջը յոյս , վիշտ , մտածում , անհաւերութիւն վերջապէս ամեն զնասող կիրքեր Տօրայի մտաց վերայ ծանրանալով քիչ ժամանակուան մէջ անանկ սաստիկ ներդործութիւն ըրին իր Ֆրիլիս-կան կենաց վրայ՝ որ աղէտալի հիւանդութիւնը բուն սաստկութիւն մը առնելով իր ահռելի աւերումները առանց երկբայութեան կը յայանէր :

Տիկին Շաղլ կ'սկսէր վարանիլ , այլ տակաւին կը յուսար ժամանակ շահիլ :

Երկար և ամբար մտքով խորհելէ յետոյ աղաչեց Պ. Ալֆօնսը որ ամեն զոհողութիւն չինայէ , ամեն ապահովութիւն տայ , վերջապէս յայսնէ Էտուարի որ ամեն կասկածներէ և վտանգներէ ազատ կըրնայ գալ և այս գալով իրեն և իր աղջկան մեծ բարութիւն մ'ըրած պիտի ըլլայ : վասն զի , յաւելցուց տիկին Շարլ ցառաղին , խնդիրը ալ Տօրայի հետ ամուսնանալուն վրայ չէր հասցաւ անոր կեանքը աղատելու որ խիստ մեծ վտանգի մէջ էր :

Անողուտ եղան տիկին Շարլի թախանձանքներն , Պ. Ալֆօնսի աղերսներն և Տօրայի թշուառ վիճակը համազելու զԷտուար :

Օրեր անցան և ահա բարեկենդանի վիճակներն և դիմակաւորութիւնները սկսան երևիլ :

Տօրա անլնդհատ իր մօքը կը հարցնէր Էտուարի ընելիք այցելութեան վրայ :

Տիկին Շարլ միշտ իր խոստումը կը նորոգէր և կ'ապահովցնէր զՏօրա :

Բարեկենդանի երկրորդ շաբթուան հինգշաբթի առաւօտ դրեթէ ժամը տասի միջոցներ եթէ մէկը անցնէր Պ. Ալֆօնսի վաճառատան առջևէ և փոքր ախարի մը նետէր ներսը՝ պիտի սենսէր որ Պ. Ալֆօնս Պ. Էտուարի հետ ջնրմ' վիճարանութեան մէջ մտած էր :

Պ. Ալֆօնս կրտէր աղերսական կերպով :

— Ո՛հ , Էտուար , Էտուար , յանուն վախճանեալ ծնողացդ , յանուն Աստուծոյ թող այդ կամակորութիւնը որմէ թերևս վասնդ պիտի պատահի քեզ քան թէ օգուտ . ընդունէ՛ տիկին Շարլի աղերսական առաջարկութիւնը , երևէ՛ անգամ մը Տօրայի , Տօրայի որ քու սիրով տանջուած և քու շերեւելոց համար մտածումով և վշտով համակուած կը հիւծի , և կը մաշի : Իր օրերը արդէն համրուած են , բժիշկները խիստ թախանձանքներէ ստիպուած կուգան այցելութեան , և այն երբեմնակի . վասն զի ամենքն ալ նախապէս անոր ապագայ վիճակին սրտաստանատութիւնը քացարձակ կը մերժեն : Երկար և հասուն զննութիւններէ յետոյ ամեն ինչ կատարելապէս իմացուցին և այս չէ թէ տիկին Շարլի կամ իր ընտանեաց , հասցա ինձ . զարհուրելի գաղանիք մը (որ աւաղ յայսնի է

Թէ անտարակուսելի ճշմարտութիւն մ'է) յայտնեցին ինձ զոր լըսած ժամանակս ամբողջ մարմինս սարսուաց, Թէ երեք կամ առ առաւելն չորս ամիս ևս և ալ անկէ վերջ Տօրայի համար ամեն ինչ պիտի լրանար, Թէ բժշկական ամեն դեղերէ և դիտութեանէ աւելի Տօրայի ունեցած հիւանդութիւնը կը խնդրէր որ անոր կախը կատարեն և իր զգացումին համապատասխանող միջոցներ գործածեն: Հիմա Կառնար այս ամենը դիտարէ վերջ ինչ ընթացք ունենալ պէտք ես կամ մանաւանդ ինչ ընթացք բռնելու պարտաւորուած ես դիտե՞ս: նայէ՛ իմացնեմ քող. եթէ ես տեղը ըլլայի, մտածելով որ Տօրայի վիճակը խիստ ծանրացած ըլլալուն անկարելի էր որ պարտաւոր ինչ զիս իմ խոստումներս կատարելու, մտածելով որ այս այցելութիւնը ընելով աւելի Տօրայի ընտանեաց համակրութիւնը պիտի շահէի, զոր անտարակոյս կորուսած էի զանազան պատճառներով, մտածելով վերջապէս որ մարդասիրական վեհ գործ մը պիտի կատարէի առանց անձնական կորուստի կամ վնասու, Թէ զՏօրա գէթ իր կենաց վերջի օրերը երջանիկ պիտի ընէի և անտարակոյս նաև իր կեանքը նուազ աղետալի և մահը աւելի յամբաքայլ ընելու պատճառ պիտի ըլլայի՝ առանց գիտողութեան կ'ընդունէի իր առաջարկութիւնը քանի որ ինչպէս ըսի և ոչ մէկ կերպով ինձ պիտի վնասէր:

— Այդ կերպ կը դատես ուրեմն, տարո՛ն Ալֆօնս, բացատրեմ ուրեմն ես ալ Թէ ինչ պատճառներէ ստիպուած ցայս վայր իրենց առաջարկութիւնը մերժած եմ: Քանի որ գործերը այս ատիճանի հասած են՝ ես ալ կ'զգամ որ ինձ համար մեծ թշնամութիւններ պիտի ծագին եթէ միայն զինք վերստին տեսնելու երթալով և իրեն համաձայնելով սկսիմ հետը յարաբերութեան մէջ մտնել: Ինչպա՞րո՞ն, միթէ կը կարծէք Թէ ասիկա ծուղակ մը չէ զիս որոգայթի մէջ ձգելու համար՝ մինչև հիմա անանկ ապացոյցներ չունին որով կարենան հաստատել Թէ ես զՏօրան կը սիրէի, կամ նա իմ սիրոյս պատճառաւ այս հիւանդութեան ենթարկուած է: Որչափ որ զիս ներկայիս մէջ զոյշ կը տեսնես՝ նոյնչափ ալ անցեալին մէջ խոհեմ էի. իմ բոլոր անցեալս անյայտութեան վեհ մ'է, ինչ որ

իրած եմ մէկը չգիտեր, և եթէ գիտեն՝ չեն կրնար հաստատել չկայ փաստ մը, ապացոյց մը, կամ նամակ մը որ այս կէտիս մէջ զիս մասնէ : Լաւ այսպէս ըլլալէ վերջ երբ ես հիմա զգամ թէ ապագային մէջ ինձ ֆեատել կարող պիտի չըլլան, ևս հիմա կուրօրէն այնպիսի բնթացք մը ունենամ որ անշուշտ Տօրայի մահուանէ վերջը իմ թշուառութեանս և ինձ պատահելիք վտանդներու միակ պատճառը պիտի ըլլայ :

— Եւ ինչո՞ւ :

— Հապա, քանի որ հիմա այցելութիւն տամ պիտի հետեցնեն անշուշտ թէ ես զինք կը սիրէի, թէ խաբեցի զՏօրա, և թէ անոր մահուան պատճառ զիս պիտի բռնեն, վասն զի անտարակոյս պիտի բռնեն, « քանի որ սէր խոստացար Տօրայի՛ ինչո՞ւ վերջը խոստմանդ անհաւատարիմ՝ գանուեցար : ինչո՞ւ խաբեցիր զՏօրա, ինչո՞ւ անանկ զարհուրելի անտարբերութիւն մը ցոյց տուիր որ այս անբուժելի հիւանդութեան պատճառ եղաւ » : Լաւ, ասոնք եթէ ինձ առարկեն, ինչ պատասխան կրնամ տալ, բայց եթէ զլուխ ծոկ և սպասել իրենց վրժինդութեան կայծակին՝ որ անշուշտ պատիւս արժանաւորութիւնս և դուցէ կեանքս ալ պիտի փճացնէ :

— Ո՛հ, խիստ հեռուները կը մտածէք, ուրեմն դեռ չկրցաք ըմբռնել ի՛նչ որ ըսել կ'ուզեմ, այս տալիք այցելութիւնդ քու անցելոյդ երբէք չնկատէր, վասն զի դու կամովին չես երթար հապա իրենք կը հրաւիրեն : ամեն ինչ ներած են քեզ, երբէք քեզ պիտի չֆեատեն, երբէք ապագային մէջ այս աղետալի գէպքին զքեզ պատճառ պիտի չբռնեն, ամեն ինչ պիտի մոռնան և ոչ իսկ անուշոյ պիտի արտասանեն եթէ միայն այս բարութիւնը բնես : Ո՛հ, հաւատի եղիք, Պ. Էտտամր, այն աստիճան բուռն փափաքով զքեզ կը սիրէ և կ'ուզէ անգամ մը տեսնել որ մինչև իր ընտանիքը կը կարծէ թէ կրնայ այս այցելութիւնը Տօրայի վիճակին խիստ օգտակար ազդեցութիւն մը բնել. ո՛հ, պարո՛ն ձեր հոն ընելիք պաշտօնը բժշկական է և գեղերը իր քու տեսքով գոհ ըլլալը պիտի ըլլան :

— Ուրեմն, Պ. Ալֆօնս, հաւատամ՝ ձեր խօսքիւն որ այս այցելութեամբ ինձ չարիք մը պիտի չհետևի և կամ ասիկա ինձ դէժարութեամբ որոգայթ մը չէ :

— Պատուոյս վրայ կ'ապահովցնեմ քեզ :

— Լաւ ուրեմն խօսք կուտամ :

— Հնորհակալ եմ, պարոն, տիկին Շարլի կողմէ, վասն զի զինք մեծ մտածումէ մը ազատեցիք :

— Ինչ որ է, բայց ինչպէս և ե՛րբ պէտք եմ տալ այցելութիւնս :

— Եթէ կարելի է վաղն իրիկուն, ուրբաթ է այնպէս չէ՛, լաւ քանի մը բարեկամներ դիմակառորուած կ'երթանք հոն, բայց գիտես ինչ ընթացք բռնել պէտք ես :

— Ի՛նչ :

— Սիրավառ և զինք պաշտող :

— Ո՛հ, ծանր պիտի ըլլայ այդ պաշտօնը, և թէև պիտի աշխատիմ կատարելու, բայց արդէն կ'զգամ որ անկարող պիտի ըլլամ :

— Ո՛հ հօ՛, յաջողակութեանդ կասկած չունիմ, կը բաւէ որ կամք ունենաս :

— Լա՛ւ, ուրիշ բան մը ունիս ըսելու :

— Այո՛, գաղտնիք մը պիտի իմացնեմ քեզ, զոր մինչ ցարդ պահեցի, վասն զի անանկ կը կարծէի թէ պիտի չախորժէիր և զուցէ պիտի յանդիմանէիր նաև զիս :

— Ի՛նչ գաղտնիք է այդ — հարցուց Էտուար հետադրդիւ կերպով :

— Կը յիշէ՞ք, Պ. Էտուա՛ր, որ ասկէ տասնուհինգ կամ քսան որ յառաջ անգամ մը սաստիկ թախանձեցի քեզ Տօրայի նամակ մը գրելու :

— Այո՛, և ես մերժեցի :

— Ստոյգ է, ձեր մերժելուն վրայ տեսնելով որ Տօրայի վիճակը այս սոսկալի անտարբերութեամբ խիստ պիտի վատթարէր՝ ձեր ըստորապրութիւնը կեղծելով նամակ մը գրեցի իրեն :

— Եւ ի՛նչպէս ատիկա ըրիր առանց իմ կամքս հարցնելու, կամ ո՛վ զքեզ գրգռեց այդ տեսակ միջոց մը գործածելու :

— Տիկին Շարլ :

— Տիկին Շարլ :

— Այս :

— Միթէ այդ աստիճան յուսահատական է Տօրայի վիճակը որ այդ տեսակ միջոցներու դիմեր են :

— Ատոր տարակոյս չկայ :

Էտուար քանի մը վայրկեան խիստ մտախոհ կերպարան մ'առնելէ յետոյ ըսաւ .

— Լաւ ուրեմն , Պ . Ալֆօնս , նոյնին նկատմամբ ի՞նչ ընթացք բռնեմ :

— Եթէ նամակը կարգաք անդամ մը կրնաք մակարեւել :

Այս ըսելով Պ . Ալֆօնս նոյն նամակին բնագիրը՝ զոր իր քով ունէր , տուաւ Էտուարի :

Էտուար ամբողջապէս կարգալէ յետոյ ըսաւ Ալֆօնսի ,

— Խիստ յանդուգն կերպով խաղացեր ես իմ դերս :

— Մեղադրելի եմ :

— Ա՛չ , ո՛չ Պ . Ալֆօնս , և կը հաւատաք այս նամակը կարգալով ես որ զՏօրա չեմ սիրեր կը կասկածիմ որ արդեօք կը սիրեմ :

— Հիմակու հիմա կարծեմ իմացաք թէ ի՞նչ ընթացք բռնել պէտք է :

— Այո՛ , այո՛ , ապահով եղի՛ր , միաս բարեաւ , վաղը տեսնուինք :

— Այո՛ , տեսնուինք :

Պ . Էտուար ժամը տասնումէկը քառորդ անցած էր երբ մեկնեցաւ Պ . Ալֆօնսի վաճառատունէն :

Քանի մը վայրկեան վերջը Ալֆօնս ևս մեկնելով ուղղակի տիկին Շարլի գնաց և այս յաջողութեան լուրը տուաւ :

Հետևեալ օրն տիկին Շարլ Տօրայի իմացուց որ իր խոստում մը նոյն իրիկուն պիտի կատարուէր : Այս բերկրառիթ լուրին վերայ Տօրայի սիրտը անպատում՝ զուարթութիւն պատեց և պատրաստութիւն տեսաւ արժանաւոր ընդունելութիւն մը ընելու :

Օրը երեկոյացաւ մեծ ձանձրութիւն պատճառելով Տօրայի :

Նոյն իրիկուն երեկոյեան ընթրիքէ յետոյ Պ . Բօլ , իր կիներ և ուրիշ մերձաւոր ազգականներ Պ . Շարլի տունը ժողվուած էին զուարթ գիշեր մը անցընելու համար :

Տօրա մետաքսէ շրջագրեստ մը և մինչև կէս մէջքը սամոյրէ մտնող տակ հագած բազմոցին անկիւնը նստած էր խոհուն :

Հիանալի գեղեցկութիւն մը և դրաւիչ շնորհ կը փայլէին իր գիւմաց վրայ : Իր լուսնեայ սպիտակ գէմքը , իր վարվուուն սեռա մեծ աչերը և խարսեաշ վարսերը՝ որ գլխուն ետին ամբոթուած ըլլարով իր գիւմաց և ոչ մէկ գեղեցկութիւնը կը ծածկէին , տարօրինակ սպաւորութիւն մը կ'ազդէին հոն ներկայ եղողներու :

Գեղեցկութեան կատարելութիւնն տալու համար ինչ որ կրնար ընել բնութիւնը՝ բոլորը շնորհած էր Տօրայի . ճակատ սպիտակ , ընդարձակ և անկնձիւ , աչեր փայլակնային , այտեր կարմրորակ , բերան փոքր և շնորհալի , շարժում բարեձև , խօսուածք դրաւիչ և ակործալուր , ակնարկ յաղթահարող և սիրարծարծ : Ա՛հ , սր ահա զայ էակը զՏօրա նոյն վիճակի մէջ տեսնած ժամանակ իր սրտին մէջ սիրոյ և տենչանոց զգացումը պիտի չզգար :

Զուարթ խօսակցութեան մէջ էին ամենքն ալ . Տօրա ևս զուարթ էր թէև խոհուն կերպարան մը ունէր . քիչ կը խօսէր և այնչափ որ իր ձայնը հանած միջոցին ամենքը իրենց խօսակցութիւնը ընդհատելով անոր միտ կը գնէին , վասն զի թէև քիչ այստ ամենայնիւ հակիրճ և պատշաճ կերպով կը խօսէր :

Նոյն ընկերութեան մէջ մէկը անցեալ տարուան բարեկենդանի դէպքերը առիտ զուարճալի կը համարէր . միւսը կը սէր թէ պարահանդէսները այս տարի հազուապիւտ պիտի ըլլային . ուրիշ մը նոյն տարւոյն մէջ գիմակաւորութեանց խայտառակ ձևերու չափազանցութիւնը կը պարսաւէր . անգին մէկ ուրիշը ասոր հակառակ կը խօսէր պատճառելով որ բարեկենդանի մէջ զուարճութեան համար ամեն ինչ ներելի էր :

Քանի մը աննշան գիմակաւորներ ևս եկան ոմանց զուարճութիւն պատճառելով և ոմանց ձանձրութիւն :

Գիմակաւորները մեկնած էին :

Քառորդ մը առանձին մնային տիկին Շարլ անհանգիստ կերպով զՏօրա գիտելով , որ աչքը գուռը յարած կ'սպասէր լսիկ :

Ժամը ճիշդ լինն էր և ահա խրտուիլակներու նման եօթ կամ

ութ գիմակաւորներ մտան սենեակը ահագին վզլուկ մը ձգելով : Ամենքն ալ միօրինակ հագուած էին . ճերմակ անդրավարտիք մը լըցուած որովայնով և ուռած յետոյքով , ճերմակ շապիկ մը ծայրերը անդրավարտիքին մէջ ամբողջուած , մէջքերնին գօտի մը , նոյնպէս և գիշերային ճերմակ գլխարկ մը :

Գիմակաւորութեան այս ձևը նոյն տարի ազնուական երիտասարդներու գիմակաւորութեան հօգան էր :

Այս գիմակաւորներու մէջ միայն մէկը բացառութիւն էր : Բժիշկ մը գտնուէր :

Ճերմակ նեղ բանձարն մը հագած , սպիտակ բանուած շապիկ մը , ճերմակ բաճկոն մը՝ որու բաց ձևը յայտնի կը կը ցուցնէր թէ նորասրիի մը էր այն . սպիտակ լայն վզնոց մը ունէր որ իր վիզը ամբողջապէս ծածկած էր . ոտքը փայլուն կօշիկներով , սպիտակ ձեռնոյներով , սրածայր գլխարկ մը հագած և նուրբ եփենոսէ դաւազան մը բռնած :

Իր նուրբ մարմինը իր գիւրաթեք շարժումը զինք մասնեցին : Ամեն ոք ճանչցած էր զայն :

Էտուարն էր այն :

Անմիջապէս ամենքնին միատեղ զանոնք յարգանօք բարեկցին :

Տիկին Շարլ դէպ ՚ի անոնց դարձաւ գոհունակ և շնորհակալութեան ժպիտ մը արձակեց Պ. Էտուարի :

Տօրա կատարելապէս ճանչցաւ զԷտուար և այս պատճառաւ իր ներս զգացած յուզմունքը դէմքը շառագնեց :

Տիկին Շարլ ըսաւ Էտուարի :

— Վերեւի որ բժիշկ էք , պարո՞ն :

Էտուար գլուխը օրելով այո՛ ըսել ուզեց :

— Զէք կրնաք խօսիլ , Պ. Բժիշկ :

— Ո՛չ — ըսաւ Էտուար վերտոին նոյն կերպով :

— Ձարմանալի բան . այս գիմակաւորներու այլանդակ յատկութիւններու մէկն ալ երբէք չխօսին է :

— Իմայնեմ ձեզ , տիկին — ըսաւ անգիէն ոսկրուտ գիմակաւոր մը , — թէ ինչ պատճառաւ պարոն Բժիշկը չխօսիր , այն աստիճան քիմիական

բաղադրութեանց , դեղագործութեան նոր գիւտերդ և բժշկութեան վերաբերեալ կնճռալի և անյայտ խնդիրներու վրայ կը մտածէ զանոնք յստակելու համար՝ որ երբէք չուզէր խօսակցելով իր մտածումները ցրել և ժամանակ կորուսել :

— Եւ ո՞վ էք դուք , պարո՞ն , որ յարգի բժշկին տեղ կը պատասխանէք . անտարակոյս անոր կենակից ըլլալ պէտք էք որ անոր սովորութեանց վրայ տեղեկութիւն կուտաք ինձ — ըսաւ տիկին Շարլ ուշադիր դիտելով զայն :

Ալֆօնս մտովին ժպտելով որ տիկին Շարլ կարող չեղաւ զինք ճանչնալ , անոր ուշադրութենէ խոյս տուաւ որպէս զի քանի մը վայրկեան ևս չճանչցուելու հաճութիւնը զգայ :

Գիմակաւորներու վայելած ամենէ մեծ հաճոյքը , կամ թէ անոնց փափաքած ամենէ առաջին բանն է երբէք չճանչցուիլ :

Բայց տիկին Բօլ՝ որ նոյն միջոցին գիմակաւորին ձախ կողմը նստած էր , ուշադիր զայն դիտելէ յետոյ ըսաւ կամաց մը իր մօրը :

— Ճանչցայ զայն , մա՛յր իմ . իր ոսկրատ մարմինը , իր սակաւ ինչ գիրութիւնը , հաստ ձեռները , և մասնաւորաբար ինձ խիտ լնտանի եղած իր ձեւերն ու շարժումները՝ զորս չփոխելով մեծ անստոհեմութիւն մը ըրած է , մասնեցին զինք :

— Ո՞վ է — հարցուց տիկին Շարլ հետազոտիչ :

— Ստուգիւ չճանչցա՞ք :

— Ո՛չ :

— Պ . Ալֆօնսն է :

— Պ . Ալֆօնսը :

— Այո՞ :

— Ո՛հ հօ՛ — ըսաւ տիկին Շարլ նոյն գիմակաւորին դառնալով , — դիտողութիւնս սխալ չէ եղեր երբ յարգի Բժշկին կենցաղավարութեան վրայ ինձ տեղեկութիւն տուիք : Ներեցէք ուրեմն որ Պ . Բը-ժշկին ընելիք հարցումներս ձեզ ուղղեմ և անոր տեղ ինձ պատասխանէք :

Իստուար սորորայ :

Ալֆօնս յառաջացաւ տիկին Շարլի որ տիկին Բօլի քով նստած էր և այս վերջնայն ըսաւ :

— Կարծեմ գոք իմացուցիք իմ ո՛վ ըլլալս :

— Այո՛, պարո՛ն Ալֆօնս, բայց սպա՛հով եղիք որ միւսները տակաւին քեզ չեն ճանչցած :

— Վնաս չունի, բայց տիկին— ըսաւ Ալֆօնս իր խօսքը տիկին Շարլի ուղղելով, — Էտուարն ու Տօրան միատեղ տեսակցել տալու միտք ունիք :

— Այո՛, անտարակոյս :

— Ուրեմն ի՛նչպէս պիտի ընէք :

— Միտ դի՛ր, Պ. Ալֆօնս, հետզ եղող երիտասարդներու համար կրնամ վստահ ըլլալ որ ինձ ծանօթ անձեր են :

— Այո՛, այո՛, տիկին, ամենքն ալ իմ և Էտուարի բարեկամներն են և խիստ պատուաւոր անձինք :

— Կը հաւատամ խօսքիդ և այս պատճառաւ նաև չեմ պնդել որ զանոնք ինձ յայտնէք, թէն պիտի ըսէք թէ իրաւունք մը չունիմ այսպիսի բան մը պնդելու քանի որ զձեզ ճանչցած եմ, այնպէս չէ՞ :

— Կարծեմ այնպէս է :

— Լաւ, միտ դի՛ր ուրեմն թէ ի՞նչ պատճառաւ այսկերպ կը խօսիմ : Ապահով ըլլալով որ ձեր ընկերաց և հոս գանուող անձերու առջին խիստ անասորժ պիտի ըլլայ Էտուարի Տօրայի հետ առանձին տեսակցիլ, մտածեցի որ գոք և ընկերներնիդ բակը պարելու զբաղիք, և այսպէս սենեակին մէջ գանուող օրիորդներն նորրատի կիները առաջարկելով սենեակը պարպէք, որպէս զի համարձակութիւն տաք Պ. Էտուարի որ կարենայ քառօրդ մը կամ կէս ժամ առանձին տեսակցելու :

— Խիստ ազէկ մտածեր էք :

— Կը յուսամ որ նաև ազէկ հետևութիւն պիտի ունենայ :

— Անտարակոյս :

— Բայց, Պ. Ալֆօնս, Էտուարի իր բռնելիք ընթացքին համար հրահանգ տուած ես, կամ նոյն կեղծ նամակին դէպքը իմացուցած ես իրեն :

— Այո՛, այո՛, ապահով եղի՛ր . ատոնք ամենքն ալ յառաջուց մտածուած և կարգադրուած են :

Այս խօսակցութեան միջոցին Էտուար մէկ կողմ նստած էր :

Տօրա թէև իր դիրքը փոխած չէր , այսու ամենայնիւ իր դիմաց վրայ ունեցած փոփոխակի այլայլումը իր անհամբեր կացութիւնը կը յայտնէր :

Իսկ միւս դիմակաւորները ամեն որ մէկ մէկ կողմ ցրուած անանկ զուարճալի խօսքեր , անանկ ծիծաղելի շարժումներ կ'ընէին որ միայն բարեկենդանի յատուկ ըլլալով զամենքը կը խնդայնէին և կը զուարթացնէին :

Ալֆօնս տիկին Շարլէ զատուելով Էտուարի մօտեցաւ . սկանջն ի վայր քանի մը խօսք փսփսաց . Էտուար հաւանողական շարժում մ'ըրաւ : Ալֆօնս զատուեցաւ Էտուարէ և գառնալով իր դիմակաւոր ընկերաց որոնց ամենքն ալ քաջ պարողներ էին , իմացուց որ տիկինը զերենք պատուած էր պարելու շնորհ ընելով իրենց :

Այս ըսելով Ալֆօնս նախ և յառաջ տիկին Բօլը առաջարկեց ընկեր , որ հաճութեամբ ընդունեցաւ . յետոյ միւս դիմակաւորները և հոն գտնուող երիտասարդներն ալ առնելով մէկ մէկ ընկեր սենեակէն բախը անցան :

Գիմակաւորին մէկը զՏօրա առաջարկած էր . բայց նա համետութեամբ մերժած էր պատճառելով որ իր ունեցած անձնական տիրութիւնը չէր ներեր իրեն պարել :

Ամեն որ պարը տեսնելու բաղձանքով դուրս ելած էր :

Էտուար ևս չառաջարկած էր մէկը . ուստի ինքն ալ Տօրայի և տիկին Շարլի հետ առանձին մնաց սենեկին մէջ :

Քանի մը վայրկեան անցաւ և ոչ մէկը բառ մը արտասանելով :

Տիկին Շարլ տեսնելով որ իր ներկայութիւնը արգելք կ'ըլլար Տօրայի և Էտուարի տեսութեան՝ ինք ևս մեկնեցաւ սենեակէն խանդակաթ ախարկ մը ձգելով Տօրայի և աղերսական հայուածք մը Էտուարի :

Տօրա չտեսած էր այս , բայց Էտուարի սուր ակնարկը դիտեց իրեն ողորած հայեցուածքը :

Գուրբը գիմակաւորները պարելու երջանկութեամբ գրաւուած ըլլալով անուշադիր էին որ Էտուար իրենց մէջ չէր գտնուեր :

Տիկին Շարլի մեկնելէ յետոյ Տօրա անմիջապէս ելաւ իր տեղէն և յառաջանալով դէպ ՚ի Էտուար , որ նոյն միջոցին նաև ինքն ալ իր նստած տեղէն ելած էր , անոր ձեռքը սեղմեց կաթոգին սիրոյ արտայայտութեամբ և այս կերպով դէպ ՚ի բազմոց յառաջացուց զայն ուր նստեցուց իրմէ քիչ հեռու :

— Ա՛հ , Էտուա՛ր — ըսաւ Տօրա , — ուրեմն երջանիկ ենք , ուրեմն վերջապէս միացա՛նք :

— Անտարակոյս , անտարակոյս , պէտք էր միանայինք և երջանիկ ըլլայինք քանի որ անհուն և անսահման կերպով սէր կըզայինք փոխադարձաբար մէկ մէկու վրայ , և որչափ որ բազդին դժնգակ հաճոյից գործիք եղանք երկար ժամանակ , այսու ամենայնիւ քու գերմարդկային համբերութիւնդ և իմ գիւցազնական անյողողողութիւնս կարող եղան վերջապէս ամեն գժուարութիւններն անհետել , ամեն արգելքները տապալել և այսպիսի երջանկատիթ տեսութեան մը հասցնել զմեզ : Ե՛հ , սիրելիդ իմ Տօրա՛ , փորձուած է որ աշխարհիս մէջ մարդ մը ամենամեծ երջանկութիւններու հասնելու աշխատած ժամանակ անհրաժեշտ կ'ենթարկի նաև ամենամեծ տառտապանաց , ընկճող գժուարութեանց և վհատեցնող արգելքներու , որոնց յաղթելը որչափ որ անկարելի չէ , և ասոր մեր վիճակը կրնայ ապացոյց ըլլալ , բայց և այնպէս շատ ալ դժուար է , և ասոր դարձեալ մեր անցեալը կրնանք օրինակ բռնել :

— Շատ ճշմարիտ կը խօսիս , Էտուա՛ր , բայց կաղաչեմ՝ անցեալ դէպքերը յիշելով , որոնք այնչափ աղետալի և տխուր պարագաներով լի են , չդառնացնենք մեր ներկայ երջանկութեան քաղցրութիւնը : Անցեալը մեկնած է և ալ մեր երջանկութեան բնաւ չնկատեր . խորհինք ներկային վրայ՝ որ ապագային ծնունդը պիտի տայ , ջանանք ապահովել զայն որպէս զի բազդին երբեմնակի ձախորդութիւններէ զերծ պահենք որով և մեր երջանկութիւնը չվրդովիլը : Բայց ի՞նչ կրնամ միթէ հասօրէ մտնալ անցեալը . ո՛հ , մեր ներկայ երջանկութեան առատելագոյն քաղցրութիւնները զգալու համար անցեալի

յիշել պէտք էնք . անցեալը իր մէջ կը պահէ մեր երջանկութեան
խորհրդաւոր դաղանիքներն ու ապացոյցները : Աւերջենք անցեալը և
ահա մեր առջև սլտի ներկայի , անխնայ սեսութիւն մը , սուս եր-
ջանկութիւն մը , երա՛զ մը , ցնորք մը և ոչ ուրիշ բան : Ուստի,
Կառա՛ւր , իրաւունք ունինք յիշելու անցեալը քանի որ մեր ներկայ
երջանկութիւնը լիովին զգալ կը փափաքինք , ուստի միտ զի՛ր հիմա
Կառա՛ւր , զիտէ՛ր արդեօք որ երկար ատենէ ՚ի վեր ի՛նչ կ'զգայի ,
կ'զգայի՞ր արդեօք թէ ի՛նչ տառապանքներ կը կրէի , թէ որչափ ջո-
րեր արտասուելով շարունակ զրե՛թէ անկարող կ'ըլլային ուռած աչ-
քերս լոյսին նայելու . ո՛հ , Կառա՛ւր , տարփելիդ Կառա՛ւր , զի-
տէ՛ր արդեօք ո՞ր աստիճան անհուն կերպով կը սիրէի զքեզ նաև
նոյն միջոցին որ տկար մտքովս համարուած էի թէ զքեզ ատելու ի-
րաւունք ունէի : Ըսէ՛ Կառա՛ւր , կ'զգայի՞ր այս ամենը և կամ եր-
բէք կ'երեւակայէի՞ր որ այս աստիճան զքեզ պաշտէի և կաթոզին
սիրէի :

— Ասոնք ամենը զիտէի , Տօրա՛ , և հաաստի եղիր որ ճշմարիտ
կը խօսիմ , բայց դու նաև զիտէ՛ր արդեօք որ ես ի՛նչ զարհուրե-
լի վիճակներու ենթարկուած եմ , զիտէ՛ր թէ ի՛նչ սոսկալի բան է
սիրել էակ մը ապահով ըլլալով որ փոխադարձ նաև անկէ կը սիր-
ուի , բայց անանկ պարպանելու հանդիպել՝ ուր անկարող ըլլալ սի-
րոյ յայտնութիւն ընել , կ'զգայիր թէ ի՛նչ անտանելի բան է երի-
տասարդի մը տեննել իր սիրուհիին իր վրայ ունեցած սխալ
կարծիքները , անհիմն կասկածներ թէև , որոնք ոչ կամ շուտ
սլտի անհետին անշուշտ , այսու ամենայնիւ նոյն երիտասարդին սիր-
տը իբր երկսայրի սուր կը վերաւորեն : Կ'երեւակայէի՞ր թէ ի՛նչ սոս-
կալի բան է անմեղութեան և հաւատարմութեան ամեն իրաւունքնե-
րը ունենալէ յետոյ իբր ուխտագրուծ և անհաւատարիմ կասկա-
ծելի երեխլ անոր , զիտե՛ս ինչ տանջող բաներ են ասոնք . բայց և
պնդէս ասոնց ամենը ինձ պատահեցան և չարաչար հարուածեցին
զիս , ուստի եթէ դու ասոնց ո՛ր աստիճան անտանելի ըլլալը մտկա-
բերես՝ ես ալ անշուշտ կրնամ քու կրած տառապանացդ , հոսած
արտասուացդ , անբաւ վշտերուդ և անհուն սիրոյդ քեզ տուած սոս-
տիկ ազդեցութիւնները դու շակիլ :

—Տարօրինակ կը խօսիս, այսու ամենայնիւ այդ տարօրինակ խօսլու կերպով յայտնի կ'ըլլան ինձ քու պաշտելի սրտիդ իմ սիրոյս պատասխանող ազնիւ զգացմանց արտայայտութիւնը : Բարէ՛, քանի զըժուարութիւններու ենթարկեր ես ուրեմն, քու խօսքերուդ վրայ քանի մտածեմ՝ այնչափ երեսակայտութիւնս կը շփոթի և անկարող կ'ըլլայ քու կրած անհուն տառապանաց ազդեցութիւնները դուշակել : Ա՛յլ բա՛ղդ, բա՛ղդ, միթէ ամեն սիրահարներու այսօրինակ կը ներկայես սիրոյ բաժակը, միթէ բնութիւնը վարդերու փոշ տալով սիրոյ ալ թշուառութիւն և աղէ՛տ ընկերացուցած է : Ա՛սէ՛, սիրելիդ իմ Էտուա՛ր, ի՛նչ կը խորհիս այս իմ յիմարական մտածմանցս վերայ . կը դուշակես անշուշտ որ ըսածս հաստատելու փաստեր ունիմ, ես և դուն և մեր անցեալը անթխտելի փաստեր են ասոր, այնպէս չէ՛ :

—Ստոյգ է, Տօրա՛, և ինչպէս որ վարդին փուշերը տեսնելով կամ զգալով անկէ վերջը զգուշութեամբ կը հոտոտես դայն, նոյնպէս և սիրոյ դժուարութիւններու և աղետից ենթարկելէ յետոյ ունեցած փորձառութեամբդ կ'զգուշանաս անոր զուգող վշտայ և աղետից կրկին անգամ ենթարկելու, և այս կ'ըլլայ միայն խոհեմութեամբ, չափաւոր երջանկութենէ զոհ ըլլալով, ժամանակին յարմարելով . վասն զի աշխարհիս մէջ չկայ բան մը որ իր յատուկ ժամանակը չունենայ և զոր եթէ մէկը ահամարհելով յանդուգն գործելու սկսի՝ այն ատեն անշուշտ երջանկութիւնը կորուսելէ յետոյ կենթարկի նաև թշուառութեան, վասն զի ինչպէս զխտես մէկին խոյստուած ժամանակ միւսը կ'երևի :

—Ստոյգ է . բայց, Էտուա՛ր, ալ մեր թշուառութեան և վշտայ շրջանը լրացաւ, փոթորկալի և ամպոտ օրերէ յետոյ զուարթ և սրայ՝ ծառ օրեր ծագիլ սկսան : Ալ ազատ երբ, իրապէս ազատ . շիղ մը, շամանդաղ մը մեր երջանկութիւնը վրդովելու չ'սպտոնար : Արտաքին արդէլքներն ու դժուարութիւնները մեր անցողողոզ կամաց առջև փըճազան մէկ մէկու վրայ ունեցած կասկածներն ու երկրայտութիւնները անհիմն ելան . զիրար կը սիրենք անխեղձօրէն, ամեն ինչ ասոր մէջ կը բովանդակուին : Բա՛րէ, աշխարհս աչացս առջև ոչինչ կ'երևէր, հիմա տեսնանօք ապրիլ կը փափաքիմ, բայց ի՛նչպէս, հե՛

«ի՛ քաղաքային շփոթէ ու վլլլուկէ, առանձնութեան մէջ մնիկ, միայն քեզի հետ, անտառ, դաշտ և լեր մեր սիրոյ արձագանք տան, հովանաւոր ծառերու ներքև նստած միայն մէկ մէկու վրայ մտածենք, միայն մեր զգացումները յայտնենք իրարու. ոչինչ չվրդովէ մեր երջանկութիւնը: Բնութեան վսեմ տեսարանները առաւարի՛նութեան գլխաւոր սերմերը պիտի անձեցնեն մեր սրտին մէջ. ԱՍՏՈՒԱ՛Ծ և ՍԷ՛Ր, և ինչ բան կրնայ այս երկուքին հաւասարիլ. ահա ասոնք մեր մտածումը, մեր կենսանքը պիտի ըլլան: Հոյակապ տեսարաններ, վսեմ երկինք, արեգ, աստղեր, անտառ, ձոր ևն. աւելի զօրաւոր կերպիւ մեզ պիտի ցուցնեն Աստուծոյ մեծվայելութիւնը. քաղաքային աղմուկներէ մեր խոյս տալը, մեր մէկ մէկու վրայ ունեցած զարմացումը և փոխադարձ մէկ մէկու կարօտութիւննիս պիտի պարտաւորեն զմեզ աւելի մէկ մէկու յարելու և անհուն և անսահման կերպով զերար սիրելու:

Տօրայի երեւակայութիւնը փայլակի մը արագութեամբ կը յառաջանար: Իր հոգւոյն խանդն ու զգացումները այն աստիճանի սաստկութիւն առած էին, որ իր մտածումները չափազանցութեան սահմանն ալ անցնելով երազի կամ ցնորքի տիպարը կը թոռէին Ետուարի:

Տօրա այնչափ եռանդուն և բորբոքած կը խօսէր՝ որ վերջի բառերը հազիւ աւարտած էր և ահա կէս մը նուաղեցաւ շնչառութեան տկարութեան:

Էտուար Տօրայի այս կենաց նկարագիրը լսելով մտովին ժպտեցաւ անոր անկարելի մտածմանց վրայ, այսու ամենայնիւ Տօրայի սոյն խօսքերը անժխտելի ապացոյցներ էին իր վրայ զգացած սիրոյն:

—Տօրա՛, այդ ամենը անթերի պիտի կատարուին և մինչև հիմա ուշանալուն պատճառը, ինչպէս դիտես, մինչև հիմա ծագած դժուարութիւններն էին և որոնք բոլորովին անհետ ըլլալով այնպիսի ասպարէզ մը բացին մեր առջև ուր կրնանք ազատ ուզածնուս պէս յառաջանալ: Տօրա՛, հիմա մեր երջանկութիւնը վայելելու համար միայն մէկ արգելք կայ և այն քու անձնական տկարութիւնդ է, ուստի հարկ է որ օր յառաջ կատարեալ առողջութիւնդ ստանալու ջանաս. փաստակար մտածումները ցրուէ՛, հաստատ դիտցի՛ր որ սպազան մեր երջանկութիւնը ստրկութեամբ է: Ա՛ղղաչեմ, Տօրա՛,

ա՛հ , վերստին կը պաղատիմ , ամեն ինչ կարգաւորութեամբ զի
քործ դնես , թէ բժշկաց պատուէրները , թէ քու անձիդ նկատմամբ
ունեցած պարտաւորութիւններդ և թէ ի՛նչ որ անօրինակն քեզ հա-
մար քու բարեկամները . ազգականներդ ու ծնողքդ . վասն զի զի-
տես որ անոնց ալ նպատակը մերինին յար և նման է , այսինքն մեր
երկուքնուս երջանկութիւնը :

— Ստոյգ է . բայց , Էտուա՛ր , ինչո՞ւ դիմակդ չես բանար , մի-
թէ պատճառ ունի՞ս :

— Այո՛ , Տօրա՛ , և այս պատճառը այն է որ անձանթ անձէ
դադունի պահել կ'ուզեմ՝ այս այցելութիւր , վասն զի այն աստիճան
անցեալ դժբաղդութիւններէ զարհուրած եմ՝ որ կ'աշխատիմ հիմա
բողբոլին զոչ ըլլալ մինչև որ ալ դու իմն ըլլաս և ես քուկդ :
Մ'հ ախոս՛ս , մինչև հիմա քանի՛ քանի՛ անձեր՝ որոնցմէ բնաւ կաս-
կած չունիմք , մեզի այնչափ աղէտ և յուսահատութիւն պատճառե-
ցին որ , հաւատա՛ , այրական աներկիւղութիւնս կորսնցնելով վատ
եղջերուի մը նմաներ եմ , վասն զի չեմ ուզեր դարձեալ առաջուան
պէս երջանկութիւնս վտանգի ենթարկել :

Տօրա Էտուարի այս խօսքերուն վրայ դարձուց իր ակնարկը սե-
նեկին չորս կողմը և զայն բողբոլին ամայի դանելով ըսաւ Էտուարի :

— Էտուա՛ր , նայէ՛ ամենքն ալ դուրսը խոնքեր են . պարը ամե-
նու ուշադրութիւնը գրաւած է . յարմար ատեն է , հանէ՛ դիմակդ
տեսնեմ երեսդ . ո՛հ , այն պաշտելի երեսը՝ զոր երկար ժամանակ
չտեսնելու դժբաղդութիւնը ունեցայ : Բա՛ց Էտուա՛ր , ահա՛ մէկ
կողմ :

Այս միջոցին Տօրա յառաջացաւ Էտուարի մօտ , իր ծնգերը արդէն
Էտուարի ծնգերուն կը դպէին , և այս դպումը՝ ելեբարական սար-
սուռ մը ազդելով իր ամբողջ մարմնոյն , դէմքը շառագնեց :

Էտուար հանեց իր դիմակը :

Տարօրինակ կայտառութիւն մը պատած էր Էտուարի դէմքը : Այ՛
տերը դիմակին ազգած տաքութենէ և քրտնալիր վարդագոյն էին . իր
մեծ աչերը հոյ երկու բոցեր կը ցայտէին . իր հայուածքը , ակ-
նարկը , դիմաց դժադրութիւնը , ամեն ինչ տարօրինակ , գրաւիչ

և յանկուցող է ին . Էտուար երբէք այս աստիճան զեղեցիկ երևած չէր : Տօրա իր գլուխը մօտեցուց Էտուարի երեսին , ուշագիր զայն դիտեց անյագ . քանի մը վայրկեան կատարեալ երջանկութիւն վայելել զգաց . վասն զի իրենց շնչառութիւնը խառնուած էր , և իրենց ակնարկները , ո՛հ , յաղթահարող և սիրարժարձ ակնարկները միայն մէկ մէկու յարած :

Տօրա դողցիս անյայտ զօրութենէ մը յաղթուած ետ քաշուեցաւ շփոթուն և ըսաւ .

—Ո՛հ Էտուար , պաշտելի Էտուար , ներքին բնազդում մը կ'աղչէ ինձ որ այսչափ մեծ երջանկութիւն մը վայելելու անկարող եմ , ո՛հ , գթա՛ ինձ , գթա՛ :

Այս ըսելով առաւ Էտուարի ձեռները իր ձեռաց մէջ սեղմեց իր կուրծքին վայ և յարեց .

—Ո՛հ Էտուար , Էտուար արդեօք կատարելապէս ճանչցած ես այս սիրտը , դիտե՛ս որ տուանց քեզի ոչինչ է , թէ քեզի համար կ'զգայ , քեզ համար կը բաբախէ և միայն զքեզ կը սիրէ . ո՛հ , դիտե՛ս արդեօք :

Էտուար տեսնելով որ աստիճան առ աստիճան Տօրայի խանդն ու զղացումները սաստկութիւն կ'առնուին վերստին ծածկեց իր գէմքը դիմակով և Տօրայի մտածումները ընդհատելու համար ըսաւ .

—Տօրա՛ , միթէ՛ զիս շփոթելո՞ւ կամ զիս ալ սիրոյս երբեմնակի աղղած ամեն սաստկութիւններու ենթարկելո՞ւ համար այդկերպ կը խօսիս : Ար տեսնեմ որ սէրդ վերջապէս զքեզ սակաւ ինչ անխոհեմ ըրեր է , համբերէ՛ և ամեն բան կարգի պիտի մտնէ : Ժամանակիս սուղ է , Տօրա՛ , ուստի խօսինք ինչ որ անհրաժեշտ է . վստի զի գուցէ վերջը ասոնք ըսելու ժամանակ չենք ունենար :

—Վստէ՛ , Էտուար , քեզ մտադիր եմ :

—Տօրա՛ , մեր երջանկութիւնը կատարեալ ապահովելու և վերջէն կարևոր գործերու համար երբեմնակի բաժանումներ չպատահելու համար հարկադրուած եմ կարճ միջոց մը բոլոր երջանկատիւտ սեսութենէ հեռանալու :

—Ի՛նչ, ի՛նչ. Էտուա՛ր, վերստին ճամբորդութիւն պիտի ընես, ո՛հ, գթա՛ ինձ, գթա՛ — մրմնջեց Տօրա յաւազին :

—Տօրա՛, քու վրայ գթալուս և քու բարոյդ համար է որ այս ճամբորդութիւնը պիտի ընեմ : Առևտրական գործեր, դրամական շահեր, ընտանեկան քանի մը խնդիրներ կարգադրելու համար եթէ ես մեկնիմ որպէս զի վերջէն ազատ ըլլամ, կը կարծե՞ս որ միայն իմ բարոյն համար այս ճամբորդութիւնը ըրած կ'ըլլամ. միթէ ասոր մէջ չե՞ս զգար նաև քու օգուտդ : Հիմա որ համոզուած եմ թէ իմ սիրտս ճանչցած ես տալիք պատասխանիդ կ'սպասեմ որ բոլորովին ապահով ըլլամ իմ առջի համոզմանս սխալ կամ ուղիղ ըլլալուն վրայ . ըսէ՛, ի՛նչ կը կարծես միթէ անհրաժեշտ պէտք չէ՞ մեր ապագան բոլորովին խաղաղելու համար այս ճամբորդութիւնը ընել, որ թէև կամաց հակառակ է՝ այսու ամենայնիւ պարտաւորիչ է :

—Առ ուրեմն, Էտուա՛ր, ազատ ևս, կրնաս ընել այդ ճամբորդութիւնը . այո՛, թոյլ կուտամ քեզ : Զքեզ սիրած ժամանակս նաև իրտուճք ունիմ քեզ հրամայելու, վասն զի իմն ես, վասն զի քուկդ եմ. բայց այս քու գառն բացակայութեանդ միջոցին ապրելու համար քու յարատև սիրոյդ և Աստուծոյ անմիջական օգնութեան հարկաւորութիւն ունիմ :

—Իմ քու վրայ զգացած սէրս, Տօրա՛, միայն գերեզմանի մթնութեան մէջ պիտի անհետի . իսկ Աստուած՝ որ մինչև հիմա զօրաւոր ապացոյցներով ցոյց տուաւ մեր վրայ ունեցած դուրը, նաև այս պարագային մէջ չէ թէ միայն քեզ հապա նաև ինձ անշուշտ օգնութեան պիտի հասնի : Տօրա՛, հաւասարի եղեր որ նոյն հեռաւորութեան մէջ իմ վիճակս ալ քուկինէդ նուազ մտածկոտ ե վշտալի պիտի չըլլայ :

—Գէպ ՚ի ո՛ր է ճամբորդութիւնդ :

—Գէպ ՚ի Գ . . . :

—Ա՛րշափ ատենտան համար :

—Առ առտուելն մէկ ամիս :

—Մէ՛կ ամիս, ո՛հ, ի՛նչպէս պիտի անցնին երեսուն երկայն օրեր :

— Փայլակի մը արագութեամբ . ինչպէս անցան մեր 'սախկին վըշտայ և աղետից օրերը որ ասոնցմէ աւելի երկար էին . ըսէ՛ , Տօրա՛ , ի՛նչ երևած են քու աչքիդ 'ոյն օրերը , միթէ երազէ մը տարբեր կերպով :

— Ա՛հ , Էտուա՛ր , քեզ հետ խօսեցած ժամանակս անկարելի կ'ըլլայ ինձ առարկութիւններդ ջրել . վասն զի անանկ տարօրինակ կը խօսիս որ վերջապէս ամեն անկարելութիւն համարուած բաներ իբր կարելի կը համոզես զիս :

— Տօրա՛ , խօսեցած ժամանակս նաև քեզմէ ազտոյց և վկայութիւն կը ինչդրեմ . երբ այսպէս է՝ իմ ըսածներս անկարելութիւն պէտք չես համարիլ . վասն զի ահա՛ քեզ և ինձ նախապէս պատահած են :

— Էտուա՛ր , անընդհատ նամակներդ պիտի ընդունի՞մ :

— Անշուշտ :

— Ե՞րբ պիտի մեկնիս Ձ . . . է :

— Երեք օրէ :

— Տեսութիւնիս վերջինը չէ հիմակոհիմա , այնպէս չէ՞ :

— Տօրա՛ , ի՛նչ որ խօսիմ կրնայ ըլլալ որ որ չկատարուի : Հիմա որ իմ քու վրայ զգացած սիրոյս ապահով ես՝ պէտք ես գիտալ նաև որ ես զքեզ սիրելուս անտարակոյս պիտի աշխատիմ որ պատեհոյթութիւն գտնեմ զքեզ անգամ մը ևս տեսնելու , բայց եթէ չյաջողիմ՝ դու պէտք չես տղայական կասկածներու և անհիմն մտածմանց ենթարկել : Հիմա ի՛նչպէս որ դու ինձ հրաման ըրիր ճամբորդութիւնս կատարելու՝ ես ալ քեզ հրաման կ'ընեմ որ անձական առողջութեանդ հոգ տանիս ամեն կերպով . վասն զի եթէ՛ ես քու կը եմ՝ դու ալ իմս ես և քու իմ վրայ ունեցած իրաւանցը հաւասար իրաւունք ես ալ քու վրայ ունիմ :

— Շնորհակալ եմ , Էտուա՛ր , շնորհակալ եմ քու իմ վրայ ունեցած բարեսիրտ զգացմանցը համար : Ամեն կերպով ստիկա կատարելու պիտի աշխատիմ :

— Շնորհապարտ պիտի ըլլամ քեզ , հիմա , Տօրա՛ , կը հաճի՞ս թղլտուութիւն տալ ինձ որ քովի սենեակէն բակը անցնիմ :

— Եւ ինչո՞ւ ուղղակի այս սրահէն չես անցնիր :

— Անան զի զիմակաւորներուն մէջ քանի մը անձեր կան որոնց շեմ ուղեր մինչև այս վայրկեանս սրահին մէջ քեզ հետ առանձին բլլայս իմացնել :

— Եւ ի՞նչ փնաս ունի . ո՛հ , հիմա ալ հաստացի որ տուգիւ եղջերուի նմաներ ես :

— Բայց ե այնպէս խոհեմ ալ կ'ըսուիմ , ասիկա շես կրնար ուրանալ : Ե՛հ , Տօրա՛ , մինչև հիմա մեզ հասած դժբաղդութիւններու մեծազոյն մասը անյուսալի տեղերէ յառաջացած են :

— Բայց , Էտուար , բաժնուելէ յառաջ անդամ մը եւս ցուցուի երեալ որ երջանկութիւնը երկրորդ անգամ վայելելու հաճութիւնը զգամ :

Էտուար հաննց իր զիմակը :

Տօրա վերտախն զիտեց զայն ուշադիր , յառաջացաւ անոր : Ի՞նչ սիրոյ բուռն սաստիութիւնը վայրկեան մը պղտորեց իր միտքը , այլ հուսկ յետոյ համեստութիւնը յազմելով իր զգայման , ետ ետ քաշուեցաւ և « վերջին անգամ , վերջին անգամ » մրմնջելով բազմացին վրայ ինկաւ ու ժաթաթ :

Էտուար տեսնելով որ երթալով իր վիճակը կը ծանրանար , քանի մը վայրկեան ստատեց լռիկ , և զիտելով որ Տօրա վերտախն սթափելու նշաններ կը ցուցնէր՝ մեղմիկ խոյս տուաւ սրահէն , անցաւ բակը և խառնուեցաւ զիմակաւորներուն հետ :

Էտուար Ալֆօնսի ականջն ՚ի վար քանի մը խօսք փոխաց :

Ալֆօնս Էտուարէ զատուելով աիկին Շարլի հետ խօսեցաւ մեկուսի երկու վայրկեան :

Տիկին Շարլ խիստ դոհունակ կերպարանք մը առաւ :

Տօրա տաս վայրկեանի շափ սրահին մէջ առանձին մնաց կէս մը նուազած վիճակի մէջ :

Իր սթափած միջոցին զիմակաւորները մեկնած էին :

Ձկրցաւ որոշել թէ թէ ելա՞նք մ'եր իր տեսածը , եթէ ստուգել պատահած դէպք մը :

Ք Ա Ո Ւ Խ Ե Ծ Է Գ

Մ Ա Է Ը

Ընթերցողը կարծեմ՝ գուշակեց Կառուարի ճամբորդութեան կեղծ ըլլալը :

Փախուստի այս ձևը նախապէս մտածուած էր :

Կառուար մտածելով որ զՏօրա նոյն վիճակի մէջ տեսած ժամանակ անկարելի և կամ շատ աղետալի պիտի ըլլար անոր չհամաձայնիլ, ամեն ճիգ ըրաւ զայն բոլորովին ապահովելու, և յաջողեցաւ իսկ . բայց այս իր վարմունքով ալ որովհետև պարտաւորուած պիտի ըլլար վերջէն կրկին անոր հետ յարաբերութեան մէջ ըլլալ և այս ալ իրեն անախորժ էր, որոշեց միջոց մը գտնել որ Տօրայի կասկածելի չերևելէ զատ նաև զինք այս հոգէ ազատէ :

Աւստի և ասոր համար քանի մը անհիմն պատճառներ կեղծելով ճամբորդութեան մը կարևորութիւնը յայտնած էր :

Հետեապէս հետևեալ դէպքերուն մէջ Կառուար բոլորովին մեկուսի պիտի ըլլայ և այս պատմութեան մէջ ալ իր գերը ամբողջապէս լրացած է :

Բայց զինք սոյն պատմութեան տեսարանէ հեռացնելէ յետոյ քանի մը խօսք ըսենք իր և մասնաւորաբար նոյն ատենի երկաստորութեան վրայ :

Կառուար առաքինութիւններու հետ խառն ունէր նաև մի թերութիւններ :

Երկու ներհակ բաղկացութիւններ որ միշտ աղետալի են :

Խենթի մը ձեռք սուր յանձնել, կամ ան է որ ինքզինք կ'ըստաննէ կամ ան է որ ուրիշի կը փնտսէ :

Կառուար ջերմեռանդ, զթոտ, մարդասէր և քաղցրաբարոյ էր :

Handwritten scribbles at the bottom of the page.

Իր միտքը չար չէր՝, այլ փորձառութենէ զուրկ, բարեգործութիւնն ընկ ի ատորժէր, այլ կերպը չէր գիտեր: Իր կեանքը անմտութեան շարք մ'էր:

Մարդկային սեռի ամենէ վնասակար անգամները անմիաներն են: Վասն զի անգիտութեամբ գործած միանին դարմանել անկարող են:

Միւս կողմանէ նաև յանդուգն, խրոխտ և ստորին սիրոյ, այսինքն տրփանաց ենթակայ էր: Իր տենչանաց յաղութ և հեշտութեան վայելում գտնելու համար ամեն բան կը զոհէր. իր առօրեայ գործողութիւնները՝ սիրահարութիւններ և ժամադրութիւններ էին, և իր շարաթական հարկը՝ լքումներ, որ շատերու աղետալի կըլլար. մին կը բռնէր և միւսը կը թողար: Ահա՛ պատանեկան յիմարութիւն մը՝ որ սէր ըսուելու անարժան է և որ զվարդս մինչև վայրենութիւն կը տանի:

Հետևապէս անժխտելի է որ Կառար Տօրայի հետ հաղորդակցութեան մէջ գտնուած ատեն որիշներու հետ ալ սիրային յարաբերութեան մէջ էր:

Թերևս առարկուի թէ ինչո՞ւ համար այս պատմութեան մէջ, որ Կառարի պատանեկան կենաց քանի մը ատրիներու գրեթէ կենսագրութիւնը եղած է, այսպիսի գէպը մը երբէք տեսնուած չէ:

Պատճառը հետևեալն է:

Վասն զի սիրահարութեանց խիստ մեծազոյն մասերը հաճելի ժամեր անցընելու համար կ'ըլլային և ոչ ապագայ երջանկութիւն ապահովելու. հետևապէս մէկ մէկու տրուած խոստումներու ստութիւնը նախապէս երկու կողմէ ալ գիանալով՝ անոնց չգործադրուած միջոցին չէին վշտանար և ոչ իսկ կը յուսահատէին. հապա ինչ որ բրած կամ խօսած էին՝ մոռացութեան մէջ կ'ընկղմէին և կը շարունակէին իրենց ընթացքը անխռով, եթէ մէկ մէկէ վշտացած էին ուրիշ մը որսալով:

Յօվութեան այս ձևը՝ որ նոյն ժամանակ սիրահարութեան անուսը արատած էր, ընդհանուր եղած էր գրեթէ, և ո՛վ որ առաքինի զգացումներէ բղխող սիրոյ վրայ խօսէր ապուշ մը կը թուէր: Ճշմարիտ սէրը գրեթէ անհետացած էր երիտասարդութեան սրտէ:

Էտուարի միտքը , գատողութիւնը և նպատակը ուրիշ էին : Տօ-
րայի միտքը , գատողութիւնը և նպատակը ուրիշ : Երկու ներհակ բը-
նութեանց տէր անձերու սիրահարութիւնը անշուշտ կամ մէկին ա-
զնտալի պիտի ըլլար կամ միսին :

Հետեւապէս Տօրայի առարինի սիրոյ հարուածիլը , ին նենդաորէ-
մը խարուիլը և ասոնց հետեւած վեշտն ո յուսահատութիւնը ' իր
կենաց սպառնալով ' ամեն ինչ վեր ' ի վայր ազմկեցին և այս սիրա-
հարութեան ամենափոքր գաղտնիքները պարզեցին :

Ո՛վ էր այս կէտին մէջ յանցաորը :

Եթէ ըսենք թէ Տօրա պէտք չէր խաբուիլ ' իր ճշմարիտ և առա-
քինի սէրը պիտի արատենք , և ասիկա մեծ անիրաւութիւն մ'է :
Եթէ ըսենք թէ Էտուար է յանցաորը ' այն ատեն Էտուարի անմտ-
թիւնը հաստատած պիտի ըլլանք :

Վասն զի ինչո՞ւ խոտացաւ , քանի որ անշուշտ դիտէր թէ ան-
կարող պիտի ըլլար դործադրել :

Վասն զի ընդհանուր ճարպիկութիւն մ'էր ասիկա երջանակ ժա-
մեր անցընելու համար :

Ա՛հ , միթէ ոճիրները ընդհանուր եղած ժամանակ եպերելի ըլ-
լալէ կը գաղբին :

Բայց ո՛վ կը մտածէր ասոր վրայ :

Խօսինք քիչ մ'ալ ընդհանուր երիտասարդութեան վրայ . բայց
նախ և յառաջ մեր առաջադրած նպատակէ սակաւ ինչ զարտու-
ղելնուս համար ընթերցողէ ներում կը խնդրենք :

Ինչ պէտք էր նոյն ժամանակ երիտասարդի մը պնդուական , յան-
կուցող և յարգելի երեւելու համար .

Ա . Պճ'նասիրութիւն :

Բ . Պաղղիարէն :

Պճ'նասիրութիւնը անհրաժեշտ էր հաճելի երեւելու համար , և
այս խիստ իրաւացի է եթէ օրինաորութենէ չշեղի : Ար տեսնելի
շատեր ' որ սոսկապէս ծառայութեան պաշտօնի մէջ էին այս ինչ
կամ այն ինչ վաճառականին քով . բայց անանկ ծախքեր , անանկ
չափազանց մոխուսներ կ'ընէին որ շատ անգամ պարտերէ կը նեղ-

ուէին թէև՝ այսու ամենայնիւ Տեփա մը վայելելու համար ամեն ջանք
ի դործ կը դնէին , ամեն նեղութիւն կը կրէին առանձնակի , որ-
պէս զի աչերու գիւթելի երևէին , որպէս զի բսէին իրենց համար
թէ ընտիր ատորձակի տէր էին , և թէ խիստ վայելուչ կը հաղուէին :
Թէ՛ այս ինչ պարոնը ինչ զարմանալի է , որ մը անգղիական ձևով
կը հաղուի , որ մը գաղղիական , ուրիշ որ մը գերմանական , բայց
իրապէս ուրիշ բանի չէին նմաներ բայց եթէ կապի որ զգեաները
շարունակ կը փոխէ աւելի ծիծաղելի երևելու համար : Ա՛՞՞՞ տնա-
ւեր մոլութիւն . շատեր՝ որ ընտանեաց ապրուստ հայթայթելու են-
թարկուած էին , շատեր՝ որ անհրաժեշտ կարևոր ծախքեր ընելու
պարտաւոր , կը թողուին զրեթէ իրենց նուիրական պարտաւորու-
թիւնները , կրկնակի կը շոյալէին ոչինչ բաներու համար , և շատեր
կը գտնուին դեռ , որ իրենց առած ամսականէ քանի մը թալեռ այս ինչ
պարտատէրին տալով առ հաշիւ , քանի մը թալեռ այն ինչ պար-
տատէրին , քսակնին կը պարպեն այնպիսի ժամանակ մը՝ ուր անոր
անհրաժեշտ հարկաւորութիւն ունին . հետեւապէս վերստին կ'սկսին
ապառիկ մխտամներու , որոնց մեծագոյն մասը իրենց սրճնասիրու-
թիւնը յողեցնելու համար կ'ըլլայ , և այս կերպով վիճակնին երթա-
լով կը վտտթարի և աղէտները երթալով կ'աճին :

Գաղղիարէնի կարեորութիւնը ինչ պատճառաւ էր :

Եթէ բուն պատճառը ուզենք իմանալ՝ հետեւեալն է :

Երիտասարդ մը քանի որ սրճնասէր էր՝ անհրաժեշտ հարկաւոր-
ութիւն ունէր գաղղիարէն գոնէ քանի մը բառ թոթովելու . վասն
զի իրենց ծուխելքով մինչև այն ստալիճան մոլորութեան ենթար-
կուած էին որ խիստ անտեղի կը համարէին եթէ պարահանգիսի
մէջ հայերէն խօսէին , եթէ ընտանեկան յարաբերութիւններու մէջ
գաղղիարէն բառեր չգործածէին , եթէ նոյն իսկ հայերէն վիճաբա-
նութեանց մէջ գիտութեանց անունները գաղղիարէն չարտասանէին :
և մասնաւորաբար օրիորդներու հետ յարաբերութեան մէջ եղած ա-
տեննին մեծ անպատուութիւն կը սեպէին իրենց եթէ գոնէ թրթրակ
թուրթակներու շափ գաղղիարէն քանի մը բառեր չկցկցէին : Եւ ինչո՞ւ
ասիկա , միթէ պարահանգիսի մէջ մայրական լեզուն խօսիլ անտե-

զի է. միթէ ընտանեկան յարարեբուժեանց մէջ գաղղիարէն Բաւեր գործածելը ծիծաղելի չէ, քանի որ սաճկեբէն խօսիլը ծիծաղելի համարուած է. միթէ նոյնը հայերէն յար և նման չկրնա՞ր բացատրուիլ. այո՛, և աւելի գիւրիմաց կ'ըլլայ, վասն զի իրենց մայրենի լեզուն ըլլալուն աւելի դիւրաւ կ'ըմբռնեն անշուշտ, բայց այս ալ չմոռնանք ըսելու որ շատեր նաև կ'անդօսնէին իրենց լեզուն, և աւանց կարենալու պատճառը հաստատելու. բայց այս յայտնի է որ իրենց չգիտցածը անդօսնելով կը կարծէին իրենց պակասութիւնը ծածկել. բայց այս կերպով ալ կրկնակի ծիծաղելի կ'ըլլային :

Աւստի և անժխտելի է որ գաղղիարէնի ուսումը ոչ գրականութեան մէջ զարգանալու, ոչ միտք մշակելու, ոչ ազդողուտ ձեռնարկութիւններ ընելու և ոչ թարգմանութեան պարագելու համար էր :

Այսպէս այս երկու կարեոր յատկութիւնները ունենալէ յետոյ կ'սկսէին այնպիսի եպերելի արկածներով լի կեանք մը վարել՝ որ իրենց անխղճութիւնը բացօրոշ կը յայտնէին : Խոստում, սիրահարութիւն, խաբէութիւն, խոստմնազանցութիւն և ուխտագրծութիւն իրենց համար մեղք մը չէր համարուեր. վասն զի մեղք բառը լրած ժամանակին կը ծիծաղէին : Մասնաորբար քանի մը երիտասարդաց նիւթական կարողութիւնը այն աստիճան զիբենք համարձակը լրած էր՝ որ մինչև անդամարեանցութիւն ընելու և կամանհատատայլ ոճիրներ գործելու չէին վարաներ :

Հարստութիւնը իրենց կիրքը կը վտէր և ոճիրները կը պատրուակէր. արտաքին շարքը ներքին մոլութիւնները կը ծածկէր : Խաբելու խիստ ճարտար էին. վասն զի խաբէութիւնը իրենց սուօրեայ արհեստն էր : Ա՛յ այն օրիորդին որ ասոնց կը հանդպէր, և հազար անգամ վա՛յ անօր՝ որ այս տեսակ երիտասարդներու միտդնելով անոնց անձնատուր կ'ըլլար, այն ատեն այն օրիորդին համար վիշտ, ապաշու և թերևս կործանում վերահաս պէտք էր համարիլ : . . .

.
.
Երիտասարդութեան վրայ սոյն փոքրիկ խորհրդածութիւնը բա-

լական համարելով կը թողունք որ արիշ յաջողակ գրիչներ ման-
րախուզիւ քննելով ներկայ երիտասարդութիւնը , անոր ամեն եպերե-
լի կողմերը երեան հաննն , նշաւակեն , որով քաղցր է մեզ յու-
սալ որ կրնայ նաև օգուտ արտադրիլ :

Գառնանք մեր առաջադրած նպատակին զոր քիչ մը միջոց մէկ
կողմ թուլով ընթերցողին թե և ս ձանձրութիւն պատճառելնուս
կրկին ներողութիւն կը խնդրենք :

Սոյն պատմութեան մէջ յիշուած վերջին տեսութենէ 'ի վեր է-
տուար ալ երբէք երեւած չէր :

Տօրա կը կարծէր թէ գէպ 'ի Պ . . . իր ձամբորդութիւնը ըրած
էր :

Վասն զի խիստ ապահով տեղերէ իմացած էր որ էտուար մեկ-
նած էր : Պ . Ալֆօնս և արիկին Շարլ այնպիսի կերպով իմացուցին
ասիկա՝ որ Տօրա նոյն ձամբորդութեան նկատմամբ ամենապիտքը կաս-
կած մը անգամ չանեցաւ :

Հետեւապէս ամեն կերպով համոզուած էր թէ էտուար զինք կը
սիրէր , թէ իր սուած խոստումները պիտի կատարէր , և թէ իր
վերադարձին վերջապէս իրենց երջակութիւնը լիովին պիտի լրանալ
ուստի և այս կողմէ ամենին կասկածի կամ հողի պատճառ մը չու-
նէր :

Իսոյց այսպէս ըլլալով իսկ ներքին աւերումները խիստ կը տկա-
րացնէին զՏօրա , վասն զի հիւանդութիւնը՝ որ արդէն երկար ատե-
նէ 'ի վեր իր սրտին կենսական օյժը սպառելու սկսած էր , իր յա-
ջուկ այլանդակութեամբ անոր քանի մը օր կատարեալ առողջու-
թեան և հանդստութեան նշաններ ցոյց տալէ յետոյ՝ դարձեալ զայն
իր սարօրինակ աղղեցութեամբ խիստ տկար և ուժամտի վիճակի
մատնած էր :

Շաբաթ մը անցաւ , և ահա Տօրա քայլելու խիստ դժուարու-
թիւն կը կրէր , իր նիհար ծնդերը կը կիժտէին և իր ոտները ան-
կարող կ'ըլլային իր մարմնոյն ծանրութեան զիմանալ :

Բժիշկները ամեն օր այցելութեան կուղային , և ընտանեաց սաս-
տիկ թախանձանքէ ստիպուած յաճախ քանի մը հաստ միանալով Տօ-

բայի վիճակին վրայ խորհրդակցութիւն կ'ընէին . այլ միշտ մի և նոյն ապարդիւն հետեւութիւնը կ'ունենար , միշտյուսահատութիւն , միշտ վերահաս մահ կը նշմարէին :

Տիկին Շարլ առանձնակի յաճախ տեղեկութիւն կը խնդրէր անոնցմէ Տօրայի վիճակին վրայ . բայց անոնք իրենց մէկ գովելի յատկութեամբ միշտ կ'ապահովէին զայն իմացնելով որ Տօրայի հիւանդութեան անհետելուն համար ժամանակի և խիստ կարգապահութեան հարկաւորութիւն կար և թէ հիւանդութիւնը անբուժելի չէր :

Տիկին Շարլ ասոնք լսելով նոր շունչ , նոր կեանք կ'ստանար և կը քաջալերուէր . բայց միւս կողմէ ալ գիտելով իր աղջկան վիճակին օր աւուր վատթարիլը , գիտելով անոր տարօրինակ նիհարութիւնը՝ որ իր մարմնոյն զրեթէ կմախքի ձև տուած էր . գիտելով վերջապէս անոր ամենէ չարագուշակ անհասկացողութիւնը , հաւրը , որ իր սրտին մինչև խորէ արձագանք տալով մեծ դժուարութիւն կուտար Տօրայի և անգթօրէն և արագ կ'աւերէր անոր սիրտը՝ այս ամենը գիտելով կը շուարէր , կը շփոթէր և առանձնակի արտասուայ , հառաչանայ և ողորց ապաստանելով մխիթարութիւն և սփոփանք գտնելու կ'աշխատէր :

Մարտի փոփոխական օգերը , ցուրտը , անձրևը , և ասոնց հետևած օդին խոնաւութիւնը խիստ կը նպաստէր Տօրայի վիճակին վատթարելուն և անոր հիւանդութեան սաստկութեան :

Ուստի բժիշկները այս տեսնելով որչափ որ Տօրայի ապարինելէ անյոյս , այսու ամենայնիւ անոր կեանքը ըստ կարի երկարելու համար իմացուցած էին որ Զ... քաղքին նոյն եղանակի օգը խիստ վնասակար ըլլալուն Տօրայի առողջութեան , հարկ էր զայն օդափոխութեան համար շքեղայ գիւղ մը տանիլ , ուր՝ կ'ըսէին թէ , Տօրա կրնար օդին մաքրութեամբ և կակղութեամբ խիստ բարելաւ վիճակի վերածիլ :

Արոշուեցաւ Ս... գիւղը տանիլ զայն , որ քաղքին հարաւային կողմը կ'իյնայ և շոգեկաւքով կէս ժամ հեռաւորութիւն ունի . և որ տարւոյն նոյն եղանակին մէջ խիստ առողջարար օգ և արև կ'ունենայ :

Անցան քանի մը օր դիւզազնայու թեան համար կարեօր պատրաստութիւններ տեսնելով :

Տօրա վերջապէս ալ բոլորովին ուժաթափ ըլլալով անկարող կ'ըլլար քայլելու և օրուան խիստ մեծագոյն մասը նստակ բազմոցին վրայ դրեթէ անշարժ կ'անցընէր :

Այս հիւանդութեան մէջ տկարութեան այս աստիճանը ստակալ նշան մ'է եսթակայն քիչ ատենէ մահուան անկողնոյ յանձնելու :

Շարունակ երբ Էտուարի վիճակին վրայօր տեղեկութիւն կը խընդրէր՝ անմիջապէս Ալֆօնս ներկայանալով այնպիսի ապահովիչ խօսքերով զայն կը վստահացնէր՝ որ ակիկն Շարլի յարատև շնորհակալեաց և երախտագիտութեան կարժանանար :

Տիկին Շարլ ուզելով իր աղջկան իմացնել որ անհրաժեշտ հարկաւոր էր օգտփոխութեամբ կազդուրիլ ըսաւ :

—Տօրա՛, գոհութիւն Աստուծոյ, երթալով վիճակդ բարւոքելով վրայ է, և ասիկա որչափ որ կարելի է շտտով ընելու համար Ս․․․ դիւզը երթաս, բաւական ժամանակ հոն մնաս օգտփոխութեամբ կ'ազդուրեցու համար, Չ․․․ ի ներկայ փնասակար և անախորժ օղէն հեռանաս և օր յառաջ առողջութիւնդ վերստանաս կատարեալապէս, որ Էտուարի վերադարձած ժամանակ դարձեալ արդելք մը չպատահի, և կատարուի քու և իմ բաղձանքը :

—Եւ Էտուարի՛ :

—Այո՛, այո՛, Էտուարի ալ բաղձանքը, մոռցայ ասիկա :

—Ուրեմն Էտուար պիտի վերադառնայ մայր իմ՛ :

—Ինչ տարօրինակ հարցում կ'ընես, անշուշտ, առ առտ ելն ասանուհինդ կամ քսան օրէ և այսչափ միջոցը քեզ բաւական պիտի ըլլայ քու առողջութիւնդ և կայտառութիւնդ վերստանալու, ուստի հիմա որ ժամանակ ունիս ջանա՛ որ չկորնցնես զայն :

—Էտուար պիտի վերադառնայ այնպէս չէ՞. լա՛ւ, բայց եթէ ես չվերադառնամ՝— ըսաւ Տօրա վշտալի ձայնով :

—Ինչ ըսել կ'ուզես— ըսաւ տիկին Շարլ Տօրայի ըսածը չհասկնալու ապով և իր շփոթիլը ծածկել ջանալով :

—Ոչինչ, ոչինչ, ո՛հ, այն աստիճան խելքս վրաս չէ որ ես

ալ չեմ գիտեր թէ ինչ ըսի . — ըսաւ Տօրա չուղելով իր մօրը վիշաւ և մտածմունք պատճառել :

Տիկին Շարլ չուղելով խօսքը երկարելով Տօրայի ճանճրութիւն և տաղտկութիւն պատճառել , անոր հասանութիւնը ստանալէ յետոյ դատուեցաւ :

Հետեւեալ առաւօտ օրիկին Շարլ , Տօրա , ծառայ մը և երկու աղախին մեկնեցան շողեկաւորով գէպ 'ի Ս . . . :

Ընթերցողին ճանճրութիւն չտալու համար ըստ կարի միայն նշանաւոր գէպքերը յիշելով անցնինք :

Սոյն գիւղադնայութիւնը առջի օրերը խիստ բարեկաւար շողեկաւորութիւն ըրած կ'երևէր Տօրայի , և անանկ ժամեր կ'ունենար՝ ուր իր փառքովը և շարժումները առողջ մարդու մը ունեցածէն չէին տարբերէր : Շատ անգամ կը շրջադայէր պարտէզին մէջ արևուն . երբեմն ալ բժշկաց թոյլտուութեամբ տաք և անամպ օրեր դուրսը սլոտոյաներ կ'ընէր . բայց ափսո՛ս այս ամեն ցոյցները , ամեն այս առողջութեան և գուարթութեան նշանները կը նմանէին աղօտ և մարեկու մօտ կանթեղի մը արձակած բեկ բեկ լոյսերուն որ աւելի իր վախճանին վերահաս ըլլալը կ'իմացնէր . հեռեալէս որչափ որ յուսոյ նշոյններ կ'արձակէր երբեմնակի , այսու ամենայնիւ իր նիհարութիւնը երթալով կը սաստկանար , աչերը արդէն խորշերուն մէջ թաղուած էին , այտերուն ոսկորները նուրբ կաշիին տակէ իրենց ձևը կը ցույցնէին , վիզը յետին ծայր նրբացած էր և ականջին վար եղած որկորին ջիղերը դեղնորակ գուրս ցցուած կը տեսնուէին . բայց Տօրա կը կարծէր թէ իր վիճակը բարւոքելու վրայ էր , և թէ վերջապէս կարող պիտի ըլլար քանի մը օրէ ազատ ըլլալ : Ափսո՛ս , ազատ ըլլալ վիշտերէ , հողէ և թշուառութենէ բայց ոչ իր կարծած կերպով , հապա ինչ որ նախախնամութիւնը անօրինամ էր , մահուամբ : Ո՛վ զարհուրելի փառ որ զմարդս իր վերջի օրերուն մէջ հիւսնողութեան ամեն նեղութիւններէ կ'աղատես , ամեն անհանգստութիւններ կը ցրուես , նոյն իսկ չարագուշակ հազը կ'անհետացնես , որովհետև բաշարութիւն և յոյս կը ներշնչես սրտին . բայց ափսո՛ս , փորձառու միտք մը անմիջապէս կ'ըմբռնէ որ հիւսնողին տուած բու-

այս չնորհներդ մի միայն տարայոյցներ են զանիկա խիստ աւերած ըլլալուդ , վերջապէս մահուան զոհելու մօտեցնելուդ :

Ե. փսո՛ս , իր այսպէս հալւամաշ վիճակին մէջ իսկ տակաւին իր առ Էտուար զգացած սէրը անհետացած չէր : Իր երեակայութիւնը մի միայն անով զբաւուած էր և շատ անդամ իր կարճատև և թեթև քունին մէջ այնպիսի ցաւալի կերպով կ'երեակայէր իր նախկին յարարերու թիւններու և երջանիկ վիճակին վրայ՝ որ ներկայ եղողին սիրտը վիշտով և ցաւակցութեամբ կը պաշարէր : Տիկին Շարլ երբոր Տօրայի քնոյ մէջ երեակայելը լսէր՝ կը կարծէր թէ դաշտնի հարուածներ կ'ողղէին իր սրտին : Եւ չէր վարանէր անիծելու զԷտուար , կ'զգար որ ասիկա ընելու ամեն իրաւունք ունէր . ուստի և իր մայրական վիճակին յուսահատութեան բոլոր զօրութեամբ այնպէս կ'անիծէր և կը նզովէր զԷտուար՝ որ եթէ Նախախնամութիւնը զանոնք գործադրէր , անտարակոյս Էտուար պիտի ոչնչանար . . . :

Էտուարի կարծեցեալ ճամբորդութենէ ՚ի վեր երկու ամիս անցած էին : Տօրա կը մտածէր որ անտարակոյս պէտք էր եկած ըլլալնա , վասն զի իր վերջի տեսութեան մէջ Էտուար ըսած էր թէ առ առ ուտելն մէկ ամիսէ պիտի վերադառնար , ուստի երբ շարունակ աստոր վրայօք կը հարցնէր իր մօրը՝ Թիկին Շարլ խիստ ճարտարութեամբ անոր կասկածները կը ցրուէր , կը համոզէր ըսելով թէ զե. չեկած է . թէ Պ . . . քաղքին մէջ գործ կատարելը այնքան զժուար է՝ որ եթէ մարդ մը հոն երթայ հաստատ առաջադրու թեամբ՝ որ ամուսն մը մէջ իր գործերը կարգադրէ և վերադառնայ՝ չյաշողիւր և կը պարտաւորի քանի մը ամիս հոն մնալ , վասն զի խիստ ընդարձակ քաղաք մը և մէկ մէկէ զատուած արուարձաններէ բաղկացած ըլլալուն չկրնար մարդ ամբողջ կերպով իր գործերը կարգադրել :

Վերջապէս այս կերպ շարունակ խաբելով խաբխաբելով կը շօրին զՏօրա իրենք իսկ չգիտնալով որ այս ամենու ինչ պիտի հետեւէր :

Ելփօնս յաճախ Ս . . . գիւղը կ'երթևեկէր , և կեղծ նամակներ ցոյց տալով Տօրայի ամեն կերպով կը ջանար փարատել անոր յուսահատութիւնը՝ որ երթալով աճելու վրայ էր :

Տիկին Շարլ գիտելով որ Տօրայի կացութիւնը երթալով կը ծանրանար՝ որոշեց վերտոխն Զ . . . փոխադրել զայն . վասն զի կ'զգար որ եթէ աւելի ուշանար խիստ զժուարութեանց պիտի ենթարկէր այս ակ .

Ափսոս , երկու ամառան օգտփոխութիւնը ինչ արդիւնք ունեցած էր . բայց եթէ քանի մը օրուան պատիր առողջութեան ցոյցեր , յուսոյ անհիմն նշոյլներ , և թերևս վերահաս մահուան քանի մը օր յասպաղում :

Պատրաստութիւն տեսնուեցաւ վերստին : Մինչև կայարանը պատգարակով տարին զՏօրա . վասն զի քայլելու ամենին կարողութիւն չունէր . ասիէ զսա բայց օգր որչափ տաք և անվասս բլար միշտ կը փնտէր իրեն , և վերջէ շոգեկառք մտնելով Ձ . . . իջեցուցին :

Ձ . . . հասնելէ վերջէ այն միջոցին որ կայարանէն կառք նստելով տունը պիտի հասնէր՝ պատմներ թէ ինչ անակնկալ գէպք մը պատահեցաւ որով թէ Տօրա և թէ տիկին Շարլ խոռվեցան :

Երբ կառքը արշաւասոյր Պ . . . ի կայարանի փողոցէն կողմնակի կը մտնէր Ք . . . ի փողոցը՝ ուր իրենց տունը կը գտնուէր , Տօրա յանկարծ կառքին մէջ շփոթած և երեբուն ձայնով ըսաւ .

— Էտուա՛րը , Էտուա՛րը . ո՛հ մա՛յր իմ , Էտուա՛րը անցաւ :

Տիկին Շարլ այս անակնկալ կերպով Տօրայի Էտուարի վրայ խօսիլը տեսնելով յանկարծ զարհուրեցաւ կարծելով որ կը ցնորէր Տօրա :

— Բայց ինչ կ'ընես , Տօրա՛ , կ'երեակայե՞ս , ինչ կ'ընես : Ո՛ւր է Էտուար . ո՛ւր տեսար զայն . կառքին մէջ առանձին ենք , չե՞ս տեսներ : Խեղք գլուխդ ժողվէ՛ : Միթէ Պ . . . է այս վայրկենիս հո՞ս թուաւ Էտուար — ըսաւ տիկին Շարլ բարձրաձայն քրքիջ մը կեղծելով իր սրտին ցար ծածկելու համար :

— Ո՛հ , ան է , մա՛յր իմ , ան է . տես լուսամուտին սա մասը զոր վարպօյրը ծածկած չէ , ահա ասիէ տեսայ մեր կառքին քովէ իր անցնիլը :

— Տօրա՛ , երեակայութիւնդ շփոթեր է այս վայրկենիս : Ո՛հ մի՛ջանար համոզելու զիս այնպիսի բան մը՝ որ պարզապէ՞ս անկարելութիւն մ'է :

Բայց Տօրայի ըսածը ստոյգ էր : Էտուար ստուգիւ նոյն միջոցին կառքին քովէ անցած էր , յայտնի չէ թէ այս պատահումը զիտմամբ էր եթէ գիտումով :

Այս հանդիպումը Տօրայի սաստիկ ազդեց : Համոզուեցաւ որ Էտուար վերադարձած էր . կը թախանձէր իր մայրը զայն իրեն ներկայացնելու , բայց անհնար կ'ըլլար : Բժիշկները իմացուցին որ Տօրայի նոյն վիճակին մէջ այսպիսի տեսութիւն մը կրնար խիստ գեշ ազդեցութիւն ընել :

Տիկին Շարլ քանի մը օր վերջը խնացոց որ Էտուար վերադարձած էր . այսու ամենայնիւ կ'ըսէր թէ եթէ զայն իրեն ներկայացնէին կրնար ըլլալ որ իր հիւանդ կացութիւնը սաստիկ ազդեցութիւն ընէր անոր և թերևս առողջութեան ալ վնասէր :

Վերջապէս այսօրինակ ընթացքով օրեր կը սահէին , և Տօրայ վիճակը երթալով ամենու սարսափ կ'ազդէր :

Բա՛րէ , գրեթէ բոլորովին փոխուած էր . ո՛ր էին իր վարդապոյն այտերը , ո՛ր իր հրացայտ և յաղթահարող աչերը , ո՛ր իր շնորհալի ձիւրքերը , վերջապէս ո՛ր սրացած էր իր զիմաց յատուկ այն ժպիտը , ախարկը և հայուացքը որ մինչև անզոյ անձերու սէրը կը վառէր . ափսո՛ս , ամեն ասոնք անվերադարձ մեկնած էին . նիհար , տոգոյն դէմք մը , մարած աչեր և միօրինակ տխուր հայուածք մը յաջորդած էր այս ամենու :

Տօրայի վիճակին վրայ ճիշդ գաղափար մը տալու համար պատմեմք հետևեալը :

Տիկին Շարլի դրացիներէ մին օր մը կանչելով զՏօրա խնամող բժիշկը հիւանդին կացութեան վրայ անորմէ տեղեկութիւն խնդրեց :

Բժիշկը հանձարարանութիւն մը ընել ուզելով , որ , աւա՛ղ , նաև ճշմարիտ նկարագրութիւն մ'էր Տօրայի վիճակին , ըսաւ :

— Տիկին , Տօրայի հիւանդութիւնը կը նմանի եօթնագլխեան վիշապի մը որ չորս դին կը լափէ կը կործանէ : Բժշկութեան ամեն հնարք 'ի գործ կը դնենք անոր զօրութիւնը խորտակելու , բայց անհնար կ'ըլլայ , մէկ գլուխը խորտակած ատեննիս միւս գլխով կը կրծէ Տօրայի սիրտը : Բժշկութիւնը կը ծաղրէ , անոր ամեն միջոցները կ'արհամարհէ որով մեզ միշտ յուսահատութեան կ'ենթարկէ : Շատ անգամ այս հիւանդութեան ենթարկող անձեր նայած եմ , բայց երբէք անոնց վրայ այս հիւանդութեան այսչափ սրտդ և սոսկալի աւերումներ ընելը տեսած չեմ :

Բայց ինչ զարմանք, բանի մը օր անցնելէ յետոյ Տօրայի վրակէր :
կը կարծես դէպ ՚ի կենդանութիւն կը գիմէր : Որչափ որ անկողնոյ
մէջ էր՝ այսու ամենայնիւ իր կացութիւնը մեծ ակնկալութիւններ
կուտար, իր ախորժակը, խօսուածքը և վիճակը կանոնաւոր և զար-
մանալի : Բարէ՛, Տօրա պիտի բժշկուէր ուրեմն :

Յուսոյ այս նշոյլները փայլակի մը պէս ցնդեցան : Երկու օր վեր-
ջը տիկին Շարլ բան մը գիտած էր, ափսո՛ս, զարհուրելի դէպք մը
որ ամեն բան վեր ՚ի վայր աղմկեց :

Տօրայի ոտները սկսեւ էին ուռիլ :

Ուրախութեան և յուսոյ յաջորդեց խորին տրամուլթիւն, յու-
տահատութիւն, հառաչանք և արտասուք : Տիկին Շարլի նոյն օրերը
երբեմնակի առանձնութիւնը նկարագրել անհնարին է :

Իրիկուն մ'էր, Տօրայի կենաց յատկացեալ վերջի իրիկունը : Ա-
մենքը կ'զգային թէ հլուանդը իր հոգեվար տաղնապին մէջն է : Ըն-
տանեաց ամեն անդամները անոր մահուան անկողնոյն շուրջը բոլորակ
կազմելով ոտքի վրայ կայնած էին :

Տօրա գեռ կը խօսէր, գեռ կը ժպտէր :

Ամենու սիրտը վրդովման մէջ էր :

Տիկին Շարլ վեհերոտ քայլերով Տօրայի սնարին մօտեցաւ :

Արտասուաց կաթիլներ իր այտերէ կը գլորէին :

Տիկին Շարլ ճիգ մը ըրաւ իր սրտին վրդովը ծածկելու և ըսաւ
բաւական հաստատ ձայնով .

— Տօրա՛, բանի մը հարկաւորութիւն ունիս :

— Այո՛ — պատասխանեց Տօրա թէ և տկար ձայնով՝ այլ շեշտելով :

— Ըսէ՛ նայիմ՝

— Զիտուար տեսնել կ'ուզեմ :

Տիկին Շարլի սրտին մէջ ցաւալի հառաչք մը խեղդուեցաւ :

— Տօրա՛, ապահով եղիր որ վաղը աւտու ժամը տասի միջոցներ
զիտի դայ, արգէն Պ. Ալֆօնս եկաւ և իմացուց ասիկա ինձի :

— Աա՛ւ, շատ ուրախ եմ :

Տիկին Շարլ զատուեցաւ անկողնէն և սենեակէն դուրս ելլելով սիսաւ
դատնասպէս արտասուել : Իր քաջասրտութիւնը յաղթուած էր մայ-
րական զգացումէ :

Քանի մը վայրկեան անցան և ահա վերստին ներս կանչուեցաւ ։
Տիկին Շարլ լծաշէկնակով սրբելով արտասուաց շիթերը , որ իր
աչերու շրջանակները ընդլայնած և ուռեցուցած էին , ներս մտաւ ։

— Ո՛վ է զիս խնդրողը — հարցուց մեղմ ձայնով սենեկին զբան առջև ։
— Տօբան — պատասխանեց Օսկար ։

Տիկին Շարլ երեբուն յառաջացաւ դէպ 'ի Տօբայի անկողինը ։
— Չի ս ուզեցիր , Տօբա — հարցուց տիկին Շարլ դաշն ձայնով ։
— Այո — պատասխանեց Տօբա ։

Այսու ամենայնիւ քանի մը վայրկեան բառ մը չարտասանեց ։

Որմէ վերջը իր աչերը իր մօր վրայ յարեց . կ'ուզէր խօսիլ , բայց
չէր կարող . իր սրտին վրդովը կ'արգիլէր զինք խօսելու ։ Եր մտրած
աչերու մէջ յայտնի կը տեսնուէին իր հրեշտակային հողւոյն յուզմունքը ։

— Ափսո՛ս . . . կը մըմնջէր նուազ ձայնով . — ափսո՛ս . . . այնչափ երկու
տասարդ մեռնի՛լ . . . : — Քանի մը անգամ անկողնոյն մէջ նստելու
ղեց , մէկ երկու անգամ վար իջնել փորձեց , բայց 'ի զուր . իր օր-
հասական տաղնապին մէջ ցուցուցած ամեն ճիգերը աւելի զինք ակա-
րացնելու կը նպաստէին ։ Երբեմն հրատապ և երբեմն սառնային քրք-
աինք մը իր ամբողջ մարմինը կը պատէր ։ Ափսո՛ս , կ'զգար իր կենաց
վերջին կէտը հասած ըլլալը , կ'զգար քանի մը վայրկեանէ իր հողւոյն
դէպ 'ի յախտնութիւն թուշիլը ։ Եր տաղնապելի վնձակին վը-
րայունեցած գիտակցութիւնը աւելի կը սաստկացնէր հիւանդութեան
ազդեցութիւնը ։ Բարէ՛ , չէր ուզեր թողուլ կեանքը , այն կեանքը՝ որ
այնչափ ազետալի և միանգամայն քաղցր յիշատակներով լի էր ։

— Մեռնի՛լ . . . և ինչո՛ւ . . . — կը մըմնջէր . — ինչո՛ւ մեռնիլ , քանի
որ այնչափ վիշտերէ և հողերէ յետոյ այնչափ տարիներէ սպասուած
երջանկութիւնը պիտի լրանար . . . : Կտուարի տուած խոստումին վրայ ա-
պահով էր . վասն զի խաբած էին զինք ։

Այսպէս անմեղ և թշուառ էակը մահուան անկողնոյն վրայ տարած-
ուած այլ և այլ ահուելի մտածումներով կը տաղնապէր ։ Ամենու
աչերէ արտասուաց հեղեղներ կը հոսէին . ամենու դիմաց վրայ գ թոյ և
կարծկցութեան նշաններ դրոշմուած էին ։ — Ո՛հ . . . կը տանջուի՛մ
. . . կը տանջուի՛մ . . . — կը գոչէր ցաւազին , հանդատութիւն կը փնտռէր ։

այլ ՚ի զո՛ւր , աղետալի ճիւանդութիւնը անընդհատ զինք կը նն զէր՝
 Ահա ելի երեակայու թիւնն ըն անհետ եղան : Քանի մը վայրկեան վեր-
 լը թուլութիւն մը կը պատէր Տօրայի մարմինը : Այնչափ գիշերն ետ ՚ի
 վեր անբուն յոգնած աչերը գոցուիլ սկսան : Մահատից լուծիւն մը
 կը տիրէր սրահին մէջ : Տօրայի գիմաց վրայ գրոշմուած ժպիսնները
 անոր քաղցր քնոյ մէջ գտնուիլը կ'իմացնէին . բայց աւա՛ղ , կարճատե-
 է եղեր այս հանդստութիւնը : Ա՛նցնի քառորդ մը . իր սրտին զգա-
 ցումներու բորբոքումը իր երեակայութեան վերաին գործունէութիւն
 կուտայ : Բարէ՛ , Տօրայի մտաց առջև կը ներկայի Էտուարի պատ-
 կերը : Հոգեվար ճիւանդին գիմաց վրայ գրոշմուած զուարթութեան
 նշանները աննկարագրելի են . շուրթերը կը շարժին և անորոշ բառեր
 կ'արտասանեն : Քանի մը վայրկեաններ կը սահին , և ահա Տօրա ըն-
 դոտա բռնէն կ'արթնայ . տեսիլը կ'անհետի , վայրկենական ուրա-
 խութիւնը խոյս կուտայ , և վիշտն ու մտածումը վերստին իր վրայ
 կը ծանրանան : Իր աչերը տարօրինակ երեւոյթ մը առած չորս զին կը
 յածին քանի մը վայրկեան : — Ո՛հ , տ՛ւտ երեւոյթ . . . կը մրմնայ :
 Սրտի խորէ մելուած հառաչ մը արահին լուծիւնը կը խզէ յանկարծ :
 Ներկայ եղողները գողահար իրարու երես կը նային : Տօրա վե-
 րստին իր սոսկալի վիճակին կ'ենթադրէ . — Ո՛վ իմ անցեալ երջան-
 կութիւններս . . . ո՛վ իմ երջանիկ օրերս . . . ո՛ւր էք դուք , ո՛ւր խոյս
 տուիք . . . — կը գոչէ տխուր ձայնով : Ճի՛ց մը կ'ընէ և կը յաջողե-
 նաւրին յինչու . — Ո՛հ , Էտուա՛ր . . . Էտուա՛ր . . . արդեօք ո՛ւր . . .
 կը գտնուիս այս . . . վայրկենիս . . . եկո՛ւր , եկո՛ւր գուցէ քու ներ-
 կայութիւնդ . . . կարող ըլլայ քանի մը բոպէ ևս . . . զիս ապրեցնելու
 . . . եկո՛ւր . . . բայց ո՛չ , անօգուտ է . . . ալ ամեն ինչ լրացաւ . . . ալ
 անողոք ճակատագրին վճիռը անգարձ է . . . ո՛հ , ո՛հ , այո՛ , վաղը
 . . . վաղը . . . եկո՛ւր . . . յուզարկաւորութեանս շուքը աւելցնելու . . . :
 Յիշէ՛ որ այս . . . ծաղիկ հասակս . . . միայն քեզ համար . . . կը թառամի . . .
 յիշէ՛ որ փոխանակ . . . դէպ ՚ի կեանք և երջանկութիւն գիմելու . . .
 դէպ ՚ի մահ , դէպ ՚ի յաւիտենութիւն կը մեկնիմ . . . մի միայն քեզ
 համար . . . յիշէ՛ , որ յաւիտենական սէր խոտաացայ քեզ . . . յիշէ՛ ,
 որ նոյն սիրոյն . . . անարժան գտնուեցար . . . յիշէ՛ , որ այս սէրը վերստին

հետս . . . գերեզմանն կը տանիմ . . . այո՛, գերեզմանն . . . վասն զի և ոչ
մէկը . . . կրցաւ զայն շահել . . . բայց ՚ի քեզմէ . . . Ո՛հ այս ամենը յիշէ՛
Կառուա՛ր . . . յիշէ՛ . . . և եթէ ապագային մէջ . . . սրտիդ մէջ ապա-
շախի . . . զգացում մը գոյանայ . . . և արցունք մը հոսեա . . . ինձ համար .
. . . ո՛հ, այո՛, այն արցունքը . . . բաւական պիտի ըլլայ . . . որիս հաշտե-
ցնելու . . . : Մնաս . . . բարեա՛ւ, Կառուա՛ր . . . յաւիտեա՛ն . . . մնաս
. . . բարեա՛ւ . . . : Առգէր աւելի խօսիլ, բայց անկարող եղաւ : Աւ-
ժաթափի վերստին անկողնոյն վրայ տարածուեցաւ . . . փորձեց վերստին
ելլել . . . բայց ոյժ չգտաւ իր վրայ : Իր միթագնած աչերը իր մօրը
յարած էր : Կե՛ղծ կին, որ իր ազգական յուսահատ վիճակին վրայ
ինքզինք կորուսած արաստուաց հեղեղներ կը հասեցնէր : Բարե՛, Տօ-
բայի խելքը տակաւին կորսուած չէր . . . դիտեց, իմացաւ իր մօրը ար-
տասուելը և ըսաւ ակար ձայնով, — Մի՛ . . . մի՛ . . . լար . . . մա՛յր
. . . իմ . . . գէտլ ՚ի . . . երջանկութիւն . . . կը գիմնմ ես
մնաս բարեա՛ւ . . . Կառուա՛ր . . . մա՛յր . . . իմ . . . մնաս բարեա՛ւ, նե-
րէ՛ . . . շնորհակալ . . . եմ . . . : Երկու բոլէ անցաւ և ահա ձայ-
նին յաջորդեց խեղդուկ հագագի մը, վերջին շունչի մը նուաղ
հնչիւնը :

Տօբա մնում էր :

ՎԵՐՁ

Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ո Յ

	ՅԱՌԱՋԱԲԱՆ	
Գ.Լ.	Ա. ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՄԻ	
	Բ. ՊԱՐԱՀԱՆԳԻՍԸ	4
	Գ. ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆԸ	2
	Գ. ԺԱՄԱԳՐՈՒԹԻՒՆԸ	3
	Է. ՈՐՍՈՐԳՈՒԹԻՒՆԸ	4
	Զ. ՀԻՒԱՆԳՈՒԹԻՒՆԸ	5
	Է. ՃԱՄԲՈՐԳՈՒԹԻՒՆԸ	6
	Ը. ԹՇՆԱՄԻՆԵՐԸ	7
	Թ. ԿՍԿԻՇՈՒՆԸ	9
	Ժ. ԳՈՅԺԸ	10
	ԺԱ. ՏՕՐԸ	11
	ԺԲ. ՎԵՐԱԳԱՐԶ	12
	ԺԳ. ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ	13
	ԺԴ. ԷՏՈՒԱՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ	15
	ԺԵ. ՅՈՒՍԱՀԱՏՈՒԹԻՒՆ	16
	ԺԶ. ԲԱՐԵԿԵՆԳԱՆ	18
	ԺԷ. ՄԱՀ	20

ԱՇՃԵԱՆ ԳՐԱՏ ՈՒՆ

Ե. Պոլիս, Չագմահմեդլար-Սոգու Շուքի 29

ԳՐԱՎԱՃԱՌ—ՀՐԱՏԱՐԱԿԻԶ


ՀԱՍՏԱՏԵԱԼ 1868-ԻՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՒՆՆԵՐ

Սոււերի հին դեմքերու 1635-1900, գրեց՝ Յ. Գ. Մամբեան	5
Կեանքի գործածութիւն, Լօրա Էյիլլիլլիլի. թր. Գ. Ոսկեան	7
Լիւսիւսար նոր երգարան, 192 երես. 172 երգ	7 1/2
Արեւելի բոցեր, բանաստեղծ. Ե. Գօլանճեան	5
Կարմիր ժամաց, պատմ վէպ Արփիար Արփիարեան	5
Պարսեզ բարոյական և գործ դաստիարակ. Փ. Հաղարապ	4
Վեղարաւոր հերոսը, գրեց՝ Սմբատ Բիւրատ	2
Մի աննեղ զոն կամ հորսակուած սեր, Ա. Շահնազար	2
Աւարայրի արծիւր կամ Վարդաւանի, թարգ. Ս. Բիւրատ	3
Բիւզանդական Հայ կայսեր ու կայսրուհիներ 10 պակ.	3
Բուրգերէն բանաստեղծական երկեր, Ս. Բիւրատ	3
Կենս. Իզմիրլեան և Գուրեան Ս. ներու Ս. Գարամանեան	2
Մշիս վերերը, բանաստեղծ. Աչուզ Շահնազար	2
Ազատար բանակին յաղթական ժամեր Կ. Պոլիս	12 1/2
Ուխտին ողջակէզը կամ Կոյս մուսգամ կիւնը, Ե. Ե.	2
Ապսիւլ Համիս Բ. Մերուժան Պարաման	1
Ապսիւլ Համիսի օրոյիութիւնը; Տ. Շէփիկեան	1
Հեղինէ կամ Գաղսիի մը ի Կ. Պոլիս, Յ. Հ. Չար.	15
Բանիս Բանիս. Ս. Բիւրատ, պատմ. վէպ Ա. և Բ.	12
Թաղլաբեար Փիլիկ Աղպօր աղբիկներ Տ. Փախազեան	2
Տիգրան եւ Զարուհի. Յ. Բազրատունը (արամ 6 արար)	5
Մոլորեալ նամբուրը կամ Զին. օրեւան, կատակ. 1 արար	1
Երանոս աղբար կատակ. 1 արար Տ. Փախազեան	1
Բարեկենդանի անկուտիները, կատակ. 1 արար	1
Խենդերուն բժիշկը և Բիւնախնդիր ծառայ, կատակ. ներ	1 1/2
Բռնի Ամուսնութիւն, Մօլիէր, կատակ. 1 արար	1
6 1/2 պօրտի ծառանգ մնացած սնուկը Գ. Ռչաւ. կա. 1 ար.	2
Երկու անվարտիներ, Մօլիէր, թարգ. գաղ. » «	1
Լը Պարգուլիկ, Մօլիէր, թարգ. գաղ. կակ. 1 արար	1
Իլավիկի եկնի եկեմք փրպալը, Ալաթուրգա, Ալաթիբ.	5

Վերոյիշեալ գրատունը կը վաճառուին, կրօնական, պատմական, բանաստեղծական, թատերական, վիպական, դպրոցական գրքեր, գոհացուցիչ գնով և զեզչով:

ԲԱՏԱՌԻԿ ԶԵՂԶ ՎԱՃԱՌՈՂԱՅ



2013
13898
13899
13900

39/1/1

8046

